



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԺՆԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԴՐՈՒՄԻ ԳՐԱԳՈՒՄԻ ԳՐԱԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ



ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ  
NORTHERN UNIVERSITY



**«ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՐԱՓՈՓՈՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ»**

միջազգային գիտաժողովի կյուրթերի ժողովածու  
ք. Երևան, 1-2 դեկտեմբերի 2021թ.

Сборник материалов  
международной научной конференции

**«ПРОБЛЕМЫ КОНКУРЕНТОСПОСОБНОГО  
ОБРАЗОВАНИЯ И НАУКИ В УСЛОВИЯХ  
ПОСТОЯННО МЕНЯЮЩЕГОСЯ МИРА»**

г. Ереван, 1-2 декабря 2021 г.

Collection of Papers of the  
International Scientific Conference

**«ISSUES OF COMPETITIVE EDUCATION AND  
SCIENCE IN THE EVER-CHANGING WORLD»**

Yerevan, December 1-2 2021



**«ՄՐՅՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ»**  
միջազգային գիտաժողով`

**նվիրված Հյուսիսային համալսարանի  
հիմնադրման 25-ամյակին**

Հայաստանի Հանրապետություն,  
ք. Երևան, 1-2 դեկտեմբերի 2021թ.

Международная научная конференция  
**«ПРОБЛЕМЫ КОНКУРЕНТОСПОСОБНОГО ОБРАЗОВАНИЯ И  
НАУКИ В УСЛОВИЯХ ПОСТОЯННО МЕНЯЮЩЕГОСЯ МИРА»**

**посвященная 25-летию со дня основания  
Северного университета**

Республика Армения,  
г. Ереван, 1-2 декабря 2021 г.

International Scientific Conference  
**«ISSUES OF COMPETITIVE EDUCATION AND SCIENCE IN  
THE EVER-CHANGING WORLD»**

Dedicated to the 25th Anniversary of the Establishment  
of Northern University

Republic of Armenia  
Yerevan, 1-2 December 2021

ՀՏԴ 378:001(082)  
ԳՄԴ 74.48+72g43  
Մ 958

*Տպագրության Է երաշխավորվել Հյուսիսային համալսարանի  
գիտխորհրդի 2022թ. մայիսի 20-ի նիստի №3 որոշմամբ*

**Գլխավոր խմբագիր՝  
Ավետիք Հարությունյան, ի.գ.թ., դոցենտ**

**Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները  
հարափոփոխ աշխարհում:**

Մ 958 Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու / Գլխ. խմբ.՝ Ա.  
Հարությունյան.- Եր.: Հյուսիսային համալսարան, 2022.- 336 էջ:

#### **ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

1. **Մհեր Մակիչյան** (նախագահ) – Հյուսիսային համալսարանի ռեկտոր, տ.գ.թ.
2. **Ավետիք Հարությունյան** (գլխավոր խմբագիր) – Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար, Իրավագիտության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ
3. **Լուսինե Ֆլջյան** - Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, բ.գ.դ., պրոֆեսոր
4. **Արմեն Ճուղուրյան** - Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր
5. **Նունե Մկրտչյան** - Լեզուների, գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ
6. **Նահրուհի Սարգսյան** - Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ

ՀՏԴ 378:001(082)  
ԳՄԴ 74.48+72g43

ISBN 978-9939-873-12-1  
© Հյուսիսային համալսարան, 2022

*Рекомендовано к печати Ученым советом  
Северного университета 20 мая 2022 г. (решение №3).*

**Главный редактор:  
Аветик Арутюнян, кандидат юридических наук, доцент**

### **РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

1. **Мгер Макичян** (председатель) - ректор Северного университета, кандидат экономических наук
2. **Аветик Арутюнян** (главный редактор) - руководитель Центра научных исследований, инновационных программ и послевузовского профессионального образования, заведующий кафедрой юриспруденции и социальных наук, кандидат юридических наук, доцент
3. **Лусине Флджян** - проректор по учебно-исследовательской работе и интернационализации, доктор филологических наук, профессор
4. **Армен Чугурян** - заведующий кафедрой экономики и менеджмента, доктор экономических наук, профессор
5. **Нуне Мкртчян** - заведующий кафедрой языков, литературы и журналистики, кандидат филологических наук, доцент
6. **Наируи Саргсян** - заведующий кафедрой педагогики и психологии, кандидат педагогических наук, доцент

*Recommended for Publication by the Academic Council  
of the Northern University on May 20, 2022 (Decision No. 3).*

**Editor-in-Chief:  
Avetik Harutyunyan, Ph.D. in Law, Associate Professor**

### **EDITORIAL COUNCIL**

1. **Mher Makichyan** (chairman) – Rector of Northern University, PhD
2. **Avetik Harutyunyan** (Editor-in-Chief) – Head of the Centre of Scientific Research, Innovation Programms and Postgraduate Professional Education, Head of the Chair of Law and Social Sciences, PhD, Associate professor
3. **Lusine Fljyan** - Vice-Rector for Education, Research and Internationalizaion, DSc, Professor
4. **Armen Jhughuryan** - Head of the Chair of Economics and Management, DSc., professor
5. **Nune Mkrтчyan** - Head of the Chair of Languages, Literature and Journalism, PhD, Associate Professor
6. **Nairuhi Sargsyan** - Head of the Chair of Pedagogy and Psychology, PhD, Associate Professor

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ**

**ԱՎԵՏԻԷ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.** ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱԶՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ.....10  
**АВETIK APYTYOHYAH.** ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЮРИДИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В СЕВЕРНОМ УНИВЕРСИТЕТЕ  
**AVETIK HARUTYUNYAN.** WAYS TO IMPROVE LEGAL EDUCATION AT NORTHERN UNIVERSITY

**ՀԵՂԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՄՅԱՆ.** ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՍՏԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԶԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....21  
**ЭГГИНЕ ГРИГОРЯН, ОЛИМПИА ГЕГАМЯН.** ПРОБЛЕМЫ ЭКОЛОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ ПЕРЕПОДГОТОВКИ ГОСУДАРСТВЕННЫХ И МУНИЦИПАЛЬНЫХ СЛУЖАЩИХ  
**HEGHINE GRIGORYAN, OLYMPIA GEGHAMYAN.** PROBLEMS OF ENVIRONMENTAL EDUCATION IN THE CONTEXT OF TRAINING FOR CIVIL AND COMMUNITY SERVANTS

**ՎԱՅԵ ԹՈՐՈՍՅԱՆ.** ԿՐՈՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՏԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....35  
**ВАГЕ ТОРОСЯН.** МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕЛИГИОЗНОГО ОБРАЗОВАНИЯ  
**VAHE TOROSYAN.** INTERNATIONAL LEGAL ISSUES OF RELIGIOUS EDUCATION

**ԷՐՆԵՍՏ ՄԱԳԴԱ, ԱՆԺԵՅ ԺԻԳԱՂՈ.** ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԴԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈՒՄ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....44  
**ЭРНЕСТ МАГДА, АНДРЕЙ ЗИГАДЛО.** ВОСПИТАТЕЛЬНАЯ РОЛЬ СИЛОВЫХ СТРУКТУР В ПОСТОЯННО МЕНЯЮЩЕМСЯ ОБЩЕСТВЕ: ВЗГЛЯД ПОЛЬСКОЙ ПОЛИЦИИ  
**ERNEST MAGDA, ANDRZEJ ZYGADŁO.** EDUCATIONAL ROLE OF THE UNIFORMED SERVICES IN THE EVER-CHANGING SOCIETY: THE PERSPECTIVE OF POLISH POLICE

**ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ.** ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕՐԵՆՍԱԴԱԿԱՆ ԱՎՏԵՐՈՒՄ.....57  
**НОРАЙР СТЕПАНЫАН.** СПРАВЕДЛИВОСТЬ В СОВРЕМЕННЫХ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ АКТАХ  
**NORAYR STEPANYAN.** JUSTICE IN CONTEMPORARY LEGISLATIVE ACTS

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА**

**ՍԵՐԳՈ ԵՐԻՏՅԱՆ.** ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑԵԼԻ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՍՏԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....65  
**СЕРГО ЕРИЦЯН.** ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ И ПЕРЕДАВАЕМЫХ НАВЫКОВ (НА ПРИМЕРЕ ДОКТОРАНТУРЫ)  
**SERGO YERITSYAN.** PROBLEMS OF PROFESSIONAL AND TRANSFERABLE SKILLS FORMATION (BY EXAMPLE OF DOCTORATE)

**ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՄԵՐԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ.** ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՅԵՐԸ.....73  
**АННА АРАКЕЛЯН, МЕРИ ОБАСАПЯН.** МОТИВЫ УЧЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СТУДЕНТОВ ПЕРВОГО И ВТОРОГО КУРСА  
**ANNA ARAKELYAN, MERI HOVASAPYAN.** MOTIVATIONS OF FIRST- AND SECOND-YEAR STUDENTS' LEARNING ACTIVITIES

**ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՆԱԻՐԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ.** ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՍԵՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....81  
**АННА АРАКЕЛЯН, НАИРА СОГОМОНЯН.** ОСОБЕННОСТИ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ МОЛОДЕЖИ И ИХ ГЕНДЕРНЫЕ РАЗЛИЧИЯ  
**ANNA ARAKELYAN, NAIRA SOGHOMONYAN.** THE PECULIARITIES OF VALUE ORIENTATIONS OF YOUNG PEOPLE AND THEIR GENDER DIFFERENCES

**ԱԼՎԱՐԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ.** ԱՐԴԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ.....90  
**АЛВАРД ГРИГОРЯН.** СОВРЕМЕННЫЙ МУЗЕЙ КАК ОБРАЗОВАТЕЛЬНО-КУЛЬТУРНЫЙ КОМПЛЕКС  
**ALVARD GRIGORYAN.** CONTEMPORARY MUSEUM AS AN EDUCATIONAL AND CULTURAL COMPLEX

**ՍԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ.** ԷԼԵԿՏՐՈՆԱԿՆԻ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԸ՝ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՐԹԱԿ.....98  
**МАЙЯ ГРИГОРЯН.** ЭЛЕКТРОННЫЕ БАЗЫ ДАННЫХ КАК ОСНОВА ДЛЯ РАЗВИТИЯ БИБЛИОТЕК  
**MAYA GRIGORYAN.** ELECTRONIC DATABASES AS PLATFORMS FOR DEVELOPMENT OF LIBRARIES

**ՍԻՄԱ ԴԱՅԱՆ, ԹԱՄԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՍԵԴԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ.** «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....108  
**СИМА ДАЯН, ТАМАРА ХАЧАТРЯН, СЕДА ХАЧАТРЯН.** СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ ВУЗОВСКОЙ ДИСЦИПЛИНЫ «ИСТОРИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ АРМЕНИИ И СОПРЕДЕЛЬНЫХ СТРАН»  
**SIMA DAYAN, TAMARA KHACHATRYAN, SEDA KHACHATRYAN.** EDUCATIONAL SIGNIFICANCE OF THE UNIVERSITY COURSE 'HISTORICAL GEOGRAPHY OF ARMENIA AND NEIGHBOURING COUNTRIES'

**ԱՐՏՅՈՍ ԴԱՎԹՅԱՆ.** ՊԱՏԱՆԻ ԸՄԲԻՇՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՐԻՆԵՐԸ.....114  
**АРТЕМ ДАВТЯН.** ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ТЕХНИЧЕСКИХ ПРИЕМОВ ЮНЫХ БОРЦОВ  
**ARTYOM DAVTYAN.** WAYS OF PERFECTING OF YOUNG WRESTLERS' TECHNICAL TRICKS

**ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.** ՄԱՆԿԱԿԱՐԺ-ԱՆԴՐԱԳՈՐԸ ՈՐՊԵՍ ՍԵՃԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՍՈՒՐՅԵԿՏ.....123  
**ТАМАРА АРУТЮНЯН.** ПЕДАГОГ-АНДРАГОГ КАК СУБЪЕКТ УЧЕБНОГО ПРОЦЕССА В ОБРАЗОВАНИИ ВЗРОСЛЫХ  
**TAMARA HARUTYUNYAN.** ANDRAGOGUE TEACHER AS A SUBJECT OF THE EDUCATIONAL PROCESS OF THE ADULTS

**ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՆՈՒՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՎԵՐԴՅԱՆ.** ԱՐՑԱԽԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ԵՐԿՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....130

**АНУШ АРУТЮНЯН, НУНЕ МАРТИРОСЯН, ТАТЕВИК ВЕРДЯН.** ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ОБРАЗОВАНИЯ АРЦАХА В КОНТЕКСТЕ ГОСУДАРСТВЕННОЙ И НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ СТРАНЫ

**ANUSH HARUTUNYAN, NUNE MARTIROSYAN, TATEVIK VERDYAN.** PROSPECTIVES FOR THE DEVELOPMENT OF EDUCATION IN ARTSAKH IN THE CONTEXT OF THE STATE AND NATIONAL SECURITY OF THE COUNTRY

**ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.** ՀԻՔՐՈՒԴԱՅԻՆ (ՀԱՄԱԿՑԿԱԾ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....140

**МЕРИ ОГАННИСЯН.** ОСОБЕННОСТИ ГИБРИДНОГО ОБУЧЕНИЯ

**MERI HOVHANNISYAN.** PECULIARITIES OF HYBRID LEARNING

**ԿՈՆՏԱՆԻՆՄԱՆՏԻՆ ՄԱԶՈՒՐ.** ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆՓՈՓՈՒՄ ԱՐԺԵՆԵՐ ՀԱՐԱՓՈՓՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ.....150

**КОНСТАНТИН МАЗУР.** САМОПОЗНАНИЕ И ОСОЗНАНИЕ ИЗМЕНЕНИЙ КАК ПОСТОЯННЫЕ ЦЕННОСТИ ОБРАЗОВАНИЯ В ПОСТОЯННО МЕНЯЮЩЕМСЯ МИРЕ

**KOSTIANTYN MAZUR.** SELF-KNOWLEDGE AND CHANGES ACCEPTING AS PERMANENT VALUES OF EDUCATION IN THE EVER-CHANGING WORLD

**ՀԱՍՄԻԿ ՇԱՓԱԴԱԹՅԱՆ.** ԴԵՍ ԱՌ ԴԵՍ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ VS ԱՌՑԱՆՑ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎՎԵՐՆԵՐ. QUO VADIS.....161

**АСМИК ШАПАГАТЯН.** ОБРАЗОВАНИЕ ЛИЦОМ К ЛИЦУ VS ОБРАЗОВАНИЕ ОНЛАЙН: СТЕРЕОТИПЫ И НОВЫЕ ВЫЗОВЫ. QUO VADIS

**HASMIK SHAPAGHATYAN.** IN-PERSON EDUCATION VS ONLINE EDUCATION STEREOTYPES AND NEW CHALLENGES. QUO VADIS:

**ՍԻՐԱՆՈՒՇ ՊԵՏԻԿՅԱՆ.** ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՔ.....170

**СИРАНУШ ПЕТИКЯН.** КОНКУРЕНТОСПОСОБНАЯ ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ПРОГРАММА – ОСНОВА ПОВЫШЕНИЯ КАЧЕСТВА ОБРАЗОВАНИЯ

**SIRANUSH PETIKYAN.** A COMPETITIVE EDUCATIONAL PROGRAM IS THE BASIS FOR IMPROVING THE QUALITY OF EDUCATION

## **ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՍՏՈՐԻԱ, HISTORY**

**ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ.** ԳՅՈՒՄՐԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԵՐԴԻ Ս. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅԻ ԵՎԵՂԵՑՈՒ ՊԱՏԻ ՏԱԿ ԵՎ ՄԵՐՉԱԿԱՅՔՈՒՄ ՀԱՆԳՈՂ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ, ՈՒՒՄ ԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ.....176

**ИНГА АВАГЯН.** ГЕРОИ, ПОХОРОНЕННЫЕ ПОД СТЕНОЙ И ВОЗЛЕ ЦЕРКВИ СВ. АЛЕКСАНДРЫ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОЙ КРЕПОСТИ ГЮМРИ, КАК СИМВОЛ БРАТСТВА АРМЯНСКОГО, РУССКОГО И ГРУЗИНСКОГО НАРОДОВ

**INGA AVAGYAN.** HEROES BURIED UNDER THE WALL AND NEAR THE CHURCH OF ST. ALEXANDRA IN THE ALEXANDROPOL FORTRESS OF GYUMRI, AS A SYMBOL OF THE BROTHERHOOD OF THE ARMENIAN, RUSSIAN AND GEORGIAN PEOPLES



**ՄՅԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.** ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՍԱՆ ԱՌԱՋԱՐՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ....185  
**МГЕР АРУТЮНЯН.** О ПРИОРИТЕТАХ ОСВЕЩЕНИЯ ВОПРОСОВ ОБОРОНЫ И БЕЗОПАСНОСТИ АРЦАХА  
**MHER HARUTYUNYAN.** ON THE PRIORITIES OF COVERING THE DEFENSE AND SECURITY ISSUES OF ARTSAKH

**ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՓԻԼՈԼՈԳԻԱ, PHILOLOGY**

**ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆ.** ԺՅՈՒԼ ՌԵՆԱՐԸ ԵՎ ՕՍԿԱՐ ՈՒԲՅԼԴԸ՝ ՎԱՅԱՆ ԹԵԼԵՅԱՆԻ ՀՈՂՎԱԾՆԵՐՈՒՄ.....194

**ВАРДУИ ДАВТЯН.** ЖЮЛЬ РЕНАР И ОСКАР УАЙЛЬД В СТАТЬЯХ ВААНА ТЕКЕЯНА

**VARDUHI DAVTYAN.** JULES RENARD AND OSCAR WILD IN VAHAN TEKEYAN'S ARTICLES

**ԳԱՅԱՆԵ ՀԱՎՈՔՅԱՆ.** ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ ՍԻԼՎԱ ՎԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱՎԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....201

**ГАЯНЕ АКОПЯН.** ЖАНР ИСПОВЕДИ В ПУБЛИЦИСТИКЕ СИЛЬВЫ КАПУТИКЯН

**GAYANE HAKOVYAN.** CONFESSION GENRE IN SILVA KAPUTIKYAN'S PUBLIC SPEAKING

**ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.** ԱՆՁՆԱՆՈՒՄՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՐԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊՈՒՄ.....209

**ГАЯНЕ ОГАННИСЯН.** ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ АНТРОПОНИМОВ В РОМАНЕ Х.АБОВЯНА «РАНЫ АРМЕНИИ»

**GAYANE HOVHANNISYAN.** FUNCTIONAL FEATURES OF ANTHROPONYMS IN THE NOVEL "WOUNDS OF ARMENIA" BY KH.ABOVYAN

**ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ.** ԲՆԱՊԱՇՏ ԳՐՈՂԻ ՓՈԶՐ ԱՐՁԱԿԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ.....218

**НУНЕ МКРТЧЯН.** ФИЛОСОФИЯ МАЛОЙ ПРОЗЫ ПИСАТЕЛЯ-НАТУРАЛИСТА

**NUNE MKRTCHYAN.** THE PHILOSOPHY OF SMALL FICTION ENVIRONMENTALIST WRITER

**ՍԻԼՎԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.** ԶՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ.....227

**СИЛЬВА ОГАНЕСЯН.** РОЛЬ ТВОРЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ В ПЕРЕМЕНЧИВОМ МИРЕ

**SILVA HOHANNISYAN.** THE ROLE OF CREATIVE AND CRITICAL THINKING IN A CHANGING WORLD

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՌՎԱՐՈՒՄ,  
 ЭКОНОМИКА И УПРАВЛЕНИЕ,  
 ECONOMICS AND MANAGEMENT**

**ԼՈՒՍԻՆԵ ՖԼԶՅԱՆ, ՍՅՈՒԷԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ.** ՎԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ԻՆՉՈՒՒ Է ԱՅՂԶԱՆ ՎԱՐԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԿԸ.....237

**ЛУСИНЕ ФЛДЖЯН, СЮЗАННА САРГСЯН. НАРАЩИВАНИЕ ПОТЕНЦИАЛА И ОБЕСПЕЧЕНИЕ КАЧЕСТВА: ПОЧЕМУ ТАК ВАЖНО ИМЕТЬ В АРМЕНИИ ВЫСШЕЕ ОБРАЗОВАНИЕ ЕВРОПЕЙСКОГО УРОВНЯ?**

**LUSINE FLJYAN, SYUZANNA SARGSYAN. CAPACITY BUILDING AND QUALITY ASSURANCE: WHY IS IT SO IMPORTANT TO HAVE EUROPEAN-LEVEL HIGHER EDUCATION IN ARMENIA?**

**ԱՐՄԵՆ ԺՈՒՂՈՒՐՅԱՆ. ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....247**

**АРМЕН ДЖУГУРЯН. ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В РА**

**ARMEN TSHUGHURYAN. PROBLEMS ORGANIZATION OF COMPETITIVE VOCATIONAL EDUCATION IN RA**

**ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ. ԻՆՉՊԵՍ ՓՈԽԼՐԱՑՆԵԼ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈՂՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....256**

**ТАТУЛ МАНАСЕРЯН. КАК ДОПОЛНИТЬ ТРАДИЦИОННЫЕ И СОВРЕМЕННЫЕ МЕТОДЫ И ПОДХОДЫ ОБУЧЕНИЯ**

**TATOUL MANASSERIAN. HOW TO COMPLEMENT TRADITIONAL AND MODERN LEARNING METHODS AND APPROACHES**

**ՆԻՆՈ ԱԲԵՍԱԶԵ, ՕՏԱՐ ԱԲԵՍԱԶԵ. ԿՐԱՍԱՆԻ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՅՐԵՐԸ ԵՎ ՉԲՈՍԱԿԱՐՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....264**

**НИНО АБЕСАДЗЕ, ОТАР АБЕСАДЗЕ. ДОСТОПРИМЕЧАТЕЛЬНОСТИ ВСЕМИРНОГО НАСЛЕДИЯ ГРУЗИИ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ ТУРИСТИЧЕСКИХ ГИДОВ**

**NINO ABESADZE, OTAR ABESADZE. PLACES FOR WORLD HERITAGE OF GEORGIA AND ISSUES OF TOURIST GUIDE EDUCATION**

**ԱՇՈՏ ՉԱԼԻՆՅԱՆ. ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԿԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ.....275**

**АШОТ ЗАЛИНЯН. МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ОРГАНИЗАЦИИ ПОДГОТОВКИ И ПЕРЕПОДГОТОВКИ ГОСУДАРСТВЕННЫХ СЛУЖАЩИХ**

**ASHOT ZALINYAN. INTERNATIONAL EXPERIENCE IN ORGANIZATION OF TRAINING AND RETRAINING OF CIVIL SERVANTS**

**ԵՎԳԵՆԻՅԱ ՀԱՅՐԻՅԱՆ, ԱՍՊՐԱՄ ՄԱՅԻԼՅԱՆ. ԹԿԱՅԻՆ ԷԿՈՂԱՍՎԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....287**

**ЕВГЕНИЯ АЙРИЯН, АСПРАМ МАИЛЯН. РОЛЬ ЦИФРОВОЙ ЭКОСИСТЕМЫ В РАЗВИТИИ ЭКОНОМИКИ РА**

**YEVGENYA HAYRIYAN, ASPRAM MAYILIAN. THE ROLE OF DIGITAL ECOSYSTEM IN THE DEVELOPMENT OF THE RA ECONOMY**

**ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ. ՄՐՑՈՒՆԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՁՆԵՐՈՒՄ.....297**

**ГРАЧЬЯ ДАНИЕЛЯН. КОНКУРЕНТНАЯ ФИНАНСОВАЯ ГРАМОТНОСТЬ В ЭЛЕКТРОННЫХ СДЕЛКАХ**

**HRACHYA DANIELYAN. COMPETITIVE FINANCIAL LITERACY IN ELECTRONIC TRANSACTIONS**

**ԱՍՏԴԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ.** ՄՐՑՈՒՆԱԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
.....306

**АСТХИК ПОГОСЯН.** ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОЙ  
СИСТЕМЫ ВЫСШЕГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В РА  
**ASTGHİK POGHOSYAN.** TRENDS OF DEVELOPMENT OF A COMPETITIVE SYSTEM  
OF HIGHER PROFESSIONAL EDUCATION IN RA

**ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ.** ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐՁԱԳԾԱՅԻՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ.....313

**ГРАЧЬЯ САРГСЯН.** ПОВЕДЕНЧЕСКИЙ АНАЛИЗ ИЗМЕНЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКОГО  
КАПИТАЛА В КОНТЕКСТЕ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ

**HRACHYA SARGSYAN.** BEHAVIORAL ANALYSIS OF HUMAN CAPITAL CHANGE IN  
THE CONTEXT OF COMPETITIVENESS

**ՍՈՀԱՄՍԱԴ ՍԱԶԱԴ ՖԱՐԶԱՆԵԳԱՆ.** ԳՈՎԱԶԴԻ ԿԵՆՍՈՒՄԱԿՈՒԹՅԱՆ  
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՐԵՆԴԻ ԴՐԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ.....321

**МОХАММАД САДЖАД ФАРЗАНЕГАН.** КОНКУРЕНЦИЯ ЖИЗНЕСПОСОБНОСТИ  
РЕКЛАМЫ В РАМКАХ ПОЗИТИВНЫХ МЕССЕДЖЕЙ БРЕНДА

**MOHAMMAD SAJJAD FARZANEGAN.** COMPETITIVENES OF ADVERTISING IN THE  
POSITIVE ATTITUDE BRAND MESSEGE FRAMEWORK



**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ  
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

**ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հյուսիսային համալսարանի գիտական հետազոտությունների,  
նորարարական ծրագրերի և հետբուհական  
մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար,  
իրավագիտության և հասարակագիտական  
առարկաների ամբիոնի վարիչ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ք.Ստեփաննակերտ, Արցախի Հանրապետություն  
[avetiq.hh@gmail.com](mailto:avetiq.hh@gmail.com)

**Հողվածի նպատակն է բացահայտել իրավաբանական կրթության կարևորությունը պետության կյանքում և ներկայացնել դրա կատարելագործման ուղիները Հյուսիսային Համալսարանում:**

**Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել իրավաբանական կրթության՝ որպես պետության սահմանադրական անվտանգության բաղադրիչի էությունը, վեր հանել Հյուսիսային համալսարանում իրավաբանական կրթության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրներն ու ներկայացնել դրանց հաղթահարման վերաբերյալ առաջարկություններ:**

**Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, վերլուծության և իրավահամեմատական մեթոդները:**

**Հիմնական եզրահանգումն այն է, որ իրավաբանական կրթության կատարելագործման նպատակով անհրաժեշտ է վերանայել իրավաբանական կրթության նկատմամբ մոտեցումը, հետևողական կատարելագործել դասախոսներին, դասավանդման մեթոդաբանությունը և վերանայել վարձատրության քաղաքականությունը, ներդաշնակել տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները, ինչպես նաև առաջարկվում է Հայաստանի և Արցախի Հանրապետության տոնացույցում ավելացնել իրավաբանի մասնագիտական օրը և այն նշել մայիսի 20-ին:**

**Հիմնաբառեր՝** Հյուսիսային համալսարան, իրավաբանական կրթություն, իրավաբանի մասնագիտական հմտություններ, դասավանդման մեթոդաբանություն, ուսուցողական դասընթաց, ուսանողի իրավունքների պաշտպան, իրավաբանի մասնագիտական օր:

Իրավաբանական կրթությունն անձի՝ հիմնարար (խորը, գիտական, համակարգված) իրավաբանական գիտելիքներ ստանալուն նպատակա-

ուղղված գործընթաց է, որը համապատասխանում է իրավաբանական տեսության և պրակտիկայի զարգացման ժամանակակից մակարդակին<sup>1</sup>: Չնայած այն հանգամանքին, որ պարբերաբար խոսվում է իրավաբանի մասնագիտացում ունեցող շրջանավարտների մեծաքանակության և աշխատաշուկայում առկա պահանջարկից ավելի շատ իրավաբաններ «թողարկելու» մասին, այնուամենայնիվ, հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների մի մասը շարունակում է ընտրել հենց այդ մասնագիտությունը:

Մեր կարծիքով՝ պահանջվածից շատ իրավաբաններ «թողարկելը», կամ ինչպես հաճախ ասում են՝ իրավաբանների գերարտադրությունը, բացասական երևույթ չէ, քանի որ ոչ մասնագիտությամբ աշխատող իրավաբանները, օժտված լինելով իրավագիտակցության բավարար մակարդակով, ևս կարող են նպաստել քաղաքացիական հասարակության և իրավական պետության կառուցման գործընթացին: Այստեղ մեծագույն խնդիրը թողարկվող իրավաբանների մասնագիտական որակն է, որի նվազ լինելը կարող է ունենալ հակառակ արդյունքը: Դրանից զատ, ոչ բարձրակարգ իրավաբանի գիտելիքներն ու կարողությունները հնարավոր է հասարակության այլ անդամների մոտ թյուր կարծիք ձևավորեն իրավաբանի մասնագիտության վերաբերյալ խեղաթյուրված ընկալման գործում ենթադրելով նաև, որ իրավաբանական ֆակուլտետ ընդունվելն ու ավարտելը շատ հեշտ գործընթաց է:

Գաղտնիք չէ, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներում իրավաբանական կրթությունն զբաղեցնում է առաջատար տեղ, ունի ռազմավարական նշանակություն և կարելի է համարել ազգային անվտանգության բաղադրատարր: Իրավաբանական կրթության հիմնախնդիրն ազգային անվտանգության նշանակություն ունի նաև Հայաստանի և Արցախի Հանրապետությունների համար: Ինչպես նշում է պրոֆեսոր Ն. Բոնդարը՝ «իրավաբանական կրթության՝ որպես սահմանադրական արժեքի ընկալումը կայանում է նրանում, որ իրավաբանական կադրերի պատրաստման որակը, վերջնարդյունքում, սահմանադրական անվտանգության խնդիր է, ընդ որում, անվտանգությունն այս պարագայում հավասարապես վերաբերում է ինչպես հասարակությանն ու պետությանը, այնպես էլ յուրաքանչյուր կոնկրետ անձի»<sup>2</sup>: Այստեղ սահմանադրական անվտանգությունն ասելով պետք է ընդունել այն անառարկելի ճշմարտությունը, որ հատկապես իրավաբանի մասնագիտությունն ունեցող անձինք պետք է խստագույնս հետևեն Սահմանադրությանը և պարտավորություն զգան վերջինիս դրույթների անշեղ կատարման, ինչպես նաև քաղաքացիներին նույն ձևով դաստիարակելու համար: Ընդհանրապես, մեր խորին համոզմամբ՝ իրավաբանի վեհ առաքելությունն այն է, որ նա ոչ թե ու ոչ միայն պետք է զբաղվի իրավական վեճերով, այլև նպաստի, որպեսզի երկրի ներսում ու արտաքին

<sup>1</sup> Усанов Е.Е. Место юриспруденции в системе наук об образовании // Юридическое образование и наука, 2012, № 2, էջ 12-17:

<sup>2</sup> Бондарь Н.С. Российское юридическое образование как конституционная ценность: национальные традиции и космополитические иллюзии. Серия «Библиотека судебного конституционализма». Вып. 3. 2-е изд., доп. - М.: Изд-во «Юрист». 2014, էջ 23:

հարաբերություններում մեղմի ու նվազագույնի հասցնի այդ իրավական վեճերը:

Իրավաբանական կրթության հիմնախնդիրը կապված է նաև իրավաբանների արհեստավարժ իրավագիտակցության հետ, քանի որ հասարակության մեջ հենց նրանք են հանդիսանում, աստվածաշնչյան լեզվով ասած, իրավական գիտելիքների «սերմնացանները»: Ընդ որում, իրավաբանական կրթությունն ստացած ու ձևախեղված իրավական գիտելիքներ ունեցող դիպլոմավորված իրավաբանը, որն աշխատանքի է անցնում պետական և մասնավոր հատվածներում, որոշ իմաստով, սպառնալիք է հանդիսանում պետականության ու իրավական համակարգի համար:

Այս կապակցությամբ մենք կիսում ենք այն մոտեցումը, որ երկրում իրավաբանական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. 1. բարեփոխումները պետք է կապել տեղական առանձնահատկությունների հետ, 2. բարեփոխումներն իրականացնել ոչ թե այլ երկրների մոդելների ընդօրինակմամբ, այլ համաշխարհային մասշտաբով կրթության զարգացման միտումների հաշվառմամբ՝ չչարդելով հայկական համակարգը<sup>1</sup>:

Ստորև ներկայացնում ենք հայկական բուհական միջավայրում, մասնավորապես՝ Յուսիսային համալսարանում իրավաբանական կրթության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման վերաբերյալ որոշակի առաջարկություններ՝ ըստ առանձին բաժինների:

### **Իրավաբանական կրթության նկատմամբ մոտեցման վերանայում**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխարհում գոյություն չունի իրավաբանական կրթության համընդգրկուն մոդել, անհրաժեշտ է երկրի անձնահատկությունների հաշվառմամբ մշակել իրավաբանական կրթության զարգացման հայեցակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով պատրաստվող իրավաբանների որակին: Մեր կողմից իրականացված դիտարկումները ցույց են տալիս, որ երկրում իրավաբանների թվի աճն Եականորեն չի նպաստում քաղաքացիների իրավագիտակցության և իրավական մշակույթի մակարդակի շոշափելի բարձրացմանը: Այս համատեքստում կա կարծիք, ըստ որի՝ «իրավաբանական կրթության հիմնական խնդիրը կայանում է ոչ այնքան իրավաբանների պատրաստման մակարդակի նվազեցման մեջ, որպես այդպիսին, այլ նրանում, որ մեր իրավաբանական կրթական միջավայրն իր հիմնարար տարրերով չի գտնում հասարակության սոցիալական զարգացման պահանջմունքներին համապատասխանող փոփոխության վեկտոր: Իրավաբանների պատրաստման ժամանակակից սոցիալական պրակտիկայի և ձևավորված մոդելի միջև առաջացել է հիմնաքարային հակասություն»<sup>2</sup>:

<sup>1</sup> Վաղարշյան Ա. Արդի աշխարհի մանկավարժական համակարգերը և իրավաբանական կրթության հիմնահարցերը Հայաստանում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ, 2016, էջ 6-17:

<sup>2</sup> Синюков В.Н., Синюкова Т.В. Концептуальные основы развития университетского и прикладного юридического образования в России, Юридическая техника, 2009, №3, էջ 293:

Վերոնշյալ հայեցակարգի մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն հետևյալ սկզբունքային հարցերը.

- Իրավաբանական կրթության ամբողջ համալիրը կարելի է պատկերել տան տեսքով, որի հիմքը դրվում է դպրոցում, վերնահարկը՝ բուհում, իսկ բովանդակությունը հաղորդվում է փորձի միջոցով: Այդ իսկ պատճառով որակյալ իրավաբաններ պատրաստելու համար պետք է հավասարապես ուշադրություն դարձնել նշված բոլոր ասպեկտներին:

- Անհրաժեշտ է վերանայել ու կատարելագործել բուհի իրավաբանական ֆակուլտետ կամ բաժին ընդունվելու համար սահմանված պահանջները, մասնավորապես՝ դիմորդը պարտադիր կերպով պետք է հանձնի քննություն «Հասարակագիտություն» առարկայի իրավագիտության բաղադրիչից՝ դրանով իսկ բուհ ընդունվելուց առաջ ստուգելով նրա իրավական գիտելիքների մակարդակը:

- Ուսումնական պլաններում անհրաժեշտ է մտցնել հատկապես այնպիսի առարկաներ, որոնք կլինեն ոչ թե հերթական կրեդիտ հավաքելու պարտադիր պահանջ, այլ կյանքի տարբեր իրավիճակներում տեսական իրավական գիտելիքների հիման վրա ճիշտ կողմնորոշվելու և համարժեք որոշում կայացնելու հիմք: Այս առումով հարկ է հատուկ ուշադրություն դարձնել իրավաբանի մոտ մասնագիտական հմտություններ ձևավորող առարկաներին:

- Ուսումնառության արդյունքում իրավաբանի մասնագիտությամբ շրջանավարտը պետք է տիրապետի ու ձեռք բերի որոշակի որակներ, կարողություններ և հմտություններ, որոնք պիտանի են ինչպես այդ, այնպես էլ այլ մասնագիտություններով աշխատելու համար. չէ՞ որ հեղինակավոր համարվելուց զատ իրավաբանի մասնագիտությունը լավ հիմք է հանդիսանում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու համար:

- Արցախի և Հայաստանի բուհերում դասավանդման սեփական փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է խստացնել հեռակա կարգով իրավաբանական կրթության իրականացման պահանջները: Բակալավրիատում ուսումնառության այս ձևով ուսանողները սովորում և ավարտում են իրավաբանական բաժինը, ստանում դիպլոմ՝ այդպես էլ չունենալով բավարար իրավական գիտելիքներ, մտածողություն ու հմտություններ տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար, հատկապես երբ վերջիններս գործ են ունենում քաղաքացու ազատության և կյանքի հետ: Այստեղ մեծ խնդիր է նաև այն, որ շատ հաճախ իրավաբանական բաժնի մագիստրատուրա են ընդունվում ոչ իրավաբանները ու տվյալ մակարդակի գիտելիքներ փոխանցելու և հիմնախնդիրներ քննարկելու փոխարեն դասախոսը ստիպված է լինում բացատրել, թե ինչ է իրավունքը, պետությունը և այլն: Ամփոփելով մեջբերելք Ս.Շախրայի այն ճիշտ դիտարկումը, որ «Հնարավոր չէ հեռավորության վրա իրավաբան դառնալ»<sup>1</sup>: Ուստի

---

<sup>1</sup> Шахрай С.М. Проблемы качества юридического образования // Интернет-конференция Шахрая Сергея Михайловича // URL: <http://www.garant.ru/action/conference/10208/> - 11.01.2018.

անհրաժեշտ է աստիճանաբար խստացնել իրավաբանական բաժնում սովորելու հեռակա ձևը:

## **Դասախոսների հետևողական կատարելագործումը, դասավանդման մեթոդաբանությունն ու վարձատրությունը**

Ինչպես արդարացիորեն նշում է Յու. Օվչիննիկովան՝ «իրավաբանական կրթության մակարդակը պայմանավորված է դասավանդող կադրերի որակով»<sup>1</sup>: 2017թ. ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքում կայացած գիտաժողովի ժամանակ մենք կարծիք էինք հայտնել, որ «իրավաբանական կրթության որակի համար շատ կարևոր է դասախոսների պատրաստումը և որակավորման բարձրացումը, որոնք պարբերաբար պետք է զբաղվեն գիտական գործունեությամբ, զեկույցներով հանդես գան գիտաժողովներում, տեղի և արտասահմանյան պարբերականներում հրապարակեն գիտական հոդվածներ: Համալսարաններն իրենց հերթին դասախոսներին և ուսանողներին պետք է ապահովեն նոր գրականությամբ (մենագրություններ, դասագրքեր, ամսագրեր, միջազգային գիտաժողովների ժողովածուներ և այլն)»<sup>2</sup>:

Որակյալ կադրեր պատրաստելու համար դասախոսները պետք է մշտապես կատարելագործվեն, որը ենթադրում է հետևյալ բաղադրիչների համալիրը.

- Ցանկալի է, որ բուհերը համադրեն ինչպես գիտական աստիճան, այնպես էլ գործնական մասնագիտական հարուստ փորձ ունեցող դասախոսների կողմից դասավանդելու քաղաքականություն, և խրախուսեն նման մոտեցումը: Հանրահայտ է, որ ուսումնառության ժամանակ բուհի ուսանողները գրում են ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ և մագիստրոսական թեզեր, որոնք իրականացվում են դասախոսի ղեկավարությամբ: Եթե վերջինս, օրինակ, չի տիրապետում կամ ոչ պատշաճ ձևով է տիրապետում գիտական հետազոտություն կատարելու նրբություններին և չունի համապատասխան փորձ, ապա կարող է մտահոգություն առաջանալ նրա ղեկավարությամբ կատարված աշխատանքի որակի և դրա արդյունքում կատարողի ստացած գիտելիքների առնչությամբ:

- Անկախ դասախոսի ունեցած փաստացի գիտելիքներից ու աշխարհայացքից, եթե նա գոնե տարին մեկ անգամ չի մասնակցում հանրապետական կամ միջազգային որևէ լուրջ գիտաժողովի և չի շփվում իր գործընկերների հետ, հաղորդակից չէ գիտության ոլորտում համաշխարհային զարգացումներին կամ գոնե հինգ տարին մեկ անգամ վերապատրաստման դասընթացների չի գործուղվում՝ ուսումնասիրելու արտասահմանյան

---

<sup>1</sup> Овчинникова Ю.В. Актуальность повышения квалификации преподавателей права в направлении развития педагогической составляющей их профессиональной компетентности // Юридическое образование и наука, 2011, № 4, էջ 20-22:

<sup>2</sup> Арутюнян А.Г. Проблемы юридического образования в Республике Арцах, Сборник докладов международной научно-практической конференции «Трансформация человеческого потенциала в контексте столетия»/ Под общей редакцией проф. З.Х. Саралиевой: В 2 т. Т 2. – Н.Новгород: Изд-во НИСОЦ, 2017, էջ 332:



առաջավոր փորձն ու սեփական երկրում այն ներդնելու եզրերը, ապա նրա մոտ հնարավոր է տեղի ունենա լճացման գործընթաց, ինչն էլ բացասական ազդեցություն կունենա նրա մասնագիտական գործունեության իրականացման վրա:

- Անհրաժեշտ է առաջնորդվել դասախոսների նեղ մասնագիտական ուղղվածությամբ դասավանդման սկզբունքով, որի դեպքում պետք է բացառվի այն տարածված պրակտիկան, որ, օրինակ, քաղաքացիական իրավունքի մասնագետը դասավանդի քրեական իրավունք կամ պետության և իրավունքի տեսության մասնագետը՝ միջազգային իրավունք կամ էլ՝ հակառակը:

- Առաջարկվում է բուհերում սահմանել կարգ, ըստ որի՝ յուրաքանչյուր հիմնական դասախոս պետք է տարեկան առնվազն 1 գիտական հոդված տպագրի ազդեցության գործակից ունեցող արտասահմանյան գիտական հանդեսներում, ինչի համար էլ կսահմանվի պարգևավճար, ինչպես ընդունված է արտասահմանյան շատ բուհերում<sup>1</sup>: Դա նաև մրցակցային դաշտ կստեղծի հենց բուհի ներսում և ամբողջ Հանրապետությունում:

- Որակյալ իրավաբաններ պատրաստելու համար կարևոր նշանակություն ունի նաև ժամանակակից մասնագիտական գրականության առկայությունը: Այստեղ խոսքը վերաբերում է ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան նոր գրականության ձեռքբերմանը, քանի որ բուհերում շատ հաճախ հանդիպում ենք դասագրքերի կամ այլ օժանդակ կյուրթերի, որոնք վաղուց սպառել են իրենց արդիականությունն ու կիրառությունը, իսկ նորերը բացակայում են: Դրանից զատ, թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները պետք է հմտորեն օգտվեն ինչպես հայկական, այնպես էլ այլ երկրների իրավական տեղեկատվական համակարգերից և ուսանողական նստարանից ուսումնասիրեն ու տիրապետեն երկրի օրենսդրությանը:

21-րդ դարի դասախոսն իրավաբանական կրթության հետ կապված պետք է ունենա նորարար հայացքներ, պետք է դասավանդի նոր մեթոդաբանությամբ: Ակնհայտ է, որ դասավանդման նոր մեթոդների արմատավորումն անհատական կարգով՝ այն անձանց շրջանակում, ովքեր նմանատիպ հայացքների, գաղափարների կրողներ չեն հանդիսանում, անհնար է: Ուստի՝ ժամանակակից պայմաններում առաջացել է որակյալ մասնագետների պատրաստման անհրաժեշտություն, ինչը հնարավորություն է ընձեռնում մասնագիտական հիմնարար գիտելիքները մեկտեղել մտածողության պրակտիկ գործելակերպի նորարարության հետ և հետազոտական մոտեցումով լուծել կոնկրետ խնդիրներ<sup>2</sup>:

Մասնագետների մի մասը գտնում է, որ դասավանդման ակադեմիական մոտեցումից հրաժարվելը կարող է հիմք հանդիսանալ մագիստրանտների և ասպիրանտների թվաքանակի կրճատման համար<sup>3</sup>: Այդուհանդերձ, մենք չենք

---

<sup>1</sup> Выплата вознаграждений за публикации статей в высокоцитируемых научных журналах - <https://mipt.ru/science/5top100/staff/publications/renumeration.php>, Стимулирование публикаций в зарубежных научных изданиях - <https://urfu.ru/ru/science/stimul-pablik/> - 08.01.2018:

<sup>2</sup> Сергеев И.В. Методика оценки уровня профессиональной подготовки выпускников вуза // Вестник Российской таможенной академии, 2012, № 4, էջ 66-71:

<sup>3</sup> Наумкина В.В. Двухуровневое юридическое образование и компетентностный подход: вопросы теории // Юридическое образование и наука, 2012, № 4, էջ 13-15:

կարող ամբողջությամբ համաձայնել այդ գաղափարի հետ, քանզի այլ մեթոդների կիրառումն էլ ավելի է հեշտացնում ապագայում գիտությամբ զբաղվելու ցանկությունն և կարողությունն ունեցող ուսանողների բացահայտումը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ նոր մեթոդները կոչված են նպաստելու իրավական մտածողության և իրավական աշխարհայացքի ձևավորմանն ու արմատավորմանը: Այս իմաստով անհրաժեշտ է վերանայել դասախոսների կողմից դասավանդման մեթոդաբանությունը՝ նախապատվությունը տալով ինտերակտիվ մեթոդներին, օրինակ՝ սլայդների միջոցով: Անձնական փորձից և ուսանողների ու մագիստրանտների կարծիքների վերլուծությունից եզրահանգում ենք, որ տարիներ շարունակ Արցախի պետական, Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց, Գորիսի պետական և Հյուսիսային համալսարաններում սլայդների միջոցով դասավանդումը տվել է ցանկալի արդյունք ինչպես առկա, այնպես էլ հեռավար ձևաչափով դասավանդման ընթացքում:

Վերջում հարկ է նշել, որ իրավաբանական կրթության բնագավառի խնդիրներից է հանդիսանում հասարակությունում դասախոսի նշանակության և հեղինակության բարձրացումը, որի պատճառներից կարող է համարվել, օրինակ, ցածր աշխատավարձը<sup>1</sup>: Դասախոսի աշխատանքը գրավիչ ու պատվաբեր դարձնելու համար անհրաժեշտ է ինչպես բարձրացնել վերջիններիս աշխատավարձը, այնպես էլ սահմանել լրացուցիչ արտոնություններ (օր.՝ հիպոթեքով բնակարան գնելու համար, որը բացակայում է մեր երկրում):

Ֆինանսական ապահովության ցածր մակարդակը որոշ դեպքում հարուցում է կոռուպցիոն ռիսկեր, ինչն էլ իր բացասական հետևանքն է թողնում ապագա իրավաբանի մասնագիտական որակի ու գործելակերպի վրա:

### **Տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ներդաշնակում**

Իրավաբանական կրթության հիմնական խնդիրներից է ուսանողների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ներդաշնակության թույլ աստիճանը: Անձնական փորձը ցույց է տալիս, որ ուսումնասիրության ընթացքում հիմնական շեշտը դրված է տեսական գիտելիքներ փոխանցելու վրա: Ն. Սեմենովան իրավագիտորեն նշում է, որ «իրավաբանական կրթությունը պետք է լինի ոչ միայն տեսական, այլև՝ ուղղված լինի հետագա պրակտիկ գործունեությանը»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> A. Kenneth Pye, Legal Education in an Era of Change: The Challenge, 1987 Duke Law Journal 191-203 (1987) - <https://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?referer=https://www.google.am/&httpsredir=1&article=2978&context=dj>; Кондратьева Е.А., Отдельные проблемы качества юридического образования и пути их решения: взгляд преподавателя, Проблемы качества юридического образования в современной России: материалы международной научно-практической конференции, Нижний Новгород, 2011, էջ 84:

<sup>2</sup> Семенова Н.С., Пути совершенствования содержания юридического образования, Проблемы качества юридического образования в современной России: материалы международной научно-практической конференции, Нижний Новгород, 2011, էջ 191:

Գործնական հմտությունների և ունակությունների ձևավորման անհրաժեշտությունը բխում է աշխատաշուկայի բավականին խիստ պահանջներից, մասնավորապես՝ մրցունակությունից, մասնագիտական շարժունակությունից և այլն:

Ներկայումս աշխատակիցներից պահանջվում է ոչ միայն իրականացնել գործատուի հրահանգները, այլև, զբաղեցնելով այս կամ այն պաշտոնը, առաջարկել նորարար մտքեր՝ աշխատանքն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով: Այս պարագայում կարևորվում է աշխատակցի՝ մասնագիտական տարաբնույթ ունակությունների ու կարողությունների առկայությունը, դրանց հետագա զարգացումը, ինչպես նաև նորերի ձեռքբերումը<sup>1</sup>:

Մեր կարծիքով՝ իրավաբանների արհեստավարժության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի բուհերը սերտ համագործակցեն պետական ու մասնավոր հատվածի գործատուների հետ և ապագա իրավաբաններին սովորեցնեն այն նվազագույն կարողություններն ու հմտությունները, որոնք պահանջված են ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ բնագավառներում կիրառելու համար:

Ուսումնառության տարիներին՝ հիմնականում բարձր կուրսերում, ուսանողներն անցնում են ուսումնական և արտադրական պրակտիկա: Ըստ էության, ուսանողներն առավել կայուն գիտելիքներ ձեռք են բերում հենց արտադրական պրակտիկայի շրջանակներում, որտեղ նրանց հնարավորություն է ընձեռվում իրենց զգալ իրավաբանի կարգավիճակում: Դրա համար անհրաժեշտ է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները սերտ կապ պահպանեն պրակտիկ իրավաբանների հետ, չէ՞ որ նրանց հետ անմիջական շփման արդյունքում է ուսանողների մոտ առավել մեծ հետաքրքրություն առաջանում իրավաբանի մասնագիտության նկատմամբ: Միայն նման ճանապարհով հնարավոր կլինի տեսական գիտելիքներից վերացարկվել գործնականի:

Դրանից զատ, տեսական գիտելիքները գործնական հմտություններով ամրապնդելու նպատակով անհրաժեշտ է ուսանողների պրակտիկան սկսել հենց 1-ին կուրսից, ինչի շրջանակներում նրանք հնարավորություն կունենան ծանոթանալու ապագա աշխատանքի բնույթի և աշխատավայրի հետ: Ցանկալի է, որ 1-ին կուրսից սկսած ուսանողների համար կազմակերպվեն այցեր պետական իշխանության մարմիններ (Ազգային ժողով, Կառավարություն, դատախազություն, ոստիկանություն, կենտրոնական ընտրական հանձնաժողով և այլն), որտեղ նրանք կծանոթանան ամեն մի մարմնի գործունեության առանձնահատկություններին, իսկ վերջիններիս որոշ ներկայացուցիչների կարելի է առաջարկել դասախոսությամբ հանդես գալ համալսարաններում: Իսկ 2-րդ կուրսից սկսած կարելի է ուսանողներին տանել դատարան՝ մասնակցելու դատական նիստերին, քրեակատարողական հիմնարկ, որտեղ կծանոթանան ազատագրկման դատապարտվածների

---

<sup>1</sup> Ильина Л.А. Формирование профессиональной компетентности как компонента подготовки менеджеров / Л. А. Ильина // Устойчивое развитие вуза на основе стратегии повышения качества образовательного процесса : монография / Г. П. Гагаринская, Л. А. Ильина [и др.]. – Самара: СамГТУ; Минск: БГУИР, 2007, էջ 295:

պատիժը կրելու պայմաններին, նաև որոշ ժամանակով կմնան խցում, կխոսեն իրավունքը հարգելու, պատժի ենթարկվելու, ապագայի և այլ հարցերի մասին:

Քննարկվող հիմնախնդրի լուծման ամենաարդյունավետ եղանակներից է իրավաբանական կլինիկաների բացումն ու գործունեության ակտիվացումը:

Իրավաբանական կլինիկայի առկայության պարագայում ուսանողներն արդեն իսկ առաջին կուրսից կարող են ներգրավվել իրավաբանական խնդիրների լուծմանը: Սկզբում դասախոսների ու պրակտիկ մասնագետների, իսկ այնուհետ՝ միայնակ, ուսանողները կկարողանան լիարժեք կիրառել տեսական գիտելիքները կյանքում, հասկանալ, արդյո՞ք պատրաստ են իրենց վրա վերցնել այդ պատասխանատու մասնագիտությունից բխող պարտավորությունները:

Կարևոր ենք համարում նաև վերանայել կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության մոտեցումը՝ նախապատվությունը տալով հայկական իրավական հիմնախնդիրներին վերաբերող արդիական թեմաներին, ինչպես նաև ուսանողներին ու մագիստրանտներին ևս իրավունք պետք է տրվի անհրաժեշտության դեպքում առաջարկելու իրենց թեմաները: Դրան զուգահեռ, պետք է ցուցաբերել հետևողական վերաբերմունք, որպեսզի նույն բովանդակությամբ 3 տարուց վաղ աշխատանք չկատարվի և բացառվի գրագողության դեպքերը՝ դրա համար օգտագործելով համապատասխան ծրագրեր:

Իրավաբանական կրթության որակի բարձրացման և ուսանողների կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է կազմակերպել իրավունքի թեմայով ուսանողական օլիմպիադաներ, մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, ինչպես նաև իրավունքի տարբեր ճյուղերին առնչվող դատախաղեր և բանավեճեր: Անձնական փորձից ելնելով՝ վստահաբար կարող ենք ասել, որ բավականին արդյունավետ է իրավաբան և ոչ իրավաբան մասնագիտությամբ ուսանողների և մագիստրանտների համար իրավագիտակցության բարձրացմանն ուղղված ուսուցողական դասընթացների (թրեյնինգների) կազմակերպումը<sup>1</sup>, որը կարելի է իրականացնել ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով:

Որպես նորարարություն՝ առաջարկվում է բուհերում ստեղծել ուսանողի իրավունքների պաշտպանի ինստիտուտ, որը կօգնի ուսանողին վերականգնել բուհի և այլ կառույցների կողմից խախտված իրավունքները: Որպես տարբերակ՝ ուսանողի իրավունքների պաշտպան կարող է ընտրվել բարձր միավորներ ունեցող և ակտիվություն ցուցաբերող բարձր կուրսի իրավաբան ուսանողը:

## **Իրավաբանի մասնագիտական օրվա նշում**

Հայկական երկու հանրապետություններում քաղաքացիների մի որոշ մասը մասնագիտությամբ իրավաբաններ են, որոնք աշխատում են ինչպես պետական (իրավապահ և այլ մարմիններում), այնպես էլ՝ մասնավոր

---

<sup>1</sup> Ստեփանակերտում մեկնարկել է երիտասարդների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված քառօրյա դասընթացը, <http://aegmm.org/archives/639> - 24.03.2016:

հատվածում: Չնայած դրան, Հայկական երկու Հանրապետությունների տոնացույցներում չկա իրավաբանի օր: Որպես օրինակ նշենք, որ Ռուսաստանում իրավաբանի օրը նշվում է դեկտեմբերի 3-ին, Բելառուսում՝ դեկտեմբերի 1-ին կիրակի օրը, Դոդգեստանում՝ հունիսի վերջին կիրակի օրը, Մոլդովայում՝ հոկտեմբերի 19-ին, Ուկրաինայում՝ հոկտեմբերի 8-ին և այլն:

Օրինակ, մեր երկրում նշվում է դատական համակարգի աշխատողի, դատախազության աշխատողներինը, ոստիկանության ծառայողի մասնագիտական օրը և այլն:

Քանի որ ոչ բոլոր իրավաբաններն են աշխատում վերը նշված մարմիններում և, հաշվի առնելով հասարակությունում ու պետության կյանքում իրավաբանի մասնագիտությունը կարևորելու և գնահատելու անհրաժեշտությունը, առաջարկվում է Հայաստանի և Արցախի Հանրապետության տոնացույցում ավելացնել իրավաբանի օրը և այն նշել մայիսի 20-ին: Օրը պատահական չէ ընտրված. 488 թ. մայիսի 20-ին Մեծ Հայքի Արցախ նահանգի Աղվեն կոչվող տեղամասում Վաչագան Բարեպաշտի կողմից հրավիրված ժողովի ընթացքում ընդունվել է հայ իրականության մեջ առաջին սահմանադրությունը՝ «Սահմանադրություն կանոնականը», որն իր ընդունման ձևաչափով ու մինչ օրս պահպանող արժեքով գտնվում է գիտնականների ուշադրության կենտրոնում:

## **ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЮРИДИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В СЕВЕРНОМ УНИВЕРСИТЕТЕ**

### **АВЕТИК АРУТЮНЯН**

*руководитель Центра научных исследований, инновационных программ,  
послевузовского профессионального образования  
Северного университета, заведующий кафедрой юриспруденции и  
обществоведческих предметов,  
кандидат юридических наук, доцент,  
г.Степанакерт, Республика Арцах*

Цель статьи – выявить важность юридического образования в жизни государства и представить пути его совершенствования в Северном университете города Еревана.

Для достижения заявленной цели поставлены следующие задачи: изучить сущность юридического образования как компонента конституционной безопасности государства, выявить проблемы, препятствующие развитию юридического образования в Северном университете г. Еревана и представить предложения по их преодолению.

В ходе исследования были использованы методы индукции, дедукции, анализа и сравнительно-правовой метод.

Основной вывод исследования заключается в том, что с целью совершенствования необходимо пересмотреть подход к юридическому образованию, методологию преподавания, последовательно совершенствовать профессионализм преподавателей и пересмотреть

политику их поощрения, гармонизировать теоретические знания и практические навыки, предлагается также в календарь Армении и Республики Арцах внести профессиональный день юриста и отмечать его 20 мая.

**Ключевые слова:** *Северный университет, юридическое образование, профессиональные навыки юриста, методология преподавания, тренинг, защитник прав студента, профессиональный день юриста.*

## **WAYS TO IMPROVE LEGAL EDUCATION AT NORTHERN UNIVERSITY**

**AVETIK HARUTYUNYAN**

*Head of the Centre for Scientific Research, Innovative Programees and  
Postgraduate Professional Education of Northern University,  
Head of the Chair of Jurisprudence and Social Sciences,  
Ph.D in Law, Associate Professor,  
Stepanakert, the Republic of Artsakh*

The purpose of the article is to reveal the importance of legal education in the life of the state and present ways to improve it at Northern University, Yerevan.

To achieve the stated goal, the following tasks were set: to study the essence of legal education as a component of the constitutional security of the state; to identify problems hindering the development of legal education at Northern University, Yerevan and to present proposals for overcoming them.

In the course of the study, the methods of induction, deduction, analysis, and the comparative legal method were used.

The main conclusion of the study is that in order to improve legal education it is necessary to revise the approach to legal education, ` and teaching methodology, consistently improve the professionalism of lecturers and the policy of their encouragement, and harmonise theoretical knowledge and practical skills. It is also proposed to add a professional day to the calendar of Armenia and Artsakh lawyers and celebrate it on May 20.

**Keywords:** *Northern University, legal education, professional skills of a lawyer, teaching methodology, training course, defender of student rights, Lawyer's Day.*

**ԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԸՆԴԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ՀԵՂԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոն, պրոֆ. Ա.Իսկոյանի անվ. Էկոլոգիական իրավունքի գիտատեսությունների կենտրոնի գիտաշխատող, ի.գ.թ., ասիստենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*  
[h.hakhverdyan@ysu.am](mailto:h.hakhverdyan@ysu.am)

**ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՄՅԱՆ**

*Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոն, պրոֆ. Ա.Իսկոյանի անվ. Էկոլոգիական իրավունքի գիտատեսությունների կենտրոնի տնօրեն, ի.գ.թ., դոցենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*  
[olympiageghamyan@ysu.am](mailto:olympiageghamyan@ysu.am)

**Սույն հոդվածի նպատակն է գնահատել, թե որքանով է ՀՀ գործող օրենսդրությունը հնարավորություն տալիս պատշաճ մակարդակով ապահովել քաղաքացիական և համայնքային ծառայողների, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում այլ մարմինների աշխատակիցների Էկոլոգիական կրթությունը: Այս տեսանկյունից հոդվածի շրջանակներում ձևակերպվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել ի կատարումն միջազգային պարտավորությունների ընդունված ազգային իրավակարգավորման շրջանակը, ուսումնասիրել հանրային ծառայողների համար Էկոլոգիական կրթությունը կարգավորող ազգային օրենսդրության շրջանակը՝ հաշվի առնելով նաև շահառու տարբեր խմբերի կողմից մատանանշվող խնդիրները: Կիրառվել են իրավական հետազոտությունների ինդուկտիվ, դեդուկտիվ և վերլուծական մեթոդները: Առաջարկվել են հանրային ծառայողների Էկոլոգիական կրթության համակարգի բարելավմանն ուղղված իրավական լուծումներ, որոնք իրատեսականորեն կարող են ներառվել համակարգի ծրագրված բարեփոխումների հայեցակարգում:**

**Հիմնաբառեր՝** Էկոլոգիական կրթություն, քաղաքացիական ծառայողների վերապատրաստում, համայնքային ծառայողների վերապատրաստում, հանրային ծառայողների վերապատրաստում, լրացուցիչ կրթություն, Էկոլոգիական կրթական ծրագրեր:

**Ներածություն:** Հանրային կառավարման բոլոր ոլորտներում և բոլոր մակարդակներում յուրաքանչյուր ծառայողի առջև դրված խնդիրները լուծելու համար առանցքային նշանակություն ունեն համապատասխան ոլորտային գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Այս պնդումն առավել քան արդիական է նաև շրջակա միջավայրի պահպանության ոլորտում

լիազորություններ ունեցող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների համար, որոնց պաշտոնի անձնագրերը բովանդակում են հստակ պահանջներ իրավունքների և պարտականությունների, անհրաժեշտ կոմպետենցիաների և այլնի վերաբերյալ: Բնապահպանության և բնօգտագործման ոլորտի ՀՀ օրենքներն ուղղակիորեն Էկոլոգիական կրթությանը չեն անդրադառնում, սակայն առանձին ոլորտներում սահմանելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակը՝ գործնականում որոշակիացնում են հարցերի այն շրջանակը, որոնք պետք է ներառվեն համապատասխան պաշտոնատար անձանց վերապատրաստման և այլ կրթական ծրագրերում: Կյս համատեքստում Էկոլոգիական օրենսդրությունը պետք է ընկալվի նաև որպես որոշում կայացնողների համար կազմվող վերապատրաստման և այլ կրթական ծրագրերի բովանդակային ընդգրկումը որոշող կարևորագույն ուղենիշ:

Կարևորելով շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտում ներգրավված հանրային ծառայողների Էկոլոգիական կրթության պատշաճ իրականացման հանգամանքը՝ սույն հոդվածի շրջանակներում դիտարկվել են Էկոլոգիական կրթության միջազգային-իրավական հիմքերը, ինչպես նաև ազգային օրենսդրությունը և ձևավորված պրակտիկան: Հոդվածի նպատակն է գնահատել, թե որքանով է գործող օրենսդրությունը հնարավորություն տալիս պատշաճ մակարդակով ապահովել քաղաքացիական և համայնքային ծառայողների, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում այլ մարմինների աշխատակիցների Էկոլոգիական կրթությունը պլանային վերապատրաստումների, ատեստավորումների և այլ կառուցակարգերի միջոցով:

**Էկոլոգիական կրթության ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունները:** Հայաստանի Հանրապետությունը Կողմ է 13 գլոբալ միջազգային բնապահպանական կոնվենցիաների, արձանագրությունների և դրանց կից փաստաթղթերի, 11 տարածաշրջանային միջազգային բնապահպանական կոնվենցիաների և դրանց արձանագրությունների<sup>1</sup>: Սույն հոդվածի շրջանակներում հարկ է անդրադառնալ 3 գլոբալ բնապահպանական կոնվենցիաներին՝ «Կլիմայի փոփոխության մասին», «Անապատացման դեմ պայքարի մասին» և «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաներին:

Վերոգրյալ կոնվենցիաների ընտրությունը հիմնավորվում է դրանց լայն, միջճյուղային ընդգրկմամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ դրանց իրականացման ուղղությամբ ընդունված իրավական ակտերը և ձեռնարկված միջոցառումները բավարար ծավալ և որակ են կազմում ամփոփ գնահատականներ տալու համար:

Վերոգրյալ կոնվենցիաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Էկոլոգիական կրթության բաղադրիչ ներառող դրույթները հիմնականում ներառված են հետևյալ ինստիտուտներում.

- ա. շահառուների ներգրավվածության ապահովում,
- բ. տեղեկատվության կառավարում և տարածում,

<sup>1</sup> <http://env.am/storage/files/tab-arm-large.pdf>



- գ. Էկոլոգիական կառավարում,
- դ. ինստիտուցիոնալ հզորությունների ձևավորում,
- ե. մոնիթորինգ և գնահատում:

Ռիոյի կոնվենցիաներից բացի, Էկոլոգիական կրթության տեսանկյունից առանձնակի նշանակություն ունի նաև ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան<sup>1</sup> (Օրհուս, 1998թ): Էկոլոգիական կրթության մասով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր Կողմ նպաստում է Էկոլոգիական կրթությանը և շրջակա միջավայրի հիմնահարցերի կապակցությամբ հասարակայնության իրազեկության մակարդակի բարձրացմանը, մասնավորապես՝ շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին մասնակցության և արդարադատության մատչելիության վերաբերյալ»: Օրհուսի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասն արդեն ուղղակիորեն հասցեագրված է պաշտոնատար անձանց, ովքեր օժտված են Կոնվենցիայի կարգավորման ոլորտին առնչվող լիազորություններով: Մասնավորապես. «Յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի ապահովել, որպեսզի պաշտոնատար անձինք և պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող հարցերով ցուցաբերեն աջակցություն հասարակայնությանը և ուղղորդեն տեղեկատվության մատչելիության հարցում, աջակցեն որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և արդարադատության մատչելիության գործում»:

Էկոլոգիական կրթությունը որպես բաղադրիչ ընդգրկող միջոցառումներն առանձին կոնվենցիաների մասով հիմնականում հանգում են հետևյալին՝ ուսումնասիրություններ և գիտահետազոտական աշխատանքներ, գիտատեխնիկական ուսուցում, կադրերի պատրաստում, վերապատրաստում և փորձի փոխանակման նպատակով հատուկ ծրագրերի իրականացում, կրթական ծրագրերի վերանայում, հանրային իրազեկում:

**Ծրագրեր և ռազմավարություններ:** Հանրային ծառայողների Էկոլոգիական կրթությանը վերաբերող առանձին հայեցակերպեր հատվածաբար շրջափվում են մի շարք ռազմավարական փաստաթղթերում: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի<sup>2</sup> «Կրթություն» գլխում, թեև հատուկ առանձնացված չեն հետբուհական մասնագիտական կրթության հարցերը, այդուհանդերձ, կարևորվում է «կրթություն-գիտություն-աշխատաշուկա» կապի ամրապնդման խնդիրը: Կառավարության ծրագրի «Շրջակա միջավայրի պահպանություն» գլխում շեշտադրված է Էկոկրթության լայնածավալ միջոցառումների իրականացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն ակադեմիական ու գիտական ոլորտների հետ: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև հանրային ծառայողների Էկոկրթության հարցերը, քանի որ ակադեմիական ու գիտական ոլորտներն ուղղակիորեն ներգրավված են հանրային ծառայողների վերապատրաստման գործընթացում: Եվ, վերջապես, «Հանրային ծառայության համակարգ և

<sup>1</sup> Ընդունվել է 25.06.1998թ., ուժի մեջ է մտել 30.10.2001թ., ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):

<sup>2</sup> Ընդունվել է 26.08.2021թ., ուժի մեջ է մտել 26.08.2021թ., ԱԺՈ-002-Ն:

մարդկային ռեսուրսներ» գլխում նշվում է, որ արմատապես վերանայվելու է պետական ծառայողների կրթության, ուսուցման ու վերապատրաստման գործող համակարգը, ներդրվելու են տեխնոլոգիական առաջադեմ լուծումներով ուսուցման հնարավորությունները, վերանայվելու է կարողությունների ու գիտելիքի զարգացման քաղաքականությունը՝ մարդկային կապիտալի զարգացման, պետական հատվածում տաղանդների ներգրավման ու պահպանման նպատակով: ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում Էկոկրթության ու հարակից հարցերի առանձին շեշտադրումներով հանդերձ, պետք է փաստել, որ պետական կառավարման ու տեղեկան ինքնակառավարման մարմիններում շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների կառավարման ոլորտում որոշակի մասնագիտական աշխատանք կատարող անձանց մասնագիտական վերապատրաստման հարցերը հատուկ ուշադրության չեն արժանացել:

Հանրային ծառայողների Էկոլոգիական կրթության խնդիրները հարկ է դիտարկել նաև շրջակա միջավայրի հարցերին վերաբերող առանձին **ոլորտային ռազմավարությունների** համատեքստում: Այդպիսի փաստաթղթերի շարքին կարելի է դասել օրինակ՝ «ՀՀ 2017-2036թթ. կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին»<sup>1</sup>, «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին»<sup>2</sup>, «Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումները<sup>3</sup> և մի շարք այլ փաստաթղթեր: Նշված ռազմավարական փաստաթղթերում Էկոլոգիական կրթության խնդիրները դիտարկվում են ոչ թե համակարգային ու ինստիտուցիոնալ համատեքստում, այլ որոշակի հարցերի շուրջ հանրային ծառայողների առանձին խմբերի վերապատրաստման շրջանակներում:

Վերոգրյալ ռազմավարություններից բացի, հարկ է հիշատակել նաև «Շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումը<sup>4</sup>, որտեղ «Մասնագիտական կրթություն և վերապատրաստում» բաժնում հստակ ընդգծվում է առողջապահության ոլորտի մասնագետների համար Էկոլոգիական հարցերի և հանրային առողջության խնդիրների վերաբերյալ կրթական ծրագրերի մշակումը, կատարելագործումը և հետևողական իրականացումը:

Վերոգրյալ ծրագիրը եզակի օրինակ է, որտեղ Էկոլոգիական կրթության կարևորությունը որոշում կայացնողների համար ճանաչվում է միջճյուղափն կրթական ծրագրերի մշակման համատեքստում:

<sup>1</sup> Ընդունվել է 08.12.2016թ., ուժի մեջ է մտել 27.12.2016թ., չի հրապարակվել:

<sup>2</sup> Ընդունվել է 13.05.2021թ., ուժի մեջ է մտել 15.05.2021թ., Միասնական կայք 2021.05.03-2021.05.16:

<sup>3</sup> Ընդունվել է 22.03.2018թ., ուժի մեջ է մտել 07.04.2018թ., չի հրապարակվել:

<sup>4</sup> Ընդունվել է 01.08.2002թ., ուժի մեջ է մտել 14.09.2002թ., ՀՀՊՏ 2002.09.04/38(213) Հոդ.

**Էկոլոգիական կրթության ոլորտի օրենսդրություն:** Անընդմեջ Էկոլոգիական կրթությունը ՀՀ կրթական համակարգի անբաժանելի մասն է, որը, համաձայն «Ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup>, ընդգրկված է կրթության բոլոր մակարդակներում, ներառյալ՝ ոչ ֆորմալ կրթությունը:

Օրենքի 7-րդ հոդվածը նախատեսում է նաև, որ կրթության համակարգի բոլոր օղակներում Էկոլոգիական ուղղվածության առարկաների դասավանդումը պետք է իրականացվի պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Իսկ այդ չափորոշիչների հիման վրա պետք է մշակվեն Էկոլոգիական կրթության միասնական պետական ծրագրերը: Հատկանշական է, որ օրենքն այդ ծրագրերի մշակման գործում պետական կառավարման լիազորված մարմինների դերակատարությանը զուգահեռ ընդգծել է հասարակական կազմակերպությունների ներդրումը: Օրենքի 7-րդ և 10-րդ (ՀՀ կառավարության իրավասությունները) հոդվածների համադրությունից պարզ է դառնում, որ պետական ծառայողների Էկոլոգիական կրթությունը 7-րդ հոդվածում թվարկված որևէ օղակի շրջանակներում չի դիտարկվում: Այդուհանդերձ, պետական ծառայողներն առանձնացվել են որպես հատուկ շահառու խումբ:

«Ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովելու նպատակով 2018թ. ընդունվել է «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումը<sup>2</sup>, որի ուղղություններից է նաև լրացուցիչ և շարունակական Էկոլոգիական կրթության համակարգի զարգացումը: Այս ուղղությունը համահունչ է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, որի դեպքում հանրային ծառայողների արհեստավարժությունը երկրի ռազմավարական խնդիրների իրագործման ուղղությամբ առաջընթացի հիմնական պայման է: Ռազմավարությունն ախտորոշել է համակարգի հիմնական խնդիրը՝ հանրային ծառայողների վերապատրաստման համակարգը բավարար ուշադրություն չի դարձնում Էկոլոգիական կրթությանը: Ռազմավարությունը ձևակերպում է նաև հանրային ծառայողների Էկոլոգիական կրթության համակարգի զարգացման համար անհրաժեշտ մի շարք գործողություններ, որոնք, սակայն, խիստ ընդհանրական են, չեն որոշակիացված կոնկրետ ուղղություններում և չափելի ու գնահատելի չեն: Օրինակ, նախատեսվում է մշակել ու ներդնել հանրային ծառայության համակարգում Էկոլոգիական վերապատրաստման ծրագրեր՝ կայուն զարգացման սկզբունքին համահունչ կամ որոշումներ ընդունողների մոտ ձևավորել բնապահպանական մշակույթ՝ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, արդյունաբերական օբյեկտների նախագծման, շինարարության և շահագործման հարցերում և այլն:

**Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության լրացուցիչ և**

<sup>1</sup> Ընդունվել է 20.11.2001թ., ուժի մեջ է մտել 25.12.2001թ., ՀՀՊՏ 2001.12.25/41(173) Հոդ.998:

<sup>2</sup> Ընդունվել է 20.11.2001թ., ուժի մեջ է մտել 25.12.2001թ., ՀՀՊՏ 2001.12.25/41(173) Հոդ.998:

**շարունակական Էկոլոգիական կրթության համակարգի զարգացման** բաղադրիչն արմատական վերանայման կարիք ունի, որտեղ պետք է հատուկ կարևորվեն վերապատրաստման կարիքի ձևակերպումը շահառուների կողմից, կրթական ծրագրերի թարմացման, մեթոդների կատարելագործման, նոր ուղղությունների ներդրման, ինչպես նաև կրթական ծրագրերի բովանդակությունը շահառուների լիազորություններին համապատասխանեցնելու հարցերը: Այս ամենի հետ մեկտեղ հարկ է հստակեցնել ֆինանսավորման աղբյուրները, գործողությունների հենանիշային տվյալները և կատարողականի ցուցանիշները:

**Էկոլոգիական կրթությունը քաղաքացիական և համայնքային ծառայողների, ինչպես նաև ՊՈԱԿ-ների աշխատակիցների համար:** Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման գործունեությունն առավել լիարժեք ու արդյունավետ իրականացնելու գործում լուրջ դեր ու նշանակություն ունեն ոլորտի որոշում կայացնող սուբյեկտները՝ ի դեմս քաղաքացիական, համայնքային ծառայողների և ՊՈԱԿ-ների աշխատակիցների: Կառավարման համակարգի ներկայացուցիչներին պայմանական լսարանները բաշխելու դեպքում նրանք հիմնականում տեղավորվում են հենց որոշում կայացնողների, իսկ առանձին դեպքերում՝ այդ որոշումների վրա ազդեցություն թողնողների հատվածներում: ՀՀ-ում որոշում կայացնողների վերապատրաստման և որակավորման բարձրացման, ներառյալ՝ Էկոլոգիական կրթության, հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով<sup>1</sup>, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով<sup>2</sup>, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով<sup>3</sup> և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով<sup>4</sup>:

Թեև վերոհիշյալ օրենքների կարգավորման առարկայի մեջ ուղղակիորեն ներառնված չեն Էկոլոգիական կրթության հարաբերությունները, բայց սահմանված է ծառայությունների առանձին տեսակների վերապատրաստման համակարգը:

Ուշագրավ է, որ թե՛ «Քաղաքացիական ծառայության մասին», թե՛ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքներում այս ծառայությունների կազմակերպման համար հղում է արվում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված սկզբունքների վրա: Անհրաժեշտ ենք համարում այդ սկզբունքներից առանձնացնել արժանիքահեն կարիերային առաջընթացի վրա հիմնված հանրային ծառայության կայունությունը և հանրային ծառայողի արհեստավարժությունը՝ որպես համապատասխան գործառույթների իրականացմանն առնչվող գիտելիքների, հմտությունների, ունակությունների առկայություն և արհեստավարժության շարունակական բարձրացման երաշխիք:

<sup>1</sup> Ընդունվել է 23.03.2018, ուժի մեջ է մտել 01.08.2018, ՀՀՊՏ 2018.03.29/24(1382), Հոդ. 398:

<sup>2</sup> Ընդունվել է 14.12.2004, ուժի մեջ է մտել 25.02.2005, ՀՀՊՏ 2005.01.26/7(379), Հոդ. 117:

<sup>3</sup> Ընդունվել է 23.03.2018, ուժի մեջ է մտել 09.04.2018, ՀՀՊՏ 2018.03.29/24(1382), Հոդ. 399:

<sup>4</sup> Ընդունվել է 02.05.2013, 01.09.2013, ՀՀՊՏ 2013.06.07/30(970), Հոդ. 551:

**Քաղաքացիական ծառայություն:**

Իրավիճակն առավել ամբողջական ու թափանցիկ ներկայացնելու նպատակով հիշատակենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության բարեփոխումների իրականացման ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին 2015 թ-ի դետեմբերի 29-ին ընդունած Կառավարության նիստի արձանագրության քաղվածքը<sup>1</sup>: Համաձայն դրա՝ քաղաքացիական ծառայության համակարգի թույլ կողմերից են ճանաչվել վերապատրաստման անբավարար կարողությունները և մասնագիտական վերապատրաստումները: Արձանագրվել է, որ վերապատրաստումների իրականացման կարողությունները չեն համապատասխանում առկա մարտահրավերներին, ինչպես նաև մեթոդական հագեցվածությունը չի համապատասխանում լավագույն միջազգային փորձին, վերապատրաստումները հասցեական չեն և հիմնված չեն վերապատրաստումների կարիքների իրական գնահատականների վրա: Վերոհիշյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, հասարակական հարաբերությունների զարգացման տվյալ ժամանակահատվածի առանձնահատկությունները՝ մշակվել և 2018 թ-ի մարտի 23-ին ընդունվել է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ նոր օրենքը, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման, քաղաքացիական ծառայության պաշտոնների համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, քաղաքացիական ծառայողի իրավական վիճակի, պաշտոնից ազատման, ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի հետ կապված այլ հարաբերություններ:

Այս օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական ծառայության անցնող քաղաքացիների՝ սույն օրենքից բխող իրավունքների իրականացմանն առնչվող պայմանները և կարգերն ընդունում է Կառավարությունը, իսկ ծառայության կազմակերպման առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը»:

<sup>1</sup> Ընդունվել է 29.12.2015, ուժի մեջ է մտել 29.12.2015, արձանագրային որոշում:

Քաղաքացիական ծառայության օրենսդրությունը լիարժեք պատկերացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ գոյություն ունի երկու հարթություն: Առաջինը՝ քաղաքացիական ծառայության և հանրային ծառայության օրենքների միջև գործող հարաբերությունն է, երկրորդը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի և այս ոլորտի ենթաօրենսդրական ակտերի միջև առկա հարաբերությունները:

**«Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում»**

հասկացությունը գործող օրենքում սահմանված է որպես քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում: Օրենքի առավելություններից է այն, որ վերապատրաստումը սահմանված է և՛ որպես իրավունք, և՛ որպես պարտականություն՝ բարելավելու իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումներին մասնակցելու միջոցով: Նշված են այն մարմինները, որոնք պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու և այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար:

Ըստ գործող օրենքի վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում (փոփոխվում) է քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատումից: Վերապատրաստում անցկացվում է նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ:

Օրենքում սահմանված են նաև գլխավոր քարտուղարի կողմից քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերի կազմման գործընթացները, դրանց ներկայացված պահանջները և քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ համաձայնեցման գործընթացը: Հաշվեքննիչ պալատում վերապատրաստման ծրագիրը հաստատում է Հաշվեքննիչ պալատը:

Նույն օրենքի համաձայն կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը: Օրենքը համապատասխան մարմինների ծրագրերի ուսումնասիրության ժամանակ քաղաքացիական ծառայության գրասենյակին իրավունք է վերապահել առաջարկել վերանայել վերապատրաստման ծրագիրը, ինչպես նաև այդ ծրագրերում ներառել նաև կոմպետենցիաների վերաբերյալ կազմված վերապատրաստման ծրագրերը:

Գործող օրենքի համաձայն վերապատրաստումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Անհատական ծրագրով

հաստատված համապատասխան կրեդիտներն ստանալուց հետո քաղաքացիական ծառայողը համարվում է վերապատրաստված:

2018 թ-ից գործող «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի կարևորագույն առավելություններից մեկն էլ նույն օրենքի հիման վրա «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» ՀՀ առաջին փոխվարչապետի որոշումն է՝ ընդունված 2019 թ-ի հունվարի 9-ին<sup>1</sup>:

Ընդհանուր դրույթներից զատ մանրամասն սահմանված են քաղաքացիական ծառայողների կարիքների գնահատման, անհատական ծրագրերի կազմման, վերապատրաստման գործընթացի կազմակերպման կարգն ու պայմանները, վերապատրաստողներին ներկայացվող հիմնական չափանիշները, անհատական ծրագրերում ներառված դասընթացները, հեռավար ուսուցման մոդուլներին ներկայացվող պահանջները և այլն:

Քննարկվող բնագավառում փաստորեն ընդունվել է նոր օրենք, մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք առավել խորքային և լիարժեք իրավակարգավորումներ են պարունակում: Չնայած վերոգրյալին, պետք է նաև ընդունել, որ տվյալ բնագավառի բոլոր նպատակների իրականացման և բոլոր հարթություններում հաջողության հասնելու համար պահանջվում է որոշակի տեխնիկական հագեցվածություն, բոլոր ոլորտների վերապատրաստումներում մոդուլների ստեղծում, հեռահար վերապատրաստումներ իրականացնելու ապահովում և այլն: Նշենք, որ օրինակ, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի Էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակներում առաջին անգամ մշակվել են լուրջ ծավալով հայերեն բնապահպանական մոդուլներ, որոնց հիման վրա 2019 թ-ի մայիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում վերապատրաստվել է շուրջ 1000 մասնագետ, այդ թվում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից: Նկարագրածը, իհարկե, ծանրակշիռ ու արդյունավետ աշխատանք է, սակայն կարևոր է, որ վերապատրաստումներն ընդգրկեն հնարավորինս բոլոր՝ համապատասխան քաղաքացիական ծառայողներին, կիրառվեն վերապատրաստումների արդի մեթոդներ, մասնավորապես՝ ներդրվի հեռահար ուսուցման ծրագրային ապահովում, ինչպես նաև վերապատրաստումների արդյունքների գնահատման, առաջխաղացման համակարգ:

Կարևոր է նշել, որ ներկայումս քաղաքացիական ծառայության համակարգում առաջխաղացումը գլխավորապես կախված է

<sup>1</sup> Ընդունվել է 09/01.2019, ուժի մեջ է մտել ՀՀՊՏ 2019.01.16/3(1456) Հոդ. 18:

աշխատանքային ստաժից, մինչդեռ առաջխաղացումը պետք է լինի արժանիքների վրա հիմնված, այսինքն՝ պետք է գործի անհատական արդյունավետության ինստիտուտը: Այսօր լուրջ կերպով հաշվի չեն առնվում կատարողականի գնահատման արդյունքները, քաղաքացիական ծառայողի հմտությունները և այլն: Մինչդեռ այն անձինք, որոնք իրենց աշխատանքային գործընթացում ակտիվորեն մասնակցում են նաև վերապատրաստումների, մասնագիտական գիտելիքների և հմտությունների հագեցվածություն ձեռք բերում նաև վերապատրաստումների արդյունքում, պետք է խրախուսվեն տարբեր մեթոդներով, ինչպես օրինակ՝ արձակուրդային լրացուցիչ օրեր կամ վճարման հավելումներ ստանալու միջոցով: Վերապատրաստման ծրագրերի մշակման առնչությամբ առաջարկում ենք դրանցում որպես պարտադիր բաղադրիչ ներառել կրթական վերջնարդյունքները, որոնք թույլ կտան ծրագրերը բովանդակային և ձևավորվող հմտությունների մասով ուղղակիորեն կապել պաշտոնի անձնագրերի, ինչպես նաև համապատասխան ոլորտներում ընթացող զարգացումների հետ: Գտնում ենք նաև, որ ավելի արդյունավետ կլինի, եթե վերապատրաստում իրականացնող կազմակերպություններն ընտրվեն մրցույթով: Մրցութային կարգով ուսումնական հաստատության ընտրությունը լրացուցիչ խթան է որակյալ մասնագիտական կազմի/վերապատրաստողների համալրման, դասավանդման մեթոդաբանության շարունակական զարգացման առումով: Մրցույթի արդյունքների գնահատման մասով որոշակի կարևորություն պետք է տրվի նախորդող ժամանակահատվածում տվյալ հաստատության կողմից վերապատրաստված քաղաքացիական կամ համայնքային ծառայողների կարծիքին, օրինակ՝ նախորդ վերապատրաստման մասնակիցների կողմից ցածր արդյունավետությամբ գնահատված վերապատրաստողը պետք է փոխարինվի:

Այս անկախիքները կարող են իրականություն դառնալ պետական կամքի դրսևորման, համակարգի կատարելագործման առումով քաղաքական աջակցության, ֆինանսական միջոցների վեկտորներն այս ուղղությամբ թեքելու միջոցով:

**Համայնքային ծառայություն:** Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված):

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, համայնքային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, համայնքային ծառայության կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Ոլորտը կարգավորող առանցքային իրավական ակտ է նաև «Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի



հրամանը<sup>1</sup>: Գործող իրավակարգավորումների համաձայն յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման:

Վերապատրաստումն անցկացվում է նաև տվյալ պաշտոնի անձնագրով համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում համայնքային ծառայողի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ:

Համայնքային ծառայողների վերապատրաստումն անցկացնում են օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունները: Պայմանավորված համայնքների խոշորացման գործընթացներով՝ համայնքային ծառայողների վերապատրաստումներ վերջին շրջանում չեն իրականացվել: Ընդ որում համայնքների խոշորացումն ու կառուցվածքներում գործառույթների և աշխատանքի բաժանման հարակից փոփոխություններն առաջացնում են համապատասխան ոլորտներում կարողությունների կատարելագործման կարիք: Վերապատրաստումը պետք է նպաստի ծրագրերի իրականացմանը, և վերապատրաստումները պետք է հաշվի առնեն զարգացման համապատասխան ծրագրերում սահմանված առաջնահերթ ոլորտները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով<sup>2</sup> ՏԻՄ-ներին վերապահված մի շարք լիազորություններ ուղղակիորեն վերաբերում են շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման հարաբերություններին, ինչպես նաև համայնքի ղեկավարի և աշխատակազմի դերին շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման կազմակերպման և իրականացման գործընթացներում, գտնում ենք, որ գործող ծրագրերում Էկոլոգիական կրթության բաղադրիչն անտեսված է, մինչդեռ այն կարևոր հիմք է թե՛ համայնքային ծառայողների և թե՛ նրանց հետ ուղղակի կամ անուղղակի համագործակցող բնակչության կողմից շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման գործառույթների իրականացման համար:

**Հանրային ծառայություն:** Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված): Մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը համապատասխան օրենքով ևս դիտվում է որպես հանրային ծառայողի իրավունք և պարտականություն: Ինչ վերաբերում է վերապատրաստման, կատարողականի (աշխատանքի) գնահատման, շարժունության, կադրերի ռեզերվում գրանցվելու, խրախուսման,

<sup>1</sup> Ընդունվել է 28.12.2016թ., ուժի մեջ է մտել 11.02.2007թ., ՀՀԳՏ 2007.02.01/3 (243) Հոդ. 30:

<sup>2</sup> Ընդունվել է 07.05.2002թ., ուժի մեջ է մտել 21.06.2002թ., ՀՀԳՏ 2002.06.21/21(196) Հոդ. 473:

կարգապահական պատասխանատվության ենթարկելու, պաշտոնից ազատելու և ծառայությունը դադարեցնելու, և մի շարք այլ հարաբերություններին, ապա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, դրանք կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով: Վերոգրյալից բխում է, որ քաղաքացիական և համայնքային ծառայողների վերապատրաստման մոդելի հիմքում դրված իրավակարգավորումներն ընդհանուր են նաև հանրային ծառայողների համար: Ուստի կատարված եզրակացությունները և ներկայացված առաջարկությունները վերաբերելի են նաև այս բաժնի մասով:

**Պետական ոչ առևտրային կազմակերպություններ:** Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 3-րդ հոդվածի համաձայն պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

Պետական ոչ առևտրային կազմակերպությունները, գործելով նախարարությունների կազմում էական դերակատարություն ունեն կառավարչական որոշումների, վարչական ակտերի և այլ տեսակի որոշումների կայացման գործում: Էկոլոգիական կրթությունը հատկապես ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը հանձնված ՊՈԱԿ-ների աշխատակիցների համար կարևորվում է այն իմաստով, որ դրանց կանոնադրային նպատակները և խնդիրները ներառում են շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտին վերաբերող առանցքային խնդիրներ և կոչված են օժանդակելու ՀՀ շրջակա միջավայրի նախարարության լիազորությունների պատշաճ իրականացմանը: Գործող իրավակարգավորման պայմաններում ՊՈԱԿ-ների աշխատակիցների համար վերապատրաստման կամ մասնագիտական որակավորման բարձրացման օրենսդրական որևէ պահանջ չի գործում: Հետևաբար, ՊՈԱԿ-ներում ընդգրկված մասնագետների համար որակավորման բարձրացման, ներառյալ՝ Էկոլոգիական կրթության ծրագրերի իրականացումը, թողնված է բացառապես ՊՈԱԿ-ի տնօրենի հայեցողությանը, ինչն արդարացված մոտեցում չէ:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք քարտեզագրել ինչպես ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը, այնպես էլ հանրապետական այլ գործադիր մարմիններին հանձնված ՊՈԱԿ-ների կանոնադրություններով ամրագրված գործունեության առարկան և նպատակները՝ նպատակ ունենալով վեր հանել ընդհանուր Էկոլոգիական կրթության կամ դրա առանձին, ավելի նեղ բաղադրիչների նկատմամբ պահանջարկը և մշակել համապատասխան կրթական մոդուլներ:

<sup>1</sup> Ընդունվել է 23.10.2001թ., ուժի մեջ է մտել 03.12.2001թ., ՀՀՊՏ 2001.12.03/37(169) Հոդ. 908:

Այսպիսով, յուրաքանչյուր պետության կայունության ապահովման և հավասարակշռված զարգացման պարտադիր հենասյուներից է արդյունավետ գործող պետական ծառայության համակարգի առկայությունը: Պետական կառավարման համակարգում արդյունավետ, հավասարակշռված քաղաքականությունն իրականացնելու, համակարգը քաղաքական հարաբերակցության փոփոխությունից արհեստավարժ կադրերով ապահովելու, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական ու շարունակական կատարելագործման իրականացումը հնարավոր է ճիշտ և արդյունավետ կազմակերպած վերապատրաստումների հիման վրա: Սույն հոդվածում քննարկված բացերն ու թերությունները, առաջարկվող լուծումները կարող են հիմք հանդիսանալ քաղաքացիական և համայնքային ծառայողների վերապատրաստումների՝ էկոլոգիական կրթության բաղադրիչն առավել ամբողջական և լիարժեք դարձնելու գործընթացում:

## **ПРОБЛЕМЫ ЭКОЛОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ ПЕРЕПОДГОТОВКИ ГОСУДАРСТВЕННЫХ И МУНИЦИПАЛЬНЫХ СЛУЖАЩИХ**

### **ЭГИНЕ ГРИГОРЯН**

*кафедра гражданского процесса Ереванского государственного университета, научная сотрудница Научно-образовательного центра экологического права им. А.Исхоян, к.ю.н., ассистент, г. Ереван, Республика Армения*

### **ОЛИМПИА ГЕГАМЯН**

*кафедра гражданского процесса Ереванского государственного университета, директор Научно-образовательного центра экологического права им. А.Исхоян, к.ю.н., доцент, г. Ереван, Республика Армения*

Настоящая статья посвящена оценке эффективности действующего законодательства РА с точки зрения должного обеспечения экологического образования гражданских и муниципальных служащих, а также сотрудников иных органов в сфере государственного управления. С этой целью были сформулированы и решены следующие задачи: исследование национального законодательства, принятое во исполнение международных обязательств страны, изучение национального законодательства, регулирующее экологическое образование общественных служащих, принимая во внимание проблемы, выявленные разными группами бенефициарий. Были применены индуктивный, дедуктивный и аналитический методы правовых исследований. В результате авторами предложены правовые решения, направленные на улучшение системы экологического образования общественных служащих, которые могут быть интегрированы в проекты запланированных реформ.

**Ключевые слова:** экологическое образование, переподготовка государственных служащих, переподготовка муниципальных служащих, дополнительное образование, программы экологического образования.

## **PROBLEMS OF ENVIRONMENTAL EDUCATION IN THE CONTEXT OF TRAINING FOR CIVIL AND COMMUNITY SERVANTS**

**HEGHINE GRIGORYAN**

*Chair of Civil Procedure of Yerevan State University, Research Fellow at Environmental Law Resource Centre, PhD in Law, Assistant, Yerevan, Republic of Armenia*

**OLYMPIA GEGHAMYAN**

*Chair of Civil Procedure of Yerevan State University, Director of Environmental Law Resource Centre named after A. Iskoyan, PhD in Law, Associate Professor, Yerevan, Republic of Armenia*

The present article is aimed at assessing the efficiency of the existing legislation of the RA in the sphere of environmental education for civil servants, community servants, as well as and the staff of other entities engaged in state governance. For this purpose, the following tasks have been formulated: scrutinise the legal and regulatory framework deriving from international commitments of the RA; to examine the national regulatory framework covering the relationships in the sphere of environmental education, and to consider the problems identified by different groups of stakeholders. Inductive, deductive, and analytical methods of legal research were used.

As a result, legal solutions aimed at improving of the environmental education system of public servants can be tentatively incorporated into the agenda of planned reforms.

**Key words:** *environmental education, requalification of civil servants, requalification of community servants, additional education, environmental study programmes.*

**ԿՐՈՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ՎԱՅԵ ԹՈՐՈՍՅԱՆ**

*Հայաստանի եվրոպական համալսարանի իրավաբան,  
իրավագիտության ամբիոնի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[vaxinak91@mail.ru](mailto:vaxinak91@mail.ru)*

**Հողվածի հիմնական նպատակն է բացահայտել կրոնական կրթության միջազգային իրավական հիմնախնդիրները՝ արտասահմանյան երկրների և հայրենական փորձի լույսի ներքո:**

**Հետազոտության նպատակից բխեցրել ենք հետևյալ հիմնական խնդիրները՝ վեր հանել արտասահմանյան երկրների որդեգրած քաղաքականությունը կրոնական ուսուցման հարցում, ներկայացնել կրոնական ուսուցման հիմնահարցը միջազգային իրավական փաստաթղթերում՝ միաժամանակ վերլուծելով Ստրասբուրգի դատարանի նախադեպային դիրքորոշումները:**

**Հետազոտության մեջ կիրառվել են դիալեկտիկական մատերիալիզմի, վերլուծության և սինթեզի, պատմական և տրամաբանական, ինդուկցիայի և դեդուկցիայի, ինչպես նաև համակարգային մեթոդները:**

**Հետազոտության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ արդի ժամանակներում, չնայած աշխարհիկացման գործընթացներին՝ կրոնը չի կորցնում իր արդիականությունը և շարունակում է ներգործել հասարակության գիտակցության և վարքի վրա: Կրոնի ազդեցությունը, նախ և առաջ սկսվում է կրոնական կրթությունից: Վերջինիս կենսագործումը և դրանով պայմանավորված խնդիրները կարևորվում են հատկապես աշխարհիկ պետություններում, որտեղ կրոնական քարոզչությունից և պարտադրանքից զերծ կրթությունը դառնում է անհատի աշխարհայացքի ազատ ընտրության հուսալի երաշխիքներից մեկը:**

**Հիմնաբառեր՝** կրոնական կրթություն, մարդու իրավունքներ, նախադեպային իրավունք, խղճի ազատության իրավունք, մտքի ազատության իրավունք, կրոնի ազատության իրավունք, աշխարհիկ պետություն:

Արդի ժամանակներում, չնայած աշխարհիկացման գործընթացներին՝ կրոնը չի կորցնում իր արդիականությունը և շարունակում է ներգործել հասարակության գիտակցության և վարքի վրա: Այդ ազդեցությունն անհատի նկատմամբ սկսվում է փոքր հասակից և որպես կանոն

ուղեկցվում ամբողջ կյանքի ընթացքում: Մարդկային գիտակցության, դաստիարակության և աշխարհայացքի ձևավորման վրա կրոնի ազդեցությունը, նախ և առաջ սկսվում է **կրոնական կրթությունից**: Վերջինիս կենսագործումը և դրանով պայմանավորված խնդիրները կարևորվում են հատկապես աշխարհիկ պետություններում, որտեղ *կրոնական քարոզչությունից և պարտադրանքից զերծ կրթությունը դառնում է անհատի աշխարհայացքի ազատ ընտրության հուսալի երաշխիքներից մեկը*:

#### **Ա) Արտասահմանյան երկրների որդեգրած քաղաքականությունը.**

Արտասահմանյան պետությունների ուսումնական հաստատություններում կրոնական ուղղվածության առարկայի դասավանդման հարցը լուծվում է տարբեր կերպ<sup>1</sup>: Այդ ուսուցումն իրականացվում է ինչպես կրոնական կազմակերպություններին պատկանող մասնավոր հաստատություններում, այնպես էլ պետական կրթահամալիրներում: Լինում է նաև ճիշտ հակառակը, երբ կրոնական կրթությունը պետական կրթական համակարգում առհասարակ արգելվում է: Այդպիսի երկրների շարքին են դասվում, օրինակ **Չինաստանը** և **Ճապոնիան**, որտեղ կրթադաստիարակչական գործընթացը մեծապես հենվում է բարոյականության և ազգային-սովորույթային պատկերացումների վրա: **Մոնղոլիայում** թեև օրենսդրությամբ երաշխավորված է բուդդայական կրոնի գերիշխող կարգավիճակը, հանրակրթական համակարգում արգելվում է կրոնական կրթությունը:

Պետությունների մեծ մասը, այդուհանդերձ, կարևորում են կրոնական կրթությունը և այն նախատեսում հանրակրթական համակարգում՝ սահմանելով պարտադիր կամ կամընտրական կառուցակարգեր: Այն **պարտադիր** է, մասնավորապես, Գերմանիայում, Թուրքիայում, Ավստրիայում, Կիպրոսում:

**«Իսլամի հիմունքներ»** առարկան պարտադիր կերպով ուսուցանվում է արաբական աշխարհի բազմաթիվ երկրներում, և, առհասարակ, այն երկրներում, որտեղ իսլամը գաղափարական խորը արմատներ ունի, օրինակ Չեչնիայում, Յուսիսային Օսեթիայում և այլն: Մի շարք երկրներում կրոնական կրթությանը զուգահեռ սահմանվում են **այլընտրանքներ**՝ բարոյական, փիլիսոփայական առարկաների տեսքով, ինչպես, օրինակ Ռուսաստանում, Վրաստանում, Իտալիայում, Ֆինլանդիայում, Բելգիայում, Լյուքսեմբուրգում: Իսկ, Յունգարիայում, Լատվիայում և Լիտվայում պետական իրավասու մարմինները՝ կրոնական կրթության իրականացման առանձնահատկությունների մասով, կրոնական կազմակերպությունների

---

<sup>1</sup> Տե՛ս **Քիշարյան Յ., Թորոսյան Վ.**, Կրթության աշխարհիկության հիմնախնդիրները միջազգային փորձի և իրավակարգավորումների լույսի ներքո, «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու 10 (02), Եր., 2019, էջեր՝ 232-243:

հետ համատեղ որոշումներ են ընդունում<sup>1</sup>: Խնդրի առավել համակողմանի ընկալման համար, առանձին օրինակներով, ամփոփ դիտարկելն արտասահմանյան երկրների իրավական փորձը:

**Հունաստանում** կրոնական կրթությունը՝ որպես դպրոցական պարտադիր առարկա, մեծապես պայմանավորված է Հուլյն ուղղափառ եկեղեցու պատմական նշանակությամբ և պետական կարգավիճակով: Սակայն ինչպես երևում է պետական եկեղեցու դավանանքը չընդունող ծնողներն ունեն հիշյալ դասընթացներից իրենց երեխաներին ազատվելու հնարավորություն:

**Իսրայելը** երաշխավորվում է կրոնական կրթության իրավունքը, որը ֆինանսավորվում է պետական միջոցների հաշվին: Երեխայի ծնողները կարող են ընտրել՝ երեխային կրթության համար ուղարկել աշխարհիկ պետական դպրոց, կրոնական պետական դպրոց կամ մասնավոր կրոնական դպրոց:

Ուշագրավ է **Իտալիայի** փորձը, որտեղ կաթոլիկ կրթությունը գտնվում է պետության հոգածության և ֆինանսական աջակցության ներքո: Պետությունը չի պարտադրում աշակերտներին հաճախել կրոնական կրթության դասերին, բայց պարտավորեցնում է ծնողներին ամեն տարի գրավոր տեղեկացնել նման մտադրության մասին: Իտալիայի պետական դպրոցներում կրոնական առարկա դասավանդողների ընտրությունը կատարվում է եկեղեցու երաշխավորության հիման վրա: Այդ կերպ հաստատվում է տվյալ ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը և որակավորումը, առանց որի պետական իրավասու մարմինը կարող է զրկել ուսուցչին դասավանդելու իրավունքից<sup>2</sup>: Հատկանշական է, որ այս մոտեցումը կիրառելի է բազմաթիվ պետություններում:

Աշխարհիկ պետություն համարվող **Ղազախստանը** նույնպես ճանաչում է կրթության աշխարհիկ սկզբունքը: 2010 թվականին Ղազախստանի դպրոցներում ֆակուլտատիվ կարգով (ըստ ցանկության) մտցվեց «Կրոնագիտության հիմունքներ» առարկան, որը 2016 թվականին՝ որպես պարտադիր առարկա ներմուծվեց միջնակարգ դպրոցների 9-րդ դասարաններում՝ «Աշխարհիկությունը և կրոնագիտության հիմունքները» անվանումով: Վերջինիս դասավանդումը վերապահվեց միայն հատուկ պատրաստվածություն անցած պատմության ուսուցիչներին<sup>3</sup>:

**Ռուսաստանի Դաշնության** «Կրթության մասին» Դաշնային օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է կրթական գործունեություն

---

<sup>1</sup> Տե՛ս **Степанова Е.А.**, Религия и образование в Европе: дебаты о взаимной совместимости «Известия Уральского федерального университета». Серия 1: «Проблемы образования, науки и культуры» 2011, с. 6-15:

<sup>2</sup> Տե՛ս **Понкин И.В.** Правовые основы светскости государства и образования. – М.: Про-Пресс, 2003. с. 388:

<sup>3</sup> Տե՛ս Приказ Министра образования и науки Республики Казахстан от 15 июля 2014 года № 281 О внесении изменения в приказ Министра образования и науки Республики Казахстан от 3 апреля 2013 года № 115 «Об утверждении типовых учебных программ по общеобразовательным предметам, курсам по выбору и факультативам для общеобразовательных организаций»:

իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կրթության աշխարհիկ բնույթը<sup>1</sup>: 2012 թվականին ՌԴ հանրակրթական բոլոր դպրոցներում ներմուծվեց «Կրոնական մշակույթի և աշխարհիկ էթիկայի հիմունքները» ուսումնական առարկան: Վերջինս ներառում է վեց մոդուլ՝ ըստ ցանկության որևէ մեկն ընտրելու հնարավորությամբ: Դրանք են՝ «Ուղղափառ մշակույթի հիմունքները», «Իսլամական մշակույթի հիմունքները», «Բուդդայական մշակույթի հիմունքները», «Հուդայական մշակույթի հիմունքները», «Համաշխարհային կրոնական մշակույթների հիմունքները», «Աշխարհիկ էթիկայի հիմունքները»:

Կրթության կազմակերպման հարցը յուրահատուկ կերպ է կարգավորվում **Մեքսիկայում**: Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ «երաշխավորվում է դավանանքի ազատությունը, որի սկզբունքներով պետք է առաջնորդվի կրթությունը, իսկ վերջինս չպետք է ընդհանրություն ունենա որևէ կրոնական ուսմունքի հետ, այն պետք է հիմնված լինի գիտության առաջընթացի վրա, ծառայի տգիտության և նրա հետևանքների՝ ստրկության, ֆանատիզմի, և նախապաշարմունքների դեմ պայքարին»<sup>2</sup>:

2002 թվականին ՀՀ կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարանների ուսումնական ծրագրում ներմուծվեց «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան<sup>3</sup>: Վերջինիս **դասավանդման անհրաժեշտությունը**, ըստ ելության, պայմանավորված է ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման եկեղեցու առաքելությամբ<sup>4</sup>:

«Հայոց եկեղեցու պատմություն» դպրոցական առարկայի չափորոշչում նշվում է որ. «առարկայի մշակման հիմքում ընկած է **կրթության աշխարհիկ սկզբունքը**: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը ներկայացվող դասընթացի բովանդակության շրջանակներում հանդիսանում է **աշխարհիկ կրթություն**՝ կոնկրետ Էթնոմշակութային, Էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության

---

<sup>1</sup> Տե՛ս Федеральный закон от 29.12.2012 N 273-ФЗ “Об образовании в Российской Федерации”.

<sup>2</sup> Տե՛ս Конституция Мексиканских Соединеных Штатов, 05.02.1917:

<sup>3</sup> Համաձայնագիրը կնքվեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ի կողմից: Այն վերահաստատվեց Վեհափառ Հայրապետի և ՀՀ ԿԳՆ նախարարի միջև 2005թ. կնքված համաձայնագրով: 2003-2004թթ. ուսումնական տարվա ընթացքում «**Հայոց եկեղեցու պատմություն**» առարկան ներդրվեց 4-րդ և 5-րդ դասարաններում: 2005թ. առարկան ընդգրկվեց հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների ուսումնական պլանում:

<sup>4</sup> Տե՛ս **Տ. Շահե վարդ. Անանյան**, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը (քննարկման կյուրթեր) Սբ. Էջմիածին, 2013, էջ՝ 15:



**կրոնագիտական կրթության** տեսակ»<sup>1</sup>: Այս ձևակերպումից պարզ երևում է, որ Հայոց եկեղեցու պատմությունը ձևի առումով հանդիսանում է աշխարհիկ, իսկ բովանդակությամբ՝ կրոնագիտական առարկա:

**Բ) Կրոնական ուսուցման հիմնահարցը միջազգային իրավական ակտերում.**

Մեջբերված օրինակները, կարծում ենք, բավարար չափով թույլ են տալիս պատկերացում կազմել հանրակրթության բնագավառում կրոնի ուսուցման տեսանկյունից պետությունների որդեգրած մոտեցման մասին: Այս առումով պետք է ընդգծել, որ կրթության աշխարհիկությունը և կրոնական կրթությունը ոչ թե միմյանց փոխբացառող բևեռներ են, այլև փոխլրացնող և փոխապայմանավորող գործոններ: Դրանց սահմանների տեղորոշման հարցը գտնվում է տվյալ պետության հայեցողության և նպատակահարմարության տիրույթում՝ կախված այդ երկրի կրոնական ավանդույթներից, բնակչության էթնիկ կազմից կամ այլ հանգամանքներից:

Այդուհանդերձ միջազգային իրավունքը և միջազգային դատական պրակտիկան որոշակի նորմատիվ ուղենիշեր է նախանշում կրոնի դասավանդման հարցում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի համաձայն՝ «կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը, հանդուժողականությանը և բոլոր ժողովուրդների, ռասսայական և կրոնական խմբերի միջև բարեկամությանը:

Առավել ամբողջական է թվում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդվածը, որի համաձայն երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի «...գ) երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի **ազգային արժեքների**, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը»<sup>2</sup>: Այս հիմնադրույթներից զատ, կարևորվում է նաև կրոնաէթնական առարկայի դասավանդման մեթոդաբանությունը, որը աշխարհիկ կրթական հաստատություններում պետք է իրականացվի **անկողմնակալ** և **օբյեկտիվ**<sup>3</sup>: Հետևաբար թե՛ կրոնական թե՛ բարոյագիտական (էթիկական) առարկայի անգամ պարտադիր ուսուցումը չի կարող հակասել կրթության աշխարհիկ սկզբունքին և խղճի ազատության իրավունքին, եթե ապահովվում է բազմազանության և օբյեկտիվության պայմանները<sup>4</sup>: Փորձենք ՄԻԵԴ նախադեպային իրավունքի

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.09.2013թ. թիվ 1075- Ա/Ք և 17.07.2012թ. թիվ 709 Ա/Ք հրամանների հավելվածները:

<sup>2</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1989թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով և ուժի մեջ է մտել 1990թ. սեպտեմբերի 2-ին: Սկզբնաղբյուրը՝ ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:

<sup>3</sup> Տե՛ս CCPR General Comment No. 22: Article 18 (Freedom of Thought, Conscience or Religion) Adopted at the Forty-eighth Session of the Human Rights Committee, on 30 July 1993:

<sup>4</sup> Տե՛ս case of **Appel-Irrgang and Others v. Germany** (app. no. 45216/07), 06.10.2009:

երկու գործերի հակիրճ նկարագրության միջոցով առավել առարկայական դարձնել վերոնշյալը.

**1. Ֆոլգերոն և այլք ընդդեմ Նորվեգիայի** գործով 29.06.2007թ. կայացրած որոշումը<sup>1</sup>, որի նախապատմությունը հետևյալն է. 1997 թվականին Նորվեգիայի տարրական դպրոցներում պարտադիր կարգով ներմուծվեց «Քրիստոնեություն, կրոն և փիլիսոփայություն» միասնական առարկան, որը չէր նախատեսում դասընթացից ամբողջական հրաժարվելու ընթացակարգ: Նորվեգիայի «Մարդասիրական ասոցիացիայի» անդամ հանդիսացող մի խումբ ծնողներ դիմում էին ներկայացրել դպրոցի տնօրինությանը՝ իրենց երեխաներին դասընթացից ազատելու խնդրանքով, որը սակայն մերժվել էր: Հայցվորները ներպետական դատական ատյանները սպառելուց հետո դիմել էին Եվրոպական դատարան՝ հայտնելով, որ առարկայից ամբողջական հրաժարվելու հնարավորության բացակայությունը խախտում է Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված՝ իրենց մտքի, խղճի և կրոնի ազատության, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված ծնողների՝ զավակների համար իրենց **կրոնական** ու **փիլիսոփայական** համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը<sup>2</sup>: Դատարանի պալատը քննելով գործը՝ եզրակացրեց, որ առկա է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի խախտում՝ միաժամանակ արձանագրելով, որ առարկան ինքնին հենվել է հիմնականում քրիստոնեության ուսուցման վրա և չի ապահովել համընդհանուր չեզոքություն:

**2. Հասանը և Էյլեմ Չենգինն ընդդեմ Թուրքիայի** գործով 09.10.2007թ. որոշումը<sup>3</sup>: Այս գործի նախապատմությունը հանգում է հետևյալին. Թուրքիայի քաղաքացի Էյլեմ Չենգին՝ լինելով ավելի քան հետևորդ, սովորում էր Ստամբուլի հանրակրթական դպրոցում, որտեղ պարտադիր կարգով ուսուցանվում էր «Կրոնական մշակույթ և բարոյագիտություն» առարկան: Հայրը՝ Հասան Չենգին, խնդրել էր ազատել դստերը հիշյալ դասընթացից, քանի որ այն հիմնականում պարունակում էր սունիական ուղղվածության գիտելիքներ և, դրանով իսկ խախտում իր համոզմունքներին համապատասխան երեխայի դաստիարակության և կրթության ապահովման իրավունքը: Դատարանը գործը քննելով՝ միաձայն արձանագրեց Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի խախտում: Համեմատելով «Կրոնական մշակույթ և բարոյագիտություն» դասընթացի վերաբերյալ Թուրքիայի կրթության նախարարության սահմանած մեթոդաբանական ուղեցույցները և առարկայի դասագրքերը՝ դատարանը արձանագրեց, որ Թուրքիայի կրթական համակարգը համարժեք մոտեցում չի ցուցաբերում կրոնական կրթությանը, այլ

<sup>1</sup> Տե՛ս case of **Folgero And Others v. Norway**, (app. no. 15472/02), 29.06.2007:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 1-ին արձանագրության 2-րդ հոդված:

<sup>3</sup> Տե՛ս case of **Hasan and Eylem Zengin v. Turkey**, (app. no. 1448/04), 09.10.2007.

առարկայի ծրագրում ծանրակշիռ առաջնահերթությունը վերապահելով իսլամին՝ անտեսում է մյուս կրոնական ուղղությունները:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները փաստում են, որ մեկ կրոնի գերապատվության վրա հիմնված պարտադիր կրոնական ուսուցումը կամ այլ կերպ ասած՝ **կրոնաէթիկական ուսուցման դոկտրինացումը** անհամատեղելի է Կոնվենցիայի հռչակած սկզբունքների, և մասնավորապես 1-ին արձևագրության 2-րդ հոդվածով նախատեսված ծնողների՝ իրենց զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքի հետ: Եթե պետությունը չի ապահովում այդպիսի դասընթացի օբյեկտիվությունն ու անկողմնակալությունը, ապա պարտավոր է կամ ազատել երեխային դասընթացից կամ նախատեսել կամընտրական մեխանիզմներ: Ընդ որում Պետք է նկատել, որ շատ դեպքերում կրոնի դասերից ազատման հարցը չի դառնում վիճահարույց, երբ դպրոցի տնօրինությունը բավարարում է ծնողների դիմումը և ազատում երեխային կրոնի դասերից<sup>1</sup>:

Եթե կրոնական առարկաների պարտադիր ուսուցումը կարող է անհամատեղելի լինել աշակերտների ծնողների համոզմունքներին և կոնվենցիոն իմաստով համարվել խախտում, ապա այլ առարկաների պարտադիր ուսուցումը, կարծես, նման խախտման հիմքեր չի պարունակում: Դանիայի դեմ ներկայացված գործերից մեկով ծնողները բողոքել էին, որ դպրոցում իրենց երեխաներին ուսուցանվող **սեռական դաստիարակություն** առարկան հակասում է իրենց քրիստոնեական և բարոյափիլիսոփայական աշխարհայացքին: Եվրոպական կոմիտեն նախ տարբերակել էր ուղղակի և անուղղակի փիլիսոփայական գիտելիքներ տալու ձևերը և ընդգծել, որ ծնողը չի կարող առարկել նման դասավանդմանը, քանի որ հակառակ պարագայում ամբողջ կրթական ծրագիրը կդրվի վտանգի տակ, այն պատճառով, որ շատ առարկաներ իրենց հիմքում այս կամ այն չափով ունեն փիլիսոփայական ենթաշերտ<sup>2</sup>: Այսինքն՝ **այդպիսի դասընթացի պարտադիր առկայությունը դեռևս խոչընդոտ չէ, որպեսզի ծնողներն իրենց համոզմունքներին համաձայն դաստիարակեն իրենց երեխաներին**<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Ծնողները նախ դիմել էին դպրոցի տնօրինությանը՝ իրենց դստերը ազատելու կրոնի դասերից և ուղղափառ պատարագից, որը բավարարվել էր: Նրանք միաժամանակ խնդրել էին իրենց դստերը ազատել ռազմական բովանդակություն ունեցող դպրոցական շքերթից, որին ի պատասխան ստացել էին մերժում: Ստրասբուրգի դատարանը արձանագրեց, որ առկա չէ 9-րդ հոդվածի խախտում, այն հիմնավորմամբ, որ շքերթին մասնակցելը այնպիսի պարտավորություն չէ, որ կարողանա ազդել երեխայի կրոնական զգացմունքների վրա: *Stu case of Valsamis and others v. Greece* (app. no. 21787/93). 18.12.1996:

<sup>2</sup> *Stu case of Kjeldsen, Busk Madsen and Pedersen v. Denmark* (app. no. 5095/71; 5920/72; 5926/72), 07.12.1976

<sup>3</sup> *Stu case of Dojan and others v. Germany* (app. nos. 319/08, 2455/08, 7908/10, 8152/10 and 8155/10), 13.09.2011

# МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕЛИГИОЗНОГО ОБРАЗОВАНИЯ

**ВАГЕ ТОРОСЯН**

*кандидат юридических наук,  
юрист Европейского университета Армении,  
преподаватель кафедры правоведения,  
г.Ереван, Республика Армения*

Основной целью данной статьи является раскрытие международно-правовых вопросов религиозного образования в свете отечественного опыта зарубежных стран.

Исходя из цели исследования, были поставлены следующие основные задачи: выявить политику, проводимую зарубежными странами в сфере религиозного образования, представить вопрос религиозного образования в международно-правовых документах, одновременно анализируя прецедентные положения Страсбургского суда.

В работе использовались методы диалектического материализма, анализа и синтеза, индукции и дедукции, а также историко-логический и системный методы.

В результате исследования мы пришли к выводу, что в современной действительности, несмотря на процессы секуляризации, религия не теряет своей актуальности и продолжает влиять на общественное сознание и поведение. Влияние религии начинается с религиозного образования, а его реализация и обусловленные этим проблемы особенно важны в светских государствах, где образование, свободное от религиозной пропаганды и принуждения, становится одной из надежных гарантий свободного выбора мировоззрения личности.

**Ключевые слова:** религиозное образование, права человека, судебная практика, право на свободу совести, право на свободу мысли, право на свободу вероисповедания, светское государство.

## INTERNATIONAL LEGAL ISSUES OF RELIGIOUS EDUCATION

**VAHE TOROSYAN**

*Lecturer and lawyer at the Chair of Law,  
European University of Armenia  
Ph.D in Law,  
Yerevan, Republic of Armenia*

The main purpose of this article is to reveal the international legal issues of religious education in the light of foreign and domestic experience.

Based on the purpose of the study, we put forward the following main questions: to study the policy pursued by foreign countries in the field of religious education; to present the issue of religious education in international legal documents; and to analyse the judicial precedents of the Strasbourg Court.

The work used the methods of studying dialectical materialism, analysis and synthesis, induction and deduction, as well as historical-logical and systemic methods.

As a result of the research, we came to the conclusion that in modern times, despite the processes of secularisation, religion does not lose its relevance. It continues to influence public consciousness and behaviour.

The influence of religion begins primarily with religious education. The problems of organising religious education are considered especially important in secular states since, free from religious propaganda and coercion is one of the most reliable guarantees of the formation of an individual's worldview and free choice.

**Key words:** *religious education, human rights case law, right to freedom of thought, conscience and religion, secular state.*

# EDUCATIONAL ROLE OF THE UNIFORMED SERVICES IN THE EVER-CHANGING SOCIETY: THE PERSPECTIVE OF POLISH POLICE

**ERNEST MAGDA**

*Ph.D., Assistant Professor Faculty of Social Science,  
University of Zielona Góra,  
Zielona Góra, Poland  
[e.magda@wns.zgora.pl](mailto:e.magda@wns.zgora.pl)*

**ANDRZEJ ZYGADŁO**

*Ph.D., Assistant Professor, Faculty of Social Science,  
University of Zielona Góra,  
Zielona Góra, Poland  
[a.zygadlo@wpps.uz.zgora.pl](mailto:a.zygadlo@wpps.uz.zgora.pl)*

***Ever-changing society in global world requires modern functioning of all organizations. Uniformed services which want to properly fulfill their tasks in a knowledge-based society must participate in the process of permanent change. Apart from its basic functions, such as prevention and repression, the police also have an educational function. The mission of the Polish police in recent years has had to be redefined in the spirit of Community Policing. Contemporary police officers must actively cooperate with their local environment becoming not only participants but also creators of changes. Recommendations resulting from the analysis of organizational and substantive conditions of changes in the area of police pedagogy made by the authors are helpful in better shaping of pedagogical culture of police officers. In the global world the analyzed experiences and presented recommendations can be implemented also in other societies.***

**Key words:** *modern society, organisational culture, Polish police, pedagogical culture, education, upbringing impact, educational and preventive activities.*

մի շարք և պետական դատարանների կողմից դիտարկվող և լուծվող գործունեության իրականացման սկզբունքներ:

Միջազգային արդարադատության զարգացումը ներկայումս բնութագրվում է հակասական միտումներով: Մի կողմից, միջազգային դատարանների ցանցն ընդլայնվում է ինչպես համընդհանուր, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում, ի հայտ են գալիս նոր տեսակի միջազգային դատական մարմիններ (տարածաշրջանային դատարաններ, միջազգային քրեական դատարաններ), բարեփոխումներ են իրականացվում և միջոցներ ձեռնարկվում դատարանների գործունեությունը վերակենդանացնելու համար: Մյուս կողմից, ավելի ու ավելի շատ դիտողություններ են արվում միջազգային դատարանների և դրանց գործելակերպի դեմ<sup>1</sup>:

Միջազգային դատական մարմինների տարածումը ենթադրում է միջազգային և ազգային դատարանների միջև փոխգործակցության մոդելների մշակման նոր մեթոդների որոնման անհրաժեշտություն, այդ թվում՝ միջազգային դատական որոշումների ազգային իրավական համակարգերում ներդրման հնարավորություն:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական փոփոխությունների և մասնավորապես՝ դատաիրավական բարեփոխումների տեսանկյունից, կարծում ենք, եվրոպական իրավահամակարգի ներկայիս զարգացումները ոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ են դարձնում կատարել համակողմանի ուսումնասիրություններ՝ վեր հանելու համար այն օրինաչափությունները և առանձնահատկությունները, որոնք հատուկ են անգլոսաքսոնական իրավահամակարգին, մասնավորապես՝ սահմանադրական արդարադատության բնագավառում, նպատակ ունենալով ՀՀ-ում ոչ թե պարզապես տեղայնացնել միջազգային փորձը, այլ՝ ուսումնասիրելով սահմանադրական վերահսկողության առավել զարգացած համակարգերի ինստիտուցիոնալ գործունեության տրամաբանությունը, գտնել ՀՀ-ում այդ գործառնությունի իրականացման արդյունավետության բարձրացման ուղիներ:

Կարծում ենք, սահմանադրական փոփոխությունների (դատաիրավական բարեփոխումների) շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը՝ ընդհանուր (հատուկ) իրավասության դատարաններ ինստիտուցիոնալ փոխգործակցության սկզբունքների հստակեցմամբ, ընդհանուր արդարադատական գործունեության սահմանադրականության որոշման գործառնությամբ ՀՀ արդարադատական պրակտիկայում ներդրման որոշ հեռանկարներ ունի, քանի որ կնպաստի ոչ միայն դատական համակարգի անկախության և արդարադատության արդյունավետության բարձրացմանը, այլև՝ ներհամակարգային օրինականության ամրապնդմանը, և ի վերջո՝ մարդու իրավունքների արագ ու առավել արդյունավետ պաշտպանությանը:

ՀՀ-ում սահմանադրական արդարադատական պրակտիկան քաղաքական խնդիրների հետ առնչություններում, թերևս, ցուցաբերում է առավել հաշվենկատություն, հատկապես՝ պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճեր լուծելիս, մասամբ էլ՝ օրենքների սահմանադրականությունը որոշելու գործերով: Սակայն, կարծում

---

<sup>1</sup> Яков В. В. Развитие цивилистического процесса в России: отдельные вопросы // Вестник гражданского процесса. 2011. № 1. С. 17—53



ենք, դատական իշխանություն-քաղաքականություն հարաբերությունների բնագավառում ամերիկյան նախադեպային պրակտիկայում արմատավորված սկզբունքները կիրառելի կլինեն մեր համակարգում միայն իրապես անկախ դատական իշխանության գոյության պայմաններում:

Սահմանադրականության հարցի քննության նախապայմանները, կարծում ենք, ՀՀ-ում կունենան կիրառման որոշ հեռանկարներ հատկապես՝ անհատական սահմանադրական դիմումների քննության դատական պրակտիկայի ներդրման դեպքում:

Իհարկե, սահմանադրական վերահսկողության առարկան, որպես կանոն, հասարակական հարաբերությունների կարևորագույն (սկզբունքային) բնագավառներն են, քանի որ ուղղակիորեն առնչվում են պետության հիմնական օրենքի՝ սահմանադրության հետ: Ուստի, սահմանադրականության հարցով իրավասու պետական մարմնի որոշումը պետք է առավելագույնս անառարկելի (անվիճելի) լինի, նկատի ունենալով նաև հակասահմանադրական իրավիճակի ծագման ուղղակի հավանականությունը: Իրավունքի մայրցամաքային և ամերիկյան համակարգերում սահմանադրականության վերաբերյալ կայացված դատական որոշման վերանայելիության հարցի լուծման արդյունավետությունը գնահատելով կշենք, որ մեր կարծիքով, ամերիկյան համակարգում, ելնելով նաև ԱՄՆ-ի՝ որպես դաշնային պետության, իրողությունից, այդպիսի որոշումների վերանայելիության դատավարական հնարավորությունը միանգամայն արդարացված է և առավելագույնս նպաստում է նահանգային և դաշնային շահերի ներդաշնակմանը:

ՀՀ-ում դատարան-հասարակություն գործակցության ինստիտուտի զարգացման հայեցակարգը, մեր կարծիքով, կարող է ներդրվել հետևյալ սկզբունքով. այդ գործակցությունն իր նախասկզբնական փուլում պետք է զարգացնել արդարադատական համակարգում՝ առանց սահմանադրական և ընդհանուր արդարադատական գործառույթների տարբերակման՝ սկզբնապես զարգացնելով այն որպես ինստիտուցիոնալ համագործակցություն, աստիճանաբար ներառելով նաև ինստիտուցիոնալ հսկողության տարրեր, և այնպիսի տեմպերով ու բովանդակությամբ, որոնք ներդաշնակ լինեն զարգացման անցումային պետության առջև ծառայած հիմնախնդիրների լուծման, ներառյալ՝ հասարակության իրավագիտակցության բարձրացման, ընդհանուր գործընթացներին:

Որպես դատարան-հասարակություն ինստիտուցիոնալ գործակցության նախասկզբնական ձևեր, մեր կարծիքով, ՀՀ-ում անհրաժեշտ է նախ, հասարակության մասնակցությունն ապահովել դատական համակարգի ձևավորման, մասնավորապես՝ դատավորներին պաշտոնում նշանակելու գործընթացներում: Այն հանգամանքը, թե դատավորի թեկնածուն հասարակական ինչպիսի հեղինակություն է վայելում, կարծում ենք, ոչ պակաս կարևոր է, քան մասնագիտական բավարար ունակությունների հարցը: Միացյալ Նահանգների և ժողովրդավարական այլ համակարգերի փորձը հուշում է, որ դատավորին պաշտոնում նշանակելու՝ գործադիր մարմին, Արդարադատության խորհուրդ, ՀՀ Նախագահ ինստիտուցիոնալ գործակցությունն անհրաժեշտաբար պետք է համալրվի հասարակական գործակցության տարրով, և լինի առավելագույնս հրապարակային:

# СПРАВЕДЛИВОСТЬ В СОВРЕМЕННЫХ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ АКТАХ

## НОРАЙР СТЕПАНЯН

*Аспирант Института философии, социологии и права НАН РА, Аппарат Верховного Совета, судебный распорядитель службы судебных распорядителей Судебного департамента, старший лейтенант юстиции г.Арташат, Республика Армения*

Цель статьи - анализ всего процесса развития правосудия до его отражения в современных законодательных актах, выявление путей его совершенствования в новых независимых (в частности, в Армении) и развитых странах.

Для достижения указанной цели поставлены следующие задачи: изучить весь процесс исторического развития правосудия, модели правосудия как средства восстановления нарушенных прав человека, выявить проблемы, препятствующие развитию правосудия, представить предложения по их решению.

В ходе исследования использовались сравнительный, аналитический, диалектический методы.

Основной вывод заключается в том, что для совершенствования правосудия необходимо ужесточение конституционного контроля, развитие взаимодействия суда и общества, применение рычагов управления.

**Ключевые слова:** правосудие, модель правосудия, правовое регулирование, юридическая практика, нормативный правовой акт, судебные системы, судебные процедуры, конституционный контроль.

## JUSTICE IN CONTEMPORARY LEGISLATIVE ACTS

### NORAYR STEPANYAN

*Postgraduate student at the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Office of the Supreme Council, Judicial Bailiff of the Service of Judicial Bailiffs of the Judicial Department Senior Lieutenant of Justice Artashat, the Republic of Armenia*

The purpose of the article is to analyse the entire process of the development of justice before its reflection in modern legislative acts to determine ways to improve it in the newly independent (particularly in Armenia) and developed countries.

To achieve this goal, the following tasks were set: to study the entire process of the historical development of justice, models of justice as a means of restoring violated human rights; to raise issues that hinder the development of justice; and to submit proposals for their solution.

In the course of the study, comparative, analytical and dialectical methods were used.

The main conclusion is that in order to improve justice, it is necessary to tighten constitutional control, develop interaction between the court and society, and use control levers.

**Key words:** justice, model of justice, legal regulation, legal practice, normative legal act, judicial systems, judicial procedures, constitutional control.



## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑԵԼԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

### ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[hayoclezu18@mail.ru](mailto:hayoclezu18@mail.ru)

Համալսարանական կրթությունը ներկայումս որոշ առումներով ճգնաժամ է ապրում, և այն առաջին հերթին դրսևորվում է ուսանողների առօրեական այնպիսի հարցադրումներով, ինչպիսիք են. ինչու՞ եմ վճարել այսքան ուսման վարձ և աշխատանք չեմ գտնում, արժեք արդյո՞ք այսքան տարի կորցնել համալսարանում և չստանալ այն, ինչին սպասում էի, ինչպե՞ս համալսարանից ստացա այն մասնագիտական կարողությունները, որոնք մրցակցային չեն և չեն հետաքրքրում գործատուին, ինչու՞ հաճախել համալսարան, երբ առցանց միջավայրում կարելի է լսել ավելի որակյալ դասախոսություններ և ընթերցել առավել թարմ մասնագիտական գրականություն:

Առավել վիճելի են դառնում այն հարցադրումները, որոնք ուղղված են մասնագիտական կրթության աստիճանային համակարգին: Իսկապես, արդյո՞ք հնարավոր չէր բավարարվել ընդամենը բակալավրիատով և չդիմել մագիստրատուրա: Կամ, ինչու՞ պետք է սովորել դոկտորանտուրայում, եթե հնարավոր է գիտահետազոտական աշխատանք կատարել և ատենախոսություն շարադրել առանց համալսարանական դոկտորական կրթական ծրագրերին մասնակցության: Հոդվածում քննարկման նյութ են դարձել մասնագիտական և փոխանցելի հմտությունների ձևավորման շարժառիթները բուհերում, հիմնականում շեշտադրումներ կատարելով դոկտորական կրթության վրա:

Բանալի բառեր՝ մասնագիտական կրթություն, փոխանցելի հմտություններ, մրցակցային կրթություն, դոկտորանտուրա, հետազոտական աշխատանք:

### Հետազոտության արդյունքներ

Արևմտյան երկրներում ամենատարածված գիտական աստիճանը փիլիսոփայության դոկտորն է Doctor of Philosophy (**Phd**): Այստեղ «փիլիսոփայություն» բառը ավելի լայն պետք է մեկնաբանել, քան «փիլիսոփայություն» գիտակարգը: Հին Հունաստանում այդ բառը մեկնաբանվում էր որպես «սեր

գիտելիքի հանդեպ», որը կարելի կիրառել ներկայիս ցանկացած ակադեմիական ոլորտում:

Ավելին, ներկայումս մեր ասպիրանտուրայում կիրառվում է Խորհրդային Միությունից ժառանգած ասպիրանտական մասնագիտությունների ցանկը, որը չափազանց դետալացված և ծածկագրված է ոչ միայն ըստ ոլորտների, այլև ըստ ենթաօլորտների: Նման պրակտիկայի կիրառումը նախկինում մեկ նպատակ էր հետապնդում՝ խմբավորել գիտության մեջ ձեռք բերված նորույթները ըստ գիտական նեղ ուղղությունների, դրանք ծածկագրել, հաշվառել, արխիվացնել և պետական պահանջարկի առկայության պարագայում դնել գործնական կիրառության մեջ:

Բնականաբար, ներկայումս այս պրակտիկան պետք է հնացած և ոչ կիրառելի համարել, քանի որ մեր իրականությունում պետությունը հետազոտական ոլորտի միակ շահառուն չէ և ինովացիոն պահանջարկը ձևավորվում ոչ միայն «վերևից»՝ կենտրոնացված կարգով, այլ գիտության շուկայում: Ուստի, ժամանակն է հրաժարվելու ասպիրանտական մասնագիտությունների թե՛ ծածկագրումից, թե՛ մասնագիտական դետալացումից: Առավել ևս, որ երբեմն ատենախոսությունների պաշտպանության դեպքում հենց փորձագետներն ու մասնագիտական խորհուրդներն են դժվարանում նորույթները խմբավորել ըստ հարակից մասնագիտությունների ծածկագրերի:

Ներկայումս հարցադրումներ են հնչում, թե դասական իմաստով մեր իրականությունում գործում է արդյո՞ք գիտության շուկա, և եթե այո, ապա այն ի՞նչ առանձնահատկություններ ունի: Որպես կանոն, վիճահարույց է համարվում գիտության արդյունքների առք ու վաճառքի իրականացման անհրաժեշտությունը: Փաստարկներ են բերվում, որ գիտությունը մտավոր աշխատանքի արդյունք է և կարող է նաև առևտրային շահեր չհետապնդել, ուստի գիտահետազոտական գործունեության արդյունքը, նեղ իմաստով, չպետք է դիտարկել ապրանք, որը վաճառահանվում է շուկայում: Այստեղից հետևություն, որ նորույթները, չլինելով առք ու վաճառքի առարկա, ընդհանուր առմամբ չեն կարող ձևավորել գիտության շուկա:<sup>1</sup>

Սակայն, մյուս կողմից, շուկան ոչ միայն առք ու վաճառքի հարթակ է, այլև, որն ավելի կարևոր է՝ այն առաջարկի և պահանջարկի կարիքների սպառման միջավայր է: Ուստի, եթե գիտական նորույթներ և ինովացիոն արդյունքներ են ձևավորվում, որոնք ունեն պահանջարկ, ապա դրանք այնուհետ դրսևորվում և իրացվում են հենց գիտության շուկայում:

Ընդ որում, գիտահետազոտական արդյունքները հասցեագրվում են մի շարք սպառողների, հանձինս՝ պետության, գործարար կառույցների, շահագրգիռ գիտական օղակների, հասարակության որոշակի խմբերի և այլն: Ուստի գիտության շուկայում կարող է և գիտահետազոտական արդյունքների առք ու վաճառք տեղի չունենալ և առևտրային շահեր չհետապնդվեն, սակայն կարևորն այն է, որ ձևավորված վերջնարդյունքները հասցեատերեր ունենան,

---

<sup>1</sup> Глухов В.В., Коробко С.Б., Маринина Т. В., Экономика знаний, ЗАО, Издательский дом, «Питер, 2003, стр.25

և իրացվեն վերը թվարկած սպառողների կողմից: Այդ սպառման գործընթացը կարգավորվում է հենց գիտության շուկայում:

Շուկայամետ մասնագիտական հմտությունների դասավանդումը դոկտորանտուրայում որոշակի քննարկումների տեղիք է տալիս, կապված բարձրագույն մասնագիտական կրթության նախորդ աստիճաններում արդեն իսկ շրջանավարտի հմտությունների առկայության և ձեռքբերման հետ: Ենթադրվում է, որ կոնկրետ մասնագիտությամբ դիմորդ-մագիստրոսը պետք է, որ արդեն տիրապետի հմտությունների այնպիսի գործիքակազմի, որը ամբողջովին կիրառելի կլինի դոկտորանտուրայում և կնպաստի հետագոտող շրջանավարտի մասնագիտական ունակությունների լիարժեք իրացմանը: Այս դեպքում հարց է առաջանում, թե ի՞նչ լրացուցիչ հմտություններ են անհրաժեշտ դոկտորանտին, որոնք նախկինում նա ձեռք չէր բերել մագիստրատուրայում կամ բակալավրիատում:

Այս հարցին պատասխանելու համար, նախ պետք է հասկանալ, թե մասնագիտական հմտությունների գործիքակազմի ի՞նչ առանձնահատկություններով է տարբերվում դոկտորանտուրան մագիստրատուրայից, և ի՞նչու է մագիստրատուրան հանդիսանում դոկտորանտուրայի կրթական նախապատրաստական փուլ: Իսկինն այն է, որ առանց “մագիստրոսական նախավարժանքի” դժվար կլիներ դոկտորանտուրայում ձեռք բերել հետազոտական, մանկավարժական կամ կառավարչական հմտություններ, քանի որ առաջին հերթին դոկտորանտ – դիմորդը դրանց որոշակիորեն պետք է ծանոթ լիներ, և հետո միայն կատարելագործելով՝ ձեռք բերել ստեղծարար դիրքորոշմամբ փոխանցելի հմտություններ:

Դոկտորանտուրայի շրջանավարտը, մագիստրոսի որակական հատկանիշների համեմատ, պետք է առավելապես տիրապետի փոխանցելի հմտությունների: Ընդ որում, մասնագետի փոխանցելի հմտությունների ձեռքբերումն ընդլայնվում է կրթական ցեղափ բարձրացմանը զուգընթաց (տես գծապատկեր 1): Դոկտորանտուրայի շրջանավարտը համարժեք մասնագիտական ունակություններ պետք է ցուցաբերի գիտական, կրթական, կառավարչական, ինովացիաների գեներացման ոլորտներում, և, հետևաբար, պետք է տիրապետի այնպիսի մասնագիտական հմտությունների, որոնք փոխանցելի կլինեն գիտությունից դեպի մանկավարժություն, կամ մանկավարժությունից դեպի առաջնորդություն:

Ուստի փոխանցելի հմտություններն ունիվերսալ են, և կարևոր գործիքակազմ՝ դոկտորանտի մասնագիտական ունակությունների իրացման բոլոր ոլորտներում: Եվ այդ է պատճառը, որ դոկտորանտուրայում առավելապես ուսանողներին ուսուցանվում են փոխանցելի, քան մասնագիտական հմտություններ:

Դոկտորանտուրայում փոխանցելի հմտությունների ցանկը և շրջանակը տարբեր համալսարաններում տարբեր են ներկայացնում, բայց, ընդհանուր առմամբ, դրանք ամփոփվում են հետևյալ խմբերով.

### **Հիմնախնդրի լուծման հմտություններ**

- հիմնախնդրի սահմանում և լուծման ուղիների շրջագծի ուրվագծում
- ստեղծարար գաղափարների գեներացիա,

- տեղեկատվական լայն շրջանակի մշակում,
- հետազոտության աղբյուրագիտության վերլուծություն,
- գիտական հիպոթեզների առաջադրում:

***Ներանձնային և առաջնորդության հմտություններ***

- խմբային քննարկումների և որոշումների կայացման կազմակերպում,
- ինքնագնահատման և ինքնակազմակերպման հմտություններ,
- դրամաշնորհներ շահելու և դրամաշնորհային ծրագրեր կառավարելու հմտություններ,
- ծրագրերի իրականացման խթանիչ միջավայրի ձևավորում,
- հետադարձ կապի ապահովում և ժամանակին արձագանքում,
- խմբային աշխատանքներում կոնֆլիկտաբանության հմտությունների կիրարկում:

***Ծրագրերի կառավարում և կազմակերպում***

- ծրագրի անխափան իրագործման պայմանների ապահովում,
- փոփոխվող իրավիճակներում կառավարչական ճկուն որոշումների իրականացում,
- ֆինանսական այլընտրանքային աղբյուրների որոնում,
- բանակցային հմտությունների ներդաշնակեցում,
- թիրախային վերջնարդյունքների հասանելիության ճանապարհային քարտեզի կազմում:


***Չետազոտական ստեղծարար հմտություններ***

- գիտական նորույթի մշակման և ներկայացման հմտություններ,
- ինովացիոն գաղափարների և հիպոթեզների ձևակերպում և ներկայացում,
- գիտական շրջանակներում հրատարակումներով և պրեզենտացիաներով ներկայանալու հմտություններ,
- հետազոտական գործիքակազմի անընհատ կատարելագործում,
- գիտական և հետազոտական բանավեճերին մասնակցության մշակույթ:

***Աշխատանքային հմտություններ***

- ընդգծված առաջնորդություն,
- արդյունավետ աշխատանքի կազմակերպում՝ վերջնաժամկետների և որակի բարձր չափանիշների ապահովման պայմաններում,
- գաղափարների ներդրման և արգելքների հաղթահարման կամային հատկությունների դրսևորում,
- աշխատանքային պարտականությունների իրագործման ստեղծարար մոտեցումների ցուցաբերում,
- աշխատանքային վերջնարդյունքների հասանելիության գործընթացին խորքային վերլուծությունների իրագործում,
- կարիերայի կառավարում,
- մտավոր սեփականության պահպանության ապահովում,

- գյուտարարության և ռացիոնալիզատորական առաջարկների հեղինակային իրավունքի պահպանում:



**Գծապատկեր 1. Փոխանցելի հմտությունների ձևավորման ընթացքը** մասնագիտական կրթության տարբեր աստիճաններում<sup>1</sup>

Եթե համեմատելու լինենք դոկտորանտի մասնագիտական բարձրագույն կրթությամբ անձին հատուկ ընդհանուր մասնագիտական հմտությունների հետ, ապա պարզ կդառնա, որ դոկտորանտուրան նախորդ կրթական համակարգերից տարբերվում է նրանով, որ շրջանավարտին մատուցում է փոխանցելի հմտություններ (տես գծապատկեր 2), որոնց ձևավորման հիմքում դրվում են անձնային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են.


- ինքնակառավարման բարձր մակարդակը,
- ստեղծարար գործունեության բարձր աստիճանը,
- որոշումների կայացման ճկունությունը,
- հետազոտական վերլուծությունների որակի չափանիշները:

Մասնագիտական կրթության մրցունակության բարձրացման ուղենիշ պետք է համարել նաև ստեղծարար մտածելակերպի ձևավորումն ուսանողության շրջանում: Փորձը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունում կազմակերպվող բակալավրիատի կամ մագիստրատուրայի ծրագրերը զուրկ են ինովացիոն բովանդակությունից:<sup>2</sup>

<sup>1</sup> Կազմվել է հեղինակի կողմից:

<sup>2</sup> Ծուղուրյան Ա., Ուսանողությունների հենքով մասնագիտական կրթության հիմնախնդիրները, Այլընտրանք գիտական հանդես, 2021, #3

Ուսանողական և պրոֆեսորադասախոսական կազմի որոշ մասի մոտ դեռևս գերակշռում են կրթական գործընթացի մեխանիկական ընկալումները, երբ ուսումնառությունը հիմնականում դիտվում է որպես դասախոսության միջոցով գիտելիք փոխանցելու և այնուհետև՝ քննության ընթացքում այն ստուգելու գործողություն:



**Գծապատկեր 2 Դոկտորի որակական հատկանիշների ձևավորման ընթացքը բուհական կրթության աստիճաններում<sup>1</sup>**

**Եզրակացություն**

Կրթական գործընթացը դասախոսների և ուսանողական համակազմի մի մասի մոտ դեռևս շարունակում է դիտարկվել որպես գիտելիք, տեղեկություն փոխանցելուն՝ այլ ոչ թե մտածողություն ձևավորելուն ուղղված գործընթաց: Սակայն, համալսարանի այսօրվա շրջանավարտի ունակությունների շրջանակում կարևորվում են ոչ միայն մասնագիտական գիտելիքները, այլև նրա ստեղծարարության, նորարարության հակումներին համապատասխան ինքնադրսևորման կարողությունները:

Ուստի, այսօր մրցակցային են համարվում այն կրթական ծրագրերը, որոնց վերջարդյունքներով ձևավորվում են ոչ միայն “գիտակ”, այլև “ստեղծարար հմտություններով” շրջանավարտներ: Այս առումով, մասնագիտական կրթական ծրագրերում ներակյումս մեծ ուշադրություն պետք է դարձվի ուսանողի ոչ թե ձևական, այլ արդյունավետ անհատական աշխատանքի վերջանրդյունքներին, նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնելու ստեղծարարությունը, նորարարությունը և ինքնադրսևորումը, որոնք Բոլոնիայի ներկայիս գործընթացի պահանջներից մեկն է:<sup>2</sup>

<sup>1</sup> Երիցյան Ս., Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա., Դոկտորանտուրայի կազմակերպում, “Էդիթ Պրինթ”, Եր. 2017

<sup>2</sup> ԲԿԵՏ նախարարների կոնֆերանս, Երևանի կոմյունիկե 2015



# **ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ И ПЕРЕДАВАЕМЫХ НАВЫКОВ (НА ПРИМЕРЕ ДОКТОРАНТУРЫ)**

**СЕРГО ЕРИЦЯН**

*доктор филологических наук, профессор  
г.Ереван, Республика Армения*

Университетское образование в настоящее время переживает в некоторых отношениях кризис, что в первую очередь отражается в повседневных вопросах студентов, таких как: почему я заплатил так много за обучение и не могу найти работу? стоило ли терять столько лет в университете? неужели я не получил то, что ожидал? как я получил в университете профессиональные навыки, которые не являются конкурентоспособными? зачем поступать в университет, если можно слушать более качественные лекции в онлайн-среде и читать новейшую профессиональную литературу?

Наиболее дискуссионными становятся вопросы, связанные с системой степеней профессионального образования. Неужели нельзя было довольствоваться только степенью бакалавра и не поступать в магистратуру? Или зачем учиться в докторантуре, если можно провести исследование и написать диссертацию, не участвуя в университетских докторских образовательных программах? В статье рассматриваются мотивы формирования профессиональных и передаваемых навыков в высших учебных заведениях, в основном, на примере докторантуры.

**Ключевые слова:** *профессиональное образование, передаваемые навыки, конкурентоспособное образование, докторантура, исследования.*

## **PROBLEMS OF PROFESSIONAL AND TRANSFERABLE SKILLS FORMATION (BY EXAMPLE OF DOCTORATE)**

**SERGO YERITSYAN**

*Doctor of Philological Sciences, Professor,  
Yerevan, Republic of Armenia*

University education is currently experiencing a crisis in some aspects, and it is first of all manifested by the daily questions of students, such as: Why did I pay so much for tuition? Why can't find a job? Was it worth losing so many years at university? Why didn't I get what I had expected? How did I get the professional skills from the university, that are not competitive? Why to attend classes physically if you can attend lectures online and consume the recent professional literature sitting at home?

Questions related to the vocational education degree system are becoming more controversial. Really, was it not possible to be satisfied with just a bachelor's degree, not to apply for a master's degree? Or, why study for a

doctorate, if it is possible to do research, write a dissertation without participating in university doctoral programs? The article discusses the motivations for the development of professional transferable skills in higher education institutions, mainly focusing on doctoral education.

The questions related to the degree system of professional education are becoming more controversial. Indeed, was it not possible to settle for just a bachelor's degree and not apply for a master's degree? Or, if it is possible to do research and write a dissertation without participating in university doctoral education programs why to study at doctorate? In the article, the motivations for the formation of professional and transferable skills in universities became the subject of discussion, mainly emphasizing doctoral education.

**Keywords:** *vocational education, transferable skills, competitive education, doctorate, research.*

# ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

## ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Կիրառական հոգեբանության ամբիոն, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[araqelyananna23@aspu.am](mailto:araqelyananna23@aspu.am)

## ՄԵՐԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Մագիստրոս,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[meri.hovasapyan@mail.ru](mailto:meri.hovasapyan@mail.ru)

**Հոդվածում ներկայացված են ուսանողների ուսումնական գործունեության հիմնական շարժառիթների հետազոտության արդյունքները: Հետազոտության ընտրակազմում ընդգրկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի առաջին և երկրորդ կուրսի ուսանողները: Հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել առաջին և երկրորդ կուրսի ուսանողների ուսումնական գործունեության շարժառիթները: Հետազոտության խնդիրներն են եղել պարզել առաջին և երկրորդ կուրսերում ուսանողների արտաքին և ներքին մոտիվացիայի առանձնահատկությունները և վերհանել մասնագիտական տարբեր խմբերում ուսումնական մոտիվացիայի բաղադրամասերի տարբերությունները: Ուսանողների ուսումնական ներքին և արտաքին մոտիվացիայի առանձնահատկությունները պարզելու համար կիրառել ենք Ս. Ա. Պակուլինայի և Ս. Մ. Կետկոյի «Մանկավարժական համալսարանի ուսանողների ուսումնական մոտիվացիա» մեթոդիկան: Հոդվածում վերլուծվել են նաև տարբեր բաժինների ուսանողների արտաքին և ներքին մոտիվացիայի տարբերությունները:**

**Հիմնաբառեր`** ուսումնական մոտիվացիա, շարժառիթ, ուսումնական գործունեություն, ճանաչողական շարժառիթներ, սոցիալական շարժառիթներ, ներքին շարժառիթներ, արտաքին շարժառիթներ:

**Նախաբան:** Ուսանողների ուսումնական մոտիվացիան մանկավարժական և բուհական հոգեբանության կենտրոնական հիմնախնդիրներից է: Մարդկության արագընթաց զարգացումը, հասարակական, սոցիալական տեղաշարժերը, արժեքային համակարգի, կրթության և գիտելիքի նկատմամբ վերաբերմունքային փոփոխությունները պայմանավորում են վերջինիս տարբեր բաղադրամասերի հետազոտության արդիականությունը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման աշխատանքների, ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացման, ուսանողների ակտիվության ուղղորդման անհրաժեշտությունը:

Մոտիվացիայի հիմնախնդիրը տարբեր տեսանկյուններից ուսումնասիրել են Ռ. Ռայանը, Յ. Յեքիաուզենը, Ա. Մասլոուն, Գ. Ասենը, Վ. Կովալյովը, Ա. Լեոնսերը, Ա. Մարկովան, Պ. Յակոբսոնը և ուրիշներ:

Առաջին անգամ «մոտիվացիա» բառն օգտագործել է Ա. Շոպենհաուերը, որից հետո այս եզրը մտել է հոգեբանական առօրյա կյանք՝ բացատրելու մարդու և կենդանիների վարքի պատճառները: Ներկայումս մոտիվացիան՝ որպես հոգեկան երևույթ, մեկնաբանվում է տարբեր ձևերով: Մի դեպքում, որպես գործոնների համախումբ, որոնք աջակցում և առաջնորդում են, այսինքն՝ որոշում վարքագիծը (Կ. Մադսեն, Ժ. Գոդֆրուա), մեկ այլ դեպքում՝ որպես շարժառիթների համադրություն (Կ. Կ. Պլատոնով, 1986), երրորդում՝ որպես ազդակ, որը հանգեցնում է վարքի ակտիվությանը և որոշում նրա ուղղվածությունը<sup>1</sup>: Ամենից հաճախ գիտական գրականության մեջ մոտիվացիան համարվում է հոգեբանական պատճառների համադրություն, որով բացատրվում է մարդու վարքագիծը, դրա ծագումը, ուղղվածությունն ու գործունեությունը<sup>2 3</sup>:

Ուսումնական մոտիվացիան բացահայտում է ուսուցման և կրթական գործունեության հիմնական դրդապատճառները<sup>4</sup>: Ուսումնական գործունեության հաջողությունը մեծամասամբ կախված է ուսումնական մոտիվացիայից և դրա կառուցվածքից: Հակառակ այնդման համաձայն՝ ուսումնական գործունեության հաջողությունն է ազդում մոտիվացիայի ուժի և դրա կառուցվածքի վրա, իսկ դրական շարժառիթը հիմնվում է ճանաչողական պահանջմունքի ու հետաքրքրության վրա<sup>5</sup>:

Շարժառիթները կարող է բնութագրվել ոչ միայն քանակապես, այլ նաև որակապես, ինչի արդյունքում էլ տարբերակվում են ներքին և արտաքին դրդապատճառները: Ընդ որում՝ այս դեպքում խոսքը գործունեության բովանդակության նկատմամբ շարժառիթի վերաբերմունքի մասին է: Արտաքին շարժառիթներն իրենց հերթին կարող են լինել դրական (հաջողության, նվաճման շարժառիթներ) և բացասական (խուսափելու շարժառիթներ): Ակնհայտ է, որ արտաքին դրական շարժառիթներն ավելի արդյունավետ են, քան արտաքին բացասական շարժառիթները, նույնիսկ եթե դրանց քանակական ցուցանիշները հավասար լինեն<sup>6</sup>:

Սովորողի գործունեությունը տարբեր աղբյուրներ ունի, բայց առավել ընդունված է տարբերակել երեքը՝ ներքին, արտաքին և անհատական:

<sup>1</sup> Ильин Е. П. Мотивация и мотивы. — СПб.: Питер, 2002, էջ 65,

<sup>2</sup> Маклаков А. Г. Общая психология: Учебник для вузов. — СПб.: Питер, 2008. էջ 513,

<sup>3</sup> Немов Р.С. Психология: Учеб. для студ. высш. пед. учеб. Заведений. М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003. էջ 463,

<sup>4</sup> Мандель Б.Р. Педагогическая психология: ответы на трудные вопросы. Ростов н/Д: Феникс, 2007, էջ 126,

<sup>5</sup> Першина А. В., Соловьева А. В. Особенности мотивационной сферы студентов-психологов // Молодой ученый. — 2016. — №5.

<sup>6</sup> Реан А. А. Психология личности. — СПб.: Питер, 2013, էջ 96-97:

- Ուսումնական մոտիվացիայի ներքին աղբյուրները ներառում են ճանաչողական և սոցիալական պահանջմունքները (սոցիալապես հաստատված գործողությունների և նվաճումների ցանկություն),
- Ուսումնական մոտիվացիայի արտաքին աղբյուրները պայմանավորվում են ուսանողների կյանքի պայմաններով, որի մեջ ներառված են պահանջները, ակնկալիքները և հնարավորությունները,
- Անհատական աղբյուրները ներառում են հետաքրքրությունները, պահանջմունքները, վերաբերմունքը, չափանիշները, կարծրատիպերը և այլն, որոնք որոշում են ուսումնական և այլ գործունեության մեջ ինքնազարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման ցանկությունը<sup>1</sup>:

Ուսանողական տարիքում տեղի է ունենում մոտիվացիայի, արժեքային կողմնորոշումների ամբողջ համակարգի վերափոխում, ինչպես նաև հատուկ կարողությունների ինտենսիվ ձևավորում: Ուսանողներին բնորոշ է սոցիալական մերձեցման ցանկությունը, կյանքի իմաստի որոնումը, կյանքի պլանների կառուցումը, որոնք որոշվում են անձի օբյեկտիվ պայմաններով և արժեքային կողմնորոշումներով: Այն էլ արտահայտվում է բարձրագույն կրթություն, հետաքրքիր աշխատանք ստանալու ընդգծված ցանկությամբ<sup>2</sup>:

Լ. Ի. Բոժովիչի կողմից առանձնացվել է շարժառիթների երկու տեսակ՝ *ճանաչողական* (կրթական գործունեության բովանդակության և դրա իրականացման հետ կապված) և *սոցիալական* (կապված մարդկանց հետ տարբեր փոխազդեցությունների հետ)<sup>3</sup>:

Ավելի ուշ այս բաժանումը ճշգրտել է Ա.Կ. Մարկովան, ըստ որի՝ ճանաչողական մոտիվացիան բաղկացած է.

- լայն ճանաչողական շարժառիթներից (պետք է նոր գիտելիքներ ձեռք բերել),
- կրթական-ճանաչողական շարժառիթներից (պետք է հասկանալ, ինչպես գիտելիք ձեռք բերել),
- ինքնակրթության շարժառիթներից (էլ ինչ կարող եմ իմանալ, որ ավելի լավը դառնամ):

Սոցիալական մոտիվացիան իր հերթին բաղկացած է.

- լայն սոցիալական շարժառիթներից (ես պետք է, ես պատասխանատու եմ, իմ շրջապատում բոլորն ասում են, որ սովորելը ճիշտ է),

<sup>1</sup> **Мандель Б.Р.** Педагогическая психология: ответы на трудные вопросы. Ростов н/Д: Феникс, 2007, էջ 127-128:

<sup>2</sup> **Лисовицкий В.Г., Дмитриев А.Б.** Личность студента. – Л., 2004,

<sup>3</sup> **Божович Л. И.** Проблема развития мотивационной сферы ребёнка // Изучение мотивации поведения детей и подростков. – М., 1972.

- Նեղ սոցիալական կամ դիրքային շարժառիթներից (ես ուզում եմ բարենպաստ դիրք գրավել ուրիշների հետ հարաբերություններում),
- սոցիալական համագործակցության շարժառիթներից (ես պետք է տարբեր կերպ շփվեմ այլ մարդկանց հետ)<sup>1</sup>:

### **Փորձարարական հետազոտություն**

Կրթության որակի վրա՝ ուսանողների ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունների ազդեցության փորձարարական հետազոտության շրջանակներում նպատակ էր դրվել նաև պարզելու առաջին և երկրորդ կուրսի ուսանողների ուսումնական գործունեության շարժառիթները: Հետազոտության ընտրակազմում ընդգրկվել են Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի առաջին և երկրորդ կուրսի 70 ուսանողներ:

Ուսանողների ուսումնական ներքին և արտաքին մոտիվացիայի առանձնահատկությունները պարզելու համար կիրառել ենք Ս. Ա. Պակուլինայի և Ս. Մ. Կետկոյի «Մանկավարժական համալսարանի ուսանողների ուսումնական մոտիվացիա» մեթոդիկան<sup>2</sup>: Ուսումնական, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մոտիվացիան ներառում է համալսարան ընդունվելու, իրական գործող և մասնագիտական շարժառիթները:

Հետազոտության տվյալների մշակման արդյունքում պարզվել է.


- ✓ փորձարարական ընտրակազմում ներքին մոտիվացիայի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է հոգեբանություն մասնագիտության առաջին կուրսի խմբում (85%), այնուհետև նույն մասնագիտության երկրորդ կուրսի խմբում (70%):
- ✓ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողների ներքին մոտիվացիան (46.7%) ավելի բարձր է, քան մաթեմատիկա մասնագիտության առաջին կուրսի ուսանողներինը (33.3%): Սրանից կարող ենք եզրակացնել, որ մաթեմատիկա մասնագիտության ընտրակազմում ուսումնական գործունեության արդյունավետությունն ավելի ցածր կլինի մյուս խմբերի համեմատությամբ, քանի որ խմբի ուսանողների ուսումնական գործունեությունն առա-վելապես պայմանավորված է արտաքին գործոններով:
- ✓ Արտաքին մոտիվացիայի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մաթեմատիկա (66.7%), այնուհետև տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության ուսանողների խմբերում (53.3%):

<sup>1</sup> Маркова А. К., Орлов А.Б., Фридман Л.М. Мотивация учения и её воспитание у школьников. – М., 1983.

<sup>2</sup> Кетько С. М., Пакулина С. А. Методика диагностики мотивации учения студентов педагогического вуза. Электронный журнал «Психологическая наука и образование», 2010, № 1

- ✓ Հոգեբանություն մասնագիտության ուսանողների խմբերում արտաքին մոտիվացիայի արտահայտվածությունը բավականին ցածր է (առաջին կուրս՝ 15%, երկրորդ կուրս՝ 30%): Սա նշանակում է, որ հոգեբանություն մասնագիտության ուսանողները դրսևորում են մասնագիտության նկատմամբ հետաքրքրություն, ձգտում՝ ինտելեկտուալ բավարարվածություն ստանալու, ինքնահրացման, ինքնազարգացման, արդյունավետորեն հարմարված են համալսարանական միջավայրին և բուհական կրթական համակարգին:

Այդուսակում ներկայացված են փորձարարական ընտրակազմում ընդգրկված բոլոր խմբերի՝ մեթոդիկայի կիրառումից ստացված արդյունքների միջին վիճակագրական տվյալները:



**Ս. Ա. Պակուկինայի և Ս. Մ. Կետկոյի «Մանկավարժական համալսարանի ուսանողների ուսումնական մոտիվացիա» մեթոդիկայի կիրառումից ստացված տվյալների միջին թվաբանական ցուցանիշները**

Ինչպես տեսնում ենք զճնապատկերում, տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության երկրորդ կուրսի, հոգեբանություն մասնագիտության առաջին և երկրորդ կուրսի ուսանողների խմբերում ներքին մոտիվացիայի կազմում ամենաբարձրը համալսարան ընդունվելու շարժառիթների ցուցանիշներն են, իսկ մաթեմատիկա մասնագիտության առաջին կուրսի ուսանողների խմբում՝ իրական գործող շարժառիթների ցուցանիշները: Հոգեբանություն երկրորդ, տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության երկրորդ և մաթեմատիկա մասնագիտության առաջին կուրսի ուսանողների ներքին մոտիվացիայի ամենացածր ցուցանիշներն արձանագրվել են մասնագիտական շարժառիթներում, իսկ հոգեբանության առաջին կուրսում՝ իրական գործող շարժառիթներում:

Բոլոր խմբերի արտաքին մոտիվացիայում ամենացածր ցուցանիշներն արձանագրվել են համալսարան ընդունվելու շարժառիթներում, ինչը ցույց է տալիս, որ մանկավարժական համալսարան ընդունվելը ուսանողների մեծամասնության կողմից պայմանավորված չէ արտաքին գործունեությամբ:

Հոգեբանություն մասնագիտության առաջին և երկրորդ կուրսերի խմբերի արտաքին մոտիվացիայում առավել բարձր ցուցանիշներն արձանագրվել են մասնագիտական շարժառիթներում, ինչը ցույց է տալիս, որ հոգեբանի մասնագիտությունն ուսանողների համար ընդլայնում է հեռանկարային և հետաքրքիր աշխատանք ստանալու հնարավորությունները: Մաթեմատիկա առաջին կուրսի և տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողների շարժառիթներն ինքնին կապված չեն ուսումնական գործընթացի հետ, ուսումնական գործունեության սահմաններից դուրս են (հետ չմնալ համակուրսեցիներից, արժանանալ դասախոսների հարգանքին, արժանանալ այլոց հավանությանը, աշխատել դպրոցում և այլն):

### **Եզրակացություն**

Այսպիսով, մեր կողմից կիրառված մեթոդիկայի հիման վրա ստացված տվյալների համեմատության արդյունքում պարզվել է, որ.

- առաջին և երկրորդ կուրսի ուսանողների ուսումնական ներքին և արտաքին մոտիվացիաների առանձնահատկությունները պայմանավորված են նաև ընտրված մասնագիտությամբ,
- առաջին կուրսի ուսանողների մոտ ուսումնական ներքին մոտիվացիայի ցուցանիշներն ավելի բարձր են երկրորդ կուրսի ուսանողների ներքին մոտիվացիայի ցուցանիշներից,
- երկրորդ կուրսի ուսանողների արտաքին մոտիվացիան բարձր է առաջին կուրսի ուսանողների արտաքին մոտիվացիայից,
- «հոգեբանություն» մասնագիտության ուսանողների ուսումնական մոտիվացիան առավելապես պայմանավորված է ներքին՝ համալսարան ընդունվելու, մասնագիտական շարժառիթներով,
- «մաթեմատիկա», «տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ուսանողների խմբերի ուսումնական մոտիվացիան պայմանավորված է արտաքին՝ իրական գործող և մասնագիտական շարժառիթներով,
- տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության ուսանողների ուսումնական արտաքին մոտիվացիայում առավել նշանակալի են հետաքրքիր աշխատանք ստանալու, կայունության երաշխիք ունենալու, դպրոցում աշխատելու շարժառիթները, իսկ մաթեմատիկա մասնագիտության ուսանողների խմբի համար՝ բարձր վարձատրվող աշխատանք ունենալու, պետական կառույցներում աշխատելու բաղադրամասերը:



Հետազոտության արդյունքները կարող են՝

1. կիրառվել ուսանողների ուսումնական մոտիվացիայի տարբեր բաղադրամասերի նշանակալիության զարգացմանն ուղղված աշխատանքներում,
2. ներդրվել մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում, ապագա ուսանողների դրդապատճառային ոլորտի ուղղորդման և ուսումնական գործունեության արտաքին և ներքին համարժեք շարժառիթների ձևավորման աշխատանքներում:

## **МОТИВЫ УЧЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СТУДЕНТОВ ПЕРВОГО И ВТОРОГО КУРСА**

**АННА АРАКЕЛЯН**

*Армянский государственный педагогический университет имени Х.  
Абовяна,  
канд. псих. наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

**МЕРИ ОБАСАПЯН**

*Армянский государственный педагогический университет  
имени Х. Абовяна, Магистр,  
г. Ереван, Республика Армения*

В данной статье представлены результаты исследования основных мотивов учебной деятельности студентов. В научный состав вошли студенты первого и второго курсов АГПУ имени Хачатура Абовяна. Целью исследования было изучение мотивов учебной деятельности студентов первого и второго курсов. Задачи исследования заключались в том, чтобы выяснить особенности внешней и внутренней мотивации студентов первого-второго курса и выявить различия между компонентами учебной мотивации в разных профессиональных группах. Для выяснения особенностей внутренней и внешней учебной мотивации студентов мы использовали методику «Мотивация учения студентов педагогического вуза» (Пакулина С.А., Кетько С.М.). В статье также анализируются различия внешней и внутренней мотивации студентов различных специальностей первого и второго курса.

**Ключевые слова:** учебная мотивация, мотив, учебная деятельность, учебно-познавательные мотивы, социальная мотивация, внутренние мотивы, внешние мотивы.

# MOTIVATIONS OF FIRST- AND SECOND-YEAR STUDENTS' LEARNING ACTIVITIES

**ANNA ARAKELYAN**

*Kh. Abovyan Armenian State Pedagogical University,  
PhD in Psychology, Associate Professor,  
Yerevan, the Republic of Armenia*

**MERI HOVASAPYAN**

*Kh. Abovyan Armenian State Pedagogical University,  
Graduate student,  
Yerevan, the Republic of Armenia*

The article presents the results of a study of the main incentives of students' learning activities. The sample of the research includes the first and the second year students of Khatchatur Abovyan State Pedagogical University. The objectives of the study were to find out the features of external and internal motivation of first and second year students and to highlight the differences in the components of learning motivation in different professional groups. In order to find out the features of the internal and external motivation of students, we used A. the methodology of S.A. Pakulina and S. M. Ketko's on learning motivation of students of a pedagogical university." The article also analyzes the differences in the external and internal motivation of students from different faculties.

**Keywords:** *motivation for learning, motive, learning activity, educational and cognitive moti-ves, social motivation, internal motives, external motives.*

# ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՍԵՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*

## ՆԱԻՐԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, կլինիկական հոգեբանության մագիստրոս,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*

**Հոդվածում քննարկվում են երիտասարդների արժեքային կողմնորոշումների առանձնահատկություններին ու դրանց սեռային տարբերություններին վերաբերող հարցերը, ինչպես նաև՝ իրականացված փորձարարական հետազոտության արդյունքները:**

**Հետազոտության նպատակն է եղել բացահայտել երիտասարդների արժեքային կողմնորոշումների առանձնահատկություններն ու դրանց սեռային տարբերությունները, որին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները. բացահայտել երիտասարդ աղջիկների և տղաների համար առաջնային նշանակություն ունեցող արժեքները, վեր հանել տերմինալ և ինստրումենտալ արժեքների և դրանց բաղադրամասերի սեռային տարբերություններն ու դրանք պայմանավորող գործոնները:**

**Հետազոտական աշխատանքի նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառվել են թեստավորման, զրույցի մեթոդները: Հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ տղաների և աղջիկների տերմինալ և ինստրումենտալ արժեքների համակարգում կան և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, որոնք պայմանավորված են երիտասարդների տարիքային ու սեռային առանձնահատկություններով:**

**Հիմնաբառեր՝** երիտասարդներ, արժեհամակարգ, արժեքային կողմնորոշումներ, տերմինալ արժեքներ, ինստրումենտալ արժեքներ, սեռային տարբերություններ:

## Ներածություն

Արժեքներն անձի կառուցվածքի առանցքային բաղադրիչներ են, դրանք ձևավորվում են սոցիալական փորձը յուրացնելիս և պայմանավորում անձնավորության ուղղվածության՝ նպատակների, իդեալների, համոզմունքների, հետաքրքրությունների առանձնահատկությունները, որոշում են կյանքի ուղու ընտրությունն ու անձի ինքնորոշումը: Արժեքները բավարարում են անձի կենսական պահանջմունքները և իմաստավորում նրա կյանքը:

Արդի պայմաններում, երբ երիտասարդների համար հին արժեքներն այլևս գործուն չեն, իսկ նոր արժեքների ձևավորման գործընթացը հղի է վտանգներով, ակտուալ են դառնում հիմնախնդրի նորովի ուսումնասիրման հարցերը՝ նրանց ակտիվության ուղղորդման մեխանիզմները հասկանալու և վերջիններին վրա ներգործելու տեսանկյունից:

### **Արժեքների դերն անձի ուղղվածության համակարգում**

Հոգեբանական գիտության մեջ արժեքային համակարգի վերաբերյալ բազմաթիվ տեսական և փորձարարական ուսումնասիրություններ կան: Այսպես, էքզիստենցիալ հոգեթերապիայի հիմնադիր Վ. Է. Ֆրանկլի տեսության շրջանակներում «իմաստ» և «արժեք» հասկացությունները շատ մոտ են: Նա արժեքը սահմանում է որպես համընդհանուր իմաստ, որոնց բախվում է հասարակությունը: Ֆրանկլի կարծիքով այն, ինչ այսօր անհատի կյանքի բացառիկ իմաստն է, վաղը կարող է դառնալ համընդհանուր արժեք:<sup>1</sup>

Ա. Մասլոուն, առանձնացնելով հոմեոստատիկ արժեքները՝ խաղաղություն, հանգստություն, քուն, հանգիստ, պաշտպանվածություն, միաժամանակ նշում է, որ մարդու բնույթը ուղղված է ոչ թե հոմեոստազի պահպանմանը, այլ ինքնաիրացմանը: Ինչպես Վ. Ֆրանկը, Ա. Մասլուն ևս շեշտում է արժեքների սուբյեկտիվ բնույթը և դրանց ընտրության հարցում անձի պատասխանատվությունը:<sup>2</sup>

Է.Ֆրոմմ արժեքները կապում է օբյեկտիվ գործոնների հետ (սոցիալական, տնտեսական կյանք), իսկ դրանց ընտրությունը՝ ներքին հոգեբանական առանձնահատկությունների:<sup>3</sup>

Խորհրդային հոգեբանության մեջ արժեքներն ուսումնասիրվել են անձի ակտիվության աղբյուրների՝ պահանջմունքների և դրդապատճառների համատեքստում, ակտիվության կառավարման գործոնների շրջանակներում (Ս.Լ. Ռուբինշտեյն, Ա.Ն.Լեոնտև, Բ.Գ.Անանև, Դ.Ն.Ուզևաձե, Լ.Ի. Բոժովիչ, Բ.Ս. Բրատուս, Բ.Ֆ. Լոմով, Վ.Ա. Յադով):

Ըստ Բ.Ֆ.Լոմովի՝ չնայած «արժեք» հասկացության մեկնաբանությունների տարբերությանը, խորհրդային բոլոր մոտեցումներում «արժեքի» գլխավոր բնութագիրն ուղղվածությունն է:<sup>4</sup>

Ս.Լ.Ռուբինշտեյնի տեսանկյունից՝ արժեքները բխում են մարդու և աշխարհի փոփոխվող ու զարգացող հարաբերակցությունից: Նա նշում է, որ միայն ընդունելի արժեքը կարող է կատարել կարևոր արժեքային գործառույթ՝ վարքի կողմնորոշիչ գործառույթը: Արժեքների ու պահանջմունքների աստիճանակարգը կանխորոշում է մարդու վարքը:<sup>5</sup>

Բ.Գ.Անանևի կարծիքով՝ սոցիալական դերերի և արժեքային կողմնորոշումների համակարգը պայմանավորվում է անձի սոցիալական կարգավիճակով: Դերերը, կարգավիճակը և արժեքային կողմնորոշումները

<sup>1</sup> Франкл В. Человек в поисках смысла, Москва, Прогресс, 1990 г.-372с.

<sup>2</sup> Маслоу А. Самоактуализация // Психология личности. Тексты / под ред. Ю. Б. Гиппенрейтер, А. А. Пузырея. -М.: Изд-во МГУ, 1982. - С.208-118.

<sup>3</sup> Фромм Э. Анатомия человеческой деструктивности: Пер. С англ. - М., 1994. -447 с.

<sup>4</sup> Ломов Б. Ф. Методологические и теоретические проблемы психологии. — М.: Наука, 1984., 446 с.

<sup>5</sup> Рубинштейн С. Л., Проблемы общей психологии.2-е изд. - М., 1976. - 416 с.

որոշում են վարքի կառուցվածքի և մոտիվացիայի առանձնահատկությունները: <sup>1</sup>

Ա.Լեոնտևն արժեքները դիտարկում է անձի գործունեությունն իմաստավորող տարրեր: Ըստ նրա՝ հասարակական իդեալներն անձի գործունեության ընթացքում յուրացվում են և արտահայտվում հասարակայնորեն ընդունված վարքի նորմերի և անձի դիրքորոշումների կառուցվածքի մեջ: <sup>2</sup>

Վ.Ֆ. Անուրիևի կարծիքով՝ արժեքային կողմորոշումները որոշում են պահանջմունքի բնույթը, սոցիալական ուղղվածությունը, բավարարման եղանակների ու միջոցների ընտրությունը: <sup>3</sup>

Արժեքների ուսումնասիրման ամենատարածված մոտեցումներից է Մ. Ռոկիչի հայեցակարգը: Մ. Ռոկիչն առանձնացնում է տերմինալ և ինստրումենտալ արժեքներ: Տերմինալ արժեքները նպատակ-արժեքներ են, որոնք արտացոլում են կյանքի հեռանկարը, որոշում կյանքի իմաստը: Ինստրումենտալ արժեքներն արժեքներ-միջոցներ են, որոնք սահմանում են մարդու վարքի տեսակը կոնկրետ իրավիճակում: <sup>4</sup>

### **Փորձարարական հետազոտություն**

Հենվելով հոգեբանական գիտության մեջ ընդունված տեսամեթոդաբանական մոտեցումների վրա՝ կազմակերպել ենք հետազոտություն, որի նպատակն է եղել բացահայտել երիտասարդների արժեքային կողմորոշումների առանձնահատկություններն ու դրանց սեռային տարբերությունները: Ենթադրվել է, որ երիտասարդների արժեհամակարգում տերմինալ և ինստրումենտալ արժեքների և դրանց բաղադրամասերի դրսևորումները պայմանավորվում են նաև սեռային առանձնահատկություններով:

Հետազոտության նպատակից և վարկածից ելնելով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները. բացահայտել երիտասարդ աղջիկների և տղաների համար առաջնային նշանակություն ունեցող արժեքները, վեր հանել տերմինալ և ինստրումենտալ արժեքների և դրանց բաղադրամասերի սեռային տարբերություններն ու դրանք պայմանավորող գործոնները:

Հետազոտական աշխատանքն իրականացվել է 2021 թ. փետրվար, մարտ ամիսներին: Հետազոտությանը մասնակցել է 25-30 տարեկան 64 երիտասարդ՝ 32 աղջիկ և 32 տղա: Քանի որ գիտական գրականության մեջ հանդիպել են առավելապես 18-22 տարեկան երիտասարդների խմբերում իրականացված հետազոտություններ, ապա մեր կողմից հետազոտության ընտրակազմի ընտրության համար առանձնացվեց 25-30 տ. տարիքային խումբը:

<sup>1</sup> **Ананьев Б. Г.** О проблемах современного человекознания. - М.: Наука, 1977. - 344 с.

<sup>2</sup> **Леонтьева А. А.** Психология общения, /учебное пособие/, 3-е издание. – Москва: Смысл: Академия, 2005. – 368 с.

<sup>3</sup> **Առաքելյան Ա. Դ.**, Պահանջմունքներ, ԶՊՄԶ-Եր.: 2019.- 156 էջ:

<sup>4</sup> **Карандашев В. Н.**; Методика Шварца для изучения ценностей личности: концепция и методическое руководство. — СПб.: Речь, 2004. - 70 с.

Երիտասարդների արժեքային կողմնորոշումների առանձնահատկությունների հետազոտության համար օգտագործվել են գրույցի և թեստավորման մեթոդները:

Կիրառվել է Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկան, որը թույլ է տալիս ուսումնասիրել անձի ուղղվածության բովանդակային կողմը և որոշել միջավայրի, այլ մարդկանց և իր նկատմամբ ունեցած վերաբերմունքը, աշխարհայացքը, գործունեության դրոպապատճառները և «կյանքի փիլիսոփայության» հիմքը:

Արժեքների աստիճանակարգը վերլուծելիս ուշադրություն ենք դարձրել դրանց բովանդակային խմբավորմանը (օրինակ, «կոնկրետ» և «վերացական» արժեքներ, մասնագիտական ինքնաիրացման և անձնական կյանքի արժեքներ և այլն):

Ինստրումենտալ արժեքները խմբավորվում են արժեքների հետևյալ խմբերում.

- Էթիկական, հաղորդակցական, գործնական;
- անհատական, կոնֆորմիստական, այլասիրական;
- ինքնահաստատման և այլոց ընդունման արժեքներ:

Մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են կարգային վերլուծության: Արժեքների անհատական համակարգում կարգերը մեկնաբանվում են հետևյալ կերպ.

- նախընտրելի, նշանակալի արժեքներ (1- 6 կարգեր);
- պակաս կարևոր և նշանակալի (7-12 կարգեր);
- անկարևոր, նշանակություն չունեցող (13-18 կարգեր):

Տերմինալ արժեքների հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ աղջիկների համար առաջնային նշանակություն ունեն անձնական կյանքի՝ «սեր» և «երջանիկ ընտանեկան կյանք» արժեքները: Արդյունքների այս պատկերը շատ օրինաչափ է, քանի որ տվյալ արժեքները երիտասարդների համար առանցքային նշանակություն ունեն, տարիքային այս փուլում կարևորվում են սիրո, զուգընկերոջ ընտրության, ընտանեկան կյանքը կառուցելու հարցերը: Աղջիկների համար նշանակալի արժեքներից է «առողջություն» արժեքը, որը համարվում է ավանդական, համամարդկային արժեք: Բացի այդ, համավարակի պայմաններում առողջությունն առավել քան կարևոր է: Մասնագիտական ինքնաիրացման՝ «հետաքրքիր աշխատանք» և «կենսական ակտիվ գործունեություն» արժեքներն աղջիկների տերմինալ արժեքների համակարգում ևս զբաղեցրել են առաջատար կարգեր, ինչը ենթադրում է, որ աղջիկները կարևորում են ոչ միայն ընտանիք կազմելու և երեխաներ ունենալու հարցերը, այլ նաև հետաքրքիր մասնագիտության ընտրության և մասնագիտական ինքնաիրացման խնդիրները: «Լավ և հավատարիմ ընկերների առկայություն» արժեքի կարևորությունը հավանաբար պայմանավորվում է նաև ներկայիս իրականությամբ: Համաճարակային պայմաններում հարկադրված մեկուսացումը, մարդկային շփումների սահմանափակումներն ու պատերազմի հետևանքով ընկերների կորուստը շատերին ստիպեցին արժևորել մարդկային շփումները, լավ և հավատարիմ ընկերների առկայությունը:

Աղջիկների տերմինալ արժեքների համակարգում կարգային ցածր դիրքեր են զբաղեցրել «իմաստություն», «ստեղծագործականություն»,

«հասարակական կոչում», «բնության և արվեստի գեղեցկություն» արժեքները: Նման դիրքորոշում է արձանագրվել նաև զվարճանքների և ուրիշների երջանկության նկատմամբ:

Աղջիկների ընտրակազմում տերմինալ արժեքների հետազոտության ընդհանուր արդյունքները որոշ հայեցակերպերում չեն համադրվում զրույցից ստացված արդյունքների հետ: Ըստ ստացված արդյունքների՝ աղջիկների տերմինալ արժեքների համակարգում ինքնավստահությունը զբաղեցնում է 10-րդ կարգը, սակայն զրույցից ստացված տվյալներով աղջիկների 87.5%-ը շատ է կարևորում ինքնավստահությունը: Մյուս հակասությունը կապված է «նյութական ապահովված կյանք» արժեքի հետ, որն աղջիկների տերմինալ արժեքների համակարգում զբաղեցնում է 11-րդ կարգը և միջին ցուցանիշներով բնութագրվում է նրանց համար այս արժեքի նվազ կարևորությամբ: Այս արդյունքը հակադրվում է զրույցից ստացված տվյալների հետ, ըստ որի՝ հետազոտվող աղջիկների 65.6%-ի համար նյութական ապահովված կյանքը կարևոր է: Կարելի է ենթադրել, որ արդյունքների նման պատկերը պայմանավորվում է հետևյալ հանգամանքով. քանի որ «ինքնավստահություն» և «նյութապես ապահովված կյանք» արժեքներն անձի կենսագործունեության ընթացքում ինքնին կարևոր արժեքներ են, և զրույցի ժամանակ հետազոտվողները վերջիններս այլ արժեքների հետ համեմատելու խնդիր չունեին, ապա որպես նշանակալի արժեքներ առանձնացվել են նրանց կողմից: Ռոկիչի մեթոդիկայում, երբ այլ արժեքների հետ համեմատելու ու կարգավորման խնդիր էր դրված, վերջիններիս դերն ու նշանակությունը գնահատվել է այդ համատեքստում: Աղջիկների ինստրումենտալ արժեքների համակարգում առաջնային նշանակություն ունեն ազնվությունը, կրթությունը, պատասխանատվությունն ու դաստիարակությունը: Նրանց համար առաջնային են նաև անկախությունը, բարձր պահանջներն ու ձգտումները: Ենթադրվում է, որ հասարակության մեջ կանանց սոցիալական դիրքի, դերերի փոփոխությունները, ինքնաիրացման ձգտումները հանգեցրել են այս արժեքների կարևորության բարձրացմանը:

Աղջիկների ընտրակազմում կատարողականությունը, աշխատանքում արդյունավետությունը, ռացիոնալիզմը, հանդուրժողականությունը, սեփական և այլոց թերությունների հանդեպ անհանդուրժողականությունը՝ որպես արժեքներ կարգային ցածր դիրքերում են: Այս արդյունքները համադրվում են նաև զրույցից ստացված արդյունքների հետ:

Աղջիկների տերմինալ արժեքների համակարգում 1-6 առաջատար կարգերը զբաղեցրած արժեքները խմբավորվել են անձնական կյանքի (սեր, առողջություն, երջանիկ ընտանեկան կյանք, լավ և հավատարիմ ընկերների առկայություն) և մասնագիտական ինքնաիրացման (հետաքրքիր աշխատանք, կենսական ակտիվ գործունեություն) արժեքային խմբերում, որոնցից սերը՝ վերացական է, իսկ մյուսները՝ կյանքի կոնկրետ արժեքներ են:

Ինստրումենտալ արժեքների համակարգում 1-6 առաջատար կարգերը զբաղեցրած արժեքները խմբավորվել են էթիկական (պատասխանատվություն), հաղորդակցական (ազնվություն, դաստիարակություն) և ինքնահաստատման (կրթություն, անկախություն, բարձր պահանջներ և ձգտումներ) արժեքային խմբերում:

Տղաների տերմինալ արժեքների հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ նրանց համար առաջնային նշանակություն ունեն անձնական կյանքի՝ «սեր», «առողջություն», «երջանիկ ընտանեկան կյանք», «լավ և հավատարիմ ընկերների առկայություն», «ազատություն» և մասնագիտական ինքնաիրացման՝ «արդյունավետ կյանք» արժեքները:

Ըստ արդյունքների՝ տղաների տերմինալ արժեքների համակարգում կարգային ցածր դիրքեր են զբաղեցրել «նյութապես ապահովված կյանք», «ստեղծագործականություն», «բնության և արվեստի գեղեցկություն», «հասարակական կոչում», «զվարճանք» և ուրիշների երջանկություն» արժեքները: Տղաների տերմինալ արժեքների համակարգում «նյութապես ապահովված կյանք» արժեքի անկարևորությունը բացատրվում է ետպատերազմյան և համավարակային իրադրությամբ: Բազմաթիվ մարդկային կորուստները ստիպեցին մարդկանց վերաիմաստավորել, վերաարժևորել կյանքը, ինչի արդյունքում որոշ արժեքների նշանակությունն ու կարևորությունը փոխվել է: Տղաների մեծ մասը գրույցի ժամանակ նշում էին, որ նյութական ապահովվածությունն այլևս չեն արժևորում, իրենց համար բարձրագույն արժեք է մարդկային կյանքը, որ շատ բան կտային, միայն թե չկորցնեին իրենց ընկերներին ու հարազատներին:

Տղաների ինստրումենտալ արժեքների համակարգում առաջնային նշանակություն ունեն «պատասխանատվություն», «անկախություն», «ազնվություն», «կրթություն», «կենսուրախություն» և «սեփական կարծիքն ու հայացքները պաշտպանելու համարձակություն» արժեքները: Կարգային ցածր դիրքերում են հետևյալ ինստրումենտալ արժեքները. լայնախոհություն, ռացիոնալիզմ, նրբազգացություն, հանդուրժողականություն, կատարողականություն ու անհանդուրժողականություն սեփական և այլոց թերությունների հանդեպ:

Տղաների տերմինալ արժեքների համակարգում 1-6 առաջատար կարգերը զբաղեցրած արժեքները խմբավորվել են անձնական կյանքի (առողջություն, երջանիկ ընտանեկան կյանք, լավ և հավատարիմ ընկերների առկայություն, սեր, ազատություն) և մասնագիտական ինքնաիրացման (արդյունավետ կյանք արժեք) ենթախմբերում, որոնցից սերն ու ազատությունը վերացական են, իսկ մյուսները՝ կյանքի կոնկրետ արժեքներ են:

Ինստրումենտալ արժեքների համակարգում 1-6 առաջատար կարգերը զբաղեցրած արժեքները խմբավորվել են էթիկական (պատասխանատվություն), հաղորդակցական (ազնվություն, կենսուրախություն) և ինքնահաստատման (անկախություն, կրթություն, սեփական հայացքներն ու տեսակետները պաշտպանելու խիզախություն) արժեքային ենթախմբերում:

Հետազոտությանը մասնակցած երիտասարդների տվյալների կարգային վերլուծության արդյունքում պարզվեց, որ աղջիկների և տղաների տերմինալ /արժեքներ-նպատակներ/ արժեքների համակարգում կան և՛ նմանություններ, և՛ տարբերություններ:

Երկու սեռերի համար էլ առաջնային են անձնական կյանքի՝ «սեր», «առողջություն», «երջանիկ ընտանեկան կյանք» և «լավ և հավատարիմ ընկերների առկայություն» արժեքները: Արդյունքների այս պատկերը



պայմանավորված է այն հանգամանքով, որ կյանքի զուգընկերոջ ընտրությունը և ընտանիքի ստեղծումը երիտասարդության զարգացման սոցիալական իրավիճակի կարևոր ասպեկտներից մեկն է: Տարիքային այս փուլում մարդկանց ճշող մեծամասնությունը ընտանիք է կազմում, իսկ սերը երջանիկ ընտանեկան կյանքի հիմքն է: Երիտասարդների համար կարևոր է նաև ընկերական հարաբերությունների հաստատումն ու ամրապնդումը: «Առողջություն» համամարդկային արժեքը երկու սեռերի համար էլ կարևորվել է:

Երիտասարդների տերմինալ արժեքների համակարգում առաջնային կարգերը զբաղեցրած արժեքների մեջ կան նաև որոշակի տարբերություններ: Տղաների համար առավել կարևոր են մասնագիտական ինքնաիրացման՝ «արդյունավետ կյանք» և անձնական կյանքի՝ «ազատություն» արժեքները, իսկ աղջիկների համար առաջնային են մասնագիտական ինքնաիրացման՝ «հետաքրքիր աշխատանք» և «կենսական ակտիվ գործունեություն» արժեքները: Տարբերություններ կան նաև կոնկրետ և վերացական արժեքների մեջ. տղաների մոտ վերացական արժեքներից առավել կարևորվում են սերն ու ազատությունը, իսկ աղջիկների մոտ՝ միայն սերը:

Չեղանկատության տվյալների համեմատական վերլուծության արդյունքում պարզվեց, որ աղջիկների և տղաների ինստրումենտալ արժեքների համակարգում ևս կան նմանություններ և տարբերություններ:

Երկու սեռերի մոտ էլ ինստրումենտալ արժեքների համակարգում առաջնային կարգերն են զբաղեցրել Էթիկական արժեքներից՝ «պատասխանատվություն», հաղորդակցական արժեքներից՝ «ազնվություն», ինքնահաստատման արժեքներից՝ «անկախություն» և «կրթություն» արժեքները:

Երիտասարդների ինստրումենտալ արժեքների համակարգում առկա տարբերություններ են. աղջիկների համար առավել կարևոր են հաղորդակցական արժեքներից՝ «դաստիարակություն» և ինքնահաստատման արժեքներից՝ «բարձր պահանջներ ու ձգտումներ» արժեքները: Տղաների համար առաջնային են հաղորդակցական՝ «կենսուրախություն» և ինքնահաստատման՝ «սեփական հայացքներն ու տեսակետները պաշտպանելու համարձակություն» արժեքները:

Հարկ է նշել, որ երկու սեռերի համար էլ այլասիրական և այլոց ընդունման արժեքները կարևորություն չեն ներկայացնում:

### **Եզրակացություն**

Չեղանկատության տվյալների հոգեբանական վերլուծության արդյունքում պարզվել է, որ երիտասարդների արժեհամակարգի կարևոր արժեքներն են.

ա) Երիտասարդների տերմինալ արժեքների համակարգում առավել կարևորվում են անձնական կյանքի (սեր, առողջություն, երջանիկ ընտանեկան կյանք, լավ և հավատարիմ ընկերների առկայություն, ինքնավստահություն) արժեքները:

բ) Երիտասարդների ինստրումենտալ արժեքների համակարգում առավել կարևորվում են Էթիկական (պատասխանատվություն), հաղորդակցական (ազնվություն) և ինքնահաստատման (անկախություն, կրթություն) արժեքները:

Տերմինալ և ինստրումենտալ արժեքների համակարգում կան սեռային տարբերություններ.

ա) Տերմինալ արժեքներից աղջիկների համար առաջնային են մասնագիտական ինքնաիրացման՝ «հետաքրքիր աշխատանք», «կենսական ակտիվ գործունեություն» և անձնական կյանքի՝ «նյութական ապահովված կյանք» արժեքները: Տղաների համար առաջնային են անձնական կյանքի՝ «ազատություն» և մասնագիտական ինքնաիրացման՝ «արդյունավետ կյանք» արժեքները: Տղաների մոտ վերացական արժեքներից առավել կարևորվում են սերն ու ազատությունը, աղջիկների մոտ՝ միայն սերը:

բ) Ինստրումենտալ արժեքներից աղջիկների համար կարևորվում են հաղորդակցական՝ «դաստիարակություն» և ինքնահաստատման՝ «բարձր պահանջներ և ձգտումներ» արժեքները: Տղաների համար կարևորվում են հաղորդակցական՝ «կենսուրախություն» և ինքնահաստատման՝ «սեփական հայացքներն ու տեսակետները պաշտպանելու համարձակություն» արժեքները:

## **ОСОБЕННОСТИ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ МОЛОДЕЖИ И ИХ ГЕНДЕРНЫЕ РАЗЛИЧИЯ**

### **АННА АРАКЕЛЯН**

*Армянский государственный педагогический университет имени  
Х.Абовяна, кандидат психологических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

### **НАИРА СОГОМОНЯН**

*Армянский государственный педагогический университет имени  
Х.Абовяна, магистр клинической психологии,  
г. Ереван, Республика Армения*

В статье рассматриваются вопросы, касающиеся особенностей ценностных ориентаций молодежи и их гендерных различий, а также результаты проведенного экспериментального исследования.

Целью исследования было выявление особенностей ценностных ориентаций молодежи и их гендерные различия. Для достижения цели были поставлены следующие задачи: выявить ценности, имеющие первостепенное значение для девушек и парней, раскрыть гендерные различия между терминальными, инструментальными ценностями и их компонентами, и обуславливающие их факторы. В соответствии с целью и задачами исследовательской работы использовались методы беседы и тестирования.

Анализ результатов исследования показал, что в системе терминальных и инструментальных ценностей девушек и парней есть как сходства, так и различия, обусловленные возрастными и гендерными особенностями молодежи.

**Ключевые слова:** молодежь, система ценностей, ценностные ориентации, терминальные ценности, инструментальные ценности, гендерные различия.

## **THE PECULIARITIES OF VALUE ORIENTATIONS OF YOUNG PEOPLE AND THEIR GENDER DIFFERENCES**

**ANNA ARAKELYAN**

*Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,  
Ph.D. in Psychology,  
Yerevan, the Republic of Armenia*

**NAIRA SOGHOMONYAN**

*Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,  
the Graduate student of Clinical Psychology,  
Yerevan, the Republic of Armenia*

The article discusses issues concerning the features of the value orientations of young people and their gender differences, as well as the results of an experimental study.

The purpose of the study was to determine the qualities of the value orientations of young people and their gender differences, and for achieving our goals we set the following tasks:

1. To identify the values which are of predominant importance for young girls and boys.
2. To identify gender differences between the terminal and instrumental values, their components, and their defining factors.

In accordance with the purpose and problems of the research, the methods of testing and conversation have been used in the article. As a result of the analysis of the research data, it was found that there are both similarities and differences in the system of terminal and instrumental values of boys and girls, which are caused by the age and gender characteristics of young people.

**Keywords:** *young people, value system, value orientations, terminal values, instrumental values, gender differences.*

# ԱՐԴԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՈՐՊԵՏ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

## ԱԼՎԱՐԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ, Համալսարանի գիտական թանգարանի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն [aspumuseum@gmail.com](mailto:aspumuseum@gmail.com)

**Թանգարանում կազմակերպվող կրթամշակութային գործընթացը գործունեության առանձնահատուկ տեսակ է, երբ նյութի ընկալումն իրականանում է թանգարանային առարկաներ հանդիսացող պատմական և մշակութային հուշարձանների միջոցով: Թանգարանային կրթական ծրագրի առավելությունն այն է, որ գիտելիքի մատուցումը հիմնվում է բնօրինակ նմուշների վրա և ուսուցման գործընթացը ցուցաբերում է իրականացվում, որի շնորհիվ առավել բնական միջավայր է ստեղծվում թանգարանային առարկան ամբողջովին ընկալելու համար: Ըստ կրթական նպատակների առանձնացվում են թանգարանային էքսկուրսիայի տարբեր տեսակներ: Թանգարանային կրթական գործունեության մեթոդաբանության հիմքում այցելուի շփումն է թանգարանային առարկայի և թանգարանային մանկավարժի հետ:**

**Թանգարանային մանկավարժի դերը ոչ այնքան որոշակի գիտելիքների կրող լինելն է, այլ այցելուի և թանգարանային առարկայի միջև երկխոսություն կազմակերպելը:**

**Հիմնաբառեր՝** թանգարանային առարկա, թանգարանային կրթական ծրագիր, ճանաչողական էքսկուրսիա, կրթական կամ թեմատիկ էքսկուրսիա, զարգացնող էքսկուրսիա, դաստիարակչական էքսկուրսիա, թանգարանային մանկավարժ:

Կրթական և մշակութային քաղաքականությունն իրականացնելիս հնարավոր չէ անտեսել զանգվածային հաղորդակցության միջոցները, մշակութային ինդուստրիան, գրադարանները, թանգարանները: Կրթությունը լիարժեք և արդյունավետ չի կարող լինել, առանց գործընթացում լրացուցիչ կրթական տարածք ներառելու, ուստի կրթության համար պատասխանատվություն չեն կարող կրել միայն կրթական հաստատությունները: Այն ներառում է մշակույթի, սոցիալական ապահովության նախարարությունների, մշակութային գործիչների և մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը:<sup>1</sup>

<sup>1</sup> *Thinesse-Demel J.* Education as a Tool for Museums., Budapest, 2001, 153 p.

Ամերիկյան թանգարաններում այցելուների հետ կատարված աշխատանքի կուտակված փորձը թույլ տվեց ձևակերպել թանգարանի կարևորագույն խնդիրներից մեկը՝ «Թանգարանը պետք է ստեղծի երեխաների համար կրթության և մեծերի համար առողջ հանգստի և գիտելիքների կուտակման պայմաններ: Նա պետք է լինի այն պահոցը, որից գիտելիքներ կքաղեն ուսանողները և ոգեշնչման աղբյուր կլինի նկարիչների համար: Թանգարանի ազդեցությունը պետք է շոշափվի տանը և արտացոլվի հասարակության բոլոր անդամների վրա:»<sup>1</sup>

Դեռևս 19-րդ դարում շատ թանգարաններ ավանդական աշխատանքների հետ մեկտեղ (կոմպլեկտավորում, պահպանում, ուսումնասիրում) մեծ ուշադրություն սկսեցին դարձնել կրթական խնդիրների լուծմանը: Զանի որ Եվրոպայում իրականացվում էին բարեփոխումներ դպրոցական կրթության բնագավառում և ձևական, չոր դասավանդման փոխարեն նոր մանկավարժական գաղափարներն առաջարկում էին անցնել առարկայական և զննական միջոցների օգնությամբ կրթական գործընթացի կազմակերպմանը: Սա նպաստեց թանգարանային գործում նոր ուղղությունների ի հայտ գալուն, որոնք ուղղված էին մանկավարժական խնդիրների լուծմանը:

Մի շարք թանգարաններում ստեղծվեցին միջնակարգ դպրոցների ուսուցիչների հետ համագործակցության ծրագրեր՝ աշակերտների կրթությանը նպաստող համատեղ աշխատանքներ կազմակերպելու նպատակով:

Ինչպես նշում է Բ.Ա. Ստոյարովը. «մարդու փոխազդեցությունը թանգարանային միջավայրի, գեղարվեստի հուշարձանների հետ հնարավորություն է տալիս նրան տիեզերքի անծայր տարածքներից շարժվել դեպի սեփական անձը՝ նպաստելով անհատի հաստատմանը»:<sup>2</sup> Թանգարանային կրթական գործունեության ընթացքում էքսկուրսավարի՝ որպես գիտելիքներ փոխանցող միջնորդի առկայությունն ապահովում է ընկալումն ու նպաստում այցելուի ինքնուրույն դատելու ունակության զարգացմանը:

Ըստ կրթական նպատակների առանձնացվում են թանգարանային էքսկուրսիայի հետևյալ տեսակները՝

- Ճանաչողական
- կրթական կամ թեմատիկ
- զարգացնող
- դաստիարակչական:<sup>3</sup>

Մեր կատարած ուսումնասիրություններից կարող ենք եզրահանգել, որ առավել տարածված են ճանաչողական կամ ակնարկային, ամփոփիչ էքսկուրսիաները, որոնք հնարավորություն են տալիս այցելուներին կարճ

<sup>1</sup> **Berry, N., Mayer, S.**, *Museum Education: History, Theory and Practice*, National Art Education Association. Reston, Va., 1989. P.43.

<sup>2</sup> **Столяров Б.А.** – Музей в пространстве художественной культуры и образования. Учебное пособие. – СПб., 2007, 340 с.

<sup>3</sup> **Столяров Б.А.** – Музейная педагогика. История, теория, практика: Учебное пособие. – М.: Высш. шк., 2004, 216 с.

ժամանակում ծանոթացնելու թանգարանի ցուցադրության հիմնական ու կարևորագույն հատվածներին:

Ճանաչողական էքսկուրսիաները ձևավորվել են թանգարանների ստեղծմանը զուգընթաց և առաջին անգամ թանգարան եկած այցելուների համար էքսկուրսիայի առավել նպատակահարմար տարբերակն են: Այս տեսակի էքսկուրսիայի ժամանակ տրվում են տեղեկատվական բնույթի գիտելիքներ, ցուցադրությունը ներկայացվում է ամբողջովին: Թանգարանային ճանաչողական էքսկուրսիաների հիմնահարցերից է ծանոթությունը թանգարանային շենքի, դրա շրջակայքի (արգելոց-թանգարանների դեպքում), ճարտարապետության և պատմության հետ, թանգարանային հավաքածուի ստեղծման պատմությանը, թանգարանային ցուցադրության բաժիններին, ցուցադրության մեջ ընգրկված առաջնային համարվող ցուցանմուշներին:

Վերը նշված թեմաները կարող են հավասարաչափ բաշխված լինել կամ փոփոխվել՝ ելնելով խմբի ցանկությունից, էքսկուրսիայի համար տրամադրվող ժամանակից և այլ հանգամանքներից:<sup>1</sup>

Թանգարանային էքսկուրսիայի տարածված տեսակներից են թեմատիկ և կրթական էքսկուրսիաները, որտեղ թեման ներկայացվում է մանրամասն և առավել խորությամբ: Կրթական (թեմատիկ) էքսկուրսիայի հիմնական նպատակը կոնկրետ թեմայի (ցուցանմուշի, հավաքածուի) վերաբերյալ գիտելիքներ հաղորդելն է: Այս էքսկուրսիաները նախատեսված են բոլոր տարիքային խմբերի համար, սակայն հիմնականում կազմակերպվում են դպրոցականների և ուսանողների համար: Եթե ճանաչողական էքսկուրսիայի ժամանակ այցելուներին հիմնականում տեղեկատվական բնույթի գիտելիքներ են մատուցվում, ապա թեմատիկ էքսկուրսիայի ընթացքում տրամադրվում են առավել մանրամասն և խորը գիտելիքներ: Կրթական (թեմատիկ) էքսկուրսիաների խնդիրները և բովանդակությունը պայմանավորված են խմբի պատրաստվածության աստիճանից և հատկացված ժամանակից: Կրթական էքսկուրսիա նախապատրաստելիս, մեթոդական ուղղություն ընտրելիս և տևողությունը որոշելիս պետք է հաշվի առնել խմբի առանձնահատկությունները, ցուցաբերել տարբերակված մոտեցում, հաշվի առնելով այցելուի տարիքը և պատրաստվածությունը:<sup>2</sup>

Այսպիսով, կրթական էքսկուրսիաները թանգարանային կրթամշակութային աշխատանքներում դասական և տարածված ձևերից են, որոնց շնորհիվ թանգարանային ցուցադրությունը ներկայացվում է խորացված և կատարվում է համակարգված, նպատակաուղղված աշխատանք: Կրթական էքսկուրսիաների առանձնահատկությունն այն է, որ դրանք նախապատրաստվում և իրականացվում են դպրոցական, բուհական ծրագրերին համապատասխան և նպատակ ունեն լրացնել ու ընդլայնել դպրոցական, բուհական ծրագրերը: Թանգարանային էքսկուրսիաները, որոնք

---

<sup>1</sup> **Верпланке Ф.** – Пути музейной педагогики. О стремлении детских и юношеских музеев стать новыми объектами культурной педагогики: //Музейная педагогика за рубежом. Работа музеев с детской аудиторией. Лаборатория музейного проектирования, Российский институт культурологии, Москва, 1997, 73 с.

<sup>2</sup> **Չարոյան Մ., Ավագյան Ա., Գրիգորյան Ա.** - Գիտակրթական գործունեության ընթացքը Հայաստանի թանգարաններում: // «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N4, Ե., «Անտարես», 2012, 288 էջ, էջ 18-28:

հիմնված են պատմության և բնության երևույթները պարզաբանող բնօրինակների վրա, տեսական գիտելիքները դարձնում են առավել հիմնավոր, տեսանելի, համոզիչ:

Կրթական էքսկուրսիաներում ավելի հաճախ է օգտագործվում հարց ու պատասխանի մեթոդը՝ կրկնվում և ամրապնդվում է անցած նյութը, կենտրոնացվում է ուշադրությունը, վերլուծվում է թանգարանային նյութը, որի հիման վրա կատարվում են ընդհանրացումներ և եզրակացություններ:

Լայն տարածում են ստացել էքսկուրսիա-դասը, էքսկուրսիա-սեմինարը, էքսկուրսիա-դասախոսությունը: Էքսկուրսիա-դասն իրականացվում է թանգարանի սրահում էքսկուրսավարի և ուսուցչի համագործակցությամբ և ներառում ինչպես էքսկուրսիայի տարրեր (ցուցադրել, պատմել), այնպես էլ դասի (հարցում, կրկնություն): Էքսկուրսիա-դասը, լրացվելով կինո-ֆոտո նյութերով՝ վերածվում է դաս-դասախոսության: Կրթական էքսկուրսիայի այս ձևն օգտագործվում է թանգարանային նյութի փաստացի սակավության դեպքում (օրինակ, եթե էքսկուրսիան նվիրված է որևէ հեղինակի, որի աշխատանքները ցուցադրության մեջ քիչ են ներկայացված):

Մասնագիտական կրթական և կրթամեթոդական էքսկուրսիաները բազմազան են իրենց նպատակներով, բովանդակությամբ, լսարանի կազմով:<sup>1</sup> Դրանք կազմակերպվում են նեղ մանագետների համար և անց են կացվում հատուկ ծրագրով: Յուրաքանչյուր մասնագիտական էքսկուրսիայի համար ընտրվում է թեման, նպատակը, ցուցադրության նյութը: Մասնագիտական էքսկուրսիան կարող է կազմակերպվել ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցադրություններում և թանգարանի ֆոնդերում: Մասնագիտական կրթամեթոդական էքսկուրսիաներն անց են կացվում թանգարանների սկսնակ աշխատողների, ուսուցիչների և էքսկուրսավարների համար: Նմանատիպ էքսկուրսիայի նպատակն է ծանոթացնել ցուցադրության կազմակերպման, էքսկուրսիայի պատրաստման և անցկացման մեթոդներին, թանգարանային գործունեության այլ ուղղությունների:

Չարգացնող տեսակի էքսկուրսիաներ կազմակերպելիս թանգարանների մանկավարժները պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն էքսկուրսիայի բովանդակությանն ու մեթոդական սկզբունքներին:

Չարգացնող էքսկուրսիայի հիմնական նպատակն է թանգարանային օբյեկտն ընկալելու համար այցելուների մոտ զարգացնել և ձևավորել այնպիսի հատկություններ և ընդունակություններ, ինչպիսիք են դիտողականությունը, հուզականությունը, զգայական ընկալումը, ստեղծագործական մտածողությունը, ինչպես նաև հույզերը, մտքերը բառերով արտահայտելու ունակությունը: Այս տեսակի էքսկուրսիան ունի խիստ մանկավարժական ուղղվածություն: Չարգացնող տեսակի էքսկուրսիայի խնդիրներն են.

1. Բովանդակության հանդեպ զգացմունքների առաջացման ձևավորում,
2. Տեսածի վերաբերյալ մտածելու ունակության, վերլուծելու-ընդհանրացնելու ունակության զարգացում,
3. Ստեղծագործական երևակայության զարգացում,
4. Չգայական (սենսորային) ունակությունների զարգացում:

<sup>1</sup> **Գրիգորյան Ա.Ֆ.** – Թանգարանային էքսկուրսիա: // «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N3, Ե., «Էդիթ Պրինտ», 2011, 287էջ, էջ 247-256:

Թանգարանային էքսկուրսիայի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան վերանայվում է էքսկուրսիայի յուրաքանչյուր տեսակին համապատասխան: Չարգացնող էքսկուրսիայի նախապատրաստման ժամանակ պետք է կիրառել.

- երկխոսություն
- դիդակտիկ (կրթական) խաղեր և զարգացնող բնույթի վարժություններ
- հանձնարարությունների հնարքներ:

Չարգացնող էքսկուրսիաների լավագույն օրինակ են վերջին տարիներին Հայաստանի մի շարք թանգարաններում կազմակերպված թեմատիկ էքսկուրսիաները, որոնք կոչված են ձևավորելու և զարգացնելու զգայական և զգացմունքային ընկալումը, ստեղծագործական մտածողությունը: Չարգացնող տեսակի էքսկուրսիաների տևողությունը չպետք է գերազանցի 45-50 րոպեն: Խմբի անդամների քանակը չպետք է գերազանցի 15-ը, ինչը հնարավորություն կնձեռի անհատական աշխատանք ապահովել խմբի յուրաքանչյուր մասնակցի հետ:

Դաստիարակչական էքսկուրսիայի կարևորագույն նպատակներից է անձի բարոյական հատկանիշների ձևավորումը: Բնականաբար, այս տեսակի էքսկուրսիաների թեմաներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այցելուների տարիքային առանձնահատկությունները:

Դաստիարակչական էքսկուրսիայի խնդիրներն են՝

- ճանաչողական ակտիվության ձևավորում
- հաղորդակցական հմտությունների ձևավորում
- ուշադրության դաստիարակում
- թանգարանային մշակույթի դաստիարակում՝ թանգարանում վարվելակերպի կանոնների պահպանում, հոգատար վերաբերմունք թանգարանային հուշարձանների հանդեպ, հարգանք թանգարանների աշխատակիցների հանդեպ:

Թանգարանային կրթական ծրագրեր իրականացնելիս անհրաժեշտ է տիրապետել նաև թանգարանային առարկայի վերլուծության մեթոդաբանությանը: Թանգարանային սրահում կազմակերպելով հանդիպում առարկայի հետ, ապահովում ենք առարկան ընկալելու ու հասկանալու, գեղագիտական հաճույք ստանալու, ստեղծագործության կամ առարկայի կառուցվածքի գրագետ վերլուծության հետ: Այս ամենը հիմք է հանդիսանում հետագայում համապատասխան թեմայով երկխոսություն կառուցելու համար:

Թանգարանի և կրթության փոխազդեցությունը պայմանավորված է թանգարանային առարկայի յուրահատկությամբ: Այստեղ թանգարանը հիմնվում է հաղորդակցության կամ շփման սկզբունքի վրա: Շփումը, ի տարբերություն հաղորդակցության, «իր էությանմբ սուբյեկտի կողմից որոշ տեղեկության փոխանցումն է մեկ այլ անձի կամ մեխանիզմի, որոնք պետք է ընդունեն այդ ուղերձի բովանդակությունը...»:<sup>1</sup>

Թանգարանային մանկավարժի դերը ոչ այնքան որոշակի գիտելիքների կրող լինելն է, այլ այցելուի և թանգարանային առարկայի միջև երկխոսություն կազմակերպելը: Հենց այդ երկխոսությունն է, որ «բազմակողմանիորեն

---

<sup>1</sup> Каган М.С. - Эстетика как философская наука: Университетский курс лекций. СПб., 1997, 306 с



զարգացնում է մարդու մտքերը, զգացմունքները, կամքը, երևակայության, ճաշակի միասնությունը, աշխարհի հանդեպ նրա գեղագիտական, բարոյական, քաղաքացիական վերաբերմունքը, գիտակցության և ինքնագիտակցության միասնությունը»:<sup>1</sup>

Ի տարբերություն դպրոցում իրականացվող մեթոդաբանությանը, որը հիմնվում է առարկայի մասին ընդհանուր գիտելիքի վրա (ըստ դասագրքերի, ձեռնարկների, տեղեկատվական գրականության)՝ թանգարանային կրթական գործունեության մեթոդաբանության հիմքում այցելուի շփումն է թանգարանային առարկայի և թանգարանային մանկավարժի հետ: Այստեղ շեշտը դրվում է տեսողական և գեղարվեստական ընկալման վրա, թեև թանգարանային առարկան ևս դիտարկվում է իբրև տեղեկատվության աղբյուր: Այս հանգամանքը թույլ է տալիս ևս մեկ անգամ հիշել գիտության և արվեստի տարբերության մասին, խոսելով մի դեպքում օբյեկտիվ, ճշմարիտ գիտելիքի, մյուսում՝ հեղինակի կողմից արժևորված և սուբյեկտիվացված:

Այցելուների հետ աշխատելիս կարելի է կիրառել թանգարանային առարկայի վերլուծության մի քանի ձև՝

- ընդհանուր կամ ծավալուն վերլուծություն
- համեմատական վերլուծություն
- համալիր վերլուծություն
- հատվածական վերլուծություն:

Թանգարանային առարկայի վերլուծության այս կամ այն ձևի ընտրությունը պայմանավորված է թանգարանային մանկավարժի աշխատանքային փորձով, ստեղծագործական ունակություններով, գրագետ և պատկերավոր խոսքով, որոնք այցելուի և թանգարանային մանկավարժի միջև որոշակի զգացմունքային վիճակ են ստեղծում, որը նպաստում է թանգարանային առարկայի ընկալմանը:

Թանգարանային առարկաները և դրանց վերլուծության ձևերը յուրացնելուց բացի՝ թանգարանային մանկավարժի մասնագիտական կարևորագույն հատկություններից է հանպատրաստից ստեղծագործելու (իմպրովիզացիա) ունակությունը: Վերջինս լայնորեն կիրառվում է նաև թանգարանային էքսկուրսիայի ընթացքում:

Բոլոր էքսկուրսիաները կրթամշակութային ուղղվածություն ունեն, դրանք ոչ միայն գիտելիքների ստացման և գեղեցիկի ընկալման աղբյուր են, այլև ակտիվ հանգստի և ժամանցի ձևեր: Թանգարանային էքսկուրսիայի բովանդակությունը և անցկացման մեթոդաբանությունը պայմանավորված են նաև էքսկուրսիայի բնույթով:

*Պատմական* էքսկուրսիայի ընթացքում ներկայացվում են նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները, որոնք արտացոլում են հասարակության զարգացումը: Դրանք իրականացվում են պատմական բնույթի թանգարանների ցուցադրություններում և հավաքածուներում: Պատմական էքսկուրսիան կարող է նվիրված լինել պետության, մարզի, քաղաքի պատմությանը (հնագույն ժամանակներից մինչև այսօր) կամ միայն պատմական մի շրջափուլի:

<sup>1</sup> Каган М.С. – Социальные функции искусства. Л.: Знание, 1978, 84 с.

*Հնազգիտական* էքսկուրսիաներն անց են կացվում հնազգիտական բնույթի թանգարաններում և երկրագիտական թանգարանների համապատասխան բաժիններում: Նման էքսկուրսիաները կազմակերպվում են, ներառելով կյուբական մշակույթի հուշարձանները, որոնք բնութագրում են մարդկության զարգացման հնագույն պատմությունը:

*Ազգագրական* էքսկուրսիաները կազմակերպվում են ազգագրության թանգարաններում, պատմության, երկրագիտական թանգարանների համապատասխան բաժիններում, ազգագրական բնույթի բացօթյա թանգարաններում, որտեղ ներկայացվում են ժողովուրդների կենցաղն ու մշակույթը, սոցիալական հարաբերությունները:

*Բնագիտական* էքսկուրսիաներն անց են կացվում բնագիտական, մարդաբանական, կենսաբանական, երկրաբանական, բուսաբանական թանգարաններում, ինչպես նաև երկրագիտական թանգարանների, արգելոց-թանգարանների համապատասխան բաժիններում:

*Արվեստագիտական* էքսկուրսիաներն անց են կացվում գեղարվեստական, թատերական, երաժշտական թանգարանների ցուցադրություններում, ինչպես նաև երկրագիտական թանգարանների գեղարվեստի բաժիններում: Արվեստագիտական էքսկուրսիաներում լուսաբանվում են գեղանկարի, գրաֆիկայի, դեկորատիվ-կիրառական արվեստի գործերը, ուղղությունները, դպրոցները, առանձին նկարիչների աշխատանքները, թատերական, երաժշտական արվեստի պատմությունը, առանձին թատրոնների, ներկայացումների պատմությունը, արվեստի գործիչների կյանքն ու գործունեությունը:

*Ճարտարագիտական* էքսկուրսիաներն իրականացվում են ճարտարապետությանը նվիրված մասնագիտացված թանգարաններում, ինչպես նաև պատմության, երկրագիտական, արգելոց-թանգարանների, բացօթյա թանգարանների ցուցադրությունների համապատասխան բաժիններում: Ցուցադրության օբյեկտներ են համարվում ճարտարապետական շինությունները (պատմական և ժամանակակից), ինչպես նաև հուշարձանին առնչվող վավերագրական կյուբերը (փաստաթղթեր, լուսանկարներ, նախագծեր, մանրակերտեր):

*Տեխնիկական* էքսկուրսիաները կազմակերպվում են տեխնիկայի պատմությանն ու զարգացմանը նվիրված և տեխնիկական ուղղվածություն ունեցող տարբեր թանգարաններում: Լուսաբանում են տեխնիկայի զարգացման ընթացքը, ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումները:

Այսպիսով, թանգարանում կազմակերպվող կրթամշակութային գործընթացը գործունեության առանձնահատուկ տեսակ է, երբ կյուբի ընկալումն իրականանում է թանգարանային առարկաներ հանդիսացող պատմական և մշակութային հուշարձանների միջոցով: Թանգարանային կրթական ծրագրի առավելությունն այն է, որ գիտելիքի մատուցումը հիմնվում է բնօրինակ նմուշների վրա և ուսուցման գործընթացը ցուցասրահներում է իրականացվում, որի շնորհիվ առավել բնական միջավայր է ստեղծվում թանգարանային առարկան ամբողջովին ընկալելու համար:

## СОВРЕМЕННЫЙ МУЗЕЙ КАК ОБРАЗОВАТЕЛЬНО-КУЛЬТУРНЫЙ КОМПЛЕКС

**АЛВАРД ГРИГОРЯН**

*кафедры музееведения, библиотековедения и библиографии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна, директор Научного музея университета, кандидат педагогических наук, доцент  
г.Ереван, Республика Армения*

Организованный в музее образовательный и культурный процесс - это особый вид деятельности, когда восприятие материала осуществляется через историко-культурные памятники, являющиеся музейными объектами. Преимущество музейной образовательной программы заключается в том, что знания преподносятся на основе оригинальных образцов, процесс обучения проходит в выставочных залах, что создает более естественную среду для полного восприятия музейного объекта. По образовательным целям различают разные виды музейных экскурсий. Методика музейной образовательной деятельности основана на общении посетителя с музейным предметом и музейным педагогом. Роль музейного педагога не столько в том, чтобы быть носителем определенных знаний, сколько в организации диалога между посетителем и музейным предметом.

**Ключевые слова:** *музейный предмет, музейная образовательная программа, ознакомительная экскурсия, образовательная или тематическая экскурсия, развивающая экскурсия, воспитательная экскурсия, музейный педагог.*

## CONTEMPORARY MUSEUM AS AN EDUCATIONAL AND CULTURAL COMPLEX

**ALVARD GRIGORYAN**

*Candidate of Pedagogy, Associate Professor of the Department of Museology, Library Science and Bibliography, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Director of the Scientific Museum of the University, Yerevan, the Republic of Armenia*

The educational and cultural process organized in the museum is a special type of activity when the perception of the material is carried out through the historical and cultural objects. The advantage of the museum educational program is that knowledge is presented on the basis of original subjects; the learning process takes place in exhibition halls, which creates a more natural environment for a complete understanding of the museum object. According to the educational purposes, there are different types of museum excursions. The methodology of the museum educational activity is based on the communication of the visitor with the museum object and the museum educator. The role of the museum educator is to organize a dialogue between the visitor and the museum object.

**Key words:** *museum object, museum educational program, introductory excursion, educational or thematic excursion, developmental excursion, educational excursion, museum educator.*

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԸ՝ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԹԱԿ

## ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»  
մատենադարանի գիտական քարտուղար,  
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դասախոս,  
Ճանասիրական գիտությունների թեկնածու,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[grigoryan\\_maya@mail.ru](mailto:grigoryan_maya@mail.ru)

**Հողվածի նպատակն է ընդգծել Էլեկտրոնային շտեմարանների դերը 21-րդ դարի հայաստանյան գրադարանների զարգացման գործում, ներդնել այս համակարգը հայաստանյան գրադարաններում՝ հանրամատչելի դարձնելով տեղեկույթը՝ որպես գիտության և կրթության զարգացման կարևորագույն բաղադրիչ:**

**Առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել թվային և ավանդական գրադարանների միջև առկա մրցակցությունը, ընդգծել նրանց առավելություններն ու թերությունները, առանձնացնել Էլեկտրոնային շտեմարանների ստեղծման և զարգացման ուղղությունները, ձևավորման հիմնական սկզբունքները, կառուցվածքային առանձնահատկությունները:**

**Ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք արդեն ներդրված համակարգերի համեմատական վերլուծության մեթոդը:**

**Հիմնական եզրականությունն այն է, որ ՀՀ գրադարաններում Էլեկտրոնային շտեմարանների ներդրումն արդեն կայացած փաստ է. անհրաժեշտ է զարգացնել համակարգը՝ ներդնելով ծրագրային նոր փաթեթներ և տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ:**

**Հիմնաբառեր՝** Տեղեկատվական տեխնոլոգիաներ, առաջնություններ, թվային գրադարան, Էլեկտրոնային շտեմարան, գրադարանային գործառույթներ, մատենագիտական նկարագրություն, կառուցվածքային առանձնահատկություններ:

20-րդ դարավերջին ու 21-րդ դարի սկզբին տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ստիպեց գրադարանային հանրությանը կատարել առանցքային փոփոխություններ: Փոխվեցին նրանց առաջադրված պահանջները, որոնք ստիպեցին վերանայել գրադարանային գործի առանցքային գործառույթները: Եսկան նշանակություն ունեցան տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք ավելի լայն հնարավորություններ բացեցին գրադարանավարների համար:

Թվային գրադարանները դարձան տեղեկատվության կուտակման և փոխանցման միջոցներ<sup>1</sup>: Այստեղ թվային կյուբերը մատչելի են հասարակու-

<sup>1</sup> Բորգման Զ., Գուտենբերգից մինչև Համաշխարհային տեղեկատվական ենթակառուցվածքներ, Ե., 2007, էջ 12;

թյան տարբեր շերտերին, առանց ժամանակային և տարածական սահմանափակումների, մի հանգամանք, որը խիստ կարևոր է 21-րդ դարի գիտության, մշակույթի, կրթության, տնտեսության և հասարակության զարգացման համար:

Հենց սկզբից մրցակցությունը սկսվեց թվային և ավանդական թղթային գրադարանների միջև: Ժամանակի ընթացքում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և ավտոմատացման գործընթացների շրջապատվածում, թվային գրադարանն իր առավելություններով ստիպեց թղթային գրադարանին նահանջել: Թվային գրադարանի զարգացման այս միտումը չի նշանակում ավանդական գրադարանի մերժում: Պարզապես ընթերցողին առաջարկվում են գրադարանային ծառայությունների մատուցման նոր, առավել մատչելի ու ոլորին միջոցներ:

S. Չարգարյանն առանձնացնում է որոշ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են թվային գրադարանին և որոնց շնորհիվ դրանք դառնում են մրցունակ՝ ընթերցողի աշխատանքային սեղանի մոտեցում գրադարանային հավաքածուին, տեղեկատվության որոնման և դիտման հնարավորություն կյուբի ցանկացած հատկանշական տարրով, տեղեկատվության մատչելիություն բոլորի համար, տեղեկատվության արդիականության ապահովում, տեղեկատվության մշտական մատչելիություն<sup>1</sup>:

Նշված առավելությունները թույլ են տալիս ընդլայնել թվային գրադարան հասկացության սահմանները: Այսօր թվային գրադարանների նկատմամբ հետաքրքրությունը գնալով մեծանում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Դրան նպաստում են պարբերաբար կատարվող հետազոտությունները, որոնք հնարավորություն են ընձեռում կատարելագործել տեղեկատվական տեխնոլոգիաները և համապատասխան ծրագրերը:

Մյուս կողմից, ավանդական գրադարանը ևս ունի իր առավելությունները. այն ավելի ապահով է պահպանության առումով, ստեղծում է գրքի կամ ձեռագիր ու տպագիր կյուբի հետ անմիջական կապ և այլն: Սակայն այսօր աշխարհն ընտրել է թվային ճանապարհը, որի շրջանակում էլ գնալով մեծանում է թվային գրադարանների նկատմամբ հետաքրքրությունը: Դրան նպաստում են պարբերաբար կատարվող հետազոտությունները, որոնք հնարավորություն են ընձեռում կատարելագործել տեղեկատվական տեխնոլոգիաները և համապատասխան ծրագրերը<sup>2</sup>:

Թվային գրադարանի ստեղծման համար վերարժևորվեց նաև մատենագիտությունը. տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում փոխվեցին նաև մատենագիտությանն առաջադրված պահանջները: Մատենագիտությունը գրքերի, պարբերականների, հոդվածների, տպագիր կամ ձեռագիր կյուբերի համահավաք ցուցակն է: Այն յուրաքանչյուր գիտության հիմքն է, քանի որ ունի աղբյուրագիտական արժեք<sup>3</sup>: Մատենագիտության մեջ կարևորվում են հետևյալ տարրերը.

<sup>1</sup> **Չարգարյան S.**, Թվային գրադարանների առավելությունը ավանդականի նկատմամբ, Ուղեցույց ժամանակակից գրադարանավարների համար, Ե., 2002, էջ 12: <https://lib.mskh.am/images/books/Uxecuy-c-jamanakacic-gradaranavarneri-hamar.pdf> (14.01.2022)

<sup>2</sup> **Չարգարյան S.**, Թվային գրադարաններ, Ե., 2002, էջ 5:

<sup>3</sup> **Կոստիկյան Ջ.** Մատենագիտության հիմունքները. Ե., 1968. էջ 4:

1. Փաստի արձանագրում առանց կողմնապահության: Վերլուծական տարրն այստեղ հասցված է նվազագույն աստիճանի, քանի որ մատենագետի ինդիքն է նյութը նկարագրել այնպես, ինչպես այն կա, ինչպես այն տեսնում է՝ վերլուծությունը թողնելով համապատասխան բնագավառի մասնագետներին:

2. Տպագիր նյութի հաշվառում և մշակում:

3. Հաշվառված տպագիր նյութի գիտական դասակարգում գիտության տարբեր բնագավառներին և այլ չափորոշիչներին համապատասխան:

4. Նյութի բովանդակության, գաղափարական և գիտական առանձնահատկությունների բացահայտում:

5. Մատենագիտական նկարագրության չափորոշիչների սահմանում և կիրառում:

20-րդ դարի վերջից ավանդական մատենագիտական ցանկերի կողքին ի հայտ եկան էլեկտրոնային շտեմարանները, որոնք իրենց բովանդակությամբ և որոնողական ճկուն համակարգով նոր հնարավորություններ ստեղծեցին գրադարանավարների և ընթերցողների համար: Շտեմարանները տեղեկատվության տարածման մատենագիտական յուրօրինակ ցանկեր են՝ իրենց լայն հնարավորություններով և մատուցման մատչելի եղանակներով: Նրանք ոչ թե ավանդական մատենագիտության բացասում են, այլ մատենագիտական նյութի որոնման և մատուցման նոր տարբերակ:

Շտեմարան ստեղծելու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ նպատակ, բովանդակություն, ծրագրային ապահովում, տեխնոլոգիական հագեցվածություն, հեղինակային իրավունք:

**Նպատակը:** էլեկտրոնային շտեմարանների ստեղծման և ձևավորման նպատակը մեկն է՝ ընթերցողներին տեղեկատվությունը տրամադրել հնարավոր բոլոր միջոցներով, առավել ամբողջական տարբերակով և որոնման կուռ համակարգով: Գրադարանավարը նախքան շտեմարանի ստեղծումը պետք է հստակ պատկերացնի այդ նպատակը, այլապես աշխատանքը դատապարտված է ձախողման: Նպատակադրումից է կախված ձևավորվող շտեմարանի տեսակի ընտրությունը, ծրագրային և տեխնոլոգիական հագեցվածությունը, բովանդակությունը, ինչպես նաև հեղինակային իրավունքը: Որևէ շտեմարան ձևավորելուց առաջ հարկ է ուսումնասիրել նշված բոլոր գործոնները, քանի որ նրանցից է բխում նպատակը: Նպատակի ձևավորման փուլում կարևորվում են հետևյալ հարցադրումները՝ ու՞մ կամ ի՞նչի համար է ստեղծվում տվյալ շտեմարանը: Նպատակը հստակեցնում է շտեմարանի ստեղծման ընթացքը և այն միջավայրը, որտեղ այն գործելու է:

**Բովանդակությունը:** Ցանկացած շտեմարան ունի բովանդակություն, որը բխում է տվյալ շտեմարանի ստեղծման նպատակից: Գրադարանավարի կամ մատենագետի համար ուսումնասիրվող նյութի ընդգրկման սահմանները պետք է հստակ լինեն: Շտեմարանի մեջ ներառելու նպատակով պետք է առանձնացնել կոնկրետ այն նյութերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի խուսափենք ավելորդ տեղեկատվությունից, ինչն իր հերթին շփոթմունքի կմատնի ընթերցողին: Մատենագիտական որոնումն այս դեպքում կատարվում է ճիշտ այնպես, ինչպես ավանդական թղթային մատենագիտության կազմման դեպքում:

**Ծրագրային ապահովումը:** էլեկտրոնային շտեմարան ստեղծելու կարևորագույն նախադրյալները տեղեկատվական տեխնոլոգիաներն են և

համապատասխան ծրագրերը, որոնք իրականություն են դարձնում նպատակը և բովանդակությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաները շտեմարանի ստեղծման տեխնիկական հենքն են, իսկ ծրագրային ապահովումն այն միջոցն է, որն ապահովում է բոլոր սարքավորումների փոխկապակցված գործունեությունը: Էլեկտրոնային շտեմարան ստեղծելիս պետք է ընտրել համապատասխան ծրագիրը, որպեսզի մուտքագրվող տեղեկատվությունը հետագայում որոնողական ճկուն համակարգով հասանելի լինի ընթերցողներին:

**Տեխնոլոգիական հագեցվածությունը:** Էլեկտրոնային շտեմարան ստեղծելու նախապայմաններից մեկն էլ համապատասխան տեխնիկական միջոցների առկայությունն է: Յուրաքանչյուր շտեմարան ներառում է մեծ ծավալի տեղեկատվություն, որը մուտքագրվում և պահպանվում է համապատասխան սարքավորումների միջոցով: Արդի շրջանում, երբ տեխնոլոգիական զարգացումն առաջ է գնում աննախադեպ մեծ ծավալով, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների առկայությունը գրադարանում դառնում է պարտադիր ու պահանջված:

**Յեղիսակային իրավունքը:** Թվային շտեմարան ստեղծելիս պետք է հաշվի առնել այն օրենսդրական դաշտը, որը գործում է տվյալ երկրում: Շտեմարան ներառվող նյութերը ենթարկվում են հեղինակային իրավունքի՝ օրենքով սահմանված պահանջներին: Թղթային, ավանդական մատենագիտության մեջ հեղինակային իրավունքի սահմանափակումները չեն գործում: Դրանք չեն գործում նաև տեղեկատու շտեմարաններ ստեղծելիս: Մինչդեռ լրիվ տեքստային շտեմարաններ ստեղծելիս, երբ մատենագիտական գրառմանը կցվում է թվային տարբերակը, հեղինակային իրավունքը սահմանափակումների լայն դաշտ է ստեղծում: Յեղիսակային իրավունքի և հարակից իրավունքների մասին 2006 թ. ընդունված ՀՀ օրենքի<sup>1</sup> համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում հեղինակային իրավունքի գործողության ժամկետը սահմանվում է 70 տարին: Լրիվ տեքստային շտեմարան ստեղծելիս նշված ժամկետը պետք է մնա անխախտ:

Նույն օրենքը գործում է նաև տվյալների բազայի և այդ բազան պատրաստողի համար: Յուրաքանչյուր շտեմարան տվյալների բազա է և պատկանում է այն անձին կամ կազմակերպությանը, որն իր նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ էական ներդրում է կատարել այդ շտեմարանի բովանդակության ստեղծման կամ ներկայացման համար: Ըստ այդմ շտեմարան ստեղծողն ինքն է սահմանում այդ շտեմարանից օգտվելու կարգը: Առանց այդ անձի կամ կազմակերպության համաձայնության շտեմարանից նյութի արտածումը կամ օգտագործումը համարվում է անօրինական և ենթական է տույժի: Շտեմարանների տեսակներն են:

Տարբերում են շտեմարանների հետևյալ տեսակները.

**Տեղեկատու շտեմարաններ:** Տեղեկատու շտեմարանը մատենագիտական աղբյուրների համահավաք ցանկ է: Այստեղ ներառվում են միայն նյութի մատենագիտական նկարագրությունները: Տեղեկատու շտեմարանները ստեղծվում են, երբ առկա են հեղինակային իրավունքի

---

<sup>1</sup> ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2705> (27.11.2021)

սահմանափակումները կամ էլ երբ անհրաժեշտ է ներկայացնել միայն տվյալ թեմային առնչվող մատենագիտական աղբյուրները, ըստ այդմ ունեն մատենագիտական և ուղղորդող ենթաբաժիններ: Մատենագիտական ենթաբաժնում գրքերի, պարբերականների, հոդվածների քարտարաններն են, ուղղորդող ենթաբաժնում՝ կազմակերպությունների, աշխարհագրական վայրերի և այլնի մասին տեղեկությունները:

**Լրիվ տեքստային շտեմարան:** Լրիվ տեքստային շտեմարանները, ի տարբերություն տեղեկատու շտեմարանների, նյութերի ամբողջական բովանդակությամբ հավաքածուներ են: Տեղեկատու շտեմարանում տրվում է միայն մատենագիտական նկարագրությունը, իսկ լրիվ տեքստային շտեմարանում այդ նկարագրությանը կցվում է նյութի թվային տարբերակը: Սա հնարավորություն է տալիս ընթերցողին տեսնել նյութն իր սկզբնական տեսքով: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում նմանատիպ շտեմարանների թիվը տարեցտարի ավելանում է, քանի որ դառնում են ավելի պահանջված ընթերցողների կողմից: Լրիվ տեքստային շտեմարանները հնարավորություն ունեն փոխանցել պահանջվող տեղեկատվությունը առանց վայրի ու ժամանակի սահմանափակման: Լրիվ տեքստային շտեմարաններում լիարժեք գործում են հեղինակային իրավունքի՝ օրենքով սահմանված կանոնները, որոնց խախտումը կհանգեցնի համապատասխան տույժերի:

**Թվային շտեմարան:** Պարունակում է վիճակագրական տվյալներ, հարցումների արդյունքներ, հաշվետվություններ՝ ժամանակագրական դասավորվածությամբ:

Եզված բոլոր տեսակի շտեմարաններն այսօր պահանջված են գրադարանային ոլորտում: Յուրաքանչյուրն ունի կիրառելիության իր դաշտերը:

Էլեկտրոնային շտեմարաններ ստեղծելիս շատ կարևոր է պահպանել մատենագիտական նկարագրությունների չափորոշիչները:

1991 թ. Հայաստանի ազգային գրադարանը մատենագետներին և գրադարանավարներին մատուցում է կանոնների մեքենագիր մի տարբերակ, որը ԳՕՏ ստանդարտի հայերեն փոխադրումն էր<sup>1</sup>՝ հարմարեցված հայկական գրադարանների պահանջներին: 2007 թ. Մոսկվայում տպագրվում է Ի. Սավինայի ձեռնարկը<sup>2</sup>, որը տարաբնույթ տպագիր նյութերի մատենագիտական նկարագրությունների օրինակների ամբողջություն-ուղեցույց է: Այսօր հայաստանյան գրադարանների մեծ մասում թղթային մատենագիտական նկարագրություններն արվում են ԳՕՏ ստանդարտի հիմքի վրա: Սակայն գրադարանային ոլորտի ավտոմատացման և թվային պաշարների ստեղծման ծավալուն աշխատանքներին ընդառաջ ձևավորվում է «մեքենարնթեռնելի քարտագրում» արտահայտությունը կամ այլ կերպ՝ MARC (Մարկ) ֆորմատը<sup>3</sup>: Այն հնարավորություն է ընձեռում մատենագիտական տվյալները համապատասխան ֆորմատով մուտք անել համակարգիչ, ստեղծել

<sup>1</sup> **Մատենագիտական** նկարագրության կազմման համառոտ կանոններ, Ե., 1991.- 319 էջ:

<sup>2</sup> **Савина И.А.** Методика библиографического описания. практическое пособие, М., 2007, 144 с.

<sup>3</sup> **Չարգարյան Տ.**, Թվային գրադարաններ, Ե., 2002, էջ 114-129:



շտեմարաններ, որոնք ընթեռնելի ու հասանելի կլինեն բոլորին: Այդ շտեմարանները հնարավոր է արտածել, արտագրել տարբեր սարքերի վրա՝ ապահովելով միջմեքենայական հաղորդում: Մեքենաընթեռնելի քարտագրումն ապահովում է.

ա. միջմեքենայական փոխանակում

բ. նյութական միջոցների խնայում

գ. քարտագրման որակի բարձրացում

դ. գրադարանային կոմերցիոն փաթեթների օգտագործում

ե. ավտոմատացման համակարգի բարելավում և զարգացում:

ՅՈՒՆԻՍԿՈՎ-ում մատենագիտական գրառման դաշտերը բաժանված են նկարագրության տարբեր խմբերի միջև՝ 0-9: Յուրաքանչյուր դաշտ նախատեսված է նկարագրության որոշակի հատվածի համար: Այս դաշտերում տվյալների մուտքագրման ժամանակ շատ կարևոր է համապատասխան նշանների կիրառումն ու պահպանումը, այլապես մատենագիտական նկարագրությունը կդառնա անընթեռնելի:

Այսօր աշխարհի գրեթե բոլոր գրադարաններն ունեն իրենց շտեմարանները՝ տարբեր բովանդակություններով, ձևաչափերով, ընդգրկվածությամբ: Յուրաքանչյուր գրադարան առաջարկում է իր ծառայությունները՝ աշխատելով ներգրավել առավել մեծ թվով ընթերցողների: Համընդհանուր թվայնացման դարաշրջանում ընդարձակվում են մատենագիտական նյութի որոնման հնարավորությունները, ինչն էլ հիմք է դառնում առավել ամբողջական շտեմարան ստեղծելու համար:

Հայաստանի Հանրապետության գրադարաններում էլեկտրոնային շտեմարանների ձևավորման աշխատանքները սկսվել են 21-րդ դարի սկզբից: 2000 թ. հատուկ ստեղծված աշխատանքային խումբը պատրաստեց հայաստանյան գրադարանների ավտոմատացված ցանցի հայեցակարգը: Նախագծին տրվեց «Հայաստանի գրադարանային ավտոմատացված ցանցի ստեղծում» անվանումը: Նախատեսվեց.

1. Համահավաք քարտագրման կենտրոնի ստեղծում:

2. Հայալեզու հեղինակավոր ցանկերի և առարկայական խորագրերի ձևավորում:

3. Լրիվ տեքստային նյութերի շտեմարանի պատրաստում:

4. Անհրաժեշտ ծրագրային-տեխնիկական ապահովման ձեռք բերում:

5. Լուսա մանրաթելային ցանցի նախագծում և կառուցում:

Սահմանվեցին նաև տեխնիկական պահանջները.

1. Ստանդարտացման բնագավառ:

2. Մեքենաընթեռնելի քարտագրում:

3. Տվյալների միջմեքենայական հաղորդում համաձայն ISO2709

ձևաչափի:

4. Քարտարանների փոխարկելիությունը ըստ Z39.50-ի:

5.16 բիտանի կոդավորում:

6. Դեկավարման համակարգ՝ ՅՈՒՆԻՍԿՈՎ:

7. Մասնակից գրադարանների քարտարանների տրամաբանական տարանջատում:

Մրցույթի արդյունքում ընտրվեց իսրայելական ExLibris կազմակերպության Aleph համակարգը, որի հիման վրա ստեղծված Համահավաք

Էլեկտրոնային քարտարանը դարձավ տեղեկատու շտեմարան՝ անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով, որոնողական ոլորտին հնարավորություններով: 2017 թ. մի շարք պատճառներից ելնելով՝ այն փոխարինվեց Koha համակարգով:

Բացի Համահավաք գրացուցակից, հայաստանյան գրադարաններում ստեղծվում և ձևավորվում են բազմաթիվ թեմատիկ շտեմարաններ: Իհարկե, առաջատարները Հայաստանի ազգային և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարաններն են: Էլեկտրոնային շտեմարանները ստեղծվում են ամենատարբեր ծրագրերով կամ համակարգերով: Մենք կանգ կառնենք Greenstone կամ Koha ծրագրերով ստեղծված շտեմարանների վրա, որոնք ստեղծվել և համակարգվում են՝ հիմք ընդունելով նկարագրության Marc21 ստանդարտը: ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը ներկայումս համակարգում է նաև «Համահայկական թվային գրադարանը»<sup>1</sup>, որը, սակայն ծրագրային բոլորովին այլ հենք ունի և շատ ավելի մեծ ընդգրկում, քան թեմատիկ էլեկտրոնային շտեմարանները:

Greenstone-ը ծրագրային ապահովման փաթեթ է թվային գրադարանային հավաքածուի ստեղծման և տարածման համար: Համակարգը տալիս է նոր հնարավորություններ տեղեկատվության համակարգման և դրա արտագրման համար Համացանցում կամ արտաքին հիշող սարքերի վրա: Այն արտադրված է New Zealand Digital Library Project Waikato համալսարանի կողմից: Սա բաց կոդով ծրագրային ապահովում է<sup>2</sup>, հասանելի <http://greenstone.org> -ից GNU Համընդհանուր հանրային արտոնագրի ներքո: Ծրագրի նպատակն է ապահովել հատկապես համալսարաններում, գրադարաններում և այլ հասարակական ծառայության կառույցներում սեփական թվային գրադարանների կառուցումը: Ծրագիրն ապահովում և օժանդակում է թվային գրադարանների ստեղծմանը:

Այս ծրագրով ստեղծված տեղեկատու կամ տեքստային շտեմարաններն ունեն որոնողական ճկուն համակարգ: Նյութը որոնելի է՝ ըստ հեղինակի, վերնագրի, աղբյուրի, խորագրի, տարեթվի, նյութի տեսակի, լեզվի, Search հրամանով:

Շտեմարանները կառուցվում են հետևյալ ձևով.

1. HTML-ի համապատասխան դաշտերում մուտքագրվում են մատենագիտական տվյալները:
2. Տեղադրվում է տվյալ պարբերականի կայքը կամ նյութի pdf տարբերակը՝ նյութն ընթերցելի դարձնելու համար:
3. Greenstone ծրագրի մեջ լրացվում են համապատասխան դաշտերը:
4. Նյութը արխիվացվում է և հասանելի դառնում համացանցում:

Շտեմարաններն ունեն որոնողական ճկուն համակարգ: Մատենագիտական ճիշտ նկարագրությունների դեպքում ընտրելով համապատասխան դաշտը՝ նյութը հնարավոր է փնտրել ըստ հեղինակի, վերնագրի, տպագրության վայրի, տարեթվի կամ ժամանակաշրջանի, լեզվի և այլն: Ըստ այդմ կարելի է ստանալ վիճակագրական տարբեր տվյալներ:

<sup>1</sup> Համահայկական թվային գրադարան <https://arar.sci.am/dlibra> (27.11.2021)

<sup>2</sup> Հասանելի է <https://www.greenstone.org/> GNU Համընդհանուր հանրային արտոնագրի

Շտեմարանները կառուցվում են հետևյալ սկզբունքներով.

1. Նախ նկարագրվում է տվյալ գիրքը կամ պարբերականը Marc նկարագրության չափորոշիչներին համապատասխան: Մատենագիտական նկարագրությունը հնարավորություն է տալիս ամփոփ տեղեկատվություն ստանալ գրքի կամ պարբերականի ստեղծման, վայրի, տարբժվի, ստեղծողի, պատասխանատուների մասին: Մատենագիտական գրառման մեջ կարևորվում են բոլոր այն լրացուցիչ տեղեկությունները, որոնք հնարավորինս կոյուրացնեն գիրքն ուսումնասիրելու և ընկալելու ընթերցողական պահանջները:

2. Մատենագիտական յուրաքանչյուր գրառմանը կցվում է թվային տարբերակը՝ գիրքը կամ պարբերականն առցանց ընթերցելու համար: Թվային տարբերակներն ընթեռնելի են «Կարդալ առցանց» հղման ներքո:

Այս շտեմարաններում մատենագիտական նկարագրությունները կատարվում են Marc21 ստանդարտի հիման վրա՝ պահպանելով բոլոր անհրաժեշտ չափորոշիչները: Շատ կարևորվում են հատկապես հեղինակային և թեմատիկ խորագրերը, որոնք հնարավորություն են ստեղծում հեշտացնել որոնողական համակարգը: Նպատակը մեկն է՝ ստեղծել այնպիսի խորագիր, որին կմիանան դրան առնչվող մնացած բոլոր տարբերակները՝ համապատասխան գրառումների կցումով: Ստեղծված են հեղինակների, կազմակերպությունների, աշխարհագրական վայրերի, առարկայական թեմատիկ խորագրերի, մատենաշարերի՝ չափորոշիչներին համապատասխան արված նկարագրությունները:

Ամփոփելով՝ կարող ենք ընդգծել հետևյալը. 21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ստիպեց վերանայել գրադարանային մի շարք գործառույթներ և վերածնակերպել դրանք՝ համապատասխանեցնելով արդի պահանջներին: Փոխվեցին ավանդական ավանդական գրադարաններին առաջադրված պահանջները, քանի որ մրցակցային դաշտ ելան էլեկտրոնային շտեմարանները: Էլեկտրոնային շտեմարաններն այսօր այն կարևոր հարթակ են, որի հետ է առնչվում գրադարանների զարգացման տեսլականը, ինչն իր հերթին նպաստում է տեղեկատվական հասարակության ձևավորմանն ու ամրակայմանը: Տեղեկույթը պահպանվում է գրադարաններում, որի հասանելիությունը խիստ կարևոր է տեղեկատվության մրցավազքում հետ չմնալու համար:

## **ЭЛЕКТРОННЫЕ БАЗЫ ДАННЫХ КАК ОСНОВА ДЛЯ РАЗВИТИЯ БИБЛИОТЕК**

**МАЙЯ ГРИГОРЯН**

*Научный секретарь Матенадарана “Ваче и Тамар Манукян”  
Первопрестольного Святого Эчмиадзина,  
преподаватель кафедры культуры Армянского государственного  
педагогического университета имени Х. Абовяна,  
кандидат филологических наук,  
г.Ереван, Республика Армения*

Цель нашего исследования - подчеркнуть роль электронных баз данных в развитии армянских библиотек 21 века. Внедрение этой системы позволяет ускорить и сделать информацию общедоступной, что является важнейшей составляющей в контексте развития науки и образования.

Для достижения цели поставлены следующие задачи: изучить конкуренцию между цифровыми и “традиционными” библиотеками, их преимущества и недостатки, тенденции создания и развития электронных баз данных, основные принципы построения, структурные особенности, поисковую систему.

В ходе исследования мы использовали метод сравнительного анализа уже встроенных систем.

Главный вывод заключается в том, что внедрение электронных баз данных в библиотеках РА - уже установленный факт. Систему необходимо развивать, внедряя новые программные пакеты или новые информационные технологии.

**Ключевые слова:** *информационные технологии, приоритеты, электронная библиотека, электронная база данных, библиотечные функции, библиографическое описание, структурные особенности.*

## **ELECTRONIC DATABASES AS PLATFORMS FOR DEVELOPMENT OF LIBRARIES**

**MAYA GRIGORYAN**

*Scientific Secretary of "Vatche and Tamar Manoukian"  
Matenadaran of Mother See of Holy Etchmiadzin  
Lecturer at the Armenian State Pedagogical University Kh. Abovyan  
Faculty of Culture, Candidate of philological sciences,  
Yerevan, the Republic of Armenia*

The aim of our study is to emphasize the role of electronic databases in the development of 21<sup>st</sup>-century Armenian libraries. The Contribution of this system

creates the possibility of making information available to the public, which is the most important component in the context of the development of science and education.

The aim of the research is to present the competition between digital and "traditional " libraries, their advantages and disadvantages, possibilities for the creation and development of electronic databases, fundamental principles of design, structural features, and search engines.

During the study, we used the method of comparative analysis of already embedded systems

The fundamental conclusion is that the introduction of electronic databases in RA libraries is already an established act. The system needs developments that can be done by introducing new software packages and information technologies.

**Keywords:** *information technologies, challenges, digital library, electronic database, library function, bibliographic description, structural features.*

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**ՍԻՄԱ ԴԱՅԱՆ**

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս,  
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[dayan.sima@mail.ru](mailto:dayan.sima@mail.ru)*

**ԹԱՄԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Երևանի պետական հումանիտար քոլեջի դասախոս,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[tamara.khachatryan.98@mail.ru](mailto:tamara.khachatryan.98@mail.ru)*

**ՍԵԴԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի դասախոս,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[sedaxachatryan96@mail.ru](mailto:sedaxachatryan96@mail.ru)*

**«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» բուհական դասընթացն արդիական է, քանի որ հնարավորություն է ընձեռնում պայքարել այն ընդդիմախոսների դեմ, որոնք պնդում են, որ հայերը եկվորներ են Հայկական լեռնաշխարհում: Դասընթացի կրթական նպատակը կարևորելով՝ մեր կողմից իրականացվել է փորձարարական գործընթաց: Դասընթացի կառուցվածքում կարևոր տեղ է հատկացվում «Հայկական լեռնաշխարհով անցնող ճանապարհները» ենթաբաժին: Այսօր, Համաշխարհային տնտեսական արենայում սոցիալ-տնտեսական զարգացումների արդյունքում Հինաստանը նոր թափ է հաղորդում «Մետաքսի նոր ճանապարհ» նախագծին: Մետաքսի նոր ճանապարհի մաս դառնալը Հայաստանի համար ոչ միայն տնտեսական զարգացման, այլ նաև տարածաշրջանում իր քաղաքական կշռի մեծացման նոր հնարավորություններ է ստեղծում:**

**Հիմնաբառեր՝** բուհական դասընթաց, ժամանակակից մարտահրավեր, Մետաքսի նոր ճանապարհ, տնտեսական միջանցքներ, քաղաքական կշիռ, պատմաաշխարհագրական հետազոտություն, կրթական նշանակություն:

**«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» բուհական դասընթացն արդիական է, քանի որ հնարավորություն է ընձեռնում պայքարել այն ընդդիմախոսների դեմ, որոնք պնդում են, որ հայերը եկվորներ են Հայկական լեռնաշխարհում: Ելնելով արդի աշխարհաքաղաքական փոփոխություններից կարևոր օրակարգ է բուհական դասընթացներում նման դասընթացների միջոցով սովորողների**

սեփականությունը դարձնել պատմական հայրենիքի յուրաքանչյուր հատվածի իմացությունը, բարձրաձայնելով հայ ժողովուրդի կորուսյալ հայրենիքի, արյունոտ և ողբերգալից էջերի և հայեցակերպ ընտրելով՝ պատմական հիշողության պահպանման և պահանջատեր քաղաքաքացու ձևավորման հանգամանքը:

Ինչպես բուհական այլ դասընթացներ, այնպես էլ «Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն»-ն ունի իր կառուցվածքային առանձնահատկությունները: Դասընթացն ունի սնման երկու աղբյուր՝ պատմական և աշխարհագրական, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր տեղեկատվություն անցնում է բազմաբովանդակ ուսումնասիրություն և տալիս ընդհանրական և անչափ կարևոր գիտելիքներ՝ բանիմաց և գրագետ մասնագետներ ձևավորելու ճանապարհին: Եթե մինչև անկախության հռչակումը Հայաստանը գրկված էր բարձրացնելու իր պատմական հայրենիքի հարցը, ապա անկախությունից հետո մեծ փոփոխություններ եղան և Խ. Աբովյանի անվան ՅՊՄՅ աշխարհագրության բաժնում, հանրակրթական դպրոցներում հնարավորություն ստեղծվեց խոսել ոչ միայն հայ ժողովրդի ճակատագրի մասին, այլ նաև ուսումնասիրել՝ Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական պայմանները, Ա. Շիրակացու կողմից նկարագրված Մեծ Հայքի 15-17 աշխարհները, Հայաստանի տարածքով անցնող ճանապարհները, բնակչությունը, տնտեսությունը, նաև Հայաստանը հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր՝ Երեք հանրապետությունների ստեղծում, ԼՂՀ-ի ազատագրում և այլն:<sup>1</sup>

«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» դասընթացը հանդիսանալով հայագիտության հիմնաքարերից մեկը ունի հստակ ասելիք՝ հայ երիտասարդների մեջ սերմանել հայրենասիրություն, պահանջատիրություն պատմական հայրենիքի, հայրենի հողը ամուր պահելու ուղղությամբ: Այն օգտակար է հայ ժողովրդի պատմություն, հայ գրականություն, Հայաստանի աշխարհագրություն, հնագիտություն, ազգագրություն ուսումնասիրողների համար:

Դասընթացի կրթական նպատակը կարևորելով մեր կողմից իրականացվել է փորձարարական գործընթաց՝ խաղ-վիկտորինա, Հայաստանի Պատմության թանգարանի միջնադարյան հավաքածուներ հարկաբաժնում՝ «15 աշխարհների խոշոր քաղաքները և ճանապարհները» խորագրով, որի նպատակն էր թիրախային լսարանին ծանոթացնել Մեծ Հայքի 15 աշխարհների ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկություններին, քաղաքներին և ճանապարհներին, դաստիարակել պատմական հայրենիքը սիրող և պահանջատեր քաղաքացիներ, սովորողներին ներգրավելով թիմային աշխատանքի մեջ՝ զարգացնել նրանց ուշադրությունը, կարողությունները, հմտությունները, ինչպես նաև թանգարան այցելությունը դարձնել ոչ միայն կրթական, այլև հաճելի ժամանցի վայր:

Խաղի կենտրոնում Հայաստանն ըստ «Աշխարհացույցի» քարտեզն է, որի շուրջն էլ կատարվում է վիրտուալ զբոսանք պատմական Հայաստանով: Սկզբում ներկայացվեց Մեծ Հայքի 15 աշխարհների

<sup>1</sup> Հակոբյան Թ., Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1967թ, էջ 5-509

Ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները, այնուհետև անցում կատարվեց քաղաքներին և ճանապարհներին: Ճանապարհներին անրադարձի ընթացքում օգտագործվեցին մի շարք հեղինակային թեմատիկ քարտեզ-սխեմաներ «Հայկական լեռնաշխարհով անցնող ճանապարհները» խորագրով: Խաղի վերլուծության արդյունքում կարող ենք շեշտել, որ Ա. Շիրակացու «Աշխարհացույցը», Մեծ Հայքի 15 աշխարհները դպրոցականների մոտ ունեն ավելի մանրակրկիտ և լայնածավալ ուսումնասիրման կարիք:

Դասընթացի կառուցվածքում կարևոր տեղ է հատկացվում «Հայկական լեռնաշխարհով անցնող ճանապարհները» ենթազխին, որը հնարավորություն է ընձեռում ճանաչել Հայկական լեռնաշխարհի ներքին և արտաքին հաղորդակցման առումով կղզիացած դիրքի առանձնահատկություններին: Հայաստանի համար առաջնակարգ նշանակություն ունեցող ճանապարհները ցամաքային են, իսկ դրանց ուղղությունները և հարմարավետությունը կախված է ռելիեֆից ու տեղական այլ պայմաններից<sup>1</sup>:

Հայկական լեռնաշխարհն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ հնագույն ժամանակներից ի վեր հանդիսացել է կապող օղակ և կամրջել Հնդկաստանը Պարսկաստանի, Սև և Միջերկրական ծովերի, Նաև Միջագետքի, Սև ու Կասպից ծովերը միմյանց հետ: Նշված երկրների միջև առևտուրը և ապրանքափոխանակությունը կատարվել է Հայաստանի տարածքի վրայով, և համաշխարհային շուկա էր հանվում բազմատեսակ ապրանքներ՝ ցորեն, գինի, չորացրած մրգեր ձի, ոչխար, միս, ձուկ, բուրդ, բամբակ, մահուղ, գորգեր ներկեր, մետաղներ, արհեստավորական բազմաթիվ արտադրանքներ և այլն:<sup>2</sup>

Մեծ էր նաև Հայկական լեռնաշխարհի վրայով անցնող ճանապարհների ստրատեգիական-քաղաքական նշանակությունը: Այն մի բնական խոշոր միջնաբերդ էր, որն իշխող դիրք ուներ Մերձավոր Արևելքի նկատմամբ: Ոչ ոք չէր կարող տիրել Միջագետքը, Պարսից ծոցը, Ասորիքը, Փոքր Ասիան՝ առանց Հայկական լեռնաշխարհում ամրապնդվելու: Հայաստանի այսպիսի դիրքը դրական էր տնտեսության համար, քանի որ սերտորեն կապված էր համաշխարհային առևտրի հետ, որն իր հերթին նպաստում էր ներքին առևտրի և արհեստագործության զարգացմանը: Սակայն ճանապարհների խաչմերուկում գտնվելը նաև խիստ բացասական նշանակություն ունեցել՝ խոշոր տերությունների միջև բազմաթիվ պատերազմներում գրեթե միշտ թափառաբեմ հանդիսանալով:

«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» բուհական դասընթացը հնարավորություն է ստեղծում ծանոթանալ ոչ միայն ներքին հաղորդակցման ուղիներին, այլև այնպիսի համաշխարհային նշանակություն ունեցող տնտեսական ենթակառուցվածքի, ինչպիսին Մետաքսի հին ճանապարհն էր, որն անցնում էր Հայաստանի միջով և հասնում Սև ծովի ափին գտնվող՝ Տրապիզոն նավահանգիստ, որով Հնդկաստանից և Պարսկաստանից Եվրոպան ապրանքներ էր ներմուծում:

<sup>1</sup> Երեմյան Ս.Տ, Աղյաս Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1952թ, էջ 3-15

<sup>2</sup> Մանանդյան Հ.Յ, Պատմաշխարհագրական հետազոտություններ, Երևան, 1940թ, էջ 59



«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» բուհական դասընթացը չսահմանափակվելով քարացած անցյալով՝ ճամփորդում է ժամանակի մեջ փորձելով կապեր ստեղծել արդի աշխարհաքաղաքական զարգացումների հետ:

Այսօր, Համաշխարհային տնտեսական արենայում սոցիալ-տնտեսական զարգացումների արդյունքում Չինաստանը նոր թափ է հաղորդում «Մետաքսի նոր ճանապարհ» նախագծին, որը ենթակառուցվածքի վիթխարի ծախսերի արդյունքում Ասիայի, Եվրոպայի և այլ երկրների հետ Չինաստանը կապելու գլխավոր նպատակներից է: Ծրագրի նախաձեռնողը Չինաստանի նախագահ Սի Ցզինպինն է, ով ակնկալում է բեռների փոխադրման ժամկետի նվազեցում, ինչը եվրոպական շուկան ավելի մատչելի է դարձնում չինացի արտադրողի համար:<sup>1</sup>

Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտին ենթադրում է 22 տրիլիոն դոլարի ներդրում: Արևելքից արևմուտք ազատ առևտուր կազմակերպելու համար նախատեսվում է կառուցել նոր ճանապարհներ, երկաթուղագծեր:<sup>2</sup>

Մետաքսի ճանապարհն իրենից ներկայացնում է տարբեր ճանապարհների խաչմերուկ: Սա բավականին լայն հնարավորություններ է ստեղծում Հայաստանի համար՝ դառնալու Արևելքն Արևմուտքին կապող կամուրջ: Դեռ 2015 թվականի մարտին հուշագիր էր ստորագրվել Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու ստեղծմանն ուղղված համագործակցության խորացման վերաբերյալ:<sup>3</sup> Չինական բանկերը ֆինանսավորում են «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը, որն, ի տարբերություն երկաթուղու շինարարության ծրագրի, արդեն իրականացման փուլում է: «Հյուսիս-Հարավ» մայրուղին հնարավորություն կտա Բավրայից (Վրաստանի սահման) Ազարակ (Իրանի սահման) ընկած ճանապարհն անցնել առկա 9-9.5 ժամի փոխարեն 4.5 ժամում, որը կբարարձացնի բեռնափոխադրումներ իրականացնելու համար վերջինիս արագությունը, գրավչությունը, հարմարավետությունը:<sup>4</sup>

«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» դասընթացը հանդիսանում է ճանապարհ, ուղի դեպի ազգային արժեքների իմացություն, /ավանդույթներ, տարագ, երգուպար, խաղեր և այլն/: Դասընթացը հնարավորություն է տալիս ուսանող երիտասարդներին ճանաչելու իր արմատները, որոնք պատմական հիշողության պահպանության կարևոր գրավականներից են: Դասընթացը ձևավորում է ոչ միայն պատմական հայրենիքի հանդեպ պահանջատեր քաղաքացի, այլ նաև հայ երիտասարդին ձերբազատում օտալամուլության ձգտումներից: Դասընթացը կյանքի է կոչվել անկախությունից հետո: Ժամանակի ընթացքում այն կրել է, կրում է և կրելու է որոշակի փոփոխություններ՝ կապված մերօրյա աշխարհաքաղաքական զարգացումների հետ:

Մետաքսի նոր ճանապարհի մաս դառնալը Հայաստանի համար ոչ միայն տնտեսական զարգացման, այլև տարածաշրջանում իր քաղաքական կշռի

---

<sup>1</sup> <http://www.un.org>

<sup>2</sup> [https://www.mfa.am/hy/press-releases/2019/05/26/fms\\_armenia\\_china/9597](https://www.mfa.am/hy/press-releases/2019/05/26/fms_armenia_china/9597)

<sup>3</sup> <https://www.bbc.com/news/world-europe-47679760>

<sup>4</sup> <https://www.northsouth.am/am/categories/44>

մեծացման նոր հնարավորություններ է ստեղծում: Վերլուծելով բոլոր տևտեսական միջանցքները մեր կողմից կազմվել է թեմատիկ քարտեզ-սխեմա:



### **Քարտեզ 1**

## **СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ ВУЗОВСКОЙ ДИСЦИПЛИНЫ «ИСТОРИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ АРМЕНИИ И СОПРЕДЕЛЬНЫХ СТРАН»**

### **СИМА ДЯН**

*Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна, лектор, кандидат педагогических наук, доцент, г. Ереван, Республика Армения*

### **ТАМАРА ХАЧАТРЯН**

*Ереванский государственный гуманитарный колледж, лектор, г. Ереван, Республика Армения*

### **СЕДА ХАЧАТРЯН**

*Ереванский государственный колледж легкой промышленности, лектор, г. Ереван, Республика Армения*

Вузовская дисциплина «Историческая география Армении и сопредельных стран» актуальна, т.к. обосновывает автохтонность армянского народа на территории Армянского нагорья.

В структуре дисциплины важное место отводится теме «Международные транзитные пути сообщения Армянского нагорья». В наше время в сфере мировой экономики и социально-экономического

развития возрастает роль претворения в жизнь китайского проекта Великого шелкового пути. Становление Армении частью нового Шелкового пути открывает возможности не только экономического развития, но и повышения политического веса нашей республики в закавказском регионе.

**Ключевые слова:** *вузовский курс, современный вызов, Новый Шелковый путь, экономические коридоры, политический вес, историко-географическое исследование, образовательное значение.*

## **EDUCATIONAL SIGNIFICANCE OF THE UNIVERSITY COURSE 'HISTORICAL GEOGRAPHY OF ARMENIA AND NEIGHBOURING COUNTRIES'**

**SIMA DAYAN**

*PhD in Pedagogy, Associate Professor,  
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University  
Yerevan, Republic of Armenia*

**TAMARA KHACHATRYAN**

*Yerevan State College of Humanities, lecturer,  
Yerevan, Republic of Armenia*

**SEDA KHACHATRYAN**

*Yerevan State College of Light Industry, lecturer,  
Yerevan, Republic of Armenia*

The university course 'Historical Geography of Armenia and Neighbouring Countries' is relevant in that as it provides an opportunity to fight opponents who claim that Armenians are newcomers in the Armenian Highlands. In pursuit of the educational goal of the course, we conducted an experiment. In the structure of the course, a special place was given to the subchapter 'Roads passing through the Armenian Highlands'.

Today, as a result of socio-economic developments, China is giving new impetus to the Silk Road Project in the global economic arena.

Becoming a part of the New Silk Road creates new opportunities for Armenia not only in terms of economic development but also in terms of increasing political weight in the region.

**Key words:** *university course, modern challenge, New Silk Road, economic corridors, political weight, historical and geographical research, educational significance.*

# ՊԱՏԱՆԻ ԸՄՔԻՇՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

## ԱՐՏՅՈՒ ԴԱՎԹՅԱՆ

Հյուսիսային համալսարանի բանասիրության ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[artyom.davtyan@sportedu.am](mailto:artyom.davtyan@sportedu.am)

**Ձևավորվող հետազոտության նպատակն է՝ անկետային հարցման միջոցով բացահայտել պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման գործընթացում տարբեր միջոցների, մոտեցումների օգտագործման առանձնահատկությունները և նոր ուղղիները: Հետազոտությունում ընդգրկվել են հետևյալ մեթոդները գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծում, զրույց, մանկավարժական դիտումներ, անկետային հարցում, մաթեմաթիկական վիճակագրություն:**

Գիտափորձից հետո հնարավոր եղավ պարզաբանել, որ բարձրակարգ մարզիչների շրջանում անցկացված անկետային հարցման արդյունքում ըմբշամարտի ուսումնասիրված ձևերում նրանք կարևորում են տարբեր մարզաձևերից որոշակի (տարրերի) կիրառումը պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման ամբողջ գործընթացում: Չնայած այս հանգամանքին՝ այնուամենայնիվ մարզիչների մեծամասնությունը՝ 89% պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման գործընթացում կիրառում են առավելապես ավանդական մոտեցումներ, որոնք հիմնված են մասնագիտական հնարքների բազմաթիվ կրկնությունների վրա, ինչը պարզաբանվեց մեր կողմից իրականացված երկարատև մանկավարժական դիտումների արդյունքները:

**Հիմնաբառեր՝** պատանի ըմբիշներ, շարժումների ճշգրտություն, պատրաստության գործընթաց, տեխնիկական հնարքներ, անկետային հարցում:

## Ներածություն

Տարբեր մարզաձևերում, այդ թվում նաև ըմբշամարտում, մասնագետները և մարզիչները բազմիցս ձգտել են բացահայտել մարզումային գործընթացի արդյունավետության բարձրացման նորարարական ձևերը և պատրաստվածության տարբեր կողմերի կատարելագործման ուղիները:

Պատրաստության գործընթացը բազմաթիվ հիմնախնդիրների հետ մեկտեղ ուղղված է լուծելու նաև տեխնիկական հնարքների բարելավման հարցերը, որոնց արդյունքում հնարավոր է մրցումային պայմաններում հաջողությամբ իրականացնել տարաբնույթ մասնագիտական գործողություններ:

Պատանի ըմբիշների շրջանում բարձր մարզական արդյունքներին կարելի է հասնել միայն այն պայմաններում, երբ մարզումային գործընթացում կատարելագործվում են տեխնիկական հնարքները՝ հասկացնելով յուրաքանչյուր հնարքին օպտիմալ ժամանակահատված: Ըմբշամարտի տարբեր ձևերում տեխնիկական հնարքների ուղիների բարելավումը բազմաբովանդակ մարզումային գործընթաց է:

Անհրաժեշտ է նշել, որ մարզումային և մրցումային պայմաններում կազմակերպված հետազոտությունների գերակշռող մեծամասնությունը<sup>1</sup> [1,2,3,4,5,6] նվիրված է ամբողջական պատրաստության գործընթացի որևէ առանձին կողմի ուսումնասիրմանը: Միևնույն ժամանակ, բազմաթիվ են այն գիտական որոնումները, որոնք ուղղված են ուսումնասիրելու տեխնիկական հնարքների բարելավման հետ առնչվող բազմաբնույթ խնդիրները:

Առանձնացնելով ըմբշամարտի տարբեր ձևերում պատանի մարզիկների շարժումների ճշգրտության դերը, անհրաժեշտ է բացահայտել այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն են ընձեռում հաջողությամբ կատարելագործել և հսկել տեխնիկական հնարքների կատարման արդյունավետությունը՝ հիմնվելով օբյեկտիվ տվյալների վրա:

Անհրաժեշտ է նշել, որ ըմբշամարտում մինչ այժմ իրականացրած գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն առավելապես կապված են տարբեր մասնագիտական որակավորում ունեցող մարզիկների տեխնիկական հնարքների ուսուցմանը և կատարելագործմանը, որոնք առնչվում են ավանդական մոտեցումների հետ, առաջատար շարժողական ընդունակությունների մշակման, մրցակցային գործունեության ուսումնասիրման և այլ հարցերի հետ [7,8,9,11]:

Հաշվի առնելով վերոգրյալը պարզ է դառնում, որ պատրաստության համակարգում թերի են ուսումնասիրված պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման նոր, ոչ ավանդական մոտեցումները, նոր միջոցները:

Այս տեսանկյունից կարևորվում է պատանի ըմբիշների տեխնիկական հնարքներին նվիրված հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը: Նման հետազոտությունները թույլ կտան իրական պատկերացում կազմել ըմբշամարտի տարբեր ձևերում տեխնիկական հնարքների, մշակման և կատարելագործման նոր մանկավարժական մոտեցումների ներգործության աստիճանի մասին:

Անհրաժեշտ է նշել, որ մեր հանրապետությունում այսօր բացակայում են ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցների ուսումնական ծրագրեր: Այդ պատճառով ուսումնասիրության և վերլուծության

---

<sup>1</sup> Առաքելյան Վ.Բ., Գալստյան Հ.Գ., Հարությունյան Խ.Թ. Ազատը մբշամարտ, Եր. Հեղինակային հրատ., 2008-315 էջ; Առաքելյան Վ.Բ., Սաղյան Բ.Չ. Ձյուղո ըմբշամարտ. Եր.-Հեղինակային հրատ. 2010-309 էջ; Առաքելյան Վ.Բ., Սաղյան Բ.Չ., Կիրակոսյան Կ.ժ., Գալստազազյան Է.Դ. Հունահռոմեական ըմբշամարտ.- Եր. Հեղինակային հրատ. 2013-299 էջ; Բարբաբյան Մ.Ա. Ձյուղոստների մարզական մեթոդիկայի օպտիմալացումը բազային պատրաստության փուլում, Ատեն. Երևան, 2017,- 186 էջ; Գալստազազյան Է.Գ., Սամբո ըմբշամարտում ոտքերի բռնկածքներով կատարվող զցումների ուսուցման մեթոդիկայի հիմնավորումը, Սեդ. Ատեն. մ.գ.թ., Եր., 2007-21 էջ; Գեղամյան Վ.Գ. Հոգեբանական պատրաստության յուրահատկությունները ըմբշամարտում: սեդմ., Ատեն., հ.գ.թ.,-Եր.-2016, - էջ 23

ենթարկեցինք Ռուսաստանի Դաշնության հունահռոմեական, ազատ և ճյուղո ըմբշամարտերի վերջին ուսումնական ծրագրերը [12,13,14]: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ պատանի ըմբիշների մարզադպրոցների ուսումնական ծրագրերում բացակայում է տեխնիկական հնարքների կատարելագործման այն մոտեցումը, որը կապված է մարզիկների շարժումների տարբեր բնութագրերի բարելավման հետ:

Մինևույն ժամանակ պարզվել է, որ ըմբիշների ֆիզիկական պատրաստության գործընթացում չի կարևորվում շարժումների ճշգրտության դերը:

Գիտական հետազոտությունների արդյունքները կարող են ունենալ գիտագործնական կարևոր նշանակություն՝ քանզի կբացահայտեն պատանի մարզիկների տեխնիկական հնարքների ուսուցման և կատարելագործման նոր արդյունավետ ուղիներ:

**Ջետազոտության նպատակն է՝** անկետային հարցման միջոցով բացահայտել պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման գործընթացում տարբեր միջոցների, մոտեցումների օգտագործման առանձնահատկությունները և նոր ուղիները:

**Ջետազոտության մեթոդներն են՝** գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծում, զրույց, մանկավարժական դիտումներ, անկետային հարցում, մաթեմաթիկական վիճակագրություն:

Մասնագիտական գրականության ուսումնասիրության վերլուծությունը ցույց տվեց, որ պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման ուղիների վերաբերյալ գոյություն ունեն տարբեր հայեցակետեր, որոնք, սակայն, իրենց հիմքում կրում են ավանդական մոտեցումներ: Վերջինս ենթադրում է տեխնիկական հնարքների բազմակի կրկնության մեթոդի կիրառումը:

Չնայած հունահռոմեական, ազատ, ճյուղո ձևերին բնորոշ տեխնիկական առանձնահատկություններին, կա առնվազն մեկ կարևոր հանգամանք, որ ստեղծում է նրանց միջև ընդհանուր եզրեր և թույլ է տալիս առկա տարբերությունների պայմաններում պատրաստության գործնթացն իրականացնել նույն ուղիով, որը առընչվում է մասնագիտական շարժումների, տեխնիկական հնարքների ճշգրտության կատարելագործման հետ:

Ըմբշամարտի տարբեր ձևերում տեխնիկական հնարքների հետ առնչվող բազմաթիվ արդիական հարցերի պարզաբանումը մեր կողմից իրականացվել է անկետային հարցման միջոցով:

Մասնավորապես, հարցումը նպատակ ուներ՝ բացահայտելու պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման վերաբերյալ մարզիչների պատկերացումները, իսկ 2–րդ խմբի հարցերն ուղղված էին բացահայտելու պատրաստության համակարգում շարժումների ճշգրտությունը որպես շարժողական ընդունակության դերի կարևորմանը, ինչն էլ իր հերթին հիմք կհանդիսանա բարելավելու պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման արդյունավետությունը:

Ստուգողական մեթոդիկան ենթադրում էր հատուկ մշակված բլանկում 12 հարցից բաղկացած հարցաթերթի պատասխանների վերլուծությունը:

Անկետային հարցումը կազմակերպելիս հիմնականում օգտագործվում էր փակ պատասխանների տարբերակը: Մարզիչներին հնարավորություն

ընձեռնվեց, որոշ հարցերի պատասխաններում առաջարկել նաև սեփական կարծիքը, ինչը թույլ տվեց հստակեցնել և ճշգրտել ուսումնասիրվող հիմնահարցի էությունը: Սոցիոլոգիական հարցումը անցկացվել է գիտական գրականությունում ներկայացված երաշխավորությունների համաձայն [10]:

Հարցաթերթում առկա էին այնպիսի հարցեր, որոնք ենթադրում էին մեկ և ավելի հարցերի պատասխաններ: Անկետային հարցումներում առաջնային կարևորություն էինք տվել պատանի ըմբիշների շարժումների ճշգրտության մշակման հիմնական ուղիների բարելավման հիմնահարցերին:

Հարցմանը ընգրկվել է՝ հունահռոմեական, ազատ ոճի և ձյուդո ըմբշամարտի տարբեր որակավորում ունեցող 50 մարզիչ: Հետազոտությունը կազմակերպվել է 2020 թ. Երևան ք. Նորայր Մուշեղյանի անվան և Դինամո մարզական - մանկապատանեկան մարզադպրոցներում: Մարզիչների մեծամասնությունը սպորտի վարպետներ և վաստակավոր մարզիչներ են, որոնց մանկավարժական միջին ստաժը 13 տարի է:

Հարցումն անցկացվել է գիտական գրականությունում ներկայացված երաշխավորությունների համաձայն (Ե.Մ. Тавокин, 2009):

**Արդյունքները և քննարկում:** - Ներկայացնենք հարցաթերթում առաջադրված հարցերը, որոնք թույլ տվեցին պարզաբանել հետազոտության նպատակի հետ կապված բազմաթիվ խնդրներ, որոնք առընչվում է հետազոտության նպատակի իրականացման հետ:

Այսպես՝ «Պատանի ըմբիշների տեխնիկական պատրաստության նպատակով օգտագործում էք այլ մարզաձևեր» հարցի պատասխանների վերլուծությունից պարզաբանվել է, որ պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման գործընթացում մարզիչներն այլ մարզաձևերը ժամանակ առ ժամանակ են կիրառվում:

Տեխնիկական հնարքների կատարելագործման ընթացքում մարզաձևերի օգտագործումը և դրանց դերի կարևորումը կարող է մարզիչներին տալ այն գործիքը, որի միջոցով հնարավոր է բարձրացնել պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարման ճշգրտության աստիճանը, դա իր հերթին կբարձրացնի, մեր կարծիքով, մասնագիտական հնարքների կատարման ճշգրտության աստիճանը:

Վերլուծելով ըմբշամարտի տարբեր ձևերում մասնագիտացող պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման ուղիները կարելի է նշել, որ չի բացահայտվել որևիցե օրինաչափություն, որը կարող է մարզումային գործընթացում այլ մարզաձևերի կիրառման տեսանկյունից բնութագրի հունահռոմեական, ազատ և ձյուդո ըմբշամարտի առավելությունները:


Ստացված տվյալների համաձայն իհարկե առաջին հայացքից դժվար է պատկերացում կազմել նման կապի առկայության մասին, սակայն երկրորդ հարցի այն պատասխանները հնարավորություն են տալիս հստակեցնել մարզիչների կարծիքը պատանի ըմբիշների տեխնիկական պատրաստության գործում այլ մարզաձևերի օգտագործման նշանակության մասին:

Մեկ այլ հարցի «Առավելապես որ մարզաձևերն ենք օգտագործում պատանի ըմբիշների տեխնիկական պատրաստության բարելավման գործընթացում» հարցման արդյունքների վերլուծությունից պարզվեց հետաքրքիր պատկեր: Մարզիչների կարծիքով ըմբիշների տեխնիկական

պատրաստության բարելավման արդյունավետությունը կապ ունի մարզումների ընթացքում այլ մարզաձևերի օգտագործման հետ: Պատանի ըմբիշների մարզումային գործընթացում օգտագործվող տարբեր մարզաձևերի տեսակարար կշիռը ներկայացված է Գծապատկեր 1-ում:

Հավելենք, որ այս հարցի հետ կապված պատասխանների մշակման մեթոդիկայի համաձայն՝ առաջնային էին համարվում առավել քիչ միավոր հավաքած մարզաձևերը:

Հարցվող մարզիչների 89 %-ը մեծ տեղ էր հատկացնում այլ մարզաձևերի կիրառմանը՝ հատկապես առանձնացնելով լող, աթլետիկա, ակրոբատիկա, ծանրամարտ, հանդբոլ մարզաձևերը, իսկ 11%-ը չի կարևորում այլ մարզաձևերի կիրառումը:



**Գծապատկեր 1. Պատանի ըմբիշներիների տեխնիկական պատրաստության գործընթացում առավել կարևոր մարզաձևերի կիրառման կարգը**

1-լող, 2-աթլետիկա, 3- ակրոբատիկա, 4- ծանրամարտ, 5-հանդբոլ 6-բասկետբոլ

Դա հիմնավորում են այն հանգամանքով, որ տեխնիկական պատրաստության բարելավման գործընթացը կազմակերպվում էր առավելապես մասնագիտական հնարքների բազմաթիվ կրկնությունների միջոցով, որի արդյունավետության աստիճանը երևում է հիմնականում գոտեմարտերի ժամանակ:

Առաջին և երկրորդ հարցերի պատասխանների համեմատությունը թույլ է տալիս հստակեցնել որոշակի եզրահանգումներ:

Մասնավորապես բացահայտված նման կապը պայմանավորված է հավանաբար այն հանգամանքով, որ ըմբշամարտի տարբեր ձևերում տեխնիկական պատրաստության ավանդական մոտեցումներում մեծ տեղ է հատկացվում այլ մարզաձևերի կիրառմանը: Դրա մասին է վկայում ըմբշամարտի դասագրքերի, ըմբիշների մարզումային գործընթացի, մանկավարժական դիտումների արդյունքների վերլուծությունը, զրույցը մարզիչների հետ:



Հարցման մյուս առաջադրանքնից, որը կապված էր «Շարժումների բնութագրերից, որոնք եք առավել կարևորում պատանի ըմբիշների մասնագիտական ճշգրտության բարելավման գործընթացում» հարցի պատասխանից բացահայտվեց, որ մարզիչները համակարծիք են, տարբեր մարզաձևերով կանոնավոր պարապելու դրական ազդեցությանը մարզիկների շարժումների բնութագրերի կառավարման ընդունակությունների, ինչպես նաև մասնագիտական շարժումների ճշգրտության բարելավման վրա:

Մասնավորապես ստացված տվյալների համաձայն հարցվող մարզիչների 87%-ը, չափազանց բարձր են գնահատում շարժումների տարբեր բնութագրերի կառավարման ճշգրտության նշանակությունը՝ իսկ 13 - % ոչ այնքան բարձր, սակայն նույնպես կարևորում են շարժումների բնութագրերի կառավարման կատարելագործման դերը պատանի ըմբիշների մասնագիտական շարժումների ճշգրտության բարելավման գործընթացում:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ որոշ հեղինակներ համոզված են, որ տարբեր մարզաձևերի կիրառումը պատրաստության գործընթացում դրական ազդեցություն է ունենում մարզիկների շարժումների բնութագրերի կառավարման ընդունակության, ինչպես նաև շարժումների ամբողջական գործողությունների ճշգրտության վրա:

Անհրաժեշտ է նշել, որ մարզիչները կարևորելով շարժումների բնութագրերի բարելավման դերը պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների ուսուցման և կատարելագործման գործընթացում այնուհանդերձ մարզումների ընթացքում բացակայում են շարժումների բնութագրերի կառավարման ճշգրտության բարձրացման համար նախատեսված հատուկ ֆիզիկական վարժություններ:

Անկասկած, առանց մարզաձևին բնորոշ տեխնիկական հնարքների կատարման բարձր ճշգրտության հնարավոր չէ հասնել մարզական հաջողությունների, նվաճել սպորտային բարձունքներ այդ թվում նաև ըմբշամարտում: Տեխնիկական հնարքների պատրաստվածության այլ գործոնների հետ մեկտեղ, պատանի ըմբիշների մարզական հաջողությունների նվաճման գործում մասնագիտական գործողությունների արդյունավետ իրականացման տեսանկյունից կարևոր դեր է խաղում տեխնիկական հնարքների կառավարման արդյունավետությունը, որի չափանիշներից մեկը կարելի է համարել ճշգրտության ցուցանիշները:

Անդրադառնալով անկետային հարցման երկրորդ խումբ հարցերին ստացված տվյալների համաձայն՝ բազմամյա պատրաստության ընթացքում և արդյունքում ըմբշամարտի տարբեր ձևերում առավելապես մշակվում են այն առաջատար շարժողական ընդունակությունները, որոնք մասնագետների կարծիքով նպաստում են մրցակցային գործընթացում սպորտային արդյունքների բարձրացմանը՝ արագաշարժություն, ուժ, ճարպկություն, կոորդինացիա: Սակայն դրանց շարքում բացակայում է շարժումների ճշգրտությունը:

Ուսումնասիրության արդյունքները թույլ տվեցին իրական պատկերացում կազմել տեխնիկական հնարքների արդյունավետության բարձրացման և այդ գործընթացում շարժումների ճշգրտության տարբեր դրսևորումների դերի և բարելավման ուղիների վերաբերյալ:

Այն հարցին, թե «Շարժողական ընդունակությունների շարքում որոնք եք կարևորում պատանի ըմբիշների պատրաստության գործընթացում», պատասխանների վերլուծությունից պարզ դարձավ, որ պատանի ըմբիշների պատրաստության գործընթացում մարզիչների կողմից շարժումների ճշգրտության դերը քիչ է կարևորվում: Ինը շարժողական ընդունակությունների շարքում նրանք կարևորում են՝ ըստ հերթականության և առաջատար ընդունակություններ են համարում արագաշարժությունը, ճկունությունը, դիմացկունությունը հատկացնելով շարժումների ճշգրտությանը 6-րդ տեղը:

Փաստորեն ըմբիշների պատրաստության համակարգում մարզիչները քիչ են կարևորում և ոչ ճիշտ պատկերացում ունեն այդ ընդունակության դերի վերաբերյալ: Եվ այդ հարցում մարզիչները հիմնված են առավելապես իրենց փորձի վրա:

Հավանաբար, մարզիչները չկարևորելով շարժումների ճշգրտության դերը մարզիկների ֆիզիկական պատրաստության համակարգում, ինքնաբերաբար չեն դիտարկում այն որպես ըմբիշների տեխնիկական պատրաստության գործընթացի մոտեցումներից մեկը:

Մեկ այլ ստուգողական հարցի՝ «Պայմանավորված է արդյոք պատանի ըմբիշների տեխնիկական գործողությունների կատարման արդյունավետությունը մարզիկների շարժումների ճշգրտությամբ», պարզվեց, որ մարզիչների գերակշռող մեծամասնությունը՝ 81%-ը, համոզված էր ըմբիշների տեխնիկական հնարքների արդյունավետության բարձրացումն ակնհայտ՝ շատ է պայմանավորված մարզիկների շարժումների ճշգրտությամբ, իսկ 12 % -ը՝ ոչ այնքան, բայց նույնպես կարևորում են այդ ընդունակության դերը տեխնիկական հնարքների կատարելագործման ամբողջ գործընթացում: Հետագուստ մարզիչների 7 % - ը չեն կարևորում:

Առաջադրված հարցերի պատասխանների համեմատությունը թույլ է տալիս կատարել որոշակի եզրահանգումներ: Մասնավորապես, բացահայտված նման հակասական պատկերը պայմանավորված է հավանաբար այն հանգամանքով՝ առաջին, որ ըմբշամարտում շարժողական պատրաստության ավանդական մոտեցումներում չի նախատեսված շարժումների ճշգրտության որպես շարժողական ընդունակության, երկրորդ՝ դրա մասին են վկայում ըմբշամարտի դասագրքերի, մանկապատանեկան մարզադպրոցների ծրագրերի և ըմբիշների մարզումային գործընթացի երկարատև մանկավարժական դիտումների արդյունքների վերլուծությունը:

**Եզրակացություն:** Հետազոտության արդյունքում պարզաբանվեց, որ հունահռոմեական, ազատ ոճի և ձյուդո ըմբշամարտերի փորձառու մարզիչները կարևորում և հիմնավորում են տարբեր մարզաձևերից որոշակի (տարրերի) կիրառումը պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման ամբողջ գործընթացում: Միևնույն ժամանակ մարզիչները համոզված են, որ շարժումների տարբեր բնութագրերի կառավարման ճշգրտության բարելավումը կնպաստի պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների արդյունավետ ուսուցմանը և կատարելագործմանը:

Հարցվող մարզիչները պատանի մարզիկների պատրաստության գործընթացում նույն չափով են կարևորում շարժումների ճշգրտությունը՝

դրան հատկացրելով 6-րդ տեղը: Սակայն, երկարատև մանկավարժական դիտումները բացահայտեցին, որ պատանի ըմբիշների տեխնիկական հնարքների կատարելագործման գործընթացում մարզիչները կիրառում են առավելապես ավանդական մոտեցումներ, որոնք հիմնված են մասնագիտական հնարքների բազմաթիվ կրկնությունների վրա:

## **ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ТЕХНИЧЕСКИХ ПРИЕМОВ ЮНЫХ БОРЦОВ**

### **АРТЕМ ДАВТЯН**

*Преподаватель кафедры педагогики и психологии филологического факультета Северного университета, кандидат педагогических наук, доцент, г. Ереван, Республика Армения*

Целью проводимого исследования является посредством анкетирования выявить особенности и новые направления использования различных средств и подходов в процессе совершенствования технических приемов юных борцов. В ходе исследования были использованы следующие методы: изучение и анализ научно - методической литературы, беседа, педагогические наблюдения, анкетирование, математическая статистика.

По результатам социологического опроса выяснилось, что высококвалифицированные тренеры г. Еревана в греко-римской, классической борьбе и дзюдо в совершенствовании технических приемов юных борцов отмечают важность применения определенных элементов других видов спорта. 89 % опрошенных тренеров отдают предпочтение следующим видам спорта: плавание, легкая атлетика, акробатика, тяжелая атлетика.

Подавляющее большинство тренеров уверены, что наряду с другими видами спорта целенаправленное улучшение точности управления различными параметрами движений будет способствовать эффективному обучению и совершенствованию технических приемов борцов. Это возможно при использовании специальных (психомоторных) упражнений в тренировочном процессе юных борцов. Данное предположение планируется проверить в ходе организуемого нами педагогического эксперимента.

**Ключевые слова:** юные борцы, точность движений, процесс подготовки, параметры движений, технические приемы, анкетирование.

## **WAYS OF PERFECTING OF YOUNG WRESTLERS' TECHNICAL TRICKS**

### **ARTYOM DAVTYAN**

*Lecturer in the Department of Pedagogy and Psychology, Faculty of Philology of Northern University, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the study involves the introduction of features and new ways of using various means and approaches to the process of improving the techniques of young wrestlers through a questionnaire. The study uses the following methods: scientific and methodological research and analysis, conversation, pedagogical observations, questioning, and mathematical statistics. As a result of the survey conducted among the high qualified Greco-Roman, Freestyle, and Judo wrestling trainers of Yerevan, it turned out that the use of other sports to perfect young wrestlers' technical tricks is very important. In this regard, 89 percent of surveyed trainers give preference to acrobatics, football, athletics, and basketball.

The majority of trainers think that along with the use of other sports the purposeful improvement of the control accuracy of various movement parameters will contribute to effective training and perfection of wrestlers' technical tricks. It is possible with the use of special (psychomotor) exercises in the training process of young wrestlers. We are planning to check this assumption during the pedagogical experiment organizing by us.

**Keywords:** *accuracy of movements, parameters of movements, young wrestlers.*

### Գրականության ցանկ

1. Воробьев В.А. Содержание и структура многолетней подготовки юных борцов на современном этапе развития спортивной борьбы: автореф. дисс... док. пед. наук. – Санкт-Петербург, 2012. -56 с.
2. Вяльшин Р.Р. Выявление ошибок в соревновательных поединках борцов 13 – 15-летнего возраста и методика их управления: автореф. дисс. ... канд. пед. наук. – Малаховка, 2010. - 23с
3. Корнешов А.А. Чувство времени и его детерминация в осознанном управлении двигательными действиями в спорте, Автореф. Дисс... канд.пед.наук. – М. 2003 -24с.
4. Тавокин Е.П. Основы методики социологического исследования: Учебное пособие. М.: ИНФРА-М, 2009. — 239 с.
5. Фарфель В.С. Роль сознания в управлении движениями // Физиологические основы управления движениями: Материалы всесоюзной конф. – М., 1975, с. 143 – 144.
6. Федеральный стандарт спортивной подготовки по греко-римской борьбе - М. -2012 – 22 с.
7. Федеральный стандарт спортивной подготовки по дзюдо. - М. - 2012 – 21 с.
8. Федеральный стандарт спортивной подготовки по вольной борьбе. - М. - 2012 – 23 с.

# ПЕДАГОГ-АНДРАГОГ КАК СУБЪЕКТ УЧЕБНОГО ПРОЦЕССА В ОБРАЗОВАНИИ ВЗРОСЛЫХ

**ТАМАРА АРУТЮНЯН**

*Ереванский государственный университет  
Центр педагогики и развития образования  
кандидат педагогических наук, доцент,  
г.Ереван, Республика Армения  
[harutyunyant15@rambler.ru](mailto:harutyunyant15@rambler.ru)*

**В системе образования Республики Армения важное место занимает непрерывное образование, частью которой является образование взрослых.**

**Цель статьи – изучить задачи, методы и формы обучения взрослых, разработать системный подход для решения задач в учебном процессе, отметить важную роль педагога-андролога. Педагог-андролог должен обладать соответствующими компетенциями, личными качествами, уровнем знаний и навыков, опытом и дарованиями.**

**Образование для взрослых является ключевым фактором не только профессионального, но и личного успеха, что помогает правильному решению проблем в семье и в жизни.**

**В статье изложен и проанализирован наш многолетний опыт в сфере образования взрослых и представлены выводы, предложения и рекомендации.**

**Отметим лишь некоторые выводы и рекомендации:**

- **До сих пор обучение взрослых всесторонне не изучено, не разработаны все категории андрогогики, ее функции и т. д.**
- **Обучением взрослых нужно управлять, учитывая возрастные особенности студентов, пол, национальность, здоровье, уровень жизни и образование.**
- **Психолого-педагогические парадигмы требуют новых и интерактивных методов, форм и средств в работе со взрослыми.**
- **Желательно создать в Армении педагогический журнал “Андрогогика”.**

**Ключевые слова:** образование взрослых, обучение взрослых, педагог-андролог как субъект, непрерывное образование, сотрудничество, мастерство педагога-андролога, возрастные особенности, управление процессом обучения, эффективные методы и средства, педагогический опыт.

21-ый век требует перемен во всех сферах жизни, в том числе в культуре и образовании. Современное развитие общества диктует новые требования к образованию. В системе образования Республики Армения важное место занимает непрерывное образование, где подчеркивается

образование взрослых. Сейчас идет переоценка ценностей и решается активная жизненная позиция людей.

Гуманистический характер образования предполагает приобретение национальных и общечеловеческих ценностей: жизни и здоровья, развития личности. Общедоступность знаний и адаптированность в социальной среде помогает взрослым вести активный образ жизни и самостоятельно решать свои проблемы.

Модернизация содержания образования требует решать проблемы повышения качества образования, оптимизации способов и технологий организации педагогического процесса, ставить цели и задачи, обобщать результаты образования. Исходя из анализа этих результатов, необходимо сделать выводы для эффективности дальнейшего процесса обучения. В настоящее время образование становится ведущим звеном для накопления знаний, опыта, умений и навыков.

В последнее время проблеме образования взрослых уделяют особое внимание не только за границей и в России, но и в Армении. Пишутся книги, статьи, защищаются диссертации, публикуются научные исследования, но эта проблема все еще нуждается в тщательном и всестороннем изучении со стороны педагогов и психологов, опираясь на педагогический опыт.

Технологический и информационный прогресс требует высококвалифицированных специалистов, которые имеют гибкое мышление, определенную систему ценностей, активную жизненную позицию. «В конце XX – начале XXI века мы стали свидетелями редкого ускорения социокультурного развития, информационного насыщения всех сфер жизнедеятельности человека»<sup>1</sup>.

Жизнь человека в этом обществе требует непрерывного образования. Формула жизни – это учение длиною в жизнь, это принцип непрерывного образования. Здесь очень важно формальное, неформальное и информальное образование. Необходимо отметить, что последним двум видам образования недостаточно уделено внимания как в теории, так и в практике образовательной деятельности.

В системе образования Армении важное место занимают цели и задачи образования взрослых. Здесь отмечается первостепенная важность образования взрослых, как части непрерывного образования.

В «Современном словаре по педагогике» андрогогика характеризуется так: «Андрогогика – раздел дидактики, раскрывающий специфические закономерности освоения знаний и умений взрослым субъектом в учебной деятельности, а также особенностей руководства последней со стороны профессионального педагога»<sup>2</sup>. Мы полностью согласны с этой формулировкой, и особенно важно, чтобы этим делом занимался профессиональный педагог.

Андрогогика считается частью возрастной педагогики, а последняя входит в систему педагогических наук. Для обучения взрослых очень важна

---

<sup>1</sup> Педагогика. /Под ред. П. И. Пидкасистого. М., 2013, с. 83.

<sup>2</sup> Современный словарь по педагогике. Минск, 2001, с. 15.

взаимосвязь образования и самообразования, самообучения и самовоспитания. Сегодня задача педагога-андролога помочь учащимся осознать ответственность за себя, за семью<sup>1</sup>.

Заблуждение, что в старшем возрасте невозможно учиться и приобретать знания и навыки. В книге “Основы андрологии” отмечается, что только в 23-25-летнем возрасте многие психофизиологические функции достигают самого высокого развития и сохраняются до 40 лет<sup>2</sup>.

Это факт, но здесь играет роль индивидуальный фактор.

Для осуществления оптимального обучения взрослых в процессе обучения мы выделяем очень важные для педагога-андролога категории “субъект обучения” и “обучение субъекта”. В процессе обучения взрослых действуют два субъекта – педагог-андролог и взрослые студенты. Это образование помогает взрослым обновлять свои качества жизни и здоровье.

Здесь важна еще мотивация обучения взрослых субъектов, которые хотят быть здоровыми, успешными и образованными. Но еще важнее, чтобы педагог-андролог управлял обучением взрослых. Потому так важны управленческие знания, умения и навыки педагога-андролога, который умеет применять интерактивные методы и средства, современные образовательные технологии в процессе обучения взрослыми, повышая в то же время их культурный уровень, умственное развитие и здоровье. Здесь необходимо учитывать возраст, пол, национальность, здоровье, уровень жизни и образование. Как отмечает В. М. Шепель: “Управленческая деятельность - цепь постоянно принимаемых решений, которые должны быть нравственно обоснованными<sup>3</sup>.”

В этом процессе огромную роль играет педагог-андролог. От его знаний, умений, способностей, мастерства, такта и умения пользоваться техникой и технологиями зависит уровень преподавания и результаты работы. Здесь важны еще его профессиональная и педагогическая этика и этикет<sup>4</sup>. По нашему мнению, оба субъекта могут достичь высшего уровня взаимодействия, если будут сотрудничать. Важными являются также потребности, которые приводят человека к самостоятельной и творческой деятельности, управляют его жизнью, обучением и поведением.

Прежде всего в процессе обучения взрослых необходимо научить их самостоятельным методам работы: конспектирование прочитанного, составление плана текста, тезисов, цитирование из текста, указывание источников, аннотирование прочитанного.

Здесь важно еще и профессиональное самообразование, целью которого становится профессиональный рост, педагогическое мастерство, такт, техника и этика и этикет.

---

<sup>1</sup> Педагогика и психология высшей школы (под ред. М. В. Булановой-Топорковой). Р. на/д, 2006, с. 58.

<sup>2</sup> Основы андрологии (под ред. И. А. Колесниковой). М., 2003, с. 47.

<sup>3</sup> Шепель В. М. Управленческая этика. М., 1989, с. 41.

<sup>4</sup> Балян А. А., Садян Ш. А. Педагогическая этика. Ереван, 2001, с. 62, с. 78 (арм).

Прав был К. Фопель, когда писал, что мозг человека не имеет ограничений в развитии и в разных возрастах могут возникать новые связи<sup>1</sup>. Именно благодаря этим связям осуществляется обучение взрослых.

Дидактические основы андрогогики не только теоретические, но и прикладные. В процессе обучения взрослых очень важно определить цели, сущность, структуру, содержание, принципы, методы, средства и технологии обучения.

В процессе преподавания в вузе особое внимание мы уделяем психологическим основам преподавания, употребляя разные методы, чтобы студенты не уставали, контролировали свое внимание, концентрировали память, укрепляли волю для достижения высоких результатов.

Наш многолетний опыт работы в магистратуре (очная и заочная форма обучения) Ереванского государственного университета и на заочном отделении филиала ЕГУ в Иджеване, где большинство студентов 35-60-ти лет, подсказывает, что работа с взрослыми людьми дает высокие результаты. Эти студенты учились на отделении “Педагогика и психология”, имея разные профессии: учителя, директоры сельских школ, домохозяйки и т. д.

В разные годы преподавая различные курсы, как то: “Педагогика”, “Возрастная педагогика”, “История педагогики”, “Педагогика высшей школы”, “Педагогическое мастерство и этика”, “Управленческая этика”, “Дидактика”, “Методика воспитательной работы”, “Эстетическое воспитание в школе”, “Оптимизация учебного процесса”, “Самостоятельная работа студентов в вузе”, мы, наряду с традиционной методикой, использовали новые методы, формы и средства преподавания, стараясь передать студентам как теоретические, так и практические знания, ставили перед ними педагогические задачи, проводили ролевые игры, тесты и т. п. Для ролевых игр предлагались интересные темы: “Если бы я был министром образования и науки Армении”, “Если бы я был директором школы” и т. д. Нами организовывались диспуты на тему “Любовь, семья и брак”, “Патриот нашего времени” и т.п. и практические занятия.

Взрослые студенты писали интересные рефераты и эссе, исходя из своего личного педагогического опыта, делали презентации, представляли оригинальные плакаты и слайды. Студенты проявляли инициативу, стремление, заинтересованность и индивидуальность. Студенты писали также мини-исследования, которые характеризовали детей, взрослых людей разного возраста и их личные социально-психологические, этические качества. Для взрослых студентов, нуждающихся в помощи, мы проводили индивидуальные консультации, дополнительные занятия, а также предлагали журналы и книги из личной библиотеки. Таким студентам помогали и сокурсники. Такая благоприятная этико-психологическая атмосфера на курсах приводила к положительным результатам и высокой успеваемости. Среди студентов были и такие, которые нуждались в инклюзивном обучении. Этот опыт представлен нами в докладе на тему

---

<sup>1</sup> Фопель К. Психологические принципы обучения взрослых. М., 2010, с. 25.



“Инклюзивное обучение студентов в вузе” на Республиканской научной конференции в 2016 г. в Гюмри.

В процессе обучения взрослых мы также предлагаем применять технологию проектов, которая помогает коллективно работать и творить. Наш опыт показывает, что весь курс, все студенты могут активно участвовать в процессе проектирования разных тем. Эта технология помогает студентам свободно работать, анализировать темы, собирать материалы, делать слайды и создавать сценарии, художественно оформлять проекты и организовывать презентации. После презентации совместно со студентами мы оцениваем их проекты.

Изучая тему “Педагог-андролог как субъект учебного процесса в образовании взрослых” и исходя из нашего опыта, мы пришли к следующим выводам, предложениям и рекомендациям:

1. В Республике Армения образование взрослых имеет первостепенную важность и составляет часть непрерывного образования.

2. Андрогикика – система образования взрослых, которая осуществляется при конкретных целях и условиях.

3. До сих пор обучение взрослых всесторонне не изучено, не разработаны все категории андрогикики, ее функции и т. д.

4. Очень важны психологические и педагогические основы обучения взрослых, которые не глубоко изучены.

5. Дидактические основы образования взрослых обусловлены дидактическими основами процесса обучения, где осуществляется непрерывное образование, сотрудничество и всестороннее развитие личности.

6. Обучением взрослых нужно управлять, учитывая возрастные особенности студентов, пол, национальность, здоровье, уровень жизни и образование.

7. Психолого-педагогические парадигмы требуют новых и интерактивных методов, форм и средств в работе со взрослыми.

8. В процессе образования и обучения взрослых главное место занимает педагог-андролог. Очень важно, чтобы он имел обширные знания, опыт, мастерство, такт, владел техникой и технологиями, сотрудничал с взрослыми студентами, управлял процессом, соблюдал этику и этикет.

9. Предлагаем в вузах создать педагогическо-психологическую службу, состоящую из психологов, социальных педагогов, педагогов-андрологов, врачей-логопедов и других специалистов, которые будут помогать нуждающимся.

10. Желательно создать в Армении педагогический журнал “Андрогикика”.

11. Предлагаем на курсах повышения квалификации преподавателей читать курс “Андрогикика”.

12. Желательно опубликовать “Указатель педагога-андролога”.

13. Предлагаем создать рекомендации для образования и обучения взрослых.

**ՄԱՆԿԱԿԱՐԺ-ԱՆԴՐԱԳՈՎԸ ՈՐՊԵՍ ՄԵԾԱԽԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՈՒԲՅԵԿՏ**

**ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան,  
մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն,  
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում կարևոր տեղ է գրավում շարունակական կրթությունը, որի բաղադրամասերից մեկն է մեծահասակների կրթությունը:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել մեծահասակների կրթության խնդիրները, մեթոդներն ու ձևերը, մշակել համալիր մոտեցում ուսումնական գործընթացի խնդիրների լուծմանը՝ ընդգծելով այդ գործում մանկավարժ-անդրագոգի դերը: Նա պետք է տիրապետի համապատասխան կոմպետենցիաների, գիտելիքների որոշակի մակարդակի և կարողությունների, ունենա փորձ և տաղանդ:

Կրթությունը մեծահասակների համար հանդիսանում է հիմնական գործոն ոչ միայն պրոֆեսիոնալ, այլև՝ անձնական կյանքում հաջողությունների հասնելու համար: Այն օգնում է ճիշտ որոշումներ կայացնելու ընտանիքում և կյանքում:

Հոդվածում վերլուծված է մեր երկրի բազմամյա փորձը մեծահասակների կրթության ոլորտում և ներկայացված են եզրակացություններ, առաջարկություններ և տրված են հանձնարարականներ:

Ընդգծենք դրանցից միայն մի քանիսը.

1. Մինչև հիմա մեծահասակների կրթության խնդիրները համակողմանիորեն և ամբողջությամբ չեն ուսումնասիրվել, մշակված չեն բոլոր հասկացությունները և գործառույթները:

2. Մեծահասակների ուսուցումը պետք է կառավարել՝ հաշվի առնելով ուսանողների տարիքային առանձնահատկությունները, սեռը, ազգությունը, առողջությունը, կյանքի և կրթության մակարդակը:

3. Հոգեբանամանկավարժական հարացույցները պահանջում են նոր ինտերակտիվ մեթոդներ, ձևեր ու միջոցներ օգտագործել մեծահասակների կրթության գործընթացում:

4. Ցանկալի է Հայաստանում ստեղծվի «Անդրագոգիկա» մանկավարժական ամսագիրը:

**Հիմնաբառեր՝** *մեծահասակների կրթություն, մեծահասակների ուսուցում, մանկավարժ-անդրագոգը որպես սուբյեկտ, շարունակական կրթություն, համագործակցություն, մանկավարժ-անդրագոգի վարպետությունը, տարիքային առանձնահատկությունները, մեծահասակների ուսուցման գործընթացի կառավարում, անդրագոգիկայի հասկացությունները, ինտերակտիվ մեթոդները, մանկավարժական փորձ:*

## ANDRAGOGUE TEACHER AS A SUBJECT OF THE EDUCATIONAL PROCESS OF THE ADULTS

TAMARA HARUTYUNYAN

*Yerevan State University, Center of pedagogy and progress of education*

*Candidate of pedagogical sciences, docent*

*Yerevan, Republic of Armenia*

Continuing education has a vital role in the educational system of the RA, a part of which is the education of adults.

The aim of article is to investigate the problems, methods and forms of education of grown-ups, work out a systemic approach, to solve the problems in the educational process, sign the important role of pedagogics – andrologist, who has to possess suitable competences, personal qualities, high level of Knowledge, and skills, experience and talent.

An education to grown-ups is a Key Factor not only to a professional, but also to a personal success, which helps to make correct decisions as in family, also in life.

We have analyzed our experience of many years of teaching adults and presented our conclusions and recommendations. Let's underline some of them.

The problems of education of the adults have not been versatility and completely worked up till now.

The process of education of adults must be managed taking in mind the special features of age, sex, nationality, life, culture and educational level of the students.

Psychological-pedagogical paradigm requires new interactive methods, forms and sources to use in the process of education of adults.

It is preferable to create in Armenia pedagogical journal “Androgogica.”

**Key words:** *education of adults, teaching adults, pedagogue-androgogue in the capacity of subject, continuing education, collaboration, mastery of androgogue, age specificity, management of educational process, effective methods and means, pedagogical experience.*

**ԱՐՑԱԽԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ԵՐԿՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ինժեներական Էկոնոմիկայի և  
ագրոբիզնեսի ամբիոնի ավագ դասախոս,  
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն  
[nushyano87@bk.ru](mailto:nushyano87@bk.ru)

**ՆՈՒՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ինժեներական Էկոնոմիկայի և  
ագրոբիզնեսի ամբիոնի դասախոս,  
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն  
[sahakyandianagmail.com](mailto:sahakyandianagmail.com)

**ՏԱԹԵՎԻԿ ՎԵՐԴՅԱՆ**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ինժեներական Էկոնոմիկայի և  
ագրոբիզնեսի ամբիոնի ավագ դասախոս,  
տնտեսագիտության թեկնածու  
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն  
[t-v-1921@mail.ru](mailto:t-v-1921@mail.ru)

**Հողվածի նպատակն է բացահայտել Արցախի Հանրապետության  
կրթական համակարգի զարգացման գործընթացում գոյություն  
ունեցող խնդիրները և առաջարկել դրանց լուծման  
հնարավորությունները, այսինքն, լսարանի վրա ներգործելու առավել  
արդյունավետ եղանակները:**

**Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ  
խնդիրները՝ ընդգրկվել համաշխարհային կրթական միջավայր՝ սեփա  
կան ավանդական և մշակութային տարրերի պահպանմամբ, ի հայտ  
բերել 2020 թ. պատերազմից հետո մեր կրթության ներկա համակարգի  
ճեղքերը և ներկայացնել դրանց վերացման համար  
առաջարկություններ:**

**Հետազոտության ընթացքում օգտագործվել են ուղղակի և հետա  
դարձ կապի, վերլուծության և համադրության մեթոդները:**

**Հիմնական եզրահանգումն այն է, որ լսարանի վրա ներգործելու  
նպատակով անհրաժեշտ է հաղորդվելիք նյութը բխի և՛ գիտության  
վերջին նվաճումների ճիշտ կիրառման հմտություններից, և՛ տարածա  
շրջանի բնակչության տնտեսական ու քաղաքական շահերից, ինչպես  
նաև առաջարկվում է փորձառու դասախոսներին, ճիշտ գնահատելով  
ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը, հաղորդվող նյութը  
կապել ունկնդիրների մոտ հայրենասիրական զգացմունքներ արթնաց  
նելու նպատակների հետ, ինչը կարևոր է Արցախի պայմաններում:**

**Հիմնաբառեր՝** կրթություն, գիմնագիա, գրադարան, բարձրագույն ուսումնական հաստատություններ, բարեփոխումներ, դպրոցներ, գիտելիք, ծրագրեր, համալսարան:

### **Ներածություն**

Ժամանակակից հասարակության մեջ կրթության մարդկայնաց ման գաղափարները և անհատի շահերի առաջնահերթությունը որոշել են կրթության նպատակների նոր բովանդակությունը, որը նմանակում է անհատի այնպիսի հատկություններ, որոնք ազդում են նրա ինքնագար գացման վրա, ապահովում նրա հոգևոր զարգացումը:

Դպրոցը և համալսարանը կանգնած են շատ բարդ խնդրի առաջ՝ նպատակաուղղված ձևավորել աշակերտների և ուսանողների գիտելիք ներս ու հմտությունները տարբեր աղբյուրներից եկող տեղեկատվության որոնման, մշակման և գործնական օգտագործման պայմաններում:

Խնդրի այս ըմբռնումը բախվում է լուրջ խոչընդոտի. ուսանողների ընթերցանության մշակույթի ցածր մակարդակին:

2020թ. պատերազմից հետո Արցախը մեծ կորուստներ ունի նաև կրթության և գիտության ոլորտում, հանրակրթական 107, նախա դպրոցական ուսումնական 17 հաստատություն, գրքային հավաքածուների, շուրջ հարյուր հիսուն հազար միավոր գրականություն, հարյուր քսանյոթ գրադարան դուրս է մնացել Արցախի վերահսկողության տարածքներից և վտանգված է Արցախի բնակչության «ընթերցելու իրավունքը»: Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գրադարանը այդ շարքում է: Տեղահանված ուսուցիչների թիվը կազմել է 1656, նրանցից ոմանք աշխատանքային գործունեությունը վերսկսել են Արցախի այլ ուսումնական հաստատություններում<sup>1</sup>:

ՀՀ գրադարանների ասոցիացիայի ջանքերով կկարողանանք փոքր-ինչ շտկել իրավիճակը տարբեր բնույթի գրականություն նվիրաբե ռելով արցախյան գրադարաններին՝ գեղարվեստական, մասնագիտա կան, մանկական: Կվերապատրաստվեն Արցախի գրադարանավարները, իրենք կարող են միանալ հայաստանյան գրադարանների թվային ցանցին: Կունենանք էլեկտրոնային շտեմարան Արցախի գրադարանների հավաքածուների ու նաև պարզ կլինի, թե այս պահին ինչ գրականություն ունեն Արցախի գրադարանները, և ինչի կարիք կա<sup>2</sup>:

Նոր տեխնոլոգիաների ակտիվ օգտագործմամբ ասոցիացիան առաջարկում է ստեղծել նոր գրադարան - տեղեկատվական կենտրոն, մշակել և աստիճանաբար գործարկել կրթական համակարգում գրադա րանների միասնական ավտոմատացված ցանց, օպտիմալացնել, ուժեղացնել և զարգացնել կրթական հաստատությունների և կրթական համակարգի այլ կազմակերպությունների գրադարանները<sup>3</sup>:

<sup>1</sup> <https://www.Iragir.am/2021/06/30/652133/>

<sup>2</sup> [https://www.azatutyun.am/a/31370178.html?fbclid=IwAR38gfk9-4Bs-ZLeLrSILLFX3BmcW11kK5dN\\_DycPKPENx\\_5iOFZBO82Bj8](https://www.azatutyun.am/a/31370178.html?fbclid=IwAR38gfk9-4Bs-ZLeLrSILLFX3BmcW11kK5dN_DycPKPENx_5iOFZBO82Bj8)

<sup>3</sup> <https://muegn.ru/hy/literatura/biblioteka-kak-bibliotechno-informacionnyi-centr-shkoly-biblioteka.html?fbclid=IwAR22HGT5cPiZbwWMIYqXQ3PKYbSoRpEH4c7CpfzUITL7gMOyrNgerBU pWmY>

Կրթության հիմնական արդյունքը պետք է լինի մարդու կողմից ամբողջ կյանքի ընթացքում սովորելու և վերապատրաստման կարողության հնարավորությունը, պետք է ավելացնել դասընթացների քանակը, ուշադրություն դարձնել կրթության շարունակականությանը, խթանել երիտասարդների մոտ ինքնուրույն սովորելու կարողությունը և ցանկությունը, ինչը ենթադրում է, որ մարդը վաղ տարիքից կսովորի ինքնուրույն կառուցել իր կրթական հետազոտությունը:

Մրցունակ կրթությունը և գիտությունը ենթադրում է դիտարկել «ուսուցչի մասնագիտական մակարդակի և կյանքի որակի բարելավումը որպես կրթության բարեփոխումների հիմնական բաղադրիչ»:

Բացի դրանից, շատ կարևոր է, որ կրթական գործընթացը սերտորեն կապված լինի նախագծային և հետազոտական աշխատանքի հետ: Ֆունդամենտալ կրթությունը ոչ միայն երկրի, այլև արտերկրի հիմնական մրցակցային առավելությունն է: Համալսարանի ուժեղ կողմերից մեկը պետք է լինի բարձրորակ ֆունդամենտալ գիտելիքների փոխանցումը, որը երկարաժամկետ հեռանկարում շրջանավարտներին կտա հսկայական մրցակցային առավելություն: Նրանք պետք է վստահորեն տիրապետեն ժամանակակից մաթեմատիկային, ունենան լայն էրուդիցիա բնագիտական գրեթե բոլոր առարկաներում շնորհիվ հիմնարար գիտելիքների:

### **Շվեդական կրթության մոդելը և դրա տեղայնացումը**

Եվրոպական երկրների շարքում կրթության համակարգի զարգացման համար առանձնահատուկ տեղ ունի Շվեդիան, որտեղ մշակվել և ներդրվել է կրթության սեփական մոդելը: Շվեդական մրցունակությունը մեծացնում է շարունակական կրթական ծրագրերի գործնական կողմնորոշումը, աշխատանքի ընթացքում ուսուցման համակցման տեղն ու տեսական ուսումնասիրությունները ժամանակակից կրթության ճկուն համակարգի արագ փոփոխվող աշխատաշուկայի ներկայիս պայմաններում: Այդ իսկ պատճառով փորձենք բնութագրել ու տեղայնացնել կրթության շվեդական մոդելը<sup>1</sup>:

Շվեդիայում կրթական համակարգի կառավարումը վստահված է պետությանը: Կրթությունը բոլոր մակարդակներում միջնակարգից մինչև ավագ դպրոց, անվճար է: Ուսումնական հաստատություններն ըստ իրենց կարգավիճակի պատկանում են պետական հատվածին:

Ժամանակակից շվեդական կրթական համակարգը բաղկացած է չորս փուլից<sup>2</sup>:

Առաջին փուլը ֆորսկոլան է, որը բառացիորեն կարելի է թարգմանել որպես «նախնական դպրոց», որը համապատասխանում է «մանկապարտեզ» հասկացությանը: Մանկապարտեզի աշխատողների կողմից կա հստակ արտահայտված ցանկություն ընկալվելու և կոչվելու ուսուցիչ: Նրանք պետք է ունենան մանկավարժական կրթություն, ունենան իրենց ձևով դպրոցականին նման ուսումնական ծրագրեր:

---

<sup>1</sup> Шведская модель дополнительного профессионального образования и ее реализация в России, Подготовка научных кадров ТРУДЫ МФТИ. — 2014. — Том 6, № 4

<sup>2</sup> <https://golovin1970.livejournal.com/85912.html>

Կրթության հաջորդ փուլը դպրոցն է: Այն պաշտոնապես բաղկա ցած է ինը դասարանից, բայց իրականում կա նաև գրոյական դասարան, ուր երեխաները գնում են վեց տարեկանից ուսուցումն առաջինից իններորդ դասարանը պարտադիր է: Հիմնական դպրոցական առարկա ներս են մաթեմատիկան, շվեդերենը և անգլերենը: Չնահատական նշանակվում է միայն ութերորդ դասարանից: Դպրոցում անբավարար գնահատական նշանակել չի կարելի, այն միայն նշանակվում է գիմնագիայում: Չնահատման ժամանակ թվերը չեն օգտագործվում:

Երրորդ փուլը գիմնագիան է: Բոլոր գիմնագիաները մասնագիտաց ված են: Որոշ գիմնագիաներում մեծ մրցակցություն է: Աշակերտը կարող է փաստաթղթեր ներկայացնել միանգամից տարբեր գիմնագիաներ: Գիմնագիա ընդունվելը պարտադիր չէ, բայց 16 տարեկան դեռահասի համար աշխատանք չկա: Այսպիսով, աշակերտների ճնշող մեծամաս նությունը հաճախում է գիմնագիա: Գոյություն ունեն տարբեր տեսակի գիմնագիաներ, որոնցից մի քանիսն ըստ պրոֆիլի (օրինակ՝ վարսահար դարների) և ըստ ուսումնասիրվող առարկաների իրենց աշակերտները չունեն կողմնորոշվածություն ընդունվելու բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Չորրորդ մակարդակի բարձրագույն ուսումնական հաստատու լթ յունները ներառում են համալսարաններ և ավելի բարձր դպրոցները: Կրթությունն անվճար է: Ըստ ֆակուլտետների բաժանում գոյություն չունի: Ուսանողներն ընդունվում են հատուկ ծրագրով, որը ներառում է պարտադիր դասընթացների ցանկ: Պարտադիր դասընթացներից բացի ուսանողը պետք է հաճախի և անցնի որոշակի թվով ընտրովի դասընթացներ: Ուսանողը մի քանի ամիս առաջ մինչև կիսամյակի սկիզբը պիտի գրանցվի իր ընտրած դասընթացներին:

Շվեդական հայեցակարգով բարձրագույն կրթությունն ունեցող անձր բարձր դիրք ունի: Նրա սովորելու ձգտումը խոսում է նրա փառասիրութ յան մասին, որ շվեդական հայեցակարգում ունի դրական միտում: Շվեդները բարձր են դասում ձգտել ավելիին: Ուստի բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելը հեղինակավոր է, ինչպես նաև կիրառելի է կյանքի համար, և այն տալիս է մարդուն լայն հնարավորություններ:

Հաշվի առնելով վերոնշյալը, շվեդները ընդունվելով համալսարան, սովորում են հանուն գիտելիքի, այլ ոչ հանուն հենց այն բանի, որ գրպանում «դիպլոմային կեղև» լինի: Չնայած այս փաստն էլ ունի կարևոր արժեք:

Շվեդների մեջ կան նաև այնպիսիք, որոնք շատ են ցանկանում կրծել գիտության գրանիտը, կան այնպիսիք, որոնք չեն զբաղվում դրանով, և կան այնպիսիք, որոնք փորձում են հեռու գնալ ուրիշների հաշվին: Այսինքն, այս ամենը կարելի է, իհարկե, դիտարկել բոլոր մշակույթներում: Բայց շվեդներն ավելի քիչ զարգացած են անցնելու համար «անվճար» կաշառքով կամ արտագրությամբ ուսումնառության ձևաչափին:

Այսպես թե այնպես, շվեդական համալսարանում սովորելը գործնաթաց է հանուն գիտելիք ձեռք բերելու: Կրթության վերաբերյալ շվեդական տեսակետն ավելի լուրջ և պատասխանատու տեսակետ է, որը մեծապես արդարացված է արևմտյան մտածելակերպի հստակ ռացիոնալ դրսևորմամբ:


Պատերազմից հետո մեր կրթության ներկա համակարգը ձեռք ունի, կոսմետիկ լուծումները, ինտեցիոն գործընթացներն էլ ավելի են խորաց նելու

ճգնաժամը: Ելքն արմատական փոփոխությունների մեջ է, ինչը կարող ենք կատարել տեղայնացնելով արտասահմանյան կրթական համակարգը՝ տվյալ դեպքում շվեդականը: Քանի որ շվեդական հայեցակարգով կարող ենք մոտիվացնել մեր ուսանողներին: Շվեդական հաջողության մոդելը կարող է լավագույն օրինակ դառնալ մեր երկրի համար:

**Արցախի Հանրապետությունում կրթության որոշ տվյալների վերլուծություն ու կրթությանը հատկացված ծախսերի հարաբերակցության դինամիկան համախառն ներքին արդյունքի համեմատ:**

Բոլորս էլ լավ գիտակցում ենք որակյալ կրթության և գիտության արդյունավետության բարձր դերը պետության յուրաքանչյուր ոլորտի համար: Պետության կիրթ և գիտակից ազգաբնակչությունից է կախված դրա բարեկեցությունը և հետագա զարգացման հնարավորությունները: Յուրաքանչյուր երկիր յուրովի է կազմակերպում իր կրթական գործընթացը՝ հաշվի առնելով իր խնդիրները և դրանց լուծման իր հնարավորությունները: Ներկայումս մեր կրթական համակարգի առջև դրված է դժվարագույն առաջադրանք՝ ընդգրկվել համաշխարհային կրթական միջավայր՝ սեփական ավանդական և մշակութային տարրերի պահպանմամբ:

Արցախի Հանրապետության կրթական ոլորտի տվյալների ուսումնասիրությունը ստիպված կատարվել է առանց ներառելու նախորդ 2020թ.-ը, քանի որ պատերազմի պատճառով 2020թ. վերջին երեք ամիսների տվյալները խիստ հարաբերական են, ուստի դրանք կորցնում են իրենց համադրելիությունը մնացած ուսումնասիրվող ժամանակա շրջանի հետ: Չնայած դրան՝ ուսումնասիրվող հինգ տարիները տալիս են ամբողջական պատկեր, քանի որ դրանք արտացոլում են Արցախի՝ առանց պատերազմի ու բնականոն կյանքի տվյալները և ներուժը: Արցախի Հանրապետությունում 2015-2019թթ. ԱՎԾ տվյալների համաձայն դիտարկվում է կրթությանը հատկացված ծախսերի հետաքրքիր դինամիկա (գծապատկեր 1)<sup>1</sup>:




**Գծապատկեր 1.** ԱՐ պետական բյուջեի ծախսերից կրթությանը հատկացված միջոցների դինամիկան (2015-2019թթ.):

<sup>1</sup> ԼՂՀ ԱՎԾ պաշտոնական կայք [www.stat-nkr.am](http://www.stat-nkr.am)



Գծապատկերից պարզ երևում է, որ կրթության հատկացումները նվազել են 2.7%-ով, չնայած նրան, որ նախադպրոցական հիմնարկներում երեխաների թվաքանակը և հանրակրթական դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ընդհանուր թվաքանակը այդ նույն տարիների ընթացքում ավելացել են մոտ 3%-ով (գծապատկեր 2):


Ինչպես երևում է գծապատկեր 2-ից նախադպրոցական հաստատություններում, դպրոցներում, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների քանակի ավելացումն ու պակասումը անկանոն բնույթ է կրում, հիմնականում հետաքրքիր տվյալները 2017թ-ին և 2018թ-ին են գրանցվել: 2017թ-ին նախադպրոցականներում երեխաների թիվը ավելացել է 327 երեխայով, դպրոցներում 447 մարդով, 2018թ-ին երեխաներն ավելացել են 32-ով, իսկ դպրոցականները 779-ով:



**Գծապատկեր 2.** Նախադպրոցական հիմնարկներում երեխաների թվաքանակը և հանրակրթական դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակների համեմատական ներք 2015-2019թթ.:

Գծապատկեր 3-ում տրված է կրթության վրա կատարված պետական բյուջեի ծախսերի հարաբերակցության դինամիկան համախառն ներքին արդյունքի ներքո, և այն անկումնային է, նվազել է մոտ 32%-ով: Դա

պայմանավորված է ՀՆԱ-ի և կրթության վրա կատարված պետական բյուջեի ծախսերի աճի տեմպերի անհամընթացությամբ: Եթե կրթության վրա կատարված ծախսերը 2019թ-ին 2015թ-ի համեմատ ավելացել են մոտ 11%-ով, ապա նույն ժամանակամիջոցում ՀՆԱ-ն աճել է մոտ 64 %-ով:



**Գծապատկեր 3.** Կրթության վրա կատարված պետական բյուջեի ծախսերի հարաբերակցությունը համախառն ներքին արդյունքին (%):

Չնայած նման անկումային դինամիկայի տվյալ ցուցանիշը մինևույն է գերազանցում է շատ ավելի կայուն և զարգացած տնտեսությամբ երկրների, օրինակ ՌԴ 2019թ. 3,7%, ԱՄՆ՝ 4,1%, Իտալիա 3,6%:

Ուսումնասիրությունների նման հերթափոխի արդյունքները կասկածի տակ են դնում պետության զարգացման մակարդակի վրա կրթության արդյունավետ ազդեցության փոխադարձ կապի առկայությունը: Դրանք՝ որակական մեծ թերությունների առկայության ուղիղ մատնանշումն են:

Մեր խորին համոզմամբ պետք է ռազմական ծախսերից հետո հիմնական գումարները ներդնենք կրթության զարգացման բնագավառում: Առողջապահության, գիտության և մշակույթի ոլորտներում, հնարավորինս շատ տղամարդիկ ներգրավել կրթության մեջ, հատկապես բնագիտության ասպարեզում:

Այսօր բուհերը շարունակում են պատրաստել ոչ լիարժեք մասնագետներ, շրջանավարտների կեսից ավելին չի աշխատում իրենց մասնագիտությամբ, տեղի է ունենում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի արժեզրկում, շրջանավարտների կեսից ավելին ստանում են նախօրոք իմանալով ցածր որակի զանգվածային հեռավար կրթություն, վերջին շրջանում շրջանավարտների 80%-ը երբեք չի մասնակցել հետազոտական և նախագծային աշխատանքների: Բուհերում գերիշխում են կրթության դպրոցական ձևերը (սովորել-հանձնել), գործատուները շահագրգռված չեն բուհերի հետ աշխատել. ավելի հեշտ է ինքնուրույն ավարտին հասցնել մասնագետների վերապատրաստումը:

Մեր կարծիքով պետք է իրականացնել «բուհերի առողջացում, որն ուղղված է դեպի ակադեմիական ուսում ստանալը», միջին մասնագիտական կրթությունը դարձնել կիրառական բակալավրիատ, ստեղծել ժամանակակից տեխնոլոգիաների ուսուցման կենտրոններ: Մեզ անհրաժեշտ են ուսուցիչների

«ճիշտ» խթաններ (այսօր նրանք խրախուսվում են քանակի, ոչ թե աշխատանքի որակի համար): Հիմնական աշխատավայրից դուրս ուսուցիչների ավելորդ ծանրաբեռն վաճուղյան կրճատումը տեղի կունենա «ավտոմատ կերպով», հենց որ փակվեն անտրակ կրթություն ապահովող մասնաճյուղերը:

### **Ուսումնական հաստատություններում դասավանդման մեթոդները**

Եթե պատկերացնենք, թե ուսուցչի համար ինչքան դժվար է «գուգոյի» մեջ ներքաշված աշակերտին կտրել բիզնես ինդուստրիաների կողմից թելադրված խաղերից (աշակերտը գալիս է դպրոց կամ համալսարան, բայց նրա ուշքն ու միտքը ուրիշ տեղ է):

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար լիազոր մարմինը (կառավարիչները) պետք է համոզվեն, որ անհրաժեշտ է մեծ ներդրումներ կատարել մանկավարժների, դասախոսների և կրթության բովանդակության մեջ, որ հայտնի «գուգոյի» ֆեյկերին կարողանան հակադրել հրապուրիչ ուսումնական ծրագրեր, որ հաղթահարվի աշակերտի ծուլությունը, ուսուցչի հուսահատությունը, ծնողի անտարբերությունը: Բայց մենք հայ ենք, առավել ևս Արցախից, գիտենք մեր բյուջեի սահմանափակ հնարավորությունները, հրաշքի էլ չենք սպասում, ուստի շարունակում ենք կրել մեր խաչը, և «Ի՛նչ անել» հարցին ամենքս պատրաստ պատասխան ունենք, սակայն յուրօրինակ գործելակերպ. աշխատել խղճով, (համակերպվել), բայց չդադարեցնել աշխատել նորովի ստեղծագործաբար, դժվար պահերին սա էր մեր ավագների ելքը:

Կյանքի հարաճուն պահանջները թելադրում են կրթության բնագավառի պատասխանատուներին գտնել և կիրառել ունկնդրի հետաքրքրությունը շարժող, գիտական համոզիչ փաստերով հարուստ դասախոսություն, ռեֆերատ, թեզ և այլն:

Եթե մեզ հաջողվի ներգործել լսարանի վրա առավել արդյունավետ եղանակներով, հաղորդվելիք նյութը բխի և գիտության վերջին նվաճումների ճիշտ կիրառման հմտություններից, և՛ տարածաշրջանի բնակչության տնտեսական ու քաղաքական շահերից, ապա գուցե հենց այդ ժամանակ էլ մեզ հաջողվի կրթությունը դարձնել մրցունակ: Դրան հասնելու համար անհրաժեշտ կլինի նաև հաղթահարել լսարանի անտարբերությունը՝ ուղիներ փնտրել վառելու նրանց մտքի հորիզոնները:

Առաջարկում ենք փորձառու դասախոսներին, ճիշտ գնահատելով ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը, հաղորդվող նյութը կապել ունկնդիրների մոտ հայրենասիրական զգացմունքներ արթնացնելու նպատակների հետ, ինչը կարևոր է Արցախի պայմաններում: Եվ որքան նպատակասլաց է դառնում հայրենասիրական գաղափարների ճիշտ փոխկապակցումը բուն նյութին, մեծանում է նաև լսարանի հետաքրքրությունը քննարկվող թեմայի նկատմամբ: Կարճ ասած՝ ուսուց ման բազմապլան ձևերի, եղանակների, մեթոդների ճիշտ ընտրությունը նույնպես մրցունակ կրթության երաշխիքներից է:

# **ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ОБРАЗОВАНИЯ АРЦАХА В КОНТЕКСТЕ ГОСУДАРСТВЕННОЙ И НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ СТРАНЫ**

## **АНУШ АРУТЮНЯН**

*старший преподаватель кафедры инженерной экономики и агробизнеса Шушинского технологического университета, г. Степанакерт, Республика Арцах*

## **НУНЕ МАРТИРОСЯН**

*старший преподаватель кафедры инженерной экономики и агробизнеса Шушинского технологического университета, г. Степанакерт, Республика Арцах*

## **ТАТЕВИК ВЕРДЯН**

*старший преподаватель кафедры инженерной экономики и агробизнеса Шушинского технологического университета, кандидат экономических наук г. Степанакерт, Республика Арцах*

Цель статьи - выявить проблемы, существующие в развитии образовательной системы Республики Арцах, предложить возможности их решения и наиболее эффективные способы воздействия на аудиторию.

Для достижения указанной цели были поставлены следующие задачи: присоединиться к мировому образовательному пространству, сохранив элементы собственной традиционной культуры, выявить пробелы нашей современной системы образования и представить предложения по их устранению. В ходе исследования использовались методы прямой и обратной связи, анализа и сочетания.

Основной вывод исследования заключается в том, что для воздействия на аудиторию представленный материал должен основываться на навыках правильного применения новейших научных достижений, соответствовать экономическим и политическим интересам населения региона, а также предлагается опытным преподавателям правильно оценить создавшуюся геополитическую ситуацию с целью пробуждения патриотических чувств у аудитории, что очень важно для Арцаха.

**Ключевые слова:** образование, гимназия, библиотека, высшие учебные заведения, реформы, школы, знания, программы, университет.

# PROSPECTIVES FOR THE DEVELOPMENT OF EDUCATION IN ARTSAKH IN THE CONTEXT OF THE STATE AND NATIONAL SECURITY OF THE COUNTRY

**ANUSH HARUTUNYAN**

*Senior lecturer of the chair of Engineering Economics and  
Agribusiness in Shushi Technological University,  
Stepanakert, the Republic of Artsakh*

**NUNE MARTIROSYAN**

*Lecturer of the chair of Engineering Economics and  
Agribusiness in Shushi Technological University,  
Stepanakert, the Republic of Artsakh*

**TATEVIK VERDYAN**

*Senior lecturer of the chair of Engineering Economics and  
Agribusiness in Shushi Technological University,  
Stepanakert, the Republic of Artsakh*

The purpose of the article is to identify the problems that existed in the development process of the educational system of the Republic of Artsakh, to offer the possibilities of their solution, that is, the most effective ways to influence the audience.

To achieve the goal, the following tasks were set: to join the world's educational environment by preserving its traditional cultural elements.

The gaps in our current education system after the war have been revealed, and proposals for their elimination have been represented.

Throughout the current study, we apply the methods of direct feedback, analysis, and combination to the research, to fulfill the goals

The main conclusion is that to influence the audience, the material to be conveyed must be based on the skills of the correct application of the latest scientific achievements, on the economic and political interests of the people of the region. As it is suggested to experienced lecturers, correctly assessing the created geopolitical situation, to connect the transmitted material with the aims of arousing patriotic feelings in the listeners, which is important in the conditions of Artsakh.

**Keywords:** *education, gymnasium, library, higher education institutions, reforms, schools, knowledge, programs, university.*

# ՀԻՔՐԻԴԱՅԻՆ (ՀԱՄԱԿՑՎԱԾ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի մանկավարժության և կրթության  
գաղափարական կենտրոնի դասախոս, ասիստենտ, Հայագիտական  
հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, գիտքարտուղար,  
բանասիրական գիտությունների թեկնածու,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն,  
[mary.hovhannisyan@gmail.com](mailto:mary.hovhannisyan@gmail.com).

**Հետազոտության նպատակներն են հստակորեն սահմանա-գատել  
հաճախ սխալաբար նույնացվող «հիբրիդային» և «խառը ուսուցում»  
հասկացությունները, վերլուծել հիբրիդային ուսուցման  
առանձնահատկությունները: Մեր ուսումնասիրության խնդիրներն են  
բացահայտել հիբրիդային ուսուցման էությունը, առավելութ-յունները,  
թերությունները, հիբրիդային ուսուցման ժամանակ դրսևորվող  
մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Թեմայի  
շրջանակում առաջադրված խնդիրների համա-պարփակ  
ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ընդհանուր՝  
տրամաբանական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ՝  
վերլուծության, համեմատության մեթոդներ:**

Հետազոտության արդյունքում եզրակացրել ենք, որ որ  
հիբրիդային ուսուցումը կրթության համաժամանակյա ձևաչափ է,  
ուսուցման եղանակ, որը համակցում, շաղկապում է առցանց ու  
անհատական ուսուցման լավագույն կողմերը: Խառը և հիբրիդային  
ուսուցման հիմնական տարբերությունն այն է, որ հիբրիդային  
ուսուցումը հավասարապես կենտրոնանում է ինչպես դեմառդեմ,  
այնպես էլ առցանց ուսուցման վրա, մինչդեռ խառը ուսուցումը  
ենթադրում է երկուսի ցանկացած անհավասարաչափ կիրառում:  
Տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորութ-յուններն  
ու համավարակի առաջ բերած սահմանափակումները ստիպում են  
գտնելու ոլորտային խնդիրների լուծման արդյունա-վետ եղանակներ՝  
ապահովելով սմարթֆոնների, պլանշետների դարում ապրող սերնդի  
որակյալ կրթությունը:

**Հիմնաբառեր՝** հիբրիդային (համակցված) ուսուցում, խառը ուսուցում,  
հեռավար կրթություն, առցանց ուսուցում, ուսուցման եղանակ, դեմառդեմ  
ուսուցում, կրթության շարունակականություն, համավարակ,  
տեղեկատվական տեխնոլոգիաներ:

## Ներածություն

Վերջին երկու տարվա ընթացքում «ԸՈՎԻԴ-19» համավարակը  
խաթարել է 1.6 միլիարդ երեխաների կրթությունը: Կրթական համակարգի  
վրա համավարակի ազդեցության հետևանքը չափելու համար Ձոն Հոփքինսի  
համալսարանի, Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համագործակցութ-

յամբ ստեղծվել է «COVID-19-Global Education Recovery Tracker»-ը (ԸՈՎԻԴ-19. աշխարհում կրթության վերականգնման չափորոշիչ-համակարգ), որը հնարավորություն է տալիս որոշումներ կայացնելիս հաշվի առնելու ավելի քան 200 պետություններում իրականացված վերականգնման ծրագրի աշխատանքները<sup>1</sup>: 2021 թ. մարտի սկզբի տվյալներով 51 երկիր ամբողջությամբ վերադարձել է առկա կրթությանը: Ավելի քան 90 երկրում ուսուցումն իրականացվել է այլընտրանքային տարբերակներով:

Հայաստանում նոր ուսումնական տարին մեկնարկեց 2020 թ. սեպտեմբերի 14-ին՝ համաձայն ՀՀ ԿԳՄՄ և ԱՆ միջգերատեսչական համագործակցության արդյունքում մշակված ընթացակարգերի պահանջների ու ուղեցույցների:

«ԸՈՎԻԴ-19. աշխարհում կրթության վերականգնման չափորոշիչ-համակարգի կայքէջում» կարելի է տեղեկատվություն գտնել այն մասին, թե ինչպես է ուսումնական գործընթացն իրականացվել յուրաքանչյուր երկրում, այդ թվում՝ Հայաստանում, որտեղ համավարակի բռնկման օրերին դպրոցները փակվեցին 12 շաբաթով (2020 թ. մարտ-մայիս): Կրթական համակարգը կարողացավ կենտրոնացնել ներքին ու արտաքին ռեսուրսները՝ անցնելով առցանց ուսուցման: ՀՀ կառավարությունը կիրառեց թվային ու ոչ թվային հարթակներ՝ համավարակի ընթացքում երեխաների կրթության շարունակականությունն ապահովելու համար: Դրանց թվին էին պատկանում առցանց հարթակները, հեռուստատեսային կրթական ծրագրերը, այդ թվում՝ Առաջին ալիքը, յուրաքանչյուրի և երկու թվային հեռուստաալիքները: ԿԳՄՄ նախարարությունը գործարկեց heravar.armedu.am և e-school.am հեռավար ուսուցման հարթակները: Ըստ վերոնշյալ չափորոշիչ-համակարգի տվյալների՝ մեր երկիրն առավելապես կիրառել է ուսուցման հիբրիդային եղանակը՝ համատեղելով դեմառդեմ և առցանց ուսուցումը, կամ դասերը բացառապես անցկացրել են առցանց ձևաչափով<sup>2</sup>:

Մեր օրերում վիթխարի է տեխնոլոգիաների ազդեցությունն ինչպես ուսումնական գործընթացի կատարելագործման, այնպես էլ առհասարակ կրթության զարգացման վրա: Ժամանակակից կրթական համակարգի կատարելագործման էական միտումը նորարարական մոտեցումների որոնումն է, որոնք դարձնում են ուսուցումն ավելի դինամիկ և սովորողների կարիքներին համապատասխան: Ակտիվորեն զարգանում են հեռավար ուսուցման համակարգերը, որոնք հիմնված են ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման վրա: Ըստ Բ. Թոմլինսոնի և Զ. Ուիթթերի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվող ուսուցման համակարգերը չորսն են՝

- 1) խառը ուսուցում (մինչև 45 % առցանց ուսուցում),
- 2) հիբրիդային ուսուցում (40-80 % առցանց ուսուցում),
- 3) հեռավար ուսուցում (առցանց ուսուցման ավելի քան 80 %-ը),

<sup>1</sup> Տե՛ս COVID-19-Global Education Recovery Tracker, <https://www.covideducationrecovery.global/> (դիտումը՝ 14.11.2021):

<sup>2</sup> Տե՛ս COVID-19-Global Education Recovery Tracker, <https://www.covideducationrecovery.global/profile/?AM> (դիտումը՝ 14.11.2021):

4) համացանցային ուսուցում (նվազագույն առցանց ուսուցում)<sup>1</sup>:

Ուսուցման հիբրիդային եղանակը, որն իրականացվում է տեխնոլոգիաների միջոցով, կարևոր առաջնայլ է ոչ միայն համավարակի երևան հանած դժվարություններն ու սահմանափակումները կրթության ոլորտում հաղթահարելու առումով, այլև տարբեր իրողություններով պայմանավորված ուսումնական խնդիրների լուծման ու կրթության շարունակականությունն ապահովելու տեսանկյունից:

### **Յիբրիդային և խառը ուսուցում**

Յիբրիդային (համակցված) ուսուցումը դեմառդեմ (face-to-face learning) և առցանց ուսուցման (online learning) համադրությունն է, որը պահանջում է դասավանդողի ու սովորողի ֆիզիկական ներկայությունը ժամանակի, տեղի և սովորողի վերահսկողության որոշ տարրերով: Դասավանդողը ու սովորողների մի մասը ֆիզիկապես ներկա են դասերին, իսկ մյուս մասը առցանց տարբերակով է մասնակցում ուսումնական գործընթացին: Այլ կերպ ասած՝ հիբրիդային դասընթացները համակցում են անհատական ու առցանց ուսուցման լավագույն կողմերը՝ միաժամանակ կրթությունն ավելի հասանելի դարձնելով բազմաթիվ սովորողների համար:



### **Նկար 1: Յիբրիդային ուսուցում**

Յիբրիդային ուսուցումը սովորաբար շփոթում են առցանց, հաճախ նույնացնում նաև խառը ուսուցման հետ<sup>2</sup>, սակայն ուսուցման այս երկու եղանակները միանգամայն տարբեր են: Խառը ուսուցումը կենտրոնանում է ավանդական անձնակենտրոն և առցանց ուսուցման պարտադիր համադրության վրա, մինչդեռ հիբրիդային ուսուցումը ժամանակակից

<sup>1</sup> Տե՛ս Tomlinson B., Whittaker C., Blended Learning in English Language Teaching: Course Design and Implementation. British Council-2013, [http://www.teachingenglish.org.uk/sites/teacheng/files/D057\\_Blended%20learning\\_FINAL\\_WEB%20ONLY\\_v2.pdf](http://www.teachingenglish.org.uk/sites/teacheng/files/D057_Blended%20learning_FINAL_WEB%20ONLY_v2.pdf) (դիտումը՝ 04.11.2020):

<sup>2</sup> Տե՛ս Huang K. L., Planning and implementation framework for a hybrid e-learning model: The context of a part-time LIS // Journal of Librarianship and Information Science, 2010, № 42, p. 48:



տեխնոլոգիաների ճիշտ համադրություն գտնելն է՝ անկախ դրանց դեմառդեմ, առցանց իրականացման ձևից:

	<b>Հիբրիդային ուսուցում</b>	<b>Առցանց ուսուցում</b>	<b>խառը ուսուցում</b>
<b>Ուսուցման եռլթյունը</b>	Դասավանդողը սովորողների համար միաժամանակ անցկացնում է ինչպես դեմառդեմ, այնպես էլ առցանց դասեր:	Համակարգչային որևէ տեխնոլոգիայի ներդրմամբ իրականացվող ուսուցումն է:	Ավանդական դեմառդեմ և առցանց ուսուցման անհամաչափ համադրությունն է:
<b>Իրականացման ձևը</b>	Անցկացվում է ինչպես առցանց, այնպես էլ սովորողի ֆիզիկական ներկայությամբ՝ կախված նրանց ցանկությունից և իրավիճակից:	Դասավանդողը առցանց հարթակում (Google Meet, Zoom...) է անցկացնում դասը՝ սովորողներին տրամադրելով կյուբեր:	Սովորաբար պահանջվում է և՛ սո-վորողի, և՛ մանկավարժի ֆիզի-կական ներկայու-թյունը: Բացի դասավանդման ավանդական մեթոդների գերակայությունից՝ սովորողները զբաղվում են նաև առցանց կրթական գործունեությամբ, համակարգչային ուսուցմամբ և ուսուցման թվային այլ միջոցներով:

**Աղյուսակ 1**



**Գծապատկեր 1**

Հիբրիդային և խառը ուսուցման հիմնական տարբերությունն այս դեպքում այն է, որ հիբրիդային ուսուցումը հավասարապես կենտրոնանում է ինչպես դեմառդեմ, այնպես էլ առցանց ուսուցման վրա, մինչդեռ խառը ուսուցումը ներառում է երկուսի ցանկացած անհավասարաչափ խառնուրդ, համադրություն, որի կենտրոնում սովորողի ճանաչողական գործունեությունն է: Խառը ուսուցումը գործընթաց է, իսկ հիբրիդայինը՝ մեթոդական մոտեցում: Խառը ուսուցումն այն մոդելն է, որն օգտագործում է առցանց ուսուցումը՝

ուսումնական գործընթացը լրացնելու համար, բայց այն հիմնականում կենտրոնանում է դասավանդողի ու սովորողների վրա, որոնք ֆիզիկապես ներկա են դասավանդման ժամանակի մեծ մասում: Որոշ դեպքերում հիբրիդային դասերը կարող են ներառել համաժամանակյա ուսուցման տարրեր, ինչպիսիք են առցանց վարժությունները և նախապես ձայնագրված տեսահոլովակները՝ աջակցելու դեմառդեմ ուսուցմամբ սովորողներին:

Խառը ուսուցման մասին առաջին տեղեկատվությունը գալիս է 1960-ական թվականներից: 1999 թ. մամուլում խոսվել է Ատլանտայում առցանց ուսուցում իրականացնող կրթական հաստատության մասին, որը կիրառել է ուսուցման խառը մեթոդը: Մասնավորապես Կ. Ջ. Բոնկը և Զ. Ռ. Գրեհեմը 2006 թ. հրատարակած «Խառը ուսուցում» ձեռնարկում ուսուցման այս ձևը բնորոշել են որպես համակարգ, որը «համատեղում է դեմառդեմ ու համակարգչային միջնորդավորված ուսուցումը»<sup>1</sup>:

Խառը ուսուցումը կարելի է դիտարկել որպես ուսումնական հնարավորությունների շրջանակ, որն իրականացվում է համացանցի և թվային հարթակի միջոցով՝ պահանջելով դասավանդողի ու սովորողի համատեղ ներկայությունը: Հիբրիդային ուսուցման ժամանակ սովորողներն իրենց ժամանակի առնվազն կեսը ծախսում են առցանց, իսկ մնացած ժամանակը՝ դասարանում կամ լսարանում սովորելու համար: Դասավանդողը միաժամանակ սովորեցնում է և՛ ֆիզիկապես ներկա, և՛ առցանց տարբերակով սովորողներին՝ օգտագործելով որևէ տեխնոլոգիա, ինչպիսին է, օրինակ, տեսադասը: Խառը ուսուցմամբ դեպքում սովորողներն ուսուցման որոշ բաղադրիչներ լրացնում են առցանց, իսկ մյուսները՝ դեմառդեմ: Ուսուցման երկու տեսակներն էլ ներառում են անհատական ու առցանց ուսուցման տարրեր, սակայն հիբրիդային ուսուցման դեպքում դեմառդեմ և առցանց սովորողները տարբեր մարդիկ են: Խառը ուսուցմամբ նույն մարդիկ սովորում են ինչպես անձամբ՝ դեմառդեմ, այնպես էլ առցանց ձևաչափով:

Հիբրիդային ուսուցման դեպքում դասընթացի մեծ մասն իրականացվում է առցանց: Ի տարբերություն խառը ուսուցման՝ հիբրիդային ուսուցման «սցենարը» ներառում է սովորողի գերակշռող փոխգործակցությունն առցանց կրթական ռեսուրսի հետ, մինչդեռ մանկավարժի հետ շփումը մեծ մասամբ կատարում է խորհրդատվական կամ օժանդակ գործառույթ: Ասել է թե՛ հիբրիդային ուսուցման տեխնոլոգիան ներառում է սովորողի ժամանակի յուրօրինակ կառավարում միաժամանակ նրան մեթոդական աջակցություն ցուցաբերելով, մասնավորապես այն ենթադրում է.

1) համաժամանակյա ուսուցում, որը նման է առցանց դասի, կարող է իրականացվել անհատական ուսուցման հիման վրա,

2) տարաժամանակյա ուսուցում, որը կատարյալ հարթակ է առցանց ուսուցման իրականացման համար:

### **Հիբրիդային ուսուցման առանձնահատկությունները**

Հիբրիդային ուսուցումը բնութագրվում է չորս առանձնահատկություններով, որոնք տարբերում են այն ուսուցման այլ եղանակներից.

---

<sup>1</sup> **Bonk C. J., Graham C. R.**, The Handbook of Blended Learning: Global Perspectives, Local Designs, Pfeiffer, 2006, p. 42.

- 1) համագործակցային և անհատական ուսուցման համադրություն,
- 2) համաժամանակյա և տարաժամանակյա ուսուցման համադրություն,
- 3) անկախ և խմբակային ուսուցման համադրություն,
- 4) ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման համադրություն՝ կյանքի ընթացքում դրա իրականացման առումով (Lifetime Learning)<sup>1</sup>:

Առանձնացվում են հիբրիդային ուսուցման հետևյալ տեսակները՝ տարբերակված, բազմաշերտ, երկփեղկված, հեռավար և նախագծային:

**Տարբերակված ուսուցում:** Առցանց հարթակի միջոցով դասին միացող և դասին ֆիզիկապես ներկա սովորողները միաժամանակ մասնակից են ուսումնական գործընթացին: Նշված երկու խմբերն էլ կարող են ներգործել միմյանց վրա:

Առցանց սովորողներ	Դեմառդեմ սովորողներ
Սովորողները դասին միանում են տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով, հնարավորություն ունեն միմյանց տեսնելու և լսելու:	Դասալսարանային միջավայրում գտնվող սովորողները տեսնում ու լսում են նաև առցանց սովորողներին և կարող են ներգործություն ունենալ նրանց ուսումնական գործընթացի վրա:

*Աղյուսակ 2*

**Բազմաշերտ ուսուցում:** Սովորողները աշխատում են նույն ուսումնական առաջադրանքների լուծման վրա, սակայն բաժանված են երկու տարբեր խմբերի, որոնք հազվադեպ են ներգործում միմյանց վրա:

Առցանց սովորողներ	Դեմառդեմ սովորողներ
Առցանց սովորողները կարող են աշխատել տարաժամանակյա և համաժամանակյա ձևաչափով: Նրանք նույն դասն են անցնում, ինչ դեմառդեմ սովորողները, և պարտադիր չէ, որ վերջիններս ներգործություն ունենան առցանց սովորողների վրա:	Դասալսարանային միջավայրում դեմառդեմ ուսուցումն իրականացվում է այնպես, որ դասավանդողը հնարավորություն ունենա նաև առանձին աշխատելու սովորողների առցանց խմբերի հետ:

*Աղյուսակ 3*

**Երկփեղկված ԱԲ ուսուցում:** Առցանց ու դեմառդեմ ուսուցման մասնակիցները «երկփեղկում են» առցանց և դեմառդեմ սովորելու օրերը: Առցանց ուսուցումն իրականացվում է հիմնականում տարաժամանակյա եղանակով ու տեսադասերի միջոցով:

Առցանց սովորողներ	Դեմառդեմ սովորողներ
Սովորողները կատարում են տարաժամանակյա առաջադրանքներ՝ դիտելով, լսելով տեսադասեր, տեսանյութեր կամ ընթերցանության միջոցով:	Դասալսարանային միջավայրում գտնվող սովորողները կարող են իրականացնել նախագծային աշխատանքներ, արդյունավետ քննարկումներ և այլն:

*Աղյուսակ 4*

<sup>1</sup> Տե՛ս **Qi L., Tian A.**, Design and Application of Hybrid Learning Platform Based on Joomla. Advances in Computer Science and Education Applications. In M. Zhou, & H. Tan (Ed.),2011, pp. 549-556:

**Յեռավար ուսուցում**, որի դեպքում առցանց սովորողների խումբը փոքր է (3-4 սովորող), և նրանք կարող են տեսազանգերով միանալ դեմառդեմ լսարանին:

Առցանց սովորողներ	Դեմառդեմ սովորողներ
Սովորողները դասին միանում են տեսազանգի միջոցով:	Դասալսարանային միջավայրում գտնվող սովորողներից մեկը օգնում է դասավանդողին՝ ուշադրության կենտրոնում պահելով առցանց տարբերակով դասին միացած սովորողներին:

*Աղյուսակ 5*

**Նախագծային ուսուցում**, որի դեպքում դասը հնարավոր չէ առցանց իրականացնել, և միայն 1-4 սովորողների հանձնարարվում է կատարել նախագծային ինքնուրույն աշխատանք:

Առցանց սովորողներ	Դեմառդեմ սովորողներ
Սովորողները իրականացնում են նախագծային աշխատանք:	Դասալսարանային միջավայրում գտնվող սովորողների համար ուսուցումը կազմակերպվում է սովորական՝ դեմառդեմ ձևաչափով:

*Աղյուսակ 6*

Իրականում հիբրիդային ուսուցման տեխնոլոգիան կարող է դիտվել որպես խառը ուսուցման որոշակի զարգացում: Այնուամենայնիվ, ներկայումս բազմաթիվ ուսումնական հաստատություններ դիտարկում են խառը ուսուցման ներդրման հնարավորությունը, որն առավել զարգացած է մեթոդաբանական տեսանկյունից և հնարավորություն է տալիս բարձրացնելու ուսումնական գործընթացի արդյունավետությունն ավանդական ու առցանց կրթական տեխնոլոգիաների համադրման միջոցով:

Ինչպես դեմառդեմ, այնպես էլ առցանց ուսուցման եղանակներն ունեն իրենց առավելություններն ու թույլ կողմերը: Հիբրիդային ուսուցման նպատակն է համատեղել երկու ձևաչափերը՝ ստեղծելով ուսուցման եզակի փորձ: Հիբրիդային ուսուցման առավելություններն են.

- ✓ սովորողների լայն ընդգրկում ունի, քանի որ տեխնոլոգիայի միջոցով ուսուցումն առաջին հերթին գրավիչ է ուսումնական նյութի մատչելի ընկալման առումով,
- ✓ կիրառում է ժամանակակից տեղեկատվական համակարգեր, որոնք սովորողին նաև արագ տեղեկատվություն ստանալու և ինքնուրույն գործունեություն ծավալելու հնարավորություն են տալիս,
- ✓ ունի իրականացման հարմարավետություն. սովորողները, որոնք ի վիճակի չեն անձամբ հաճախել դասերին, հիբրիդային ուսումնական միջավայրը թույլ է տալիս նրանց սովորել առցանց,
- ✓ սովորողներին ազատություն է տալիս ուսումնական նյութերը ցանկացած ժամանակ վերանայելու և գիտելիքները խորապես զարգացնելու առումով,
- ✓ ապահովում է դրական հետադարձ կապ՝ խթանելով ուսուցումը, համագործակցային աշխատանքը. հիբրիդային դասընթացների միջոցով սովորողները կարող են շփվել իրենց հասակակիցների հետ դասաժամերից դուրս՝ աջակցելով ու սովորեցնելով միմյանց,

✓ գրավիչ է ժամանակի կառավարման առումով, իսկ ժամանակի տնտեսումը հնարավորություն է տալիս լավագույնս կիրառելու համաժամանակյա խմբային աշխատանքներ:

Հիբրիդային ուսուցումն ունի նաև թերություններ.

1) հիբրիդային ուսուցման առցանց բաղադրիչի դեպքում բացակայում են սովորողի ու դասախոսի միջև անմիջական շփումն ու հաղորդակցումը,

2) հիբրիդային ուսուցման առցանց բաղադրիչը ենթադրում է ուսուցման միջոցների կիրառման տեխնիկական պատրաստվածության խնդիր,

3) հիբրիդային ուսուցումը մանկավարժի առաջ որոշակի պահանջներ է դնում ստեղծագործական մթնոլորտ, հետադարձ կապ ապահովելու, ունկնդիրներին շահադրդելու առումով,

4) հիբրիդային ուսուցման հիմնախնդիրներից մեկը գիտելիքների ստուգման ձևն է, քանի որ սովորողները տարբեր կերպ են աշխատում, այլ կերպ ասած՝ «հավասար չեն»,

5) մանկավարժի համար ժամանակատար է հիբրիդային ուսուցման դասընթացների մշակման գործընթացը, ինչը պահանջում է նախագծային լրացուցիչ աշխատանք, սահուն իրականացումը պահանջում է հատուկ ռեսուրսներ, լրացուցիչ հնարավորություններ,

6) հաղորդակցման տեխնոլոգիաները հանգեցնում են դասավանդողի վերահսկողության նվազեցման՝ պահանջելով լրացուցիչ ջանքեր,

7) հիբրիդային ուսուցման առցանց բաղադրիչը պահանջում է սովորողների համացանցային հասանելիություն:

Այսպիսով՝ հիբրիդային ուսուցման հեռանկարում անհրաժեշտ է առցանց և ավանդական ուսուցման համադրում, տեխնոլոգիական կայուն մեխանիզմի, ժամանակակից մեթոդների առկայություն: Կարևոր է.

- դասավանդումը դարձնել անձնակենտրոն՝ մանրամասնորեն ծրագրելով և կազմակերպելով սովորողի գործունեությունը,

- ապահովել առավելագույն փոխգործունություն սովորողի ու մանկավարժի միջև,

- ստեղծել մոտիվացիա ու պահպանել այն,

- ստեղծել համագործակցային ուսուցման հնարավորություն,

- ապահովել հետադարձ կապ,

- որպես գործիքներ կիրառել տեսադասերն ու տեսադասախոսությունները, քննարկումները,

- ուսումնառության կարգապահության համար սահմանել սովորողի ներկայության նորմ և համացանցային ուսումնառության ակտիվության պահանջ:

## ОСОБЕННОСТИ ГИБРИДНОГО ОБУЧЕНИЯ

### МЕРИ ОГАННИСЯН

*преподаватель Центра педагогики и развития образования Ереванского государственного университета, ассистент, научный сотрудник и ученый секретарь Института арменоведческих исследований, кандидат филологических наук, г. Ереван, Республика Армения*

Цели исследования - четко разграничить ошибочно отождествляемые понятия «гибридное» и «смешанное обучение», проанализировать особенности гибридного обучения. Задачи исследования - раскрыть сущность, преимущества, недостатки гибридного обучения, выявленные в гибридном обучении педагогические проблемы и пути их решения. В ходе комплексного изучения проблемы, выдвинутой в рамках темы, использовались общенаучные – логические методы, а также частные или специальные методы - методы анализа и сравнения.

В результате исследования мы пришли к выводу, что гибридное обучение – это синхронный формат образования, способ обучения, сочетающий лучшие стороны онлайн-обучения и индивидуального обучения.

Основное различие между смешанным и гибридным обучением заключается в том, что гибридное обучение фокусируется в равной степени как на очном, так и на онлайн-обучении, тогда как смешанное обучение предполагает любое неравномерное применение обоих видов обучения. Возможности, предоставляемые информационными технологиями, и ограничения, вызванные пандемией, вынуждают искать эффективные пути решения отраслевых проблем, обеспечивая систематическое и качественное обучение для поколения, живущего в эпоху смартфонов и планшетов.

**Ключевые слова:** *гибридное (комбинированное) обучение, смешанное обучение, дистанционное обучение, онлайн-обучение, способ обучения, очное обучение, непрерывность образования, пандемия, информационные технологии.*

## PECULIARITIES OF HYBRID LEARNING

### MERI HOVHANNISYAN

*Yerevan State University, The Centre of Pedagogy and Education Development, Assistant Professor, PH.D. in Philology; Institute for Armenian Studies, Researcher, Scientific Secretary, Yerevan, The Republic of Armenia*

The objectives of the study are to clearly distinguish between the often erroneously identified concepts of "hybrid" and "mixed learning" and to analyze the features of the hybrid learning. Our task is to discover the essence, the advantages and disadvantages of the hybrid learning, pedagogical problems that take place in the hybrid learning, as well as the ways of their solution. General scientific - logical methods, as well as private or special methods - methods of analysis and comparison – have been used during the comprehensive study of the problem put forward within the framework of the topic.

As a result of the study we came to a conclusion that the hybrid learning is a synchronous format of education, a method of learning, combining the best sides of online education and individual education. The basic difference between mixed learning and hybrid learning is that hybrid learning is focused on an equal level of full-time and online education, meanwhile mixed learning supposes any unequal application of both types of learning. The opportunities provided by information technologies and limitations, imposed by the pandemic forced to seek some effective ways of the solution of branch problems, providing the systematic and qualitative learning of the generations growing up in the epoch of smartphones and planchets.

**Keywords:** *hybrid learning, mixed learning, distance learning, online learning, method of learning, full-time learning, continuity of education, pandemic, information technologies.*

# САМОПОЗНАНИЕ И ОСОЗНАНИЕ ИЗМЕНЕНИЙ КАК ПОСТОЯННЫЕ ЦЕННОСТИ ОБРАЗОВАНИЯ В ПОСТОЯННО МЕНЯЮЩЕМСЯ МИРЕ

**КОНСТАНТИН МАЗУР**

*Университет прикладных наук Яна Амоса Коменского,*

*кандидат наук,*

*г.Лешно, Польша*

[kostiantyn.mazur@pwsz.edu.pl](mailto:kostiantyn.mazur@pwsz.edu.pl)

**Образование и постоянно меняющийся мир.** *Казалось бы, оба эти понятия должны зависеть друг от друга, а изменение одного должно вызывать изменение другого, и наоборот. Цель статьи – указать насколько это взаимодействие очевидно и предложить шаги для улучшения в будущем. Автор кратко представляет историческую перспективу образования, поднимает вопрос о правде и постправде, дезинформации, фейковых новостях и власти алгоритмов, которые меняют медиальный мир вокруг нас, анализирует также адаптации образования к изменениям в постоянно меняющемся мире. Автор приходит к выводу, что следует начать прежде всего понимать цифровую реальность, учить молодежь быть самостоятельнее, изменить подход учителей к процессу обучения и саму систему образования.*

**Ключевые слова:** *образование, обучение, постправда, фейковые новости, алгоритм, искусственный интеллект, Facebook, Google.*

## **Историческая перспектива образования**

Представляя Университет прикладных наук имени Яна Амоса Коменского в Лешно (Польша), обращаюсь к классно-урочной системе и принципах обучения именно Коменского, который жил в Лешно между 1628 и 1656 гг. (с перерывами на поездки в Англию, Швецию, Трансильванию и Эльблонг, Польша). Именно в Лешно он писал «Великую дидактику», которая содержит универсальное искусство учить всех всему, или верный и тщательно продуманный способ создавать во всех общинах, городах и селах каждого христианского государства такие школы, в которых бы все юношество того или иного пола, без всякого, где бы то ни было исключения, могло учиться наукам, совершенствоваться в нравах, наполняться благочестием и таким образом в годы юности научиться всему, что нужно для настоящей и будущей жизни. Руководящей основой этой Дидактики было исследование и открытие метода, при котором учителя меньше бы учили, ученики большему бы научились, в школах было бы меньше страха, одурения и бесполезной работы, а больше досуга, радости и основательного успеха; крестьянские общины меньше



страдали от мрака, смятения и разлада, заключали бы больше счета, порядка, мира и спокойствия.<sup>1</sup>

Педагог призывал к тому, чтобы вся молодежь получала широкое универсальное образование, а его классно-урочная система предусматривала:

- непеременимый состав учащихся одного возраста;
- проведение занятий в точно определенное время по расписанию;
- одновременную работу учителя со всем классом по одному предмету.

В более общей формулировке также стоит отметить, что методы обучения базировались на пересказывании учителем знаний ученикам и учении на память, поводом конечно же был факт, что раньше доступ к информации и ее истокам был ограничен.<sup>2</sup> В те времена структура жизни опиралась на непрерывности событий, разделяясь на две части: обучение и работа. Во время обучения человек собирал информацию, развивал свои навыки, создавал свое мировоззрение и идентичность.

В основе педагогики Коменского лежит убеждение, что индивидуальное развитие каждого человека основывается на познаваемости на базе личного опыта. Следовательно, ребенок заслуживает право на свободу, спонтанность и непосредственность в процессе обучения и воспитания.<sup>3</sup>

Рассуждая о развитии личности, Коменский базировал ее на развитии природных дарований, которые понимал как силу души, делающая нас людьми. По его мнению, именно эта сила делает нас способными понимать и делать выбор, достигать и наслаждаться достигнутым. В трактате «О развитии естественных дарований», описывая как узнать хорошо образованного человека, он приводит также пример образованного и необразованного общества, которые будут рассмотрены в данной статье. Автор отмечает, что «образованные люди человечны по своим нравам, варвары же отличаются скотской грубостью или же зверской жестокостью, так что, кроме человеческого образа едва ли признаешь в них что-то человеческое. [...] Если ты присмотришься к порядку, который царит в общественных и частных делах хорошо образованного народа, там все идет как часы [...] У варваров все же похоже на развязанный сноп или песок без цемента. [...] Образованные живут между собой мирно, исполненные света, разума, благой воли и чистотой совести, довольные Богом и собой, радуясь своим сокровищам. Необразованные, не обладая ничем внутри самих себя, всецело предаются одной внешности и, гоняясь вместо вещей за призраками, становятся предметом насмешек, чахнут и, наконец, гибнут».<sup>4</sup>

---

<sup>1</sup> Коменский Я.А., *Великая дидактика*, Санкт-Петербург 1875.

<sup>2</sup> Nagari Y.N., *21 lekcji na XXI wiek*, Kraków 2018, p. 332.

<sup>3</sup> Kot S., *Historia wychowania*, 1995, t. I, pp. 312–317.

<sup>4</sup> Коменский Я.А., *Избранные педагогические сочинения*, Москва 1982, pp. 8–9, 12, доступ 20.12.2021: <https://books.google.pl/books?id=->

Эти слова были написаны более 300 лет назад, но при сознательном анализе на сегодняшний день все также актуальны. Упомянутые Коменским призраки на сегодняшний день являются не чем иным как мифами, воображениями и представлениями, которые создают основу лжи, и, хотя они полностью вымышленные, их социальные функции очень реальны и опасны.<sup>1</sup>

### Правда и постправда

Мир и все, что нас окружает, изменяется настолько быстро, что человечество не осознает, насколько мало знает о тех процессах, которые их окружают. Имеется в виду не столько технологические аспекты, сколько общественные и социологические.

Проблема коллективного сознания, в котором воображения живут своей собственной жизнью, и новые образы, появляющиеся из-за этого, способствуют появлению еще более новых коллективных воображений, убеждая нас в отказе от утверждения, что наука должна иметь дело только с вещами, а не с образами.<sup>2</sup>

Жизнь в обществе требует от нас представлений о структуре, явлениях и социальных процессах. Социальные практики возникают на основе воображений, и из-за них зрители телевидения, пользователи интернета и виртуальные сообщества, придают смысл окружающему миру. Поверхностный анализ литературы по фантазиям и воображениям показывает, что воображение создает образы, а также порождает идеи и концепции, которые служат в культуре за идеологическую и социальную систему.<sup>3</sup> Благодаря эффективности современных новых медиа воображение стало основой для создания социальных образов и перспектив, предрассудков и коллективных стереотипов. Коллективные воображения ведут к социальному единству.<sup>4</sup> Эти механизмы, к сожалению, также используются в деятельности политического характера.

<sup>4</sup> Поташник М. М. Качество образования: проблемы и технология управления. / М. М. Поташник – М.: Педагогическое общество России, 2002. – С. 352.

составляющими: качеством образовательного процесса и качеством результата.

Раскроем каждый из них.

Итак, **качество образовательного процесса** - соответствие установленным требованиям, нормам, стандартам, которое включает в себя:

- качество образовательной программы,
- качество потенциала научно- педагогического состава, задействованного в образовательном процессе,
- качество потенциала обучающихся,
- качества средств образовательного процесса (материально-технической базы, учебно - методического обеспечения, учебных аудиторий, транслируемых знаний и др.),
- качество образовательных технологий.

Из вышеуказанных критериев, следует более подробно остановиться на раскрытии роли учебно-методического обеспечения в образовательном процессе.

Учебно-методический комплекс играет важную роль в ходе образовательной деятельности, особенно при разработке конкурентоспособной образовательной программы, поскольку играет ключевую роль при планировании учебного процесса, контроля поэтапного роста успеваемости обучающегося, а также оценки приобретенных учащимся необходимых знаний, умений и навыков. Следовательно, можно заметить, что целью учебно-методического обеспечения заключается в создании наилучших условий для управления учебным процессом, а также согласование всех необходимых материалов по данному курсу.

Таким образом, преимущество учебно-методического комплекса заключается в: 1) комплексности – включает в себя все необходимые учебно-методические документы и материалы, относящиеся к данному курсу или модулю, благодаря чему данный курс становится более доступным для обучающегося; 2) структурности - состоит из структурных элементов, которые указывают на содержание составляющих компонентов, их глубину, 3) показательности уровня профессионализма и компетентности профессорско-преподавательского состава.

В зависимости от сферы специализации, могут быть установлены различные требования к учебно-методическим комплексам. Однако, считаем, что необходимо выделить критерии, которые должны быть учтены при составлении учебно-методического комплекса: интерактивность в образовательном процессе; индивидуальный подход в зависимости от исходного уровня знаний студента; обеспечение междисциплинарной связи; сопоставимость, уместность, взаимозависимость методов преподавания, обучения, оценки.

Исходя из вышесказанного, можно заметить, что качество учебно-методического комплекса оказывает влияние на конкурентоспособность образовательной программы.

Качество образовательного процесса является предпосылкой качества результата образовательного процесса.

Переходя ко второму составляющему, отметим, что **качество результата** – соответствие тем установленным требованиям, которые указывают на конечные результаты образовательного процесса, на востребованность и конкурентоспособность выпускника на рынке труда.

Таким образом, учебные заведения, прежде всего, должны совершенствовать качество образовательного процесса, от которого непосредственно зависит качество результата образовательного процесса.

Основой образовательного процесса является образовательная программа, которая должна удовлетворить потребности рынка труда.

Конкурентоспособные программы и их реализация при соответствующих системах внешнего и внутреннего обеспечения качества могут стать инструментом совершенствования качества высшего образования.

Фактором, позволяющим судить о конкурентоспособности программы, является именно качество образовательной программы.

На основе проведенного анализа укажем те возможные факторы, наличие которых могут повлиять на конкурентоспособность образовательной программы:

1. Определение конечных результатов образования на уровне программы.

Имеются различные рекомендации по их формулированию, в частности, результаты обучения должны быть конструктивно полезными и понятными для пользователей; необходимо гарантировать постоянное участие заинтересованных сторон (преподавателей, работодателей, выпускников) в ее разработке и процессе совершенствования; результаты обучения на программном уровне и уровне модуля должны быть прописаны в контексте национальных и международных требований; результаты обучения должны быть сформулированы таким образом, чтобы существовала возможность их оценивания с учетом установленных критериев; конечные результаты должны быть сопоставимы со стратегией Вуза.

2. Выбор соответствующих методов и критериев оценивания.
3. Разработка студентоцентрированных методов преподавания и обучения.
4. При разработке конкурентоспособных образовательных программ целесообразно учитывать модульный подход.

Болонский процесс внес новую жизнь в развитие модуляризации как инструмента проектирования *гибких образовательных программ*, наиболее адекватных студентоцентрированному обучению. Они получают все большее признание как неотъемлемый элемент конкурентоспособных образовательных программ.

Согласно данным различных исследований, две трети европейских вузов ввели модульные технологии. Под модулем понимаются «результаты

обучения, используемые в качестве формулировок, устанавливающих, что будет знать, понимать и/или в состоянии делать успешный учащийся»<sup>1</sup>.

Только те программы могут быть конкурентоспособные, которые позволяют проследить поэтапное развитие и достижение студента.

5. Конкурентоспособные образовательные программы должны быть нацелены на трудоустраиваемость обучающихся.

Таким образом, разработка конкурентоспособной образовательной программы должна стать первоочередной целью каждого высшего учебного заведения. Внедрение подобной учебной программы станет импульсом для ускоренного вхождения высшей школы в международное образовательное пространство.

## **ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ՀԻՍՔ**

### **ՍԻՐԱՆՈՒՇ ՊԵՏԻԿՅԱԼ**

*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Սույն հոդվածի նպատակն է դիտարկել կրթության որակի բարելավման խնդիրը և բացահայտել կրթության որակի բարձրացման վրա ազդող հնարավոր գործոնները:

Այս նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ խնդիրները՝ բացահայտվել են «կրթության որակի» սահմանումը և բովանդակությունը, որոշվել են կրթական ծրագրի նշանակությունն ու դերը կրթության որակի բարձրացման գործում. ընդգծել այն գործոնները, որոնք ազդում են կրթական ծրագրի մրցունակության վրա.

Աշխատանքում օգտագործվում են հետազոտության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ վերլուծություն, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա:

Հոդվածի հիմնական եզրակացությունն այն է, որ մրցունակ կրթական ծրագիրը կարևոր գործիք է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ կադրերի պատրաստման գործում: Նման կրթական ծրագիրը պետք է համապատասխանի բոլոր չափանիշներին, որոնք ընդգծված են աշխատանքում:

**Բանալի բառեր՝** *մրցունակ կրթական ծրագիր, համալսարան, կրթության որակ, ուսումնասիրողական ձեռնարկ, ուսանող:*

---

<sup>1</sup> Болонский процесс: результаты обучения и компетентностный подход / Под науч. ред. В.И. Байдена В. М.: Исследовательский центр проблем качества подготовки специалистов, 2009. 536 с.



# **A COMPETITIVE EDUCATIONAL PROGRAM IS THE BASIS FOR IMPROVING THE QUALITY OF EDUCATION**

**SIRANUSH PETIKYAN**

*PhD in Law, Associate Professor,  
Yerevan, Republic of Armenia*

*The purpose of this article is to consider the issue of improving the quality of education and identifying possible factors affecting the improvement of the quality of education.*

*To achieve this goal, the following tasks were set: to reveal the definition and content of "quality of education", to determine the significance and role of the educational program in improving the quality of education; highlight the factors that affect the competitiveness of the educational program.*

*The work uses such research methods as: analysis, synthesis, induction, deduction.*

*The main conclusion of the article is that a competitive educational program is an important tool in the preparation of qualified personnel that meet the requirements of the labor market. Such an educational program must meet all the criteria that are highlighted in the work.*

***Key words:** competitive educational program, university, education quality, educational and methodological complex, student.*

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ИСТОРИЯ, HISTORY



## ԳՅՈՒՄՐՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱԴՊՈԼԻ ԲԵՐԴԻ Ս. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԻ ՏԱԿ ԵՎ ՄԵՐՁԱԿԱՅՔՈՒՄ ՀԱՆԳՉՈՂ ՅԵՐՈՍՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ, ՌՈՒՄ ԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

### ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ

Գյումրու «Կոմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք.Գյումրի, Հայաստանի Հայաստան  
[inga.avagyan.76@mail.ru](mailto:inga.avagyan.76@mail.ru)

**Հոդվածի նպատակն է ներկայացնել Ալեքսանդրապոլի բերդի Ս. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու պատի հիմքերի տակ և խորանի արևելյան մասում թաղված ռուբ-թուրքական վերջին պատերազմի ժամանակ աչքի ընկած երեք հերոսների մասին կարևոր տեղեկություններն ըստ Ռուսաստանյան և Հայաստանի ազգային արխիվներում պահպանվող արխիվային տեղեկությունների, որոնք համարված են ռուսական աղբյուրներում պահպանվող տեղեկություններով:**

Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ նպատակները՝ ուսումնասիրել մինչհեղափոխական ռուսական աղբյուրներում և արխիվներում բազմաթիվ հիշատակումները Պատվո բլուրում հանգչող սպաների և նրանց կատարած հերոսությունների մասին, հավաքագրել ուսումնասիրության առարկան հանդիսացող երեք հերոսների մասին կարևոր փաստեր և տեղեկություններ, որոնք ցրված են մինչհեղափոխական աղբյուրներում և արխիվային փաստաթղթերում, գնահատել ազգությամբ հայ, ռուս և վրացի հերոսների ներդրումը Կովկասյան պատերազմներում:

Ուսումնասիրությունը կատարելիս օգտագործել ենք պատմահամեմատական, զուգորդման, վերլուծության, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները:

Հիմնական եզրահանգումն այն է, որ ուսումնասիրությունը կարելի է դնել գիտական ուսումնասիրությունների, հոդվածների, ավարտական աշխատանքների, բուհական դասընթացների հիմքում, նաև օգտագործել, որպես տուրիստական փաթեթներում կիրառվող կարևոր տեղեկատվություն, հասանելի դարձնելով Գյումրու տեսարժան վայրերի մասին տեղեկություն:

**Հիմնաբառեր՝** Ալեքսանդրապոլի ամրոց, Գյումրի, Ս. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցի, Իվան Մելիքով, Իյա Չելոկան, Ֆյոդոր Գուբսկի, Ռուսաստանյան արխիվներ, ռուսական աղբյուրներ:

## Ներածություն

Ս. Ալեքսանդրայի եկեղեցին հիմնադրվել է 1837 թ. ռուսական կայսր Նիկոլայ Պավլովիչի կողմից, ով ի պատիվ սուրբ Նահատակ Ալեքսանդրայի վերամկրտեց Գյումրին Ալեքսանդրապոլ և մասնակցեց Ալեքսանդրապոլ բերդի տարածքում կառուցվող եկեղեցու հիմնօրհներին: Մինչև օրս Ալեքսանդրապոլի բերդը և Ս. Ալեքսանդրայի եկեղեցին համարվում են Գյումրի քաղաքի<sup>1</sup> պատմամշակութային պահպանական միավորներից երկուսը<sup>2</sup>: Եկեղեցին դեռևս XIX դ. կարևոր նշանակություն է ունեցել քաղաքի ուղղափառ բնակչության կյանքում: Քաղաքն ունեցել է նաև զինվորական բարձրաստիճան սպաների համար նախատեսված գերեզմանոց, որտեղ մի քանի ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ընթացքում և Արևելյան Հայաստանի Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելուց հետո թաղվել են բարձրաստիճան զինվորականներ:

Նախկին հողավածներում մենք կատարել ենք Պատվո բլուրում հանգչող հերոսների մասին վիճակագրական վերլուծություն՝ ըստ Ռուսաստանյան պետական ռազմա-պատմական արխիվում պահպանվող ցուցակների<sup>3</sup>, որոնցում նաև որոշակի ճշտումներ ենք կատարել, սակայն Ալեքսանդրապոլի պատմության ուսումնասիրության համար նույնպես կարևոր է այս երեք հերոսների՝ Իվան Մելիքովի, Իյա Չելոկանևի, Ֆյոդոր Գուբսկու կերպարների վերհանումը, որոնց բախտ է վիճակվել որպես բացառություն հանգչել այնպիսի անառիկ և անձեռնմխելի վայրում, ինչպիսին է Ալեքսանդրապոլի ամրոցը և հանդիսանալ, որպես հայ, ռուս և վրացի ժողովուրդների հավերժ բարեկամության խորհրդանիշ:

## Բերդում հանգչող երեք հերոսները

Սակայն այս հիմնագույնի վրա առանձնանում են վերջին ռուս-թուրքական պատերազմին աչքի ընկած ևս երեք հերոսներ՝ Գեներալ Ֆյոդոր Գուբսկին, Իյա Չելոկանևը և Իվան Մելիքովը, ում բացառիկ հարգանքներով և պատվով Նորին կայսերական մեծությունն իշխան Միխայիլ Նիկոլաևիչի թույլտվությամբ<sup>4</sup> թաղել են ոչ թե Պատվո բլուրում, այլ Ալեքսանդրապոլի բերդում Սբ. Ալեքսանդրա եկեղեցու պատի տակ վերջին երկուսին և արևելյան պատից՝ բեմից ոչ հեռու գեներալ Գուբսկին: Այս եռյակի թաղումը կարծես խորհրդանշել է երեք ազգերի՝ հայերի, ռուսների և վրացիների հավերժ բարեկամությունը տարածաշրջանում: Այսօր Պատվո բլուրում են գտնվում Ի.Մելիքովի և Ի. Չելոկանևի արձանագրություններով մարմարե դամբարանասալերը, որոնք անհրաժեշտ է վերադարձնել իրենց նախնական տեղադրության վայր, որտեղ հանգրվանել են հերոսների մասունքները:

1 Գաբրիելյան Կ., Լենինական, Ե., 1984, էջ 11:

2 Պետ ցուցիչ 7. 7.1.1: Տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1270-Ն որոշման, ՀՀ պատմական և անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Ե., 2004:

3 Հարցումը ԿԱՏԱՐԵԼ Է «Հայրենիք» բարեգործական ֆոնդի պրեզիդենտ Ա.Լ.Պյացը 17.06.2006թ., [poxoronka.ru/news/1472-kholm-chesti-kladbishche-russko-turetskikh-vojn-kompanij-1828-1855-1877-1878gg](http://poxoronka.ru/news/1472-kholm-chesti-kladbishche-russko-turetskikh-vojn-kompanij-1828-1855-1877-1878gg) (24.03.2019)

4 Ավագյան Ի., Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես մշակութային պահպանական միավոր, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, 1-2 (22), Գյումրի, 2019, էջ 152:

## **Գեներալ իշխան Իյա Չաալի Չելոկանը (Չոլոկաշվիլի)**

Ռուս-թուրքական վերջին պատերազմի հերոս է: Ծնվել է 1823թ. հունվարի 14-ին: Վրացի է, ծագում է Թիֆլիսի Լահանգի իշխաններից<sup>1</sup>: Թիֆլիսի մասնավոր դպրոցներից մեկը ավարտելով՝ որպես ուրյադնիկ ծառայության է անցել վրացական միլիցիայում: Նույն թվականին երկու անգամ հունիսին և նոյեմբերին, մասնակցել է զալգանյան լեռնցի ցեղի դեմ կազմակերպված արշավանքներին, քաջության համար պարգևատրվել է «Ի նշան արժանիքի» ռազմական շքանշանով: 1844թ. իշխան Չելոկանը մասնակցել է գնդապետ Եվդոկիմովի, գեներալներ Պասսեկի, Լիդեռսի և իշխան Արդուբյանի ջոկատների՝ չեչենների և լեզգիների դեմ կազմակերպած գործողություններին: Աչքի ընկնելով ճակատամարտերում՝ 1845թ. ստացել է ենթասպայի կոչում: Նույն թվականին մասնակցել է գեներալ Լեբինցևի՝ չեչենների դեմ կազմակերպած արշավանքին և պարգևատրվել է «Արիության համար» մակագրությամբ Սբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով: 1847թ. Չելոկանը սեփական ցանկությամբ տեղափոխվում է Անդրկովկասյան հեծյալ մուսուլմանական գունդ: Այս գնդի շարքերում 1849թ. նա մասնակցեց ապստամբ հունգարացիների դեմ կազմակերպված արշավանքին, կռվում աչքի ընկնելու համար ստացել է պորուչիկի տիտղոս և պարգևատրվել Սբ. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով և ժապավենով: 1852թ. Չելոկանին շտաբս-կապիտանի կոչումով տեղափոխում են Նիժնեգորոդյան դրագունյան գունդ, այս նշանավոր գնդի շարքերում նա մասնակցում է թուրքերի դեմ Բաշքատրդլարի ճակատամարտին: 1854թ. գտնվել է լեզգիական ջոկատի կազմում, որը գործում էր Շամիլի խառնամբոխի դեմ, որ ներխուժել էր Թելավիի գավառ, զինվորական ծառայության համար պարգևատրվում է Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով և ժապավենով: 1858թ. նրան շտաբս-ռոտմիստրի կոչումով տեղափոխում են Նորին գերագանցության պահակազորի լեյբզվարդիական Կովկասյան հեծելավաշտ, հաջորդ տարի՝ օգոստոսի 6-ին նշանակվում է ֆլիգել-ադյուտանտ (կայսերական համհարզ): Պահակազորում իշխան Չելոկանը մնաց մինչև 1861թ., երբ փոխգնդապետի կոչումով տեղափոխվեց Հյուսիսային դրագունյան գունդ և գործունե մասնակցություն ունեցավ 1862թ. Արդագունյան ջոկատի արշավանքին: 1863թ. արդեն Դաղստանյան հեծյալ-անկանոն գնդի հրամանատարի կոչումով Չելոկանը մասնակցել է Չակաթայի օկրուգում բռնկված ընդվզման ճնշմանը, իսկ 1866թ.՝ Կատայսկո-Տաբասարանյան օկրուգի հուզումների ճնշմանը: Աչքի ընկնելու համար նրան շնորհվեց գնդապետի կոչում և Սբ. Աննայի 2-րդ աստիճանի շքանշան՝ կայսերական թագով: 1872թ. ապրիլի 6-ին նրան շնորհվում է գեներալ-մայորի կոչում, և նա ընդգրկվում է բանակային հեծելազոր ու ծառայության նշանակվում Կովկասյան բանակում, նույն տարվա օգոստոսի 30-ին՝ նույն բանակի հրամանատար Նորին գերագանցության շքախմբում:

Թուրքերի դեմ ռազմական գործողություններ սկսելուց հետո Չելոկանը Դաղստանյան հեծյալ-անկանոն բրիգադի հրամանատարն էր: Մայիսի 4-ին Կարսի ամրոցի արվարձանների հետախուզման ժամանակ, վեց հարյուր

1 Илья Заалович Чоколашвили, Поиск предков и родственников. История Грузии, история родов... Генеалогическая база данных Грузии, <https://nobility.pro/ru/statya/623-cholokashvili-ilya-zaalovich.html>

դադստանցու գլուխ անցած՝ մասնակցել է ամրոցից արտագրոհ կատարած թուրքական դրագունների և հետևակային ջոկատի հետ թեժ ընդհարմանը: Ղաղստանցիները փայլուն սուլտերագրոհով հաղթեցին թշնամուն, բայց նրանց հրամանատարը մահացու վիրավորվեց կողի մեջ արձակված գնդակից և մահացավ մայիսի 11-ին Կարսից 15 վերստ հեռավորության վրա, Չախմի մոտ գտնվող ճամբարում<sup>1</sup>:

### **Իվան Մելիքով**

Գումարտակի հրամանատար, փոխգնդապետ իշխան Իվան Մելիքովը նուևպես վերջին ռուս-թուրքական պատերազմի նշանավոր բարձրաստիճան սպաներից է<sup>2</sup>: 1877 թ. նոյեմբերի 6-ին փոխգնդապետ Մելիքովի և գեներալ Կոմարովի շարայուները Կարսի գրոհի գիշերը հայտնվեցին ծանր վիճակում: Փոխգնդապետ Մելիքովն արագ և թեթև գրավեց Սուվարիի ամրությունները: Թուրքերը, մտածելով, թե գործ ունեն սովորական գիշերային որսորդների հետ, նրան ընդառաջ են ուղարկում երկու հարյուր սաժեն ամրությունից հեռավորության վրա գտնվող առաջադիրքային խմբերը, որոնք արագ ետ են մղվում: Ամրությունն այնքան արագ գրոհվեց, որ ո՛չ Լազարևի, ո՛չ Լոռիս-Մելիքովի ռազմակայաններում ոչ-ոք հաղթանակն ազդարարող ազդանշանային հռթիռները չնկատեց: Իսկ փոխգնդապետ Ի. Մելիքովն ըստ իրեն հանձնարարված զորադասավորման անցավ Կարս-չայի ձախ ափը և ուղղվեց դեպի Չիմ ամրությունը, որտեղ պիտի միավորվեր գեներալ Կովալյովի շարայան հետ: Սակայն հասնելով ձախ ափը, շարայունը ենթարկվում է դաժան հրետակոծության թուրքերի կողմից: Ռուսների ուժերը սրընթաց հատնում էին: Որովայնից վիրավոր փոխգնդապետ Ի. Մելիքովը հրաժարվում է տեղափոխվել լազարեթ և շարունակում է ղեկավարել մարտը: Բայց վերջը մահացու էր, հրամանատարի մահից հետո շարայունը սկսում է ետ նահանջել<sup>3</sup>:

### **Ֆյոդոր Ալեքսանդրի Գուբսկի<sup>4</sup> (1823-1878թթ.)**

Գեներալ-մայոր, 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս է: Ծնվել է 1823թ., դաստիարակվել է Լ կադետական կորպուսում, որն ավարտել է որպես ենթասպա և ծառայության անցել № 19-ը հեծյալ-հրետանային մարտկոցում: 1861թ. հատուկ աչքի ընկնելու համար նրան տեղափոխում են լեյբ-գվարդիայի հեծյալ մարտկոց, 1864թ. նրան շնորհվում է գնդապետի կոչում, և նա նշանակվում է 5-րդ հեծյալ մարտկոցի, ապա Կուբանի

---

1 Генерал Чолокашвили (Челокаев) Илья Заалович /<http://nobility.pro/ru/statya/623-cholokashvili-ilya-zaalovich.html> (3.31.2019) **Старчевкий А.**, Памятник Восточной войны 1877-78 гг., СПб., 1878, 446 с.. Приказ артиллерии Кавказского военного округа 15 декабря 1878г., ном. 941. <https://www.priib.ru/item/436304>. 02 («ebook» ).

2 102-ая ордена Александра Невского российская военная база историческая справка [https://gyumri.mid.ru/ru/sootechestvenniki/102\\_aya\\_rossiyskaya\\_voennaya\\_baza/](https://gyumri.mid.ru/ru/sootechestvenniki/102_aya_rossiyskaya_voennaya_baza/)

3 Նույն տեղում:

4Губский, Федор Александрович, генерал-майор/<http://www.imha.ru/1144542407-gubskiy-fedor-aleksandrovich-general-mayor.html#.W21DNIQzblU> (12.03.2019). **Старчевкий А.**, Памятник Восточной войны 1877-78 гг., СПб., 1878, с. 74. Приказ артиллерии Кавказского военного округа 15 декабря 1878г., ном. 941. <https://www.priib.ru/item/436304>. 02 («ebook» ).

կազակական զորքի հեծյալ-հրետանային բրիգադի հրամանատար: 1871թ. նրան շնորհվում է գեներալ-մայորի կոչում, և նա դառնում է գվարդիական հեծյալ-հրետանային բրիգադի հրամանատար, 1873թ. նշանակվում է Կովկասյան ռազմական օկրուգի հրետանու հրամանատարի օգնական, իսկ 1877թ. նոյեմբերին՝ թուրքերի դեմ գործող կորպուսի հրետանու հրամանատար: Այս պաշտոնում Ֆ. Գուբսկին ծավալեց ոչ միայն եռանդուն վարչական գործունեություն, այլև փայլուն ռազմական: Արդահանը վերցնելու ժամանակ նրա ղեկավարած հրետանու «Փայլուն գործողությունների» համար նա պարգևատրվում է Սբ. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Ապա հունիսի 13-ին մասնակցել է Չիվլիսի ճակատամարտին, հոկտեմբերի 3-ին Ալաջայի բարձունքներին Մուխթար-փաշայի ջախջախմանը, որտեղ Ֆ. Գուբսկին, ղեկավարելով Ավլիարի հրետակոծումը, առաջիններից էր, որ բարձրացավ լեռը և սկսեց շուռ տալ գրավված թուրքական հրանոթները, լիցքավորել դրանք և կրակել նահանջող թուրքերի վրա: 1877թ. հոկտեմբերի 27-ին Ֆ. Գուբսկին պարգևատրվեց Սբ. Գեորգիի 3-րդ աստիճանի շքանշանով (ըստ ասպետական ցուցակների՝ №545), հոկտեմբերի 3-ին Ալաջայի բարձունքներում Մուխթար փաշայի զորքի ջախջախումից հետո՝ «Փոխհատուցում գերազանց քաջության և արիության համար» շքանշանով, որտեղ փայլուն գործել էր նրա անմիջական ղեկավարությամբ գործող հրետանին: Նա մահացել է տիֆից 1878թ. փետրվարի 14-ին Հասանկալայում, ռազմական գործողությունների ավարտից ընդամենը 5 օր առաջ<sup>1</sup>:

### **Եզրահանգումներ**

Այսպիսով Ալեքսանդրապոլի բերդում հանգչող երեք հերոսներն էլ կարևոր գործունեություն են ծավալել ռուս-թուրքական վերջին պատերազմի ժամանակ և այդ պատճառով է, որ նրանց աճյուններն ամփոփվել են Ալեքսանդրապոլի բերդի տարածքում Սբ. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու պատերի տակ և եկեղեցու արևելյան պատից ոչ հեռու: Բացառության կարգով այս երեք հերոսներին հուղարկավորել են Ալեքսանդրապոլի բերդի Սբ. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու մոտակայքում, այն դեպքում, երբ Ղրիմի պատերազմից հետո Պատվո բլուրն արդեն բարձրաստիճան հերոս-սպաների թաղումների վայր էր և կառուցված էր նաև Սբ. Հրեշտակապետ Միխայիլի մատուռը՝ <<Պլավան ժամը>>, որտեղ մինչև թաղումը դրվում էին ննջեցյալները: Հերոսներից Ֆյոդոր Գուբսկին թաղվել է Սբ. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու արևելյան աբսիդի դիմաց, գերեզմանի վրա զինակիցների և ընկերների կողմից դրվել է այն ժամանակվա համար շքեղ մի մահարձան, որն մինչ օրս պահպանվում է և համարվում հանրապետական նշանակության հուշարձան: Այսօր, երբ Հարավային

Կովկասում այսքան լարված է իրավիճակը, բոլորովին չէր խանգարի ևս մեկ անգամ անդրադառնալ այս և Պատվո բլուրում հանգչող մյուս հերոսներին, որոնք անձնվիրաբար հերոսացան, որպեսզի Կարսի մարզը վերջապես միանար Ռուսական կայսրության կազմում հայտված Արևելյան Հայաստանին և վերածվեցին տարածաշրջանում ապրող ազգությունների բարեկամության խորհրդանշի:

Վերը նշված կարևոր փաստարկները, նաև մեթոդաբանությունը և մեր կողմից հեղինական մեկ տասնյակից ավել Ալեքսանդրապոլ-Գյումրում նվիրված գիտական հոդվածներն առաջարկում ենք ներդնել այսօր կատարվող ուսումնասիրությունների և հետազոտական աշխատանքների հիմքում, զբոսաշրջային փաթեթներ կազմելիս և տուրիզմի բաժիններ ունեցող բուհերի զբոսարշջության հետ կապված դասընթացներում: Տևական աշխատանքի արդյունքում նմանատիպ բազմաթիվ ուսումնասիրությունների շնորհիվ կկրթվեն ուսանողներ, մագիստրոսներ, զբոսավարներ, որոնք զինված կլինեն լիարժեք տեղեկությունով և կխուսափեն տրամադրել մակերեսային, ոչ գիտական տեղեկություններ հասարակության լայն շրջանակներին, մասնավորապես, դպրոցականներին:



**Նկ. 1 Իյա Չաալի Չելոկան**



**Նկ. 2 Ֆեոդոր Ալեքսանդրի Գուբսկի**



**Նկ. 3 Մահարձանի ընդհանուր տեսքը**



**Նկ. 4 Մահարձանի վրայի գրություններից մեկը**



**Նկ. 5 Տեսքը մինչև վերականգնումը**



**Նկ. 6 Սբ. Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու գմբեթը մինչև վերականգնումը**





Նկ. 7 Սբ. Նահատակ  
Ալեքսանդրայի եկեղեցին մինչև  
վերականգնումը



Նկ. 8 Տեսարան ամրոցից  
(ընտանկարիչ՝ Դ. Նիկիտին)



Նկ. 9 Տեսարան ամրոցից  
(ընտանկարիչ՝ Դ. Նիկիտին)



Նկ. 10 Մահարձանի և եկեղեցու  
տեսքը վերականգնումից հետո

**ГЕРОИ, ПОХОРОНЕННЫЕ ПОД СТЕНОЙ И ВОЗЛЕ ЦЕРКВИ СВ.  
АЛЕКСАНДРЫ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОЙ КРЕПОСТИ ГЮМРИ, КАК  
СИМВОЛ БРАТСТВА АРМЯНСКОГО, РУССКОГО И ГРУЗИНСКОГО  
НАРОДОВ**

**ИНГА АВАГЯН**

*Историко-культурный музей-заповедник «Кумайри», директор,  
кандидат исторических наук, доцент,  
г. Гюмри, Республика Армения*

Цель статьи - представить важные сведения о трех выдающихся героях, прославившихся в последней русско-турецкой войне и захороненных под основанием стены и в восточной части абсиды церкви Св. Мученицы Александры в Александропольской крепости, по архивным материалам России и архивам Республики Армения, которые дополнены информацией из русских источников.

Для достижения заявленной цели поставлены следующие задачи: изучить многочисленные упоминания в дореволюционных российских источниках и архивах о покоящихся на Холме чести российскоофицерах и

их подвигах, собрать рассеянные в дореволюционных источниках и архивных материалах факты и сведения о трех героях, являющихся объектами нашего исследования, оценить вклад армянских, русских и грузинских героев в Кавказские войны.

В ходе исследования были использованы методы комбинирования и историко-сравнительного анализа, индуктивный и дедуктивный методы.

Основной вывод заключается в том, что проведенный анализ можно использовать в научных статьях, исследованиях и дипломных работах, в вузовских курсах, а также в туристических пакетах, делая более доступной важную информацию о достопримечательностях города Гюмри.

**Ключевые слова:** *крепость Александрополь, Гюмри, церковь Св. Мученицы Александры, Иван Меликов, Илья Челобаев, Федор Губский, Российские архивы, русские источники.*

## **HEROES BURIED UNDER THE WALL AND NEAR THE CHURCH OF ST. ALEXANDRA IN THE ALEXANDROPOL FORTRESS OF GYUMRI, AS A SYMBOL OF THE BROTHERHOOD OF THE ARMENIAN, RUSSIAN AND GEORGIAN PEOPLES**

**INGA AVAGYAN**

*Historical and Cultural Museum-Preserve "Kumayri" in Gyumri, Director,  
Doctor of Philosophy in History, Associate Professor,  
Gyumri, Republic of Armenia*

The purpose of the article is to present important information about three heroes who became famous in the last Russian-Turkish war, who are buried under the foundations of the wall and in the eastern part of the apse of the church - St. Martyr Alexandra in Alexandropol, according to archival materials from the Russian archives and the archives of the Republic of Armenia, which are supplemented by information from Russian sources.

To achieve the stated goal, the following tasks were set: to study the numerous references to the Russian officers who died on the Hill of Honor and their deeds and exploits in pre-revolutionary Russian sources and archives, to collect facts and information scattered in pre-revolutionary sources and archival materials about the three heroes who are the objects of our study, evaluate the contribution of the heroes: Armenian, Russian and Georgian by nationality, in the Caucasian war.

In the course of the study, the methods of combining and historical and comparative analysis, inductive and deductive methods were used.

The main conclusion of the study is that the information developed in the article can be used for scientific purposes - in scientific articles, research and theses, as well as in travel packages and university courses, making important information about the sights of the city of Gyumri more accessible.

**Keywords:** *fortress Alexandropol, Gyumri, Church of St. Martyr Alexandra, Ivan Melikov, Ilya Chelobaev, Fedor Gubsky, Russian archives, Russian sources.*

**ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ  
ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ՄՅԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հումանիտար առարկաների  
ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն  
[hamher@yandex.ru](mailto:hamher@yandex.ru)*

**Հողվածի նպատակն է հիմնավորել 2020 թ. աշնանային  
ռազմարշավի հետևանքով ավելի բարդացած իրավիճակում Արցախի  
Հանրապետության պաշտպանական-անվտանգային ոլորտի գիտական  
ուսումնասիրության հրատապությունը:**

**Առաջադրված նպատակին հասնելու համար խնդիր ենք դրել քննել  
ստեղծված ծանր դրությունից դուրս գալու ուղիների տեսական  
մշակումների ու գործիքակազմի ձևավորման վերաբերյալ գիտահետա-  
զոտական աշխատանքների հիման վրա կատարված առաջարկու-  
թյունները: Խնդիր ենք դրել նաև սահմանել պաշտպանական-անվտան-  
գային ոլորտում իրականացվելիք գիտատեսական, գիտակիրառական  
ռազմավարական հետազոտությունների, համապատասխան գիտա-  
հրատարակչական ու փորձագիտական գործունեության առաջնահեր-  
թությունները:**

**Հետազոտությունը կատարվել է պատմագենետիկական,  
ռետրոսպեկտիվ, պատմահամեմատական, պատմահամակարգա-յին  
մեթոդներով:**

**Հիմնական եզրահանգումն այն է, որ ստեղծված իրավիճակում  
պետք է վերանայվեն պետության պաշտպանության գործառույթները  
և դրանց իրագործման հիմնական մեթոդաբանությունը: Դիտարկելով  
պաշտպանության ոլորտի կառավարման ներկայիս կարգավորումները՝  
անհրաժեշտ է նաև ուրվանշել պաշտպանության ոլորտի կառավարման  
բարեփոխումների հնարավորությունները, հիմնական դերն ու  
նշանակությունը անվտանգային ու ռազմաքաղաքական  
հիմնախնդիրների լուծման գործընթացում:**

**Հիմնաբառեր՝** պաշտպանություն, անվտանգություն, ռազմական  
հաշվեկշիռ, մարտավարություն, զինված ուժեր, ռազմաքաղաքական  
իրադրություն, մարտունակություն, պետության պաշտպանունակություն,  
Արցախի Հանրապետություն, բարձր տեխնոլոգիաներ:

Արցախի Հանրապետության դեմ այսպես կոչված Ադրբեջանի,  
Թուրքիայի և միջազգային ահաբեկիչների համատեղ ագրեսիայի, ռազմական  
հանցագործությունների, հայ ազգաբնակչության ցեղասպանության և այլ  
միջոցներով նրանց վարած նվաճողական պատերազմի, հայկական  
ինքնիշխան տարածքների բռնազավթման պատճառներով հայտնվել ենք  
խոցելի անվտանգային-պաշտպանական միջավայրում: Ավելի քան հրատապ է

մեր հանրապետության պաշտպանունակության և անվտանգության մակարդակի պատեհաժամորեն բարձրացման, այդ կարևոր ոլորտներում ծառայած հիմնախնդիրների ու մարտահրավերների գնահատման և լուծման ուղիների ուրվագծումը, ինչը կոչված է նպաստելու համապատասխան գերատեսչությունների, կառույցների և աշխատանքային խմբերի նմանօրինակ մշակումներին:

Մենք կարծում ենք, որ մասնագիտական հետազոտությունների առաջանցիկ նպատակներից են թշնամու ազդեցիկ և զավթողական պատերազմի հետևանքով ստեղծված պաշտպանական-անվտանգային միջավայրը, պետության համալիր պաշտպանությանը և ազգային անվտանգությանը նետված մարտահրավերներն ու սպառնալիքները գնահատելը, ոլորտի առաջ ծառայած հիմնախնդիրները պարզաբանելու արդյունավետ ուղիներ առաջարկելու անհրաժեշտությունը հիմնավորելը և ըստ այդմ՝ համապատասխան գիտական խնդիր առաջադրելն ու համապատասխան լուծումներ գտնելը: Առաջադրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է քննարկել ինչպես բուն պատերազմի, այնպես էլ դրա հետևանքների հետ առնչվող համալիր հիմնահարցերը լուսաբանելու առաջնահերթություններն ու առանձնահատկությունները:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանն ակնհայտորեն ցածր է: Դա կարելի է բացատրել օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով: Օբյեկտիվ պատճառներից կարող ենք նշել ոլորտի հետ կապված բազմաթիվ հարցերի հանրայնացման աննպատակահարմարությունը, տեղեկույթի պակասը կամ անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության սահմանափակումները և այլն: Սուբյեկտիվ պատճառներից կարելի է նշել օբյեկտիվ գնահատականներին ու բացահայտումներին գործող իշխանությունների հակազդեցությունը, լրագրողական հետաքննություններին, հանրությանը հուզող հարցերին պատասխաններ գտնելու առանձին անհատների նախաձեռնություններին ակնհայտ խոչընդոտելը<sup>1</sup>, փաստերը և իրականությունը թաքցնելու ամփոփական մեղավորների կամ պատասխանատուների ջանադիր փորձերը և այլն:

Ներկայումս պատերազմից դեռ ուշքի չեկած գիտակից ու ոչ անտարբեր հասարակությունը փորձում է հասկանալ, թե ի՞նչ է տեղի ունեցել իրականում և ինչու՞ է մեր պետությունը հայտնվել այս անելանելի վիճակում: Վերջին մեկ տարվա ընթացքում եղել են բազմաթիվ հրապարակումներ, ելույթներ, հայտարարություններ, պարզաբանումներ, որոնք հաճախ կրել են քաղաքական բնույթ, երկուստեք իրար մեղադրելու ենթատեքստ: Հրապարակի վրա առկա նյութը հնարավորությունն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել 2020 թ. աշնանը մեզ պատուհասած աղետի իրական պատճառների, սխալների ու թերությունների մասին: Կարծում ենք, որ հենց այս ուղղությամբ պետք է ընթանան ուսումնասիրությունները և վերլուծությունները, այլ ոչ թե իրար մեղադրելու, մեղավորներ կարգելու և քավության նոխազ գտնելու անհեռանկարային ճանապարհով:

---

<sup>1</sup> **Վանյան Դ.**, Վերլուծություն(Արցախյան երկրորդ պատերազմ), 1-ին մաս, [https://david-vanyan.livejournal.com/482112.html?utm\\_source=3userpost](https://david-vanyan.livejournal.com/482112.html?utm_source=3userpost) (ներբեռնումը՝ 18.09.2021 թ.):

Արագագիր լրագրող Թաթուլ Յակոբյանն արդեն հրատարակել է 2020 թ. ադրբեջանա-թուրքական ագրեսիայի վերաբերյալ իր օրագրային գրառումները<sup>1</sup>:

2020 թ. աշնանային ռազմարշավին անդրադարձել են նաև տողերիս հեղինակը<sup>2</sup>, Մ. Ա. Պետրոսյանը<sup>3</sup> և ուրիշներ<sup>4</sup>:

Հայրենական և արտասահմանյան լրատվամիջոցների հաղորդագրությունների ամփոփմամբ պատերազմի վերաբերյալ ծավալուն հոդված է հրապարակել համացանցային «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանը<sup>5</sup>:

2020 թ. ագրեսիայի ընթացքում և զինադադարի մասին եռակողմ հայտարարությունից հետո ադրբեջանա-թուրքական զավթիչների ռազմական հանցագործությունների, հայ պատմամշակութային օջախների թիրախավորման ու ոչնչացման բազմաթիվ փաստեր ներկայացված են ինչպես ՀՀ և Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանների համապատասխան զեկույցներում, այնպես էլ այդ թեմայով մի շարք ուսումնասիրողների հրապարակումներում<sup>6</sup>:

Ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ռազմաքաղաքական ու այլ տեսանկյուններին անդրադարձել են նաև այլ հեղինակներ<sup>7</sup>:

Պատերազմի մասին ամենատարբեր հրապարակումներից կարելի է քաղել մեր անհաջողությունների, սխալների ու հանցավոր անգործության պատճառները, որպեսզի հետագայում և ոչ մի պարագայում թույլ չտանք դրանց կրկնությունը:

---

<sup>1</sup> **Յակոբյան Թ.**, Մահվան հովիտ: 44-օրյա աղետ 27 սեպտեմբեր-10 նոյեմբեր, 2020: Լրագրողի օրագրից, Երևան, «Լուսակն», 2021, **սույնի**, Կանաչ ու սև: Արցախյան օրագիր: 2020-ի հայկական աղետը, Չորրորդ հրատարակություն, Երևան, [Լուսակն], 2021:

<sup>2</sup> **Հարությունյան Մ.**, Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, Շուշի-Երևան, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2021, էջ 33, 64-65, 87, 144, 149, 168, 246-247, **սույնի**, Նոր սերնդի պատերազմների վարման մի քանի առանձնահատկությունների մասին (2020 թ. աշնանային պատերազմի լույսի ներքո), Արցախի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Պրակ 2. հասարակական գիտություններ, Ստեփանակերտ, 2021, էջ 213-224:

<sup>3</sup> **Պետրոսյան Մ.**, Պատերազմի սերունդներ. պատերազմի զարգացումը արդի փուլում, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդես), 2021, № 1, էջ 16:

<sup>4</sup> **Սահրադյան Մ.**, Տո՛ւր ձեռքդ, ընկեր [Արցախյան երկրորդ պատերազմում անմահացած Մաքսիմ Հովհաննիսյանի հիշատակին], Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2021, **Մնացականյան Վ.**, Պատմական Առաջածոր ու Նորից պատերազմ, Երևան, «Լուսաբաց», 2021 ևն:

<sup>5</sup> [https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5-%D5%A1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6\\_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4\\_\(2020\)\\_\(սերբեռնումը`\\_18.09.2021\)](https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5-%D5%A1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4_(2020)_(սերբեռնումը`_18.09.2021))

<sup>6</sup> **Давидян Я., Аванесов О., Бабаханян В.**, Целенаправленное уничтожение армянского культурного наследия в ходе третьей азербайджано-арцахской войны как военное преступление, Международная научная конференция. Новообразованные (непризнанные) государства после войны: задачи и пути их решений, Степанакерт, «Дизак плюс», 2021, с. 24-31.

<sup>7</sup> **Թոնսյան Տ.**, 2020թ. պատերազմ. նախադրյալները, հետեվանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, <https://www.luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020%.pdf> (սերբեռնումը` 19.09.2021 թ.), Буря на Кавказе, под редакцией Р. Н. Пухова, Москва, Центр анализа стратегий и технологий, 2021.

Արցախի Հանրապետության (և ոչ միայն) պաշտպանական-անվտանգային ներկա իրավիճակի գնահատումը, ապա նաև դրա առաջ ծառայած հիմնախնդիրների բնութագրումը և լուծումների առաջադրումը անհրաժեշտ է քննարկել պատերազմական լայնածավալ ու ակտիվ փուլից հետո մեր հանրապետությանը նետված մարտահրավերները՝ համադրելով պետական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և այլ ոլորտների ընթացիկ դրությունը:

Հատկանշելի է, որ զինադադարի մասին եռակողմ հայտարարությունից հետո Արցախի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի, առանձին ոլորտների և հիմնախնդիրների վերաբերյալ<sup>1</sup> զեկուլցումներ են կարդացվել 2021 թ. հունիսի 12-ին Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովում, որի նյութերը լույս են տեսել առանձին ժողովածուում: Այնտեղ խնդրո առարկա թեմային առնչվում են մի շարք հրապարակումներ<sup>2</sup>:

**Մեր դիտարկումներով պատմագրությունն ու ռազմագիտությունը խնդիր ունեն համակողմանիորեն լուսաբանելու հատկապես այնպիսի հիմնահարցեր, որոնց չիմացությունը կամ անտեսումը ազդել են պատերազմի ելքի վրա:** Այդպիսի հիմնահարցերի արծարծումը, ըստ երևույթին, կբացահայտի սխալների ու անգործության պատճառահետևանքային կապը և կստեղծի անհրաժեշտ հետևություններ կատարելու համար նախադրյալներ:

Թեև ռազմական ոլորտում բարձր տեխնոլոգիաների ներդրման վերաբերյալ նախկինում բազմիցս բարձրաձայնվել է, սակայն թեման շարունակում է հրատապ մնալ ինչպես ժամանակին կյանքի չկոչելու պատճառով մեզ պատուհասած աղետի, այնպես էլ մեր պետականությանը նետված մարտահրավերներին դիմակայելու արդյունավետության բարձրացման հրամայականի հաշվառմամբ: 2020 թ. ռազմարշավի մարտավարության վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ

<sup>1</sup> Միջազգային գիտաժողով՝ Նորակազմ (չճանաչված) պետությունները պատերազմից հետո. խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Ստեփանակերտ, «Դիզակ պյուն» 2021, 204 էջ:

<sup>2</sup> **Аванесов О.**, Развитие и острые проблемы, возникшие в регионе в послевоенный период, с. 14-18, **Հարությունյան Լ., Հարությունյան Բ., Համբարձումյան Բ.**, ԱՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները, էջ 32-39, **Փաշայան Հ.**, Ղարաբաղյան հակամարտություն. անվտանգության, տարածքների և կարգավիճակի խնդիրները հետպատերազմական շրջանում, էջ 105-110, **Մանգասարյան Ռ., Բեգլարյան Լ.**, Ներկա տնտեսական պարադոքսը, որպես պատերազմի հետևանք, էջ 117-125, **Հայրիյան Եվ., տգ.թ., Աթանեսյան Ա.**, Փնաճային դրսևորումները մինչպատերազմյան և հետպատերազմյան Արցախում, էջ 126-130, **Շամխալովա Է., Ավանեսյան Ս.**, ԱՀ բանկային համակարգի վերլուծությունը և հետպատերազմյա ճգնաժամի հաղթահարման հնարավոր ուղիները, էջ 139-143, **Սարգսյան Գ., Ավագյան Լ.**, ԱՀ Էներգետիկ համակարգի անվտանգության հնարավոր ուղիների զարգացումը, էջ 144-147, **Ավշադյան Ս.**, Նախադպրոցական տարիքի երեխաների պատերազմական և հետպատերազմյան հոգեվիճակը, էջ 148-152, **Gevorgyan G.**, The figurative language means in the articles of the British and American mass media on the Nagorno Karabakh war of 2020, p. 157-160, **Իշխանյան Գ.**, Սթրեսի ենթարկվածության մակարդակը տեղահանված և չտեղահանված անձանց մոտ, էջ 164-168:

նորագույն ու զարգացած բարձր տեխնոլոգիաների կիրառումն ավելի ու ավելի մեծ ազդեցություն է ունենում մարտական գործողությունների վրա: Ակնհայտ էր, որ թշնամու ագրեսիվ գործողությունների ժամանակ կիրառվում էին բարձր ճշգրտության զենքեր՝ տնտեսական և ռազմական ենթակառուցվածքը կազմող լայն սպեկտրի նշանակետերի չափավորված և ընտրողական խոցման նպատակով:

Տեսականորեն հիմնավորելու և հանրահռչակելու կարիք ունի այն ճշմարտությունը, որ պատերազմական իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիների և պետության գոյատևման ու բնականոն կենսագործունեության ապահովումը պետության կարևորագույն խնդիրներից են: Երիցս անհրաժեշտ է փաստել, որ պատերազմի ելքը որոշող քաղաքական, ռազմական, տնտեսական, հոգեբանական գործոններից բացի, անչափ կարևոր է պատերազմական և այլ արտակարգ իրավիճակներին երկրի քաղաքացիական կառավարման մարմինների պատրաստվածության և բնակչության կենսագործունեության ապահովման աստիճանը:

Հակառակ Պաշտպանության բանակը ջախջախելու թշնամի երկրի քարոզչության վաղաժամ հրճվանքին և բանակից դեպի ջոկատներ (աշխարհագոր) հետընթացի ջատագովների՝ հետևողականորեն պետք է գեներացնել այն միտքը, որ Արցախի Հանրապետության զինված ուժերը պետական անվտանգության ապահովման հիմնական գործոնն են, որոնք կոչված են նաև մասնակցելու պատերազմի կանխմանը, հանրապետության ինքնիշխանության պաշտպանությանը, ինչպես նաև խաղաղության ու կայունության պահպանմանը: Հասկանալի է, որ պատերազմի կանխման խնդիրը լուծելի է միջպետական ու կոլեկտիվ անվտանգության համագործակցության և միջազգային համապատասխան կազմակերպությունների գործունեության շրջանակներում: Այդուհանդերձ չպետք է ուշադրությունից վրիպի այն արսիհոմատիկ ճշմարտությունը, որ եթե այդ խնդիրն, այնուամենայնիվ, չի հաջողվում լուծել, ապա զինված ուժերը միշտ պետք է պատրաստ լինեն հետ մղելու հակառակորդի նախահարձակումը: Հատկանշելի է, որ ճգնաժամի կամ պատերազմի ընթացքում առաջացող տարբեր խնդիրների լուծմանը զինված ուժերը պատրաստվում են՝ համագործակցելով համընդհանուր պաշտպանության համակարգի մեջ մտնող այլ կառույցների հետ:

Լուսաբանման ու գիտական քննարկումների նյութ պետք են դառնան Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները ստեղծված բարդ իրավիճակում: Ակներևաբար ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությունը՝ պայմանավորված Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման ձգձգման հետ, սահմանափակ է: Անհրաժեշտ է իրավաքաղաքական փաստարկումների ամրակում հիմքեր ստեղծել այն գաղափարի կենսագործման համար, որ ՀՀ-ի հետ «Ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության», «Ռազմական կադրերի պատրաստման ոլորտում համագործակցության», «Հակաօդային պաշտպանության կազմակերպման ասպարեզում գործողությունների համակարգման» և պաշտպանական-անվտանգային ու ռազմատեխնիկական այլազան միջպետական

համաձայնությունները կարող են դառնալ նման համագործակցության միջազգային-իրավական հիմքերը:

Պետական անվտանգության համար առանցքային նշանակություն ունեն ռազմական շինարարության տեսական մի շարք, այդ թվում՝ պլանավորման հիմնահարցերը: Ավելի քան հրատապ է ՉՈՒ-ի կազմի և կազմակերպվածքի որոշման, զորքերի տեխնիկական զինման, զորակոչային ռեզերվների պատրաստման և կուտակման, համալրման կարգի սահմանման, զինծառայության և զինվորական ու ռազմագիտական կադրերի պատրաստման կազմակերպման, զորքերի բնակավորման, կառավարման լավագույն համակարգերի ստեղծման, բոլոր զորատեսակների ապահովման կազմակերպման, ՉՈՒ-ի մարտական և զորակոչային պատրաստության խնդիրների նորովի լուծման ուղիների վերհանումը:

Ռազմական անվտանգությունն ապահովելը հնարավոր է հատկապես մարտունակ, արտաքին սպառնալիքներին դիմագրավելուն, նախահարձակումը հետ մղելուն մշտապես պատրաստ զինված ուժերի միջոցով: Գաղտնիք չէ, որ Արցախի Հանրապետության պաշտպանության բնագավառի առաջնայնություններն ու նպատակները չեն կարող էականորեն տարբերվել Հայաստանի Հանրապետությունից, քանի որ կազմում են մեկ ամբողջություն և պետք է ներկայացվեն երկրի անվտանգության ապահովման համակարգի, նրա կենսագործունեության և զարգացման համար հիմնարար նշանակություն ունեցող փաստաթղթերի՝ ազգային անվտանգության ռազմավարության ու ռազմական դոկտրինի միջոցով:

Պրոֆիլային գիտական հաստատությունների և անհատ-ուսումնասիրողների նպատակներից առաջանցիկ նշանակություն է ձեռք բերել Արցախի Հանրապետության անվտանգային-պաշտպանական համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացման ուղիների վերհանումը՝ գիտահետազոտական գործունեության արդյունքների հիման վրա:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրելի են հետևյալ խնդիրները՝

1) իրականացնել տարածաշրջանային անվտանգության դինամիկայի վերաբերյալ ռազմավարական պիլոտային հետազոտություններ, ըստ այդմ ներկայացնել համապատասխան առաջարկներ Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությանը:

2) դիտարկել ռազմավարական մակարդակում տեղեկատվական անվտանգության ապահովման, ինչպես նաև կիբեռանվտանգության ռեսուրսների կառավարման ուղղությամբ հետազոտությունների իրականացման հնարավորությունները,

3) իրագեկել ռազմաքաղաքական ղեկավար կազմին, պաշտպանական-անվտանգային ոլորտի գերատեսչությունների միջին ու բարձր օղակի պաշտոնյաներին և ավագ ու բարձրագույն սպայական կազմին համաշխարհային գիտական մշակումների, տվյալ ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների և տեղայնացման հնարավորությունների մասին,

4) կուտակել պաշտպանական-անվտանգային ոլորտում ռազմավարական մակարդակի ռազմական գիտելիքներ և ըստ



անհրաժեշտության ներկայացնել գաղտնի զեկույցներ ու առաջարկություններ այդ ոլորտի պատասխանատուներին ու ներկայացուցիչներին:

5) համակողմանի ուսումնասիրել և հնարավորինս տեղայնացնել պաշտպանական-անվտանգային և ռազմական ոլորտի հայրենական ու արտասահմանյան առաջատար հաստատությունների փորձը,

6) առաջարկել ազգային անվտանգության և ռազմական ռազմավարական հայեցակարգերից բխող գերատեսչական ռազմավարությունների վերանայման և փորձաքննության տարբերակներ,

7) նպաստել մեր տարածաշրջանի ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրությանը, ինչպես նաև մեր պետությանը նետված մարտահրավերների և ԱՀ միջազգային անվտանգային միջավայրի վրա հնարավոր սպառնալիքների համալիր գնահատմամբ մարտական գործողությունների վարման սցենարների մշակմանը, որոնց հիման վրա հավանական են գորքերի վերախմբավորումներ, կարող են հստակեցվել ՉՈՒ-ի կազմակերպվածքին ու տեխնիկական զինվածությանը ներկայացվող պահանջները:

8) համագործակցել պաշտպանական-անվտանգային և ռազմական ոլորտի գիտական կադրերի հետ՝ խորհրդատվությունների ու փորձաքննական կամ փորձագիտական վերլուծությունների հարթություններում,

9) գիտահետազոտական գործունեության արգասիքները ներկայացնել մեր հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությանը գաղտնի գրությունների միջոցով, իսկ բաց մասով հրատարակել մասնագիտական հանդեսներում և (կամ) առանձին մենագրությունում:

Արցախում ռազմական գիտության, այդ թվում՝ ռազմարվեստի ու ռազմական պատմագիտության առաջընթացը հնարավոր է համաշխարհային ռազմական գիտության, այդ թվում՝ ռազմարվեստի զարգացման ու ռազմապատմական գիտության նվաճումներին հաղորդակից լինելու, առավել ևս՝ սեփական ռազմապաշտպանական հնարավորությունների ընդլայնման և ռազմական անվտանգության համակարգի կատարելագործման հույժ կարևոր գործում տեսական գիտելիքները կիրառելու, ինչպես նաև բազմաթիվ այլ միջոցներով:

Հանրային գիտակցության վրա արագ տեմպերով զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների ունեցած ակնհայտ ազդեցությամբ հանդերձ, կարծում ենք, որ մարդկային ու տարածքային սահմանափակ ռեսուրսներով այնպիսի երկրների համար, ինչպիսիք ՀՀ-ն ու ԱՀ-ն են, ոչ բարեկամ հարևանների կամ հավանական այլ հակառակորդների հետ նախ ռազմապաշտպանական-անվտանգային ներուժի ու հնարավորությունների հաշվեկշռի, ապա նաև՝ նրանց նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու համար անհրաժեշտ են գիտատեսական մշակումներ հզոր տնտեսության, գիտելիքատար հիմքերի վրա կառուցված կրթության, գիտատեխնիկական առաջընթաց ապահովելու արդյունավետ ուղիներ գտնելու նպատակով<sup>1</sup>: Միաժամանակ դրանց տեսական հիմքերի վրա

<sup>1</sup> Որքան բարձր է պետության տնտեսության զարգացման մակարդակը և ինչքան շատ է նրա բնակչությունը, այնքան մեծ են ռազմական շինարարության հարցերն ապահովելու, ժամանակակից հզոր, որակյալ ու մարտունակ բանակ՝ իր անհրաժեշտ սպառազինություններով հանդերձ, ունենալու հնարավորությունները: Յուրաքանչյուր

անհետաձգելի պաշտպանական բարեփոխումները նպատակաուղղված պետք է լինեն հակառակորդի զինված ուժերի համեմատ Արցախի զինված ուժերի մարտունակության ու մարտավարության գերազանցության ապահովմանը, զինված ուժերում Արցախի պետական անվտանգության առանձնահատկություններին լիարժեքորեն համապատասխանող չափանիշների ստեղծմանը ու ներմուծմանը՝ առաջնորդվելու և կենսագործելու հստակ գործիքակազմով ու ժամանակացույցով:

Նշված ուղղություններով հետազոտությունների արդյունավետության գրավական կարող են լինել ոլորտի հիմնախնդիրներին քաջատեղյակ ուսումնասիրողների ու փորձագետների համակարգված աշխատանքը, հեղինակավոր գիտնականների ու հանրահայտ գիտահետազոտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիա, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ/ Ցանցային հետազոտական ինստիտուտ և այլն) հետ համագործակցությունը:

Միջազգային գիտակրթական տարածք ինտեգրման հնարավորությունները սահմանափակվում են թեմայի առանձնահատկություններով, որն ունենալով յուրատեսակ մասնագիտական ուղղվածություն և ուրույն շրջանակներում հանրայնացման ոչ ենթակա կիրառելիություն՝ ըստ էության չի տեղավորվում միջազգային կամ օտարերկրյա պետությունների կազմակերպությունների կողմից դրամաշնորհների կամ այլ ֆինանսական միջոցների տրամադրման հարթակներում: Այդուհանդերձ, հնարավորինս կարելի է կազմակերպել կամ մասնակցություն ապահովել միջազգային գիտաժողովների, սեմինարների կամ այլ գիտական միջոցառումների և այլն:

## **О ПРИОРИТЕТАХ ОСВЕЩЕНИЯ ВОПРОСОВ ОБОРОНЫ И БЕЗОПАСНОСТИ АРЦАХА**

### **МГЕР АРУТЮНЯН**

*заведующий кафедрой гуманитарных наук Шушинского технологического университета, кандидат исторических наук, доцент,  
г. Степанакерт, Республика Арцах*

Цель статьи - обосновать актуальность научного исследования в сфере оборонной безопасности Республики Арцах с точки зрения поиска путей противодействия более сложным вызовам, обусловленным осенней кампанией 2020 года.

Для достижения этой цели перед нами стояла задача рассмотреть предложения, сделанные на основе теоретических проработок по формированию инструментария путей выхода из сложившейся сложной ситуации и Мы также поставили задачу определить приоритеты проведения научно-теоретических, научно-прикладных стратегических исследований в

---

պետության տնտեսական հնարավորությունները որոշում են նրա ռազմական հզորությունը, ինչի միջոցով էլ արտահատվում են պատերազմ վարելու նրա ձևերն ու եղանակները:

сфере оборонной безопасности, соответствующей научно-издательской и экспертной деятельности.

Исследование проводилось историко-генетическим, ретроспективным, историко-сравнительным, историко-системным методами.

Основной вывод заключается в том, что в сложившейся ситуации должны быть пересмотрены оборонные функции государства и основная методология их реализации.

Учитывая действующий регламент управления в сфере обороны, необходимо также обозначить возможности реформы управления обороной, основную роль и значение в процессе решения проблем безопасности и военно-политических вопросов.

**Ключевые слова:** *оборона, безопасность, военный баланс, тактика, вооруженные силы, военно-политическая обстановка, боеспособность, обороноспособность государства, Республика Арцах, высокие технологии.*

## **ON THE PRIORITIES OF COVERING THE DEFENSE AND SECURITY ISSUES OF ARTSAKH**

**MHER HARUTYUNYAN**

*Associate Professor of the Faculty of Humanities, Shushi Technological University,  
Candidate of Historical Sciences,  
Stepanakert, Republic of Artsakh*

The purpose of the article is to substantiate the relevance of the scientific study of the defense and security sphere of the Republic of Artsakh in terms of finding ways to counter the more complex challenges posed by the autumn 2020 campaign.

To achieve this goal, we were faced with the task of considering proposals made on the basis of theoretical studies of ways out of the current difficult situation and the development of tools. We also set the task to determine the priorities for conducting scientific-theoretical, scientific-applied strategic research in the defense and security sphere, relevant scientific publishing, and expert activities.

The study was conducted by historical-genetic, retrospective, historical-comparative, and historical-system methods.

The main conclusion is that in the current situation, the defense functions of the state and the basic methodology for their implementation should be revised.

Taking into account the current regulation of defense management, it is necessary to identify the possibilities for defense management reforms, the main role and importance in the process of resolving security issues and military-political issues.

**Keywords:** *defense, security, military balance, tactics, armed forces, military-political situation, combat readiness, state defense capability, Republic of Artsakh, high technologies.*



**ԺՅՈՒՆ ՌԵՆԱՐԸ ԵՎ ՕՍԿԱՐ ՌԻԱՅԼԴԸ՝ ՎԱՅԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ  
ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ**

**ՎԱՐԴՈՒՅԻ ԴԱՎԹՅԱՆ**

Երևանի Հյուսիսային համալսարան, դասախոս,  
անասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[varduhidavtyan@mail.ru](mailto:varduhidavtyan@mail.ru)

**Հոդվածի նպատակն է բացահայտել Վ. Թեքեյանին հոգեհարազատ գրողների ոճը, գրողական երևակայությունը, թեմատիկ նախասիրությունները:**

Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները՝ ցույց տալ Վ. Թեքեյանի վերաբերմունքը Օսկար Ուայլդի և Ժյուլ Ռենարի նկատմամբ: Գրողական գնահատականների և երկերի հայերեն թարգմանությունների արձանագրմամբ հասկանալ Վ. Թեքեյանի գրողական համակրանքի չափը նրանց նկատմամբ:

Վ. Թեքեյանը «Ժիլ Բընար» հոդվածում խոստովանում է, որ ֆրանսիացի գրողի մահն իրեն նույնքան ցավ պատճառեց, որքան բանաստեղծ Պոլ Վերլենի և նկարիչ Շարլ Կերենի մահերը: Նա բարձր է գնահատում Ժ. Ռենարի արվեստը, հատկապես՝ «Տան հաց» պիեսը, որի անզուգական թարգմանության հեղինակն է Վ. Թեքեյանը:

Վ. Թեքեյանը «Օսկար Ուայլդ» հոդվածում խոսելով գրականության մեծ իշխանի գահավիժման, անկումի, Ռիդինգի բանտում անցկացրած ծանր տարիների մասին՝ հիանում է նրա արվեստի հզորությամբ: Նա դեկադենտական գրականության խոշոր ներկայացուցիչն էր՝ դրան հատուկ բնորոշ գծերով՝ հասարակությունից փախչելու, ինքն իր մեջ մնալու, վեր բարձրանալու ցանկությամբ:

Հոդվածում համեմատական վերլուծության միջոցով փորձել ենք ներկայացնել երեք գրողների ստեղծագործական, ոճային, թեմատիկ ընդհանրությունները:

Հիմնական եզրակացությունն այն է, որ Վ. Թեքեյանի այս երկու հոդվածները բացահայտում են թեքեյանական ոճի, գրական ճաշակի, թեմայի նախասիրության հետաքրքիր հանգրվաններ, որոնք մեզանում քիչ են բացահայտված:

**Հիմնաբառեր.**՝ «Ոստան» պարբերագիր, Վահան Թեքեյան, Ժյուլ Ռենար, Օսկար Ուայլդ, սիմվոլիստներ, պառնասականներ, «Տան հաց» պիես, Ռիդինգի բանտ:

Վահան Թեքեյանը 1911թ. «Ոստան» պարբերագրի երկու համարներում հրատարակեց հոդվածներ՝ համաշխարհային գրականության երկու խոշոր հեղինակների՝ Ժյուլ Ռենարի և Օսկար Ուայլդի մասին: Թեքեյանական հետաքրքրությունները պատահական չէին: Անշուշտ, առաջինը գրողական նախասիրության հարցն էր: Վ. Թեքեյանն իրեն հարազատ էր համարում նրանց ստեղծագործական ոճը, գրողական երևակայությունը, թեմատիկ նախասիրությունները: Վ. Թեքեյանին ընդհանրապես հոգեհարազատ էին սիմվոլիզմի գեղագիտական դրույթները, նա արդյունավետորեն է օգտվել սիմվոլիստական համակարգի բազմապիստությունից: Սիմվոլիզմի հիմնարար դրույթների ընդունումը սփյուռքահայ գրողի համար սոսկ ազդեցություն կամ փոխառության եղանակ չի եղել: Այն Վ. Թեքեյանի և ֆրանսիական գեղագիտական նորագույն մտածողության բացահայտման լավագույն փորձն էր:

Վ. Թեքեյանի և եվրոպական գրականության կապերը խորագնա են և ամուր: Սփյուռքահայ խորհրդապաշտ մեծ բանաստեղծն ու հրապարակագիրը ոչ միայն մրցորդն էր համաշխարհային սիմվոլիստ շատ հեղինակների, այլև նրանցից ստացած ներշնչումը միախառնելով իր զգայուն քնարի ինքնատիպ ելևէջներին՝ այդպես էր փորձում արձագանքել հայ զգայապաշտ ընթերցողի հույզերին և ապրումներին:

Վ. Թեքեյանի հետաքրքրությունը ֆրանսիական սիմվոլիստական գրականության նկատմամբ ներհուն է. Պոլ Վեռլեն, Ստեֆան Մալարմե, Շառլ Բոդլեր, Արթյուր Ռեմբո, Ժյուլ Ռենար. նրանք էին ոգևորում հայ գրականության մեջ քերթողական քայլեր անող տաղանդավոր բանաստեղծին՝ ուղղորդելով նրան դեպի հանճարեղության բարձունքները: Վ. Թեքեյանի՝ սիմվոլիստական գեղագիտության ինքնատիպ յուրացմանը նպաստել է թարգմանչական փորձառությունը: Մասնավորապես Ժյուլ Ռենարից կատարած թարգմանությունների նկատմամբ Վ. Թեքեյանը դրսևորել է ընկալման հոգեհարազատություն՝ հավատարիմ մնալով բնագրի իմաստային-լեզվաոճային կողմերին, իսկ բանաստեղծությունների թարգմանության ժամանակ կարևորել է գեղեցկագիտական-երաժշտական հնչերանգները: Ժ. Ռենարից կատարված թարգմանությունները միաժամանակ դարձան Վ. Թեքեյանի խոհական, զգայական աշխարհների հետաքրքիր մեկնություններ: Սփյուռքահայ գրողի համար ընտանի էր ռենարյան զգայությունը, հարազատ իր գեղագիտական ընկալումներին, այդ էր պատճառը, որ Վ. Թեքեյանը շահագրգռորեն ցանկանում է հայ ընթերցողի սեփականությունը դարձնել Ժ. Ռենարի ստեղծագործությունները՝ դրանով միաժամանակ նպաստելով հայ գրականության զարգացման ընթացքին:

Նույնքան կարևոր եղավ նաև անձնային համակրանքը, որ տածում էր Վ. Թեքեյանը ֆրանսիացի գրողի նկատմամբ:

«Ժիլ Բընար» հոդվածում նա խոստովանում է, որ երբ 1910թ. մայիսի 22-ին մահացավ Ժյուլ Ռենարը, նրա մահը նույնքան ցավ պատճառեց իրեն, որքան բանաստեղծ Պոլ Վեռլենի և նկարիչ Շառլ Կերենի մահերը: Ցավոք, Ժ. Ռենարը 20-րդ դարի սկզբին ֆրանսիացիների մեջ չունեի այն ճանաչումը, ինչ վայել պիտի լիներ իրեն, թեև նրա կազմած Հատընտիրները՝ նորագույն և լավագույն, նրան արդեն դարձրել էին ժողովրդական:

1911թ. «Ոստան»-ի երկրորդ համարում Վ. Թեքեյանը տպագրեց «Ժիվ Ռընար» հոդվածը, ուր նրա հանճարը համարեց «դասական» և շարունակեց. «...Ինչ որ ելած է իր գրչեն, զուտ ոսկի է, ոսկիին ներքին, անանց արժեքն ունի և անոր անաղարտ, անդորր փայլը»<sup>1</sup>:

Ժ. Ռենարի վիպագրությունն ու թատերգությունը ոճապես կատարյալ են և չեն հանդուրժում բառի հապավում կամ հավելում: Նրա ստեղծագործությունները կյանքի բյուրեղացումներ են՝ լեցուն և հյութեղ, այնպես որ պատահական չէր Վ. Թեքեյանի գրողական նախապատվությունը: Վ. Թեքեյանի ստեղծագործությունը ևս ռենարյան արվեստի գեղարվեստական խտացման և բյուրեղացման հատկություններն ուներ և ձգտում էր հարազատորեն վերարտադրել ոգու վերթևումներն ու անկումները՝ մարմնացնելով և հղացնելով դրանք իր քերթվածների մեջ:

Իր հոդվածում շեշտելով Ժ. Ռենարի՝ խորհրդապաշտական դպրոցից ծնվելու մասին՝ Վ. Թեքեյանն անուղղակի ընդգծում է իր ոճական նախասիրությունը՝ միաժամանակ կարևորելով Յայ լինելու հանգամանքը, սեփական անհատականությունը, ուրույն տեսիլը աշխարհի և մարդու վերաբերյալ:

Ժ. Ռենարը սակայն չէր տեղավորվում մի դպրոցի սահմանների մեջ: Վ. Թեքեյանը նկատում է, որ ֆրանսիացի գրողը ավելի շուտ իրապաշտ և խորհրդանշական դպրոցների մեջտեղում է՝ չպատկանելով ո՛չ մեկին և ո՛չ մյուսին՝ մնալով աշակերտ և վարպետ իր ինքնատիպ ստեղծագործական դպրոցի:

Ժ. Ռենարի ստեղծագործական բեղմնավորությունը համընկավ սիմվոլիստների աշխույժ ընթացքին՝ առաջացնելով ազդեցության մեծ դաշտ: Նրա տաղանդի անմիջական կրողներն էին Ժան Մորեասը, Պոլ Ադան, Պիեր Լուիսը, Յանրի դը Ռենիեն ճիշտ այնպես, ինչպես հայ գրականության մեջ 20-րդ դարի սկզբին սկսեց տարածվել գրական այս ուղղությունը՝ ասպարեզ բերելով այնպիսի հանճարեղ հեղինակների, ինչպիսիք էին՝ Վահան Թեքեյանը, Վահան Տերյանը, Միսաք Մեծարենցը, ավելի ուշ՝ Եղիշե Չարենցը (ստեղծագործական վաղ շրջանում), որոնք իրենց ստեղծագործական ներուժը ստացան մի դեպքում՝ ֆրանսիական, մեկ այլ դեպքում՝ ռուս սիմվոլիստների ստեղծագործական գիևանոցից:

1890թ. հունվարին հիմնադրվում է «Մերկուր դը ֆրանս» ամսաթերթը, որն իր շուրջ էր հավաքել ժամանակի բոլոր սիմվոլիստներին: Թերթի հիմնադիրներից էր Ժ. Ռենարը, որը մի քանի նովելներ է տպագրում նրա էջերում՝ տարեվերջին դրանք հավաքելով «Չսպված ժպիտներ» («Sourires pince's») խորագրի տակ:

Վ. Թեքեյանը բարձր է գնահատում նրա հանճարը, հատկապես՝ «Տան հաց» թատերգությունը, որը համարում է հոգեբանական խիստ խոր վերլուծում՝ առանց վերլուծման երևույթն ունենալու, որի մեջ ցանված են Ժ. Ռենարի «գուևագեղ և հոտեւան սրամտութեան ծաղիկները»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ոստան, Եռամսեայ մեծ պարբերագիր արուեստներու, գրականութեանց և գիտութեանց, Ա. տարի, թիւ 2, 1 Ապրիլ, 1911, էջ 295:

<sup>2</sup> Ոստան, Եռամսեայ մեծ պարբերագիր արուեստներու, գրականութեանց և գիտութեանց, Ա. տարի, թիւ 2, 1 Ապրիլ, 1911, էջ 298:

Ունենալով թարգմանչի մեծ հմտություն և բնագրի հարազատությունը պահելով սեփական մուսայի բերած թարգմանումի նշնչումով՝ Վ. Թեքեյանը կատարում է Ժ. Ռենարից «Տան հաց» մեկ արարվածով թատերգության թարգմանությունը՝ այն ներկայացնելով հայ ընթերցողին «Ոստան»-ի նույն համարի մեջ, անմիջապես գետնդրելով հողվածից հետո:

Վ. Թեքեյանի թարգմանությունն ունի ռենարյան զգայությունը: Այն աչքի է ընկնում թարգմանչի կողմից հերոսների հոգեաշխարհի նուրբ գծերի ընկալումով, դինամիկ և կենդանի երկխոսություններով, հյուսթեղ լեզվով:

Անհնար է չնկատել, որ Ժ. Ռենարի գրական պարկեշտությունը, անշահախնդրությունը և աշխատելու կորովը բնորոշ են նաև Վ. Թեքեյանին, այնպես որ պատահական չէր սփյուռքահայ գրողի անթաքույց սերը ֆրանսիացի հանճարի գրողական խառնվածքի նկատմամբ:

Վ. Թեքեյանը չի թաքցնում նաև իր հիացմունքը Օսկար Ուայլդի ստեղծագործության և գրողական անհատականության հանդեպ՝ «Ոստան»-ի հաջորդ համարում հրապարակելով «Օսքար Ուայլդ» հոդվածը<sup>1</sup>:

Օ. Ուայլդի ապրելու դավանանքն էր՝ «արվեստ ամեն բանից առաջ, մարդ՝ ամեն բանից հետո»: Նա ծագումով իռլանդացի էր, հակումով՝ իտալացի, մտքով՝ հույն, պարադոքսով՝ փարիզեցի, որ համաշխարհային գրականության մեջ մնաց իր «Դորիան Գրեյի դիմանակարը», «Դիտավորություններ», «Լեդի Ուինտոնի հովհարը» և ուրիշ հռչակավոր վեպերով և թատերգություններով: Նրա պիեսները ցանկալի և սպասված էին ամենադժվարահաճ և դժվարաբաց սալոններում, բեմադրությունների հաջողությունները երես էին տալիս նրան, դարձնում ինքնավստահ և տիրական: Նրա անունն արդեն տարածված էր օվկիանոսի մյուս եզերքում:

Օ. Ուայլդի հայրն ու մայրն ազնվատոհմ ու գրագետ մարդիկ էին: Մայրը՝ Լեդի Ջեյն Ֆրանչեսկա Ուայլդը, որ իռլանդական նշանավոր ազգայնական գրողների և գործիչների բույլից էր, ցավոք, վախճանվում է այն ժամանակ, երբ որդին կրում էր իր երկու տարվա տաժանելի բանտարկությունը Ռիդինգի բանտում:

Վ. Թեքեյանը ցավով է խոսում գրականության մեծ իշխանի գահավիժումի մասին՝ հիշելով անգլիական հասարակության և գրականության երբեմնի հսկայի այն խոսքերը, թե՛ «թագավոր էի, մուրացկան լինել ուզեցի»:

Հագիվ քառասուն տարեկան՝ Օ. Ուայլդը կյանքի նավաբեկությանը ենթարկված իր կյանքն ու հանճարի խյակները փրկելու համար գալիս է Փարիզ՝ այնտեղ մեռնելով ծիրանեզուրկ արքայի պես՝ անշուք, անհասկանալի: Սակայն նրա անվան վերստին ծիրանևորումը պիտի լիներ հետո, այս անգամ՝ վերջնական՝ առանց նոր անկումների ստվերումի և կրկին գահագրկման երկյուղի:

Հողվածում անթաքույց է Վ. Թեքեյանի ցանկությունը, որ Օ. Ուայլդն արժանանա եկող սերունդների ճիշտ գնահատությանը: Առաջինը պետք է սիրել, որի օգնությամբ էլ հնարավոր կլինի գտնել հասկանալու և ներելու ճանապարհները: Սակայն Օ. Ուայլդի «ոճիրը» ոչ թե ներման, այլ գթության

<sup>1</sup> Ոստան, Եռամսեայ մեծ պարբերական արուեստներու, գրականութանց և գիտութանց, Ա. տարի, թիւ 4, 1 Հոկտեմբեր, 1911, էջ 761:

արժանի է. «Իր ոճի՞րը. գիտցողները գիտեն և չգիտցողներուն թողէք չգիտնալ զայն, որպէսզի գէթ անխառն ըլլայ արուեստագէտին համար հիացքը նորագարդ իմացականութիւններուն, որպէսզի այնչափ սիրեն զայն, որ երբ օր մը գիտնան, կարենան հասկնալ և ներել, ներե՞լ, ո՛չ, այլ գթա՛լ իրեն»<sup>1</sup>:

Լինելով «մաքուր արվեստի» ջատագովներից մեկը՝ պառնասականների պես կարևորում էր արվեստի ազատությունը, պայքարում արվեստի անկախության, արտաքին ազդեցություններից հեռու լինելու համար: Նա դեկադենտական գրականության խոշոր ներկայացուցիչներից էր՝ նույն գրական ուղղության բնորոշ գծերով՝ հասարակությունից փախչելու, ինքն իր մեջ մնալու, վեր բարձրանալու, մեկուսանալու անկորնչելի ցանկությամբ:

Վ. Թեքեյանը շատ բարձր է գնահատում Օ. Ուայլդին՝ որպես դեկադենտական գրականության ամենից կատարյալ և գերազանց ներկայացուցիչ:

Երբ դեռ ուսանում էր Օքսֆորդի համալսարանում, գրական մրցանակի արժանացավ «Ռավեննա» բանաստեղծության համար: Օ. Ուայլդը գայթակղում էր բոլորին իր ապրելու շռայլությամբ, մտավորական սեթևեթով, գաղափարների հանդգնությամբ: Նա ցանկանում էր քրմապետ լինել այն մեծ շարժումի, որը վարում էին Ուիլյամ Մորիսը, Ռոզետտին և ուրիշներ՝ կյանքի մեջ հաստատելու գեղեցկության այն տեսական իդեալները, որոնք արդեն մանրակրկիտ մշակված էին:

Վ. Թեքեյանի աչքից չի վրիպում այն, որ արվեստն Օ. Ուայլդի համար ուղղակի միջոց էր Գեղեցիկի եռությունը բացահայտելու համար, իսկ Գեղեցիկը, ինչպես ժամանակին արդեն նկատել էին, ուայլդյան արվեստում իր մեջ ամփոփում էր Բարին և Ճշմարիտը:

Օ. Ուայլդի հեթանոս եռությունը ցնականում էր հմայել անցնող բոլոր վայրկյաններին. սա անշուշտ անայժմեական ու անկարելի վարդապետություն էր, որին չէր կարող հանդուրժել արդի աշխարհը, ինչպես ժամանակին չհանդուրժեցին նույնքան գեղապաշտ ու հեթանոս Դանիել Վարուժանին:

Աշխարհը չուշացրեց վրեժը՝ այն ամենով ոչ թե ուժեղ ստեղծագործություններից, այլ արվեստագետի ոյուրաբեկ կյանքից:

Օ. Ուայլդը բավական ուժեղ էր իր անձը ինքնաքննության ենթարկելու համար: Նա բանտում գրում է «Ռիդինգյան բանտի բալլադը» (1898) ստեղծագործությունը, որը կազմում էր Օ. Ուայլդի վերջին գործը: Նա լավ էր ճանաչում ցավը և ցավով էլ ձգտում էր կատարելագործվել՝ վերստանալու իր օրերի ազատությունը: Կարևոր չէր նրա համար, թե այս երկը լավ կամ վատ կթվա նեղ բնավորություն կամ փակ ուղեղ ունեցողներին, կարևորն այն է, որ լավ է իր համար, որովհետև դրա օգնությամբ ինքը կարողացավ իր կուրծքը մաքրել շատ վնասակար կյուներից:

Երկու տարի ապրելով դառնության հարածուն բեռի տակ՝ Օ. Ուայլդը վերջում հիշում է բանտի պատի մյուս կողմում աճող խեղճ ու սև ծխապատ ծառերը, որոնք իր դուրս գալու ժամանակ ծաղկել էին, բացվել: «Անոնք իրենց արտայայտությունը կը գտնեն»<sup>2</sup>, - գրում է Օ. Ուայլդը իր մտերիմ Ռոբերտ Ռոսին՝ ուղարկելով նրան «Ռիդինգյան բանտի բալլադ»-ի ձեռագիրը:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 762:

<sup>2</sup> Ուսան, Եռամսեայ մեծ պարբերական արուեստներու, գրականութանց և գիտութանց, Ա. տարի, թիւ 4, 1 Դոկտեմբեր, 1911, էջ 763:



Վ. Թեքեյանը չի թաքցնում իր հիացմունքն ուայլոյան ինքնատիպ ու հարուստ ստեղծագործական երևակայության նկատմամբ և հավելում, որ Նրա Նախադասություններից յուրաքանչյուրը, ինչպես երևում է նաև «Սալոմե»-ի մեջ, մակայակ է, քայո՝ երփներփյան ակնախտիդ ակներով ելուզված, որոնց տակ ցայտում է գաղափարի «կաթնաթոյր ողորկ մարմինը»<sup>1</sup>: Իր ոճը գոհարական ճոխությամբ և արվեստի ավարտուն հրապույրով գաղափարից առաջ գրավում է ընթերցողի ուշադրությունը:

Յավոք, Օ. Ուայլըր մահացավ աղքատության մեջ, մահացավ դրամի և զգայության աղքատությունից, այն, որ ափերով քաղել ու նետել էր: Օ. Ուայլըր մահացավ պարզ, անձայն, խորհրդավոր մահով:

Մահից հետո ֆրանսիական ամենամեծ գրագետների և արվեստագետների հույլը շրջապատեց Անգլիայի ժամանակակից ամենամեծ արվեստագետ-գրագետին:

Նրա «Դորիան Գարեյի դիմանկարը» ֆրանսերեն թարգմանությամբ հիացրեց ֆրանսիացի քմահաճ ընթերցողին այնպես, ինչպես Օ. Ուայլըրի բանտարկության ժամանակ Նույն և ուրիշ մտավորականներ հանրագրություն պատրաստեցին և ներկայացրին Վիկտորյա թագուհուն՝ ի նպաստ Օ. Ուայլըրի ազատ արձակման:

Վ. Թեքեյանը հիշում է, որ Օ. Ուայլըր մահից մի քանի օր առաջ թողեց բողոքական կրոնը և մկրտվեց կաթոլիկ՝ ապաստանելով Կաթոլիկ Եկեղեցու շքեղության մեջ՝ ցանկանալով այսպես ներկայանալ իր Դատավորին: Վ. Թեքեյանը վստահ էր, որ Օ. Ուայլըր գնաց արքայություն, որովհետև ինչպես Էռնեստ Լաժիոնեսն էր ասում՝ քավարանն այստեղ նա անցկացրեց:

Այսպես, երկու հանճարեղ գրողներն էլ հարազատ են խորհրդապաշտ Վ. Թեքեյանի ստեղծագործական ներաշխարհին: Նրանց պես Վ. Թեքեյանն էլ ընթերցողի առաջ հեշտ բացվողներից չէ: Երեքն էլ կրոնավոր էին ուրիշների առաջ և հավատացյալ՝ իրենց անձի առաջ՝ չդադարելով կատարել իրենց պարտքը վաղվա սեմի առաջ՝ Աստծու վստահությունը շահելու համար: Նրանց համար իրենց ստեղծագործությունները արվեստ լինելուց առաջ եղան կյանք: Նրանց հանճարի մեծությունը այն համբերությունն էր, որով կարողացան ապահովել իրենց տեղը գրականության անդաստանում:

## **ЖЮЛЬ РЕНАР И ОСКАР УАЙЛЬД В СТАТЬЯХ ВААНА ТЕКЕЯНА**

### **ВАРДУИ ДАВТЯН**

*Северный университет, преподаватель,  
кандидат филологических наук, доцент,  
г.Ереван, Республика Армения*

Цель статьи - выявить стиль, писательское воображение и тематические предпочтения родственников В.Текеяну писателей, Достижение поставленной цели требует решения следующих задач: показать отношение В.Текеяна к Оскару Уайльду и Жюлю Ренару, по записям армянских переводов и литературных оценок произведений понять степень литературной симпатии В. Текеяна к ним.

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 764:

В своей статье «Жюль Ренар» В.Текеян признается, что смерть французского писателя причинила ему не меньше боли, чем смерть поэта Поля Верлена и живописца Шарля Герена. Он высоко ценит искусство Ренара, в частности, пьесу «Домашний хлеб», автором несравненного перевода которой является В. Текеян.

В своей статье «Оскар Уайльд» В.Текеян рассказывает о падении великого принца литературы, упадке, о тяжелых годах, проведенных в тюрьме Ридинга, восхищаясь силой его искусства. Он был крупным представителем декадентской литературы с присущими ей характерными чертами, стремлением изолироваться от общества, уйти в себя и возвыситься.

В статье посредством сравнительного анализа мы попытались представить творческие, стилистические и тематические общности трех писателей.

Главный вывод состоит в том, что эти две статьи В.Текеяна раскрывают интересные аспекты стиля, литературного вкуса и тематических предпочтений писателя, которые у нас мало раскрыты.

**Ключевые слова:** журнал «Востан», Ваан Текеян, Жюль Ренар, Оскар Уайльд, символисты, парнасцы, пьеса «Домашний хлеб», тюрьма Ридинга.

## **JULES RENARD AND OSCAR WILD IN VAHAN TEKEYAN'S ARTICLES**

**VARDUHI DAVTYAN**

*Candidate of Philological Sciences,  
lecturer in Yerevan Northern University,  
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to reveal the style, imagination, and thematic preferences of the authors that were close and dear to Vahan Tekeyan's heart.

In order to achieve the stated goal, the following tasks were set: to display V. Tekeyan's attitude toward Oscar Wilde and Jules Renard as well as through the analysis of literary evaluations and Armenian translations of their works, to understand his predispositions to these authors.

V. Tekeyan admits in the article "Jules Renard" that the death of the French writer caused him as much pain as the death of the poet Paul Verlaine and the painter Charles Keren. He highly appreciates Jules Renard's art, especially the play "Bread of the House", whose unique translation belongs to V. Tekeyan.

In his "Oscar Wilde", Vahan Tekeyan, speaking about the abdication of the great prince of literature, his fall, and the hard years spent in Reading prison, admires the power of Wilde's art. He was a major representative of decadent literature with its own characteristics. the desire to escape from society, to remain within oneself, to rise above.

In our article, we have made an attempt through a comparative analysis, to present the creative, stylistic, and thematic commonalities of the three writers.

The main conclusion is that V. Tekeyan's two articles reveal interesting milestones of his style, literary taste, and thematic preferences, which are little revealed among us.

**Keywords:** *Periodical called "Vostan", Vahan Tekeyan, Jules Renard, Oskar Wild, Symbolists, Parnassus, the play of "House Bread", Riding Prison.*

# ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## ՊԱՅԱՆԵ ՀԱԿՈՐՅԱՆ

Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնասիրական կենտրոնի ղեկավար,  
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[h.gayane@list.ru](mailto:h.gayane@list.ru)

**Հոդվածում անդրադարձ է արվում Ս. Կապուտիկյանի հրապարակախոսության մեջ հաճախ հանդիպող խոստովանության ժանրին: Նշվում է, որ գրողն իրեն երբեք չի կաղապարել որևէ ժանրի սկզբունքներով: Կապուտիկյանն առավելապես կարևորել է ասելիքի բովանդակային-իմաստային կողմը՝ զանց առնելով ժանրային պայմանականությունները:**

Նպատակ ունենալով ընթերցողին ներկայացնել Կապուտիկյանի՝ տարբեր տարիների գրված խոստովանությունները՝ վեր են հանվում դրանց առանձնահատկությունները, շեշտադրվում են հատկապես գրողի ծայրաստիճան անկեղծությունն ու անմիջականությունը: Արվում է հետևություն, որ նման համարձակ խոստովանությունները, բացի իրականությունը ճշմարտացիորեն պատկերելու մղումից, ունեն նաև մեկ այլ նպատակ՝ ինքնախոստովանության միջոցով մաքրվել, մաքրագործվել: Հոդվածագիրն անդրադարձել է նաև «անուղղակի» խոստովանություններին, որոնք առկա են Ս. Կապուտիկյանի տարբեր ժողովածուներում: Հոդվածում կիրառվել են գիտական վերլուծության համալիր, համակարգային, համեմատական և մշակութաբանական մեթոդները:

**Հիմնաբառեր՝** հրապարակախոսություն, խոստովանության ժանր, ժանրային «շեղումները», անկեղծություն, «անուղղակի» խոստովանություններ, ինքնավերլուծություն, կյանքի «ամիթայի» էջեր:

Յուրաքանչյուր գրողի գրական-հրապարակախոսական ժառանգության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար կարևոր պայման է նրա ստեղծագործության ժանրային համակարգի և լեզվաոճական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Ս. Կապուտիկյանի հրապարակախոսության ինքնատիպությունը դրսևորվում է նաև ժանրերի ընտրության հարցում: Դիմելով լրատվության վերլուծական և գեղարվեստական հրապարակախոսության ժանրերին՝ գրողն իր հորդաբուխ զգացմունքայնությամբ, հուզականությամբ ու վերլուծական տաղանդով ընդլայնել-ընդարձակել է ժանրերի ընդունված չափանիշները՝ հավաստելով այն տեսակետը, որի համաձայն՝ «ցանկացած ժանր իր հնարավորություններն

ավելի ցայտուն և արտահայտիչ է դրսևորում, եթե դրանում արտահայտված ստեղծագործական ինքնուրույնություն և լիցքեր կան»<sup>1</sup>:

Հայտնի է, որ ժանրի ձևավորման համար կարևոր են մի շարք գործոններ, որոնց իմացությունը հնարավորություն է տալիս «առավել հստակ պատկերացնելու պարբերական մամուլի այս կամ այն ժանրի ակունքներն ու ծագման յուրահատկությունները»<sup>2</sup>: Ըստ այդմ՝ առանձնացվում է ժանրը պայմանավորող երեք գործոն. արտացոլման առարկան, գործառույթն ու առարկայի հետազոտման մեթոդը:

Ըստ տեսաբան Շիբաևայի՝ ժանրի ընտրությունը կախված է այն թեմայից, որին անդրադառնում է գրողը: «Փորձեք գրել գրախոսական միներալների անբավարարության մասին, կամ հարցազրույց վերցնել մեկից, ով ասելիք չունի»<sup>3</sup>: Անիմաստ ջանքեր: Հետևաբար, յուրաքանչյուր թեմա ինքն է հուշում ճիշտ ժանրը: Տեսաբանը, թեմայի ընտրությունից զատ, կարևորում է նաև ստեղծագործական խնդիրն ու նպատակադրումը. ինչի՞ համար է գրում լրագրողը: Այսինքն՝ հիմնավորվածությունը երկրորդ սկզբունքն է, որի վրա հենվում է ժանրը: Եվ վերջապես, կարևոր է նաև աշխատանքի մեթոդը, այն, թե տեղեկություններ հավաքելու համար ինչ աղբյուրների է դիմում գրողը՝ դիտարկո՞ւմ, հարցազրո՞ւյց, փաստաթղթերի ուսումնասիրությո՞ւն, թե՞ մեկ այլ մեթոդի: Շիբաևայի համոզմամբ՝ ժանրերի մի խմբի ձևավորումը պայմանավորված է հատկապես մեթոդի յուրահատկությամբ: Դրա մեջ մտնում են գեղարվեստական հրապարակախոսության ժանրերը, որոնք հրապարակախոսական խնդիրներ են լուծում արվեստի մեթոդներով՝ իրականության ուսումնասիրության համար օգտագործելով գեղարվեստական կերպարի հնարավորությունները:

Ս. Կապուտիկյանի հրապարակախոսական ժառանգության հպանցիկ անդրադարձն իսկ պատկերացում է տալիս գրողի ժանրային նախասիրությունների մասին: Թեպետ գրողն ինքն էլ հաճախ հստակ չի տարրորշել ոչ միայն իր առանձին հրապարակումների, այլև ժողովածուների ժանրային պատկանելությունը: Այսպես, «Էջեր փակ գորոցներից» գրքի նախաբանում գրում է. «...Ինքս էլ չեմ կարողանում որոշել, թե որ ժանրին է պատկանում գիրքը: Հրապարակագրությո՞ւն է արդյոք, Էսսե-խոհագրությո՞ւն, թե՞ ելույթների ու հարցազրույցների ժողովածու»: Խնդիրն այն է, որ Կապուտիկյանի համար որոշակի որևէ ժանրով ստեղծագործելը, կամ ժանրի գլխավոր սկզբունքներին հետևելն առանձնակի նշանակություն չի ունեցել: Իհարկե, կան նաև բացառություններ: Որոշ դեպքերում նա տալիս է հստակ ժանրային անվանումը՝ հոգեբանական Էսսե, գրական դիմանկար և այլն: Սակայն ամբողջության մեջ ժանրային սկզբունքները կամ խախտված են, կամ էլ անվանումը չի համապատասխանում ժանրին: Երևույթը կարելի է բացատրել նրանով, որ Կապուտիկյանը հրապարակախոսության ժանրը դիտել է իբրև «գրողական գործի մի մաս», որպես «պոեզիայի հարազատ քույրը» և առավելապես կարևորել ասելիքի բովանդակային-իմաստային կողմը՝ զանց առնելով ժանրային պայմանականությունները:

<sup>1</sup> **Երիցյան Ս.**, Հեռուստահաղորդում. մտահղացումից մինչև եթեր, Երևան, 2007, էջ 70:

<sup>2</sup> **Тертичный А. А.**, Жанры периодической печати. Москва, 2000, с. 9.

<sup>3</sup> **Шибалева Л.**, Жанры в теории и практике журналистики // [http:// www.eartist.am](http://www.eartist.am).

Կապուտիկյանի հրապարակախոսության մեջ ժանրային հստակ «դիմագիծ» ունեցող բազմաթիվ հրապարակումների կողքին հանդիպում են նաև այնպիսիք, որոնք մի քանի ժանրերի միաձուլման, համադրման, փոխներթափանցման արդյունք են: Նույնը կարելի է ասել նաև գրողի բոլոր ուղեգրությունների մասին, որոնցում հնարավոր է գտնել վերլուծական-տեղեկատվական և գեղարվեստական հրապարակախոսության բազմաթիվ ժանրեր՝ ինչպես «մաքուր», այնպես էլ «խառը» տեսքով: Դա օրինաչափ է, քանի որ, տեսաբանների համոզմամբ, «մաքուր» ժանրեր ընդհանրապես գոյություն չունեն և «ժանրային բոլոր դրսևորումներն իրենց մեջ շարժում են պարունակում. հենց դրանով էլ նրանք հակասական են»<sup>1</sup>:

Կան ժանրեր, որոնց Կապուտիկյանի հրապարակախոսության մեջ առավել հաճախ ենք հանդիպում, որոնցից են՝ խոստովանությունը, հոդվածը, հարցազրույցը, ակնարկը և այլն: Բնական է, որ գրողը դիմել է գլխավորապես վերլուծական ժանրերի, որոնք «կարիք ունեն հեղինակի կողմից իրական փաստերի և իրողությունների վերլուծության»<sup>2</sup>: Դրանք, պահպանելով հանդերձ ժանրային օրինաչափությունները, երբեմն դրսևորում են յուրահատկություններ՝ պայմանավորված հրապարակախոսի մտածողության առանձնահատկություններով և ասելիքի նպատակադրմամբ: Հենց սրանցով են բացատրվում գրողի ստեղծագործություններում հանդիպող ժանրային «շեղումները», որոնք հատկապես դրսևորվում են նրա ճամփորդական ակնարկներում:

Խոստովանությանը, որպես լրագրության ժանր, պատկանում են այն հրապարակումները, որոնցում բացվում է այդ հրապարակումների հեղինակի ներաշխարհը<sup>3</sup>: Խոստովանությունների գլխավոր մեթոդը ինքնավերլուծությունն է: Լրագրության այս ժանրը արմատներ ունի գրականության, կրոնի, փիլիսոփայության մեջ: Տեսաբանները ժանրի առաջացումը կապում են ֆրանսիացի փիլիսոփա և գրող ժան-ժակ Ռուսոյի անվան հետ, որն ավելի քան երկու հարյուր տարի առաջ գրեց «Խոստովանություն» գիրքը: Մինչ այդ խոստովանություններն ուղղված էին լինում միայն Աստծուն, իսկ Ռուսոյի գիրքն ուղղված էր ընթերցող լայն լսարանին: Ինչևէ, ֆրանսիացի փիլիսոփան ոչ միայն հետնորդներ ունեցավ, այլև խոստովանությունը որպես մեթոդ սկսեցին կիրառել շատերը՝ սկսած ամենաբարձր պաշտոնյայից մինչև շարքային քաղաքացին, ինչի արդյունքում այսօր գործ ունենք ինքնուրույն ժանրի հետ: Ռուս տեսաբան Տերտիչնիի համոզմամբ՝ մեծ լսարանի առջև խոստովանությամբ հանդես գալը հետապնդում է մի շարք նպատակներ. բացատրել անսովոր արարքը, ցույց տալ անհաջողությունը հաղթահարելու օրինակ, բացահայտել հաջող գործունեության գաղտնիքները, ինքնագովազդ անել և այլն: Նա տարբերակում է լրագրողական խոստովանությունը կրոնական խոստովանությունից, որի նպատակը մեղքերի թողություն ստանալն ու հոգեպես մաքրագործվել-խաղաղվելն է: Կապուտիկյանի խոստովանությունները չեն հետապնդում զուտ լրագրողական

<sup>1</sup> Ученова В. В., Метод и Жанр: диалектика взаимодействия // Методы журналистского творчество. Москва, 1982, с. 89.

<sup>2</sup> Երիցյան Ս., նշվ. աշխ., էջ 76:

<sup>3</sup> Тертичный А. А., նշվ. աշխ., էջ 186:

խոստովանության նպատակներ, և ոչ էլ որպես խոստովանահայր նա դիմում է Աստծուն կամ ընթերցողների ինչ-որ խմբի: Բանասերներից մեկի դիպուկ բնութագրմամբ՝ Կապուտիկյանը «իբրև խոստովանահայր ընտրում է հայ ժողովրդին», միևնույն ժամանակ «ընթերցողին մղելով ինքնախոստովանության»<sup>1</sup>:

Սիլվա Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» ուղեգրության անդրադառնալիս գրականագետ Ս. Աղաբաբյանն այն բնորոշել է իբրև «խոստովանանքային արձակ»<sup>2</sup>: Սա, իհարկե, գեղարվեստական բնութագրում է. գրականագետը նկատի է ունեցել լեզվամտածողության առանձնահատկություններն ու հրապարակախոսին բնորոշ անկեղծությունը:

Ս. Կապուտիկյանը հատուկ նպատակադրմամբ չէ, որ դիմում է խոստովանության ժանրին: Պարզապես իր խառնվածքին համապատասխան՝ չափազանց անկեղծորեն լայն լսարանին է ներկայացնում կյանքի այն դրվագները, որոնք խորը հետք են թողել իր ներաշխարհի վրա, հուզել են կամ տանջել, և ահա, հարմար առիթը գտնելով, բանաստեղծուհին սիրտը բացում է ընթերցողի առաջ՝ դիմելով խոստովանության: «Էջեր փակ գգրոցներից» ժողովածուի նախաբանում Կապուտիկյանը գրում է, որ գիրքն իր ապրածի ու զգացածի անկեղծ, անշապար թարգմանն է՝ դրանով իսկ մատնանշելով խոստովանանքային լրագրության կարևոր առանձնահատկությունները: Վերոնշյալ ժողովածուի մեջ փաստական նյութը ընդմիջարկվում է գրողի հիշողություններով, նյութի հետ կապված լրացումներով, որոնք նույնպես խոստովանության ժանրի նմուշներ են:

Հրապարակախոսի խոստովանությունները ցրված-տարածված են նրա ժողովածուների բազմաթիվ էջերում: Այսպես, «Էջեր փակ գգրոցներից» գրքում գրողը, հետադարձ հայացք նետելով անցյալին, ներկայացնելով արխիվային ինչ-ինչ փաստաթղթեր, բացատրելով այդ տարիներին կատարած իր այս կամ այն արարքի դրդապատճառները, արարքներ, որոնք երբեմն հասարակության մեջ տարաբնույթ գնահատականների պատճառ են դարձել, միաժամանակ տանջելով իրեն, դիմում է խոստովանության՝ երբեմն բացահայտելով իր կյանքի այնպիսի, հաճախ «ամոթալի» դրվագներ, որոնց մասին մեկ ուրիշը չուզեց գերադասել լռել: Այսպես, ընթերցողին խորապես ցնցում են գրողի հորը և հորեղբորը վերաբերող խոստովանությունները: Տասնյակ տարիներ Կապուտիկյանն ապրել է մեղքի ծանրագույն զգացումով, քանի որ ժամանակին, իր իսկ բնորոշմամբ, տեր չի կանգնել ո՛չ հորեղբոր, ո՛չ էլ հոր հիշատակներին: Դեռատի բանաստեղծուհին, վախենալով անվանարկվելուց, խուսափում է անհատի պաշտամունքի տարիներին աքսորված հորեղբոր ընտանիքին այցելելուց և հյուրանոցում եղած նրա իրերին տեր կանգնելուց, իսկ ավելի ուշ բոլորի աչքից հեռու նա այրում է դաշնակցական հոր բոլոր փաստաթղթերն ու հողվածները: Իսկապես, «Էջեր փակ գգրոցներից» գրքի ամենահուզիչ հատվածներից են բանաստեղծուհու այս խոստովանությունները, որոնք տարիներ առաջ գրաքննության պարտադրանքով հանվել է «Գույներ նույն խճանկարից» ուղեգրությունից:

<sup>1</sup> **Անանյան Գ.**, Մտորումներ ճանապարհի վերջերին // Գրական թերթ, 1999, 15-30 հունվարի, թիվ 2:

<sup>2</sup> **Աղաբաբյան Ս.**, XX դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք 2, Երևան, 1984, էջ 327:

Բարձրաձայն ապաշխարելը խղճի խայթից ազատվելու, հոգին հանգստացնելու առումով այնքան կարևոր է եղել Կապուտիկյանի համար, որ տարիներ անց այդ խոստովանությունները գետնեղել է «Էջեր փակ գգրոցներից» ժողովածուի մեջ. «Դստեր մորմոքով ես խոնարհում եմ գլուխս նրա մաքուր հիշատակի առաջ, և խորն ու անփարատ է այդ մորմոքը, որովհետև այն խառնված է ուշացած զոջումին, մեղավորության զգացումին: Մեղավորություն նրա համար, որ մանուկ օրերիս բոլորովին չեմ ապրել նրա չիները, չիներու ցավը, որ այդքան անմասնակից եմ մնացել մեր ընտանիքի վրա ծանրացած անմոռուկ վշտին, որ ամեն անգամ հոգուցս բեռը նետելու, թեթևացնելու զգացումով եմ գրել «մեռել է իմ ծնունդից առաջ» նախադասությունը, որ երկար ժամանակ նեղվել ու խուսափել եմ նրա անվան հիշատակումից, որ գեթ մի օր չեմ բարձրացել այն սենյակի սանդուղքներով, որտեղ նա երջանիկ է եղել, որ չգիտեմ նույնիսկ, թե ուր է հանգչում նրա աճյունը... Եվ ամենից շատ, և ամենից սուր՝ այն գիշերվա համար, այն փոքրոգի ու դաժան խարոյկի համար, երբ ինքս դարձա իմ հավատաքննիչը...»<sup>1</sup>:

«Էջեր փակ գգրոցներից» գրքում հրապարակախոսը զարմանալի անկեղծությամբ պատմում է նաև իր կյանքի «ամոթալի» Էջերի մասին, այսինքն՝ այն բոլոր դեպքերի, երբ ինքը ենթարկվել է վախի ազդեցությանը՝ կատարելով իր խառնվածքին, Էությանն ու կոչմանը անհարիր քայլեր: Նման համարձակ խոստովանությունները, բացի իրականությունը ճշմարտացիորեն պատկերելու մղումից, ունեն նաև մեկ այլ նպատակ՝ ինքնախոստովանության միջոցով մաքրվել, մաքրագործվել, մեղմել ամոթի տանջալից զգացումը: Նման մի դրվագ է, օրինակ, Ելենա Բոների հետ կապված միջադեպը, երբ Կապուտիկյանը խուսափում է հանդիպել իր վաղեմի մտերիմ ընկերուհուն՝ տեղեկանալով, որ նա ամուսնացել է վարչակարգից մշտապես հալածվող Ա. Սախարովի հետ: «Ես ոչ միայն Լենայի հետ այնուհետև չհանդիպեցի, նույնիսկ չզանգահարեցի: Վախեցա: Այո, այո, ամենապարզուկանակ ձևով վախեցա...»<sup>2</sup>: Երկու տարի հետո, սակայն, հրապարակախոսը մեծագույն սիրով իր տանը հյուրընկալում է Ա. Սախարովին ու Ելենա Բոներին, թեպետ գիտնականի նկատմամբ հալածանքն էլ ավելի էր սաստկացել: Կապուտիկյանն այս ընդունելության մասին գրում է ներքին ուրախությամբ, ինքնահարգանքի զգացումը վերականգնողի հպարտությամբ: Յետաքրքիրն այն է, որ գրքի այդ հատվածներում գրողն իր հույզերն ու զգացմունքներն ամբողջովին ներդնում է այդ տողերում՝ արտահայտելու զոջման, ավսոսանքի, ամոթի այն ամբողջ փոթորիկը, որ տանջել է իրեն՝ ասես ակնկալելով ընթերցողի ներողամտությունը, միաժամանակ ապաշխարելով ինքնամաքրվելու համար:

Խոստովանությունների հանդեպ Կապուտիկյանը դրսևորում է սկզբունքային մոտեցում. «Չպետք է սպասել, որ քո տգեղ արարքի համար ուրիշ մեկը ամոթանք տա: Ավելի լավ է ինքդ խոստովանես: Դա օգտակար է նաև քեզ համար, քո ներաշխարհը մաքրելու, ծանր ներկայություններից ազատելու համար...»<sup>3</sup>:

<sup>1</sup> Կապուտիկյան Ս., Էջեր փակ գգրոցներից, Երևան, 1997, էջ 129:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 100:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 102:

Ինչո՞վ է խոստովանությունը որպես ժանր տարբերվում լրագրության մյուս ժանրերից: Այդ մասին տեսաբաններն ունեն իրենց տեսակետը. «Ինքնավերլուծության տարրեր կարող ենք հանդիպել ամենատարբեր հրապարակումներում՝ ակնարկներում, թղթակցություններում, հոդվածներում և այլն: Տարբերությունն այն է, որ նմանօրինակ հրապարակումներում ինքնավերլուծությունը նպատակ չի դառնում: Տեքստի մեջ դրան այնքան տեղ է տրվում, որքան անհրաժեշտ է ինչ-որ միտք պարզաբանելու, հրապարակումը էքսպրեսիվ, պատկերավոր սկսելու, իրավիճակի լարվածությունը ցույց տալու համար: Երբ ինքնավերլուծությունը հրապարակման մեջ դառնում է գլխավոր նպատակներից մեկը, ապա այդ դեպքում էլ ձևավորվում է ինքնուրույն ժանր՝ խոստովանություն»<sup>1</sup>:

Սիվլա Կապուտիկյանի խոստովանություններն ինքնավերլուծության նպատակ են հետապնդում: Դրա ապացույցը վերոնշյալ ժողովածուի մեջ Բորիս Պաստեռնակին և Ա. Սախարովի կնոջը՝ Ելենա Բոներին վերաբերող հատվածներն են: «Մի ուրիշ մեղավորության զգացում, որն ավելի խորն է և որը, դժբախտաբար, հնարավոր չէ ամոքել, մինչ այժմ էլ հետապնդում է ինձ: ...1956 թվականին, երբ Խորհրդային Միության ամբողջ տարածքով մեկ գումարվում էին ժողովներ և դատապարտում «հայրենիքը ծախած, երկերեսանի» բանաստեղծին, համոթ ինձ, Գրողների տանը գումարված ժողովում ես էլ միացա ելույթ ունեցողներին: Եվ դա արեցի, երբ անցել էին 37 թվականների մարդկային կեցության բոլոր օրինաչափությունները տրորող, ոչնչացնող ժամանակները, երբ արդեն 50-60 թվականներն էին, ու, թվում էր, եկել են այդ օրինաչափությունները վերականգնող ժամանակներ, ուստի Պաստեռնակին պախարակող սուտուփուտ ամբաստանություններին կարելի էր չմիանալ: Ոչ ոք դրա համար ինձ բանտ չէր նստեցնի, կտտանքների չէր ենթարկի, ուրեմն ինչո՞ւ այդպես վարվել...»<sup>2</sup>: Բանասեր Դ. Գյուլզադյանի համոզմամբ՝ Ս. Կապուտիկյանի քաղաքացիական ակտիվության ու համարձակության աղբյուրն «անկեղծ խոստովանություններն են սեփական սխալների մասին: Սեփական անձի հանդեպ դրսևորվող այս համարձակությունն էլ հիմք է տալիս այդպիսին լինել և այլոց հանդեպ, նրանցից էլ ակնկալել նույնը»<sup>3</sup>:

«Անուղղակի» խոստովանությունների հանդիպում ենք նաև Կապուտիկյանի ակնարկներում, հարցազրույցներում և ուղեգրություններում: Գրողի ամբողջ գրական ժառանգության մեջ միայն մի պատահիկն է «մաքուր» խոստովանություն՝ զետեղված «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» ժողովածու մեջ, որը, սակայն, վերնագրված է «Հիշատակարան»: Վերնագիրը բնավ կապ չունի նյութի բովանդակության հետ և խոստովանանքային լրագրության հոյակապ նմուշ է, այդ ժանրին պատկանող՝ Կապուտիկյանի ամենահատկանշական գործերից մեկը: «Հիշատակարանում» հրապարակախոսը փորձում է ամփոփել Ստամբուլ և Երուսաղեմ կատարած ուղևորությունների տպավորությունները և, զուգահեռներ անցկացնելով այդ երկրների ու Հայաստանի տեսարժան վայրերի միջև, խոստովանում է իր երկրի ու ժողովրդի, նրա հնամենի մշակույթի ու լեզվի նկատմամբ ունեցած իր

<sup>1</sup> Тертичный А. А., նշվ. աշխ., էջ 193:

<sup>2</sup> Կապուտիկյան Ս., էջեր փակ գգրոցներից, էջ 101:

<sup>3</sup> Կապուտիկյան Ս., Չեմ կարող լռել, Երևան, 2000, էջ 341:



անսահման սիրո մասին: Նա բացահայտում է իր հոգու նուրբ ելևեջները, ամենախորքերից արևերես հանում այն զգացումները, որոնց մասին ընթերցողը մինչ այդ գուցե կռահել էր, սակայն ամբողջական պատկերացում չէր կազմել: Այդօրինակ «բացահայտումներ» է անում Կապուտիկյանը նաև իր «աստվածավախության» մասին խոսելիս: Լինելով Երուսաղեմում, այցելելով քրիստոնյա աշխարհի համար թանկ սրբավայրեր, նա, սակայն, հոգու մեջ այլ մասունքներ է փայփայում. «Ու թեև ուխտավորների խմբերին խառնված՝ մոմ էի վառում ու նույնիսկ համբուրում էի սրբազան մասունքները, բայց ինքս հո գիտեի, որ այդ համբույրն ու մոմավառությունը ներսիցս եկող, երկյուղածությամբ ու հավատով շաղախված մղում չէ ու ոչ էլ ուխտավորի իղծ, այլ հարգանքի ու համերաշխության նշան դեպի այն հոգեղեն զգացումը, որ դարեր ի վեր տարածել են միլիոնավոր մարդիկ դեպի այդ մասունքները... Եվ, ընդհակառակը, իմ ողջ եռությամբ, ներաշխարհով, նախատրամադրվածությամբ պատրաստ էի ընդունել ... իմը դարձնել Սրբոց Հակոբյանց վանքն ու ողջ համալիրը, որովհետև այն ինձ համար Խոր Վիրապի, Էջմիածնի, Գեղարդի, Հաղարծնի շարունակությունն էր, ավերակված Չվարթնոցի սկզբնապատկերը, Գոշավանքի ու Նորադուղի խաչքարերը, բոլոր այն վանքերն ու սրբությունները, որոնք իմն են դարձել իմ գիտակցական կյանքի, իմ հոգու աշխարհաստեղծման առաջին պահից ի վեր, երբ լույսը բաժանվել է խավարից, և որոնք որմ ու քիվ, սյուն ու խոյակ են եղել՝ կառուցելու համար իմ ներսի տաճարը...»<sup>1</sup>:

Ս. Կապուտիկյանի հրապարակախոսության մեջ հանդիպում ենք նաև խոստովանության մի հետաքրքիր դրսևորման: Կան թեմաներ, որոնց նա խուսափում է անդրադառնալ՝ մի քանի նախադասությամբ բացատրելով իր սակավախոսության պատճառները՝ դրանով իսկ անուղղակի կերպով խոստովանելով շատ բան: Այսպես, հրաժարվելով ընթերցողին ներկայացնել իր անձական-ընտանեկան կյանքի մանրամասները, գրում է. «... Ինձ այլևս չի հաջողվի ... հանգամանորեն շարադրել իմ կյանքի պատմությունը, մանավանդ իմ անձնականի պատմությունը, որը մի որոշակի շրջանում՝ 1939 թվականից 1944-ը եղել է այնքան դառը, դաժան, մղձավանջային, այնքան անհարիր այդ նույն ընթերցողի մեջ ստեղծված պատկերացումներին, որ երբեք չէի ցանկանա այն հանձնել թղթին»<sup>2</sup>: Եթե տողերի հեղինակը միշտ անկեղծ Կապուտիկյանը չլիներ, ապա կարելի է ենթադրել, որ գրողը փորձում է թերասացությամբ հավելյալ խորհրդավորություն ստեղծել և նվաճել ավելի մեծ լսարան: Ծանոթ լինելով հրապարակախոսի անաչառությանը՝ մենք ձեռնպահ ենք մնում նման եզրահանգումից:

Խոստովանությունները բացահայտում են Կապուտիկյանին նոր կողմերով: Այս ժանրը հնարավորություն է ընձեռել գրողին ընթերցողին ներկայանալու նաև մարդկային թուլություններով, նուրբ ու փխրուն հուզաշխարհով՝ իբրև մի կին, որի համար անչափ կարևոր է սրտի, սիրո, մարդկայնության, ազնվության ու բարության օրենքներով ապրելը:

<sup>1</sup> Կապուտիկյան Ս., Իմ կածանը աշխարհի ճանապարհներին, Երևան, 2002, էջ 673:

<sup>2</sup> Կապուտիկյան Ս., Էջեր փակ գգրոցներից, էջ 7:

## ЖАНР ИСПОВЕДИ В ПУБЛИЦИСТИКЕ СИЛЬВЫ КАПУТИКЯН

ГАЯНЕ АКОПЯН

*руководитель учебно-практического центра информации и связей с общественностью Северного университета, к.ф.н., доцент, г. Ереван, Республика Армения*

В статье рассматривается часто употребляемый жанр исповеди в публицистике Сильвы Капутикян. Отмечается, что писательница никогда не ограничивала себя принципами какого-либо жанра. Сильва Капутикян преимущественно придавала особое значение содержательно-смысловой стороне, игнорируя жанровые условности. С целью представить читателю исповеди, написанные Капутикян в разные годы, выявляются их особенности, акцентируются, в частности, предельная искренность и непосредственность писательницы. Делается вывод, что подобные смелые исповеди, помимо стремления правдиво изобразить действительность, преследуют цель - очиститься посредством исповеди. Автор статьи обратилась также к "косвенным" исповедам, содержащимся в разных сборниках С.Капутикян. В статье используются аналитический, сравнительный и культурологический методы научного исследования.

**Ключевые слова:** *публицистика, жанр исповеди, «жанровые отклонения», искренность, косвенные исповеди, самоанализ, "постыдные" страницы жизни.*

## CONFESSION GENRE IN SILVA KAPUTIKYAN'S PUBLIC SPEAKING

GAYANE HAKOBYAN

*Head of Journalism and PR Research Department at Northern University, Ph.D., Associate Professor, Yerevan, Republic of Armenia*

The article refers to the genre of confession encountered in Silva Kaputikyan's public works. The genre of confession is often encountered in Kaputikyan's public works. It is noted that the writer has never shaped himself according to the principles of any genre. Kaputikyan emphasized the content-semantic aspect of what is being said, disregarding the genre conventions.

Aiming to present to the reader Kaputikyan's confessions written in different years, we highlight the features as well as emphasize the extreme sincerity and directness of the writer's style in them. It is concluded that such bold confessions, apart from the drive to depict reality truthfully, help the author to get purified through her works. We also refer to Silva Kaputikyan's "indirect" confessions. In various of her collections of works. Complex, systematic, comparative, and cultural methods of scientific analysis were used in the article. Complex, systematic, comparative, and cultural methods of scientific analysis were used to carry out the analysis within the article in the article. author of the article also referred to the "indirect" confessions of S. in various collections of Kaputikyan. In the article, we use complex, systematic, comparative, and cultural methods to carry out the analysis and reach our research goals.

**KeyWords:** *Public works, the genre of confession, "deviations" of genre, sincerity, "indirect" confessions, self-reflection, "shameful" pages of life.*

## **ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ АНТРОПОНИМОВ В РОМАНЕ Х.АБОВЯНА «РАНЫ АРМЕНИИ»**

**ГАЯНЕ ОГАННИСЯН**

*Армянский государственный экономический университет,  
кандидат филологических наук, преподаватель,  
г. Ереван, Республика Армения  
[gayaneoga@mail.ru](mailto:gayaneoga@mail.ru)*

***Статья посвящена изучению функциональных особенностей антропонимов в романе Х.Абовяна «Раны Армении». К числу основных задач исследования относятся: выявление характера функционирования антропонимических единиц, изучение особенностей их репрезентации в исследуемом романе.***

***Антропонимы в романе Х.Абовяна «Раны Армении» разнообразны и многофункциональны. Наряду с номинативной, идентифицирующей и дифференцирующей функциями, антропонимы в исследуемом романе выполняют также экспрессивно-оценочную, косвенно-характеризующую, аккумулирующую и др. функции. Применение описательного, структурно-семантического, исторического и стилистического методов дало возможность сделать вывод, что антропонимические единицы несут в тексте определённую смысловую нагрузку, при этом исторические имена в романе обозначают и выделяют конкретное лицо, выступают в качестве объекта сравнения, являются средством характеристики персонажей и играют важную стилистическую роль в тексте.***

***Ключевые слова:* антропоним, актуализация, исторические имена, апеллятив, сравнение, функция, характеристика.**

Антропонимические единицы в художественном тексте несут в себе определённую функционально-смысловую нагрузку. Специфика функций антропонимов в художественном тексте определяется авторской концепцией, идейно-тематической и жанровой принадлежностью произведения.

Функция антропонимов в художественном тексте – это реализация, репрезентация имен собственных в зависимости от роли их в развитии сюжета произведения, лингвистических свойств и механизмов введения онимов в художественный текст. Роман «Раны Армении» Х.Абовяна изобилует историческими именами, которые играют важную стилистическую роль в тексте, приближая действительность к реальности, а имена мифологических и языческих персонажей придают особый колорит произведению. Благодаря мастерству писателя в романе органично сосуществуют имена реальных исторических личностей с вымышленными именами (в романе зафиксировано сто сорок шесть антропонимов).

Имена *исторических* лиц могут функционировать в художественном тексте в трех аспектах: 1) обозначить и выделить литературного персонажа; 2) выступать как объекты сравнения или компонент эпохи; 3) быть средством косвенной характеристики персонажей.

«Функция имен исторических лиц в художественном произведении не всегда совпадает с их функцией в живой речи, далеко выходя за рамки только указателя, дифференциального знака, за рамки только номинативной функции».<sup>1</sup> Кроме номинативной, различительно-выделительной функций, собственные имена исторических лиц могут быть привлечены писателями и в такой контекст, в котором они активизируют свою потенциальную функцию указания на известное событие, комплекс идей и т.п., и в таком случае «превращаются в материал для символики».<sup>2</sup> В тексте: «Вечно предстал предо мною Масис, перстом указывал мне, какой страны я чадо; в мыслях моих вечно жив был рай, и во сне и наяву напоминавший мне о славе и величии нашей страны. Гайк, Вардан, Трдат, Просветитель говорили мне, что я их сын. Европа и Азия неустанно твердили мне, что я — дитя Гайка, внук Ноя, сын Эчмиадзина, обитатель рая»<sup>3</sup>. Автор, называя себя сыном и внуком величайших представителей армянской истории, воплотил в себе обобщенный образ армянского народа. Перечисленные онимы не только отражают мировоззрение и духовные метафорические мысли автора, но и устанавливают связи между образами разных исторических времен, что говорит и о пространственно-временной символике романа Х.Абовяна «Раны Армении».

Актуальна в исследуемых романах и *ситуативно-реминисцентная функция* – «функция введения личного имени или фамилии исторического деятеля для упоминания по тому или другому поводу»<sup>4</sup>. В тексте: «Правда, они грамоте не обучены, но в сердцах у них железом вырезано, что это те самые священные земли, те святые поля, где великий *Шахиншах, Ашот Багратуни, Смбат... Захарий-спасалар*, предки *Аргутинских-Долгоруких, Иоанн Одзнийский-философ, Иоанн Ерзынкаци* – взлетали как орлы..., с мечом в руке одолевали здесь на этой земле, *Омара*, гуннов, *Чингисхана,....*»<sup>5</sup>.

Антропонимы, обозначающие реальных исторических личностей, могут фигурировать во второстепенных сюжетах, косвенно связанных с основной темой произведения. В романе «Раны Армении» только на странице 97 автором перечислено 26 исторических имен, с помощью

---

<sup>1</sup> Карпенко, Ю.А. Русская ономастика / Ю.А. Карпенко. Одесса, 1970. С.24

<sup>2</sup> Михайлов, В.Н. Собственные имена персонажей русской художественной литературы XVIII и ½ XIX вв., их функции и слово: автореф. дисс... филол. наук. Москва, 1956. С.16.

<sup>3</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С.24

<sup>4</sup> Рацен, Т.Н. Функции антропонимов в пословицах и поговорках// Ономастика Поволжья. Тезисы докладов IX между. конф. Волгоград, 9-12 сентября, 2002 г. Волгоград: Перемена, 2002. – С.92.

<sup>5</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С.149

которых писатель лаконично описал историю Армении ( с древнейших времен – от Гайка до династии Багратуни), вспоминая великих сынов - *Гайка, Ара, Зармайра, Паруйра, Тиграна, Вахэ, Вагаршака, Трдата, Григория Просветителя, Вардана Мамиконяна* и его брата *Ваана, Врамшапуха*, династии *Багратуни* и *Рубиняны*. В тексте: «Та святая земля, куда, отвергнув злой умысел безбожного Бэла, собрав семейство и храброе, доблестное войско свое, пришел непобедимый Гайк и, восхищенный чудесными горами, прекрасными полями армянскими, увидев райское ущелье Зангу ....., воткнул копьё в землю и назвал ее своим святым именем — «Айастан»,...«...» ...та земля, где *Вардан Мамиконян* и достойный брат его *Ваан* беспримерной, в мире еще не виданной храбростью, кровью собственной отстояли закон свой и честь своей церкви»<sup>1</sup>. Эту галерею исторических лиц и событий автор наделяет сжатыми и емкими характеристиками: «*достойный брат Ваан*», «*мудрый и отважный Трдат*», «*сын божий*» *Просветитель*, «*непобедимый*» *Гайк*, «*ангелоподобный*» *Ара* и т.д. Вышеупомянутые исторические имена, выполняющие в романе *аккумулирующую функцию*, выступают и как символические метки, национальные знаки, указывая на их положительные или отрицательные черты как носителей имен, так и их поступков, действий и влияния на ход истории.

Подобное перечисление имен исторических лиц находим и на с. 99-102, где автором проводится краткий антропонимический экскурс в историю правления Ереванского ханства. Х.Абовян описывает период истории, когда Ереванская крепость была в руках османов, перечисляя поочередно всех правителей крепости: *Надир-шах*, каджар *Гасан-хан*, *Гусейн-Али-хан*, *Ага-Магомед-хан*, его брат *Али-Кули-хан* и др. Упоминание таких исторических персонажей используется с целью приближения, подготовки читателя к описываемому событию. В тексте: «Ереванская крепость, Ереванская крепость! С тех пор, как армянское царство перестало быть в своей стране и христианство сделалось надеждой и упованием армянского народа..., а персы и османцы,...«...»..... жаждали напиться нашей крови....Тогда появился *Надир-шах* и, растоптав Индостан и Арагстан, повернул лицо свое к Еревану...После него ханом стал брат его *Гусейн-Али-хан*.....»<sup>2</sup>.

Х. Абовян точно воспроизвел имена реальных исторических лиц периода русско-персидской войны, что способствует эффекту реалистичности и достоверности изображения описываемых событий. В романе Абовяна «*Раны Армении*» они играют важную роль в реализации идейно-художественного замысла писателя. Кроме того, они создают в тексте исторический фон русско-персидской войны, подчеркивая особую роль отдельных личностей, цитируемых в тексте, в частности, русских генералов и полководцев.

Х. Абовян в романе восхваляет русских генералов - *Ермолова, Цицианова, Мадатова, Красовского, Бебутова*, хотя в сравнении с

---

<sup>1</sup> Там же. С. 97

<sup>2</sup> Абовян, Х. *Раны Армении*. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С. 99-102

образами остальных действующих персонажей, они не конкретизированы, менее активны. В романе чувствуется особо доброжелательное отношение автора к генералу *Паскевичу*. Х. Абовян называет его «ангелом-благовестником», «солнцем», «спасителем Армении». В тексте: «Как друг, как небесный ангел-благовестник, с венцом свободы и милосердия, вступил князь *Паскевич* в сардарский дворец». «Он стал солнцем для Армении...»<sup>1</sup>.

Кроме номинативной и идентифицирующей функций, антропонимы выполняют в тексте и *экспрессивно-оценочную функцию*. Экспрессия в функционировании антропонимов в романе актуализируется вокативными формантами и гипокористическими формами: *Апов, Вато, Вани, Каро, Моси*. Это создает некий эмоциональный фон, выражает эмоционально-оценочное состояние персонажа. В тексте: «Эй, *Вато!* сюда скорей, сюда! Дело-то все хуже разгорается. Сейчас придут, всех нас отведут к сардару в крепость»<sup>2</sup>.

Роман «Раны Армении» наполнен именами, связанными с личной жизнью автора. Русско-персидская война, легшая в основу романа, коснулась и биографии самого автора. Личные переживания автора переплелись со страданиями армянского народа. «Автобиографичные имена» (*Апов* - дед Х.Абовяна, *Моси* – трехлетний брат Х. Абовяна) в романе выступают как объекты воспоминаний и ссылок на прошлое. «Нет камня в нашей стране, нет куста, не окрашенного армянской кровью. Ты тоже ушел с ними, мой дорогой *брат Моси*, мой ягненок, братец ты мой! На груди нашей матери, всего трех лет от роду, погиб ты голодной смертью, - да будет светла память!»<sup>3</sup>.

Антропонимы могут служить средством образной характеристики, проявляющиеся через вторичные номинации, сравнения, метафоры. При этом «антропонимы, взятые для сравнения, выступают в тексте в своем основном значении, то есть называют своего исконного носителя. Однако среди всех многообразных характеристик этого человека выделяется какая-то одна черта, которая прямо называется в тексте и по которой с ним идентифицируют другого человека»<sup>4</sup>. Для сравнения в романе выступают главным образом библейские и мифологические образы или исторические личности. В тексте: «Доблестный герой, граф Эриванский, держа за руку епископа Нерсеса, как ангела – *Товия*, вошел в Вагаршапат поздравить католикаса Ефрема и пожелать ему доброго здоровья»<sup>5</sup>. Из примечания: «Товий – библейский образ, благодетель, который ничего не жалеет для

---

<sup>1</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С. 264- 265.

<sup>2</sup> Там же. С. 81

<sup>3</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С. 142

<sup>4</sup> Ермолович, Д.И. Имена собственные на стыке языков и культур. - М.: Р.Валент, 2001.С. 64

<sup>5</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С.261-262

спасения попавших в неволю соотечественников или оказания помощи кому бы то ни было»<sup>1</sup>.

«Имя человека, широко известного благодаря какой-либо черте внешности или характера, легко переносится на других людей, обладающих теми же чертами, при этом, не подвергаясь полной апеллятивации»<sup>2</sup>. В исследуемом романе приёмный сын старейшины деревни Саркиса, Вардан отождествляется с великим армянским спарпетом Варданом Мамиконяном. Имя Вардана у армянского народа ассоциируется с патриотизмом, героизмом, смелостью и мудростью и относится к числу национальных святынь. Имя персонажа и объекта сравнения совпадает, что указывает на неслучайную мотивировку. В тексте: «Если бы вы знали, какой он породы! <...> Ведь он по крови от нашего храброго *Вардана Мамиконяна* происходит...». «Ах, каждый раз, как его вижу, или голос его слышу, так и кажется мне, что стоит передо мною сам *святой Вардан*». Иногда вспомогательным способом в метафоризации могут служить сопровождающие слова к антропонимам, непосредственно указывающие на факт сравнения. В тексте: «Подойди, голубок ты мой, *Вардан мой второй, мой родной Вардан!*...»<sup>3</sup>.

В предисловии романа Х.Абовян символически описал процесс зарождения новоармянского литературного языка, пробуждения армянского самосознания. В тексте: «Армянский язык бежал впереди меня, как *Крез*; уста мои, тридцать лет запечатленные, открыл *Агаси*»<sup>4</sup>. Предисловие автор начинает «древним преданием о неожиданном обретении дара речи глухонемым сыном Креза, источником которого послужила «История» Геродота. Предание было широко распространено в армянской действительности»<sup>5</sup>. Включение легенды в сюжет романа не случайно. Автор сравнил армянский народ с глухонемым сыном. Это было призывом к «дорогому читателю», «дорогому родителю» (народу) на великие подвиги. Сыновья армянского народа отважны, свободолюбивы, благородны. По мнению автора, достаточно сбросить с себя оковы и цепи тысячелетних угнетений, чтобы такой сын народа, как *Агаси*, открыл «уста» великому писателю, «запечатленные тридцать лет».

Иногда *Агаси* в романе «Раны Армении» отождествляли с библейским образом - *Авраамом*. В тексте: «Молодец, *Агаси!* Молодец! Доброй крови,— удалой армянин таким и должен быть... -Ну ребята, чего ждете? Готовьте еду, стелите скатерть, ангел *праотца Авраама* пожаловал к нам... Молодцы, ребята, что своего *старшого* так сберегли!...»<sup>6</sup>. Здесь апеллятив «старший» соотносится со значением антропонима *Авраам* «возвышенный

---

<sup>1</sup> Там же. С. 314

<sup>2</sup> Теория и методика ономастических исследований. / Отв. ред. А.П. Непокупный. - М., 1986. С.45.

<sup>3</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С. 152-153.

<sup>4</sup> Там же. С. 28

<sup>5</sup> Там же. С. 293

<sup>6</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С.211-212

отец», «отец множества (народов)». Налицо сложное переплетение онимов - старшего, любимца народа Агаси, с праотцом, отцом народов Авраамом. В примечании романа указывается, что «ангел праотца Авраама...— означает: человек, приносящий радостную весть»<sup>1</sup>.

Важной для художественной речи является также *функция семантической емкости* антропонима. Наименование персонажа является здесь весьма «экономичным средством непосредственной и косвенной характеристики», которая обычно раскрывается в контексте или этимологически<sup>2</sup>. Например, Х.Абовян, пытаясь образно охарактеризовать своего персонажа, наделяет его прозвищем, основные номинативные свойства которого переходят в образный ряд этого героя. Реализация семантики прозвища по отношению к герою в тексте: «Ему дали прозвище *«аслан баласи» (сын льва)*. Если б пустить его к разбойникам и грабителям, даже связанного по рукам, и то остался бы он цел и невредим». *«- Богатырь-Агаси, не допустивший бы и в смертный свой час, чтобы малейший волосок с места сдвинулся у кого-либо из товарищей!...»*, *«...Агаси, ненаглядный мой храбрец, царь мой, Агаси...»*, *«Но лев Агаси тряхнул головой...»*<sup>3</sup>. На всем протяжении романа главного героя помимо своего личного имени и прозвища сопровождали ассоциативные семы: *«храбрец»*, *«богатырь»*, *«царь»*, либо просто *«лев»*. Внутритекстовый комментарий автора (*«аслан баласи» (сын льва)*) не соответствует интерпретациям словарей. Так, в переводе с арабского языка апеллатив *арслан* означает «лев», а слово *баласи* с персидского языка – «сильный»<sup>4</sup>.

В исследуемом романе наблюдается также *метафоризация* онима, т.е. перенос названия по сходству. В отличие от сравнения, как отмечает Д.И. Ермолович, метафора не ставит рядом два уподобляемых предмета, а образно подменяет один другим, как бы устраняя существующие между ними различия<sup>5</sup>.

Интересным для анализа является наименование *гайканец Вардик*, где слово *гайканец* можно рассмотреть как пример семантизации собственного имени Гайк. Исходным словом для сравнения здесь выступает Гайк - прародитель армянского народа, верховное божество в армянской мифологии, символизирующее храбрость, бесстрашие, величие. В народной этимологии это имя означает «великан». В сознании армянского народа при упоминании этого имени встает образ великого, могучего человека, освободившего свой народ от нашествия тирана Бэла, о котором излагается в эпическом сказании «Гайк и Бэл». Примыкая к личному имени *Вардик*, которое служит предметом сравнения, качества и свойства

---

<sup>1</sup> Там же. С. 313

<sup>2</sup> Фролов, Н.К. Функции антропонимов в художественном тексте / Н.К. Фролов // Духовная культура Сибири. - Тюмень, 1994. - С. 163

<sup>3</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С. 44, 165, 230, 275

<sup>4</sup> Гафуров, А. Имя и история: Об именах арабов, персов, таджиков и тюрков. Словарь / А. Гафуров. - М.: Наука, 1987. С. 126. 131.

<sup>5</sup> Ермолович, Д.И. Имена собственные на стыке языков и культур. - М.: Р.Валент, 2001. С. 65.



прародителя *Гайка* переносятся на другой персонаж, имеющий с ним какие-либо общие характеристики (храбрость, смелость, непокорность). Что интересно, в русском переводе уменьшительно-ласкательный суффикс *-ик* онима *Вардик* никак не влияет на образную характеристику персонажа. Реализация в тексте: «Так молвил юный *гайканец Вардик*, взвел курок у ружья – и в ту же минуту, во мгновение ока, упала пробитая вражья голова на конскую шею, - свет засиял!»<sup>1</sup>.

Примечательно, что в оригинале *гайканец* оформляется с прописной буквы как *Гайказун* (Հայկազուն), что в переводе с армянского означает «из рода Гайка»<sup>2</sup>. Написание *гайканец* со строчной буквы в русском переводе романа – еще один признак слияния имени собственного с нарицательным. Русский суффикс *-ец*, выделяющийся в данном именовании, имеет значение принадлежности к какой-либо местности или территории. Эпоним армян Гайк в романе «Раны Армении» кроме своего основного назначения, воплощения национального образа, употребляется также в значении «множество», используется как обозначение целого народа («армяне»), страны и отождествляет отдельных храбрых представителей армянского народа. В тексте: «... с удивлением спросил наконец преосвященный, утирая при этом слезы и прижимая к груди своей головы этих благородных *гайканцев*...». «Вот он — превосходный, непревзойденный образец жестоких варваров-персов, лютых насильников, губителей народа и страны потомков *Гайка!*»<sup>3</sup>. «-*Армяне*, умрите, как мы, и тем имя вечное обретете!»<sup>4</sup> (вариант переводчика). «— Հայք, Մեզ ցես Մեռք, որ անկա ծարիր»<sup>5</sup> (вариант автора). Практически такая же актуализация наблюдается с антропонимом Арам (сын прародителя армян – *Арам*). «Укрепляйте силы свои, сыны *Арама*, пребывайте в любви и согласии»<sup>6</sup>.

Армянский антропоним Гайк наполнен также вторичным лексическим значением «страна, место проживания». Например, Гайком называли в древности Армению – *Большой Гайк* (Великая Армения) и *Маленький Гайк* (Малая Армения). В тексте: «...на заре и при кроткой ясной луне приветствуете вы друг друга, запечатлеваете поцелуи на губах святых ваших подножий, на устах полей, фимиамом благоухающей земли *Гайканской*»<sup>7</sup>. В данном случае к основе армянского онима *Гайк* примыкает русский суффикс *-ск-* с окончанием. Антропоним *Гайканский* представляет собой полное прилагательное, соответствующее грамматическому роду в данном случае уже топонимного деривата *Гайк*.

---

<sup>1</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С. 155.

<sup>2</sup> Ачарян, Гр. Словарь армянских личных имен, в 5 тт. Ереван, 1942-1962. С.34

<sup>3</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С. 115, 267

<sup>4</sup> Там же. С. 190

<sup>5</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман. - Ереван: Айпетрат, 1955. - 299 с. (на арм. яз.). С. 188.

<sup>6</sup> Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. - Ереван, 1977. С.291

<sup>7</sup> Там же. С. 289

Антропоним *Гайк* воплощает в себе и оттенок космологизма. В армянском языке Гайком назвали и созвездие Orion. В тексте: «Посмотри на созвездие *Гайка*. В этой светлой, в этой лазурной книге записано твое имя, спаситель сынов наших... Возле *Гайка*, на лоне *Просветителя* увидимся мы с тобою»<sup>1</sup>. В данном отрывке созвездие *Гайк* автор заменяет также метафорическим словосочетанием «светлая лазурная книга». Антропонимы *Гайк* и *Просветитель* в данном контексте могут рассматриваться и как территориальные единицы.

Следует отметить, что репрезентация антропонима Гайк в романе наполняется колоритной энциклопедической информацией, доступной каждому армянскому реципиенту и является целостным воплощением, олицетворением армянского народа, он несет в контексте как номинативное, так и оценочно-характерологическое свойство.

Таким образом, можно отметить, что в романе Х.Абовяна «Раны Армении» выбор и функции антропонимов в романе определяется спецификой жанра, идейно-тематическим содержанием произведения и мировоззрением писателя. Являясь важной составляющей художественного пространства романа, исторические имена обладают значительной силой воздействия на реципиента, помогают раскрыть творческую индивидуальность автора и играют важную стилистическую роль в романе. Они несут в себе дополнительную смысловую нагрузку, выступают в качестве объекта сравнения или элемента эпохи, а также могут служить вспомогательным средством мастерства писателя в работе над образом персонажа.

**ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՖՈՒԿՑԻՈՆԱԼ  
ԱՌԱՋՆԱԳԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ  
«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊՈՒՄ**

**ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,  
բանասիրական գիտությունների թեկնածու, դասախոս,  
Հայաստանի Հանրապետություն, Երևան*

Հոդվածը նվիրված է Խ.Արովյանի «Վերք Հայաստանի» վեպում ածանույնների ֆունկցիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Ուսումնասիրության հիմնական նպատակները ներառում է ածանույնների գործունեության բնույթի և ուսումնասիրվող վեպում դրանց ներկայացման առանձնահատկությունների բացահայտումը:

Հետազոտվող վեպում ածանույնները բազմազան են և բազմաֆունկցիոնալ: Անվանական, նույնական և տարբերակիչ գործառույթների հետ մեկտեղ, դրանք կատարում են գլահատող-

<sup>1</sup>Абовян, Х. Раны Армении. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акоюяна. - Ереван, 1977. С. 265.

արտահայտչական և անուղղակիորեն բնութագրող գործառույթներ: Նկարագրական, պատմական և ոճական մեթոդների կիրառումը թույլ տվեց եզրակացնել, որ աճնանունները գեղարվեստական վեպում որոշակի իմաստային բեռ են կրում, իսկ վեպում պատմական անունները նշում և առանձնացնում են կոնկրետ անձը, հանդես գալիս որպես համեմատության առարկա, հանդիսանում են կերպարների բնութագրման միջոց և տեքստի մեջ կարելի էր ոճական դերակատարություն ունեն:

**Հիմնաբառեր`** *աճնանուն, ակտուալացում, պատմական անվանումներ, համեմատություն, գործառույթ, բնութագիր:*

## **FUNCTIONAL FEATURES OF ANTHROPONYMS IN THE NOVEL "WOUNDS OF ARMENIA" BY KH.ABOVYAN**

**GAYANE HOVHANNISYAN**

*Armenian State University of Economics,*

*PhD in Philology, Lecturer,*

*Yerevan, the Republic of Armenia*

*The article touches upon the study of the functional features of anthroponyms in the novel "Wounds of Armenia" by KH.Abovyan. ». Among the main tasks of the study are the detection of the anthroponymic units and their functions as well as the peculiarities of their representation in the researched novel.*

*The anthroponyms in the researched novel are diverse and multifunctional. Along with nominative, identifying and differentiating functions, they perform evaluative-expressive and indirectly-characterizing functions. The use of descriptive, historical and stylistic methods enables us to conclude that anthroponymic units in the literary text carry a certain semantic load in the novel, while historical names in the novel designate and distinguish a specific personality, act as an object of comparison, are a means of the character descriptions and play an important stylistic role in the text.*

**Key words:** *anthroponym, actualization, historical names, appellative, comparison, function, characteristic*

# ԲՆԱԴԱՇՏ ԳՐՈՂԻ ՓՈՔԸ ԱՐՁԱԿԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

## ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱԼ

Հյուսիսային համալսարանի Լեզուների, գրականության և լրագրության  
ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[nunemkrtchyan.69@mali.ru](mailto:nunemkrtchyan.69@mali.ru)

**Ուսումնասիրության նպատակը Վախթանգ Անանյանի հարուստ ու բազմերանգ գույներով, ճանաչողական նշանակություն ունեցող, գեղարվեստական սքանչելի նկարագրություններով հարուստ կենդանագրության էջերի մեկնությունն է: Այն որոշակի պատկերացում է տալիս նաև Անանյան հասարակական գործչի ծավալած գործունեության վերաբերյալ:**

**Առաջադրված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները՝ վերլուծել ազգային հոգեբանության և հոգեկերտվածքի, բնության փիլիսոփայության, մարդ-բնություն փոխհարաբերության վերաբերյալ անանյանական տեսակետները, բացահայտել մտածողության ու աշխարհընկալման, սոցիալ-մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի նրա մեկնակետերը, վերհանել փոքր արձակում առկա հիմնահարցերին Անանյանի անդրադարձի միտումների քննությունը և այն հրատապ խնդիրների վերլուծումը, որոնք եղել են բնապաշտ գրողի տեսադաշտում:**

**Աշխատանքում կիրառել ենք վերլուծական և գրականագիտական մեկնության մեթոդները:**

**Ուսումնասիրությունը մեր ժամանակաշրջանի համար արդիական և կարևոր ոչ միայն Անանյանի խոսքի և տեսակետի յուրահատկությամբ, մարդասիրական արժեքների կորստյան, բնության ավերման այսօրվա հրամայականով, այլև նրա կողմից առաջ քաշված հիմնահարցերի քննության տեսանկյունից:**

**Հիմնաբառեր՝** հայրենասեր գրող, հրապարակախոս, հայրենի բնության անձնվեր դաշնակից, կենդանագրության յուրօրինակ էջեր, բնապաշտական հետաքրքրություններ, կենսափիլիսոփայություն, որսորդական պատմվածքներ:

## Ներածություն

Կան անհատականություններ, որոնք մեր կյանքի անբաժան ուղեկիցն են անգամ այն ժամանակ, երբ այլևս կենդանի չեն: Այդ երջանիկներից է Վախթանգ Անանյանը՝ հայրենասեր գրողն ու հրապարակախոսը, հայրենի բնության անձնվեր դաշնակիցը, ընթերցողների բարեկամը: Վ. Անանյանը գրական ասպարեզ է իջնում 1920-ական թվականների վերջին՝ բերելով բնության զարմանալի զգացողություն, ինքնատիպ պատկերներ՝ հարուստ ու բազմերանգ գույներով, ճանաչողական նշանակություն ունեցող, գեղար-

վեստական սքանչելի նկարագրություններով հարուստ կենդանագրության յուրօրինակ էջեր: Լինելով իր նախորդների գրականության լավագույն ավանդների շարունակողը՝ նա իր ներդրումն է ունենում հայ գրականության զարգացման մեջ՝ սերունդներին կտակելով ժանրային ու թեմատիկ առումով բազմաբնույթ, համընդգրկուն, հարուստ ժառանգություն: Վ. Անանյանը ներկայացնում է կենդանական աշխարհը՝ իբրև յուրահատուկ օրենքներով ապրող ամբողջություն, նոր երանգ է հաղորդում սոցիալական հիմնահարցերին, գեղեցիկ ընկալմանը, մարդու և բնության կապին. «Վախթանգ Անանյանի լավագույն ստեղծագործությունները, որոնք թարգմանված են բազմաթիվ լեզուներով, ընթերցողին տալիս են ճանաչողական հարուստ նյութ Չայաստանի գեղատեսիլ բնության ու դրա մարդկանց մասին»: <sup>1</sup>

Ժանրային առումով Վ. Անանյանի փոքր արձակի գործերը բազմազան են՝ որսորդական պատմվածք, ակնարկ, գրույց, նովել, բնագիտական և որսորդական պատումներ, խոհեր, հուշեր, բնասերի դիտողություններ, որսորդական «փչոցներ», հեքիաթանման պատմություններ: Ժանրային բազմատեսակության մեջ արտահայտվում են գրողի բնապաշտական հետաքրքրություններն ու կենսափիլիսոփայությունը: Այնուամենայնիվ, Վ. Անանյանի ստեղծագործության ժանրային առավել բնորոշ տարատեսակները որսորդական պատմվածքները, ակնարկներն ու բնագիտական գրույցներն են:

Վ. Անանյանի փոքր արձակի ստեղծագործություններում արծարծված շատ թեմաներ՝ մարդու և բնության փոխհարաբերությունը, որսորդությունը որպես բնաշխարհը տեսնելու և վարպետորեն ներկայացնելու արվեստը, հասարակական դիրքորոշման և բարոյագեղագիտական դաստիարակության հիմնախնդիրները, բնաշխարհի մարդկանց կենսափիլիսոփայությունը, բնության պահպանման հարցերը, կարոտ են համակողմանի քննության: Իրապես գրողի փոքր արձակում արտացոլված բազմաթիվ խնդիրներ այսօր առավել քան արդիական են ու հրատապ: Մարդասիրական արժեքների կորստյան, բնության ավերման, Էկոլոգիական վթարների պայմաններում պահանջվում են սթափ մոտեցումներ և հիմնավոր լուծումներ: Վ. Անանյանի փոքր արձակի գործերը, հայրենի բնության և հայ իրականության մի ամբողջ ժամանակաշրջանի հավաստի պատկերը ներկայացնելու իմաստով, ցայժմ չեն դարձել առանձին հետազոտության թեմա:

### **Չայրենի բնության անձնվեր դաշնակիցը**

Վ. Անանյանը ոչ միայն տաղանդավոր բնասեր ու գեղագետ է, այլև արժանի քաղաքացի, հասարակական մարդ, որին հուզում են հայրենի երկրի գեղեցկությունները, բնության բախտը, երիտասարդ սերնդի դաստիարակությունը: Չարմանալի տպավորիչ են նրա հոդվածները, որոնք արմատավորվել են պատանի բնասերների հոգում՝ նրանց ուշադրությունը սևեռելով հայրենի հողի ու բնության պահպանմանը: Թերևս դրա վկայությունն է գրողի «Չայաստանի կենդանական աշխարհը» վեցհատորյակի

<sup>1</sup> «Детская литература», № 1. 1969 г., стр. 78.

ծնունդը, որը գիտական իմացությամբ ու բժախնդրությամբ, գրական գեղեցիկ ոճով ներկայացնում է Հայաստանի կենդանական աշխարհի ամբողջական պատմությունը: Այս գիտական աշխատանքի մասին Վ. Անանյանը գրում է. «...Այդ նմուշները կուտակվեցին ժամանակի ընթացքում և գրելիս անգին կյուրթ ծառայեցին ինձ համար...Այս աշխատանքը գրվել է իմ ամբողջ կյանքի ընթացքում»:<sup>1</sup>

Անգնահատելի արժեք են «Հայաստանի կենդանական աշխարհի» հինգ հատորները, որ գրականագիտության կողմից դասվում են «գիտագեղարվեստական» ժանրին: Գրականագետ Ս. Աղաբաբյանը գրում է. «Չարմանալի հատորներ, ուր ի մի եկան կենդանաբան-գիտնականն ու գեղարվեստական խոսքի վարպետը, պատմաբանն ու բնասերը, լեզվաբանն ու որսորդը, հնագետն ու ազգագրագետը»:<sup>2</sup>

Վ. Անանյանը, հայ գրականության մեջ լինելով արկածային ժանրի հիմնադիրը, ստեղծում է հայ արձակի մայուն արժեքներ: «Սևանի ափին» և «Հովազաձորի գերիները» գործերում բնակարիչ գրողը ընթերցողի առջև բացում է կախարդանքների մի նոր աշխարհ, հրաշքների մի նոր գանձարան, որով գերում է մանուկ ու մեծ ընթերցողին: Այս ստեղծագործությունները մեծ ճանաչում են բերում հեղինակին: «Սևանի ափին» (1951) վիպակի արժանիքներից են մարդասիրական, հայրենասիրական շունչը, բնության նկարագրությունները, կերպարների համոզականությունը, գրելաձևի ինքնատիպությունը: Վիպակի Եկրանավորման գործին ձեռնամուխ է լինում կինոռեժիսոր Ալ. Ռոուն՝ ստեղծելով «Լեռնային լճի գաղտնիքը» գունավոր գեղարվեստական կինոնկարը: Այն, ցուցադրվելով ոչ միայն հայ, այլև արտասահմանյան կինոթատրոններում, մեծ արձագանք է ունենում: Ֆրանսահայ «Լույս Փարիզի» թերթը գրում է, որ «Սևանի ափին» վիպակը սիրով են ընթերցում և այդ թեմայով հանած կինոնկարը մեծ հետաքրքրությամբ են դիտել Ֆրանսիայում:<sup>3</sup>

1947-66-ին հրատարակվում են Անանյանի որսորդական պատմվածքների վեց պրակները: Վ. Անանյանի «Որսորդական պատմվածքներ» ժողովածուն նույնպես նվիրված է հայրենի բնությանը, սակայն այստեղ ի հայտ է գալիս բնություն-մարդ փոխհարաբերական կապի գեղարվեստական մարմնավորումը: Հիրավի, Վ. Անանյանի «Որսորդական պատմվածքները» շատ կարդացվող գրքերից է բոլոր տարիքի ընթերցողների համար: Հրատարակվում են նաև «Մանկությունը լեռներում» (1954), «Լեռնային կածաններով» (1956) ժողովածուները: «Հին վրանի փոքրիկ բնակիչը» և «Ո՛ւր են տանում կածանները» վեպերը ինքնակենսագրական են. նրանց հիմքում ընկած են Վ. Անանյանի հետ մանկության ու պատանեկության տարիներին կատարված դեպքերը: Վաղ հասակից նա սկսում է ճանապարհորդել, ուսումնասիրել բնությունը, միջավայրը: Լինում է

<sup>1</sup> Անանյան Վ., Հայաստանի կենդանական աշխարհը, հ.1, Ե., 1961, էջ 7:

<sup>2</sup> Աղաբաբյան Ս., «Արդի հայ գրականության պատմություն», հ.1, Երևան, Հայպետհրատ, 1993, էջ 119:

<sup>3</sup> «Լույս Փարիզի», Վախթանգ Անանյան, 1958, №29, 12 ապրիլի:

Ղուրդուղուլիի, Սամաղարի, Աշտարակի շրջաններում, ծանոթանում Հայաստանի սբանչեյի բնությանը և նրանում արարող հայ աշխատավորների կյանքին: Գեղջուկ պատանին աստիճանաբար գրում է համարձակ, իրական փաստերով հագեցած հոդվածներ ու ակնարկներ: Թերևս այդ տարիներից էլ գալիս է փոքր արձակի ժանրին՝ պատմվածքին ու ակնարկին տիրապետելու նրա վարպետությունը: Ազգագրական, փիլիսոփայական, բնապաշտական գրի առած մտքերը հետագայում հիմք են հանդիսանում նրա բնության պատմությունների համար: Անտարակոյս, այս տարիներին էլ ի հայտ են գալիս գրառումներն իր օրագրերում, ակնարկներում, «սահմանների» փնտրողը, որտեղ հանդիպում են բնությունն ու մարդը: Ուսումնասիրելով բնության փիլիսոփայությունը՝ մարդու և բնության յուրօրինակ փոխհարաբերությունը, աշխատելով հասկանալ մարդուն ու բնությունը կապող բազմաթիվ կապերի բազմազանությունը, իր համար կրկին բացելով «հոգին» և «նյութը»՝ Վ. Անանյանի ձեռք է բերում մտածող փիլիսոփայի փորձ: Ինքնատիպ «բնության զգացողությունը» վկայում է մտածողության ու կեցողության հավերժական հիմնահարցերով մտահոգվող գրողի աշխարհընկալման շրջանակը: Եվ երբ հրապարակվում են նրա առաջին գրքերը («Կրակե օղակի մեջ», 1930, «Ոչ մի գայլ մեր հանդերում», 1930, «Որս», 1934 և այլն), նա արդեն մեկն էր լուրջ գրողներից, որը մեծ վարպետությամբ պատկերում է գյուղական կյանքի դժվարին պայմանները, Դիլիջանի խիստ ու միաժամանակ անչափ գեղեցիկ, բարեբեր բնությունն ու միշտ կարիքի մեջ ապրող, բայց ապրելու ցանկությունը չկորցրած, յուրահատուկ կենսափիլիսոփայություն ունեցող բնաշխարհի մարդկանց: Գյուղական կյանքի նկարագրությունները, դրանց ուղղակի գրառումները նրա գլխավոր թեմաներից մեկն է: Վ. Անանյանը տեսնում է աշխարհը ոչ միայն բնապաշտի ու գրողի աչքերով, այլև փիլիսոփայի: Բացահայտենք մտորումների ճանապարհը, որին գրողը հասնում է իր «բնության զգացողությամբ». դա հնարավոր է, եթե պատկերացնենք գաղափարների շրջանակը և նրա աշխարհընկալման ձևավորման պատմական հիմքերը: Վ. Անանյանի պատմվածքներում, ակնարկներում, օրագրերում և հուշագրություններում ներկայացվում են գրողների, մտածողների, հետազոտողների, հրապարակախոսների դատողությունները, կարծիքները, որոնք նա արժևորում, զարգացնում ու կատարելագործում է: Այսպես՝ գրող Մաքսիմ Ռիլսկու հետ հանդիպման ժամանակ Վ. Անանյանն այնպես է ներկայացնում Հայաստանը, որ վերջինս «...Աչքը հառած այդտեղից դեպի Մասիսները փռված Արաքսի հովտին, նա մրմնջում է իր սրտի խոսքը. հենց այդ երեկո նա ոգեշնչված արտասանեց Գրողների տանը՝ «Սոնետ Հայաստանին»<sup>1</sup>: Կամ որքան ջեմություն կա Բակունցի մասին հիշողություններում. «Որսից վերադառնալուց հետո սիրով պատմում էի տեսածս և, կարծում եմ. իրար հասկանում էինք, որովհետև բնության սիրահար էր նա, և սիրտը գեղջկական կյանքի կարոտով լի»:<sup>2</sup>

Կարևոր է Վ. Անանյանի աշխարհընկալման և հայացքների ուսումնասիրությունը՝ բոլոր նրբություններով, որը կարելի է անվանել բնության փիլիսոփայություն, և այն կազմում է անանյանական «բնության

<sup>1</sup> Անանյան Վախթանգ, Երկեր, Երևան, հ.3, էջ 275:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 293:

զգացմունքների» հիմքը: Վ. Անանյանի գործերում այդ ամենը ձևավորվում է հայ դասական գրականության ավանդույթների յուրացման, բնագիտական գործընթացի ուսումնասիրման և տեսությունների հետազոտման արդյունքում: Դրանք, ամենից առաջ, գրողի պատկերացումներն են կեցության օրենքների, հոգեկանի և նյութականի, շրջապատող աշխարհի մասին: Վ. Անանյանը մեծ ակնածանքով, բարեպաշտությամբ էր վերաբերվում հայ դասական գրականությանը, նա չէր կարող չնկատել բնապատկերներում բանահյուսության լավագույն օրինակների ոչ միայն պոետիկական, այլև փիլիսոփայական կողմը, որոնցով դաստիարակվել էր («Խոսք Արա լեռան մասին»): Գրողի «Կյանքն իմ պարտեզում»-ը, «Մտորումներ»-ը ստեղծված են հայեցողական արձակի ոգով, վերացական խորհրդանիշներով. նա բնապաշտ է՝ ամենից առաջ հարազատ հանդերում գարնան հասարակ նախանշանները և Խալափ, Բյարքե, Ալագյազ, Արջաքար, Արայի լեռների հեքիաթային բարեմասնությունները գնահատող: «Խոսք Արա լեռան մասին» ստեղծագործության մեջ Վ. Անանյանը գրում է. «Դիմացից երբևէ Նայել էք Արա լեռանը: Ես Նայել եմ և ուշադիր եմ Նայել: Եվ որքան խորն եմ Նայել, այնքան նմանություն եմ գտել նրա և հայկական Արա արքայի միջև: Ահա նա վեհորեն նստած է իր ապառաժյա գահին, ուսերին զգած ծիրանին՝ այլք առ այլք ցած է իջնում մինչև Յրագղանի ձորը...»: <sup>1</sup>Փիլիսոփայելում է Վ. Անանյանը՝ ճշմարտության արտահայտման մեջ կա Միտք, Յոգի. «Նայել եմ, Նայել ու մտածել. իսկապես որ մայր բնությունը արքայի գլխով, արքայի թագով, արքայի դեմքով ու արքայական նստվածքով է կերտել այս լեռը»:<sup>2</sup>

Ինչպես ակնարկային արձակի ժանրի ստեղծագործող, նա ավելի մոտ է սովորական պատահականություններին, իսկ լեռները ընդունում էր որպես Յոգու արտահայտություններ. «Մտիկ եմ անում Լոռու աշխարհքը ոնց որ ոտներիս տակ լինի: Դիմացս Լոք, Լալվար, Լեջան սարերն են: Բարձր ու հպարտ»:<sup>3</sup>

Աշխարհի երկվությունը (դուալիզմը) գրողի մտքերում և նրա արձակում արտացոլված է մարդու երկնային ու երկրային կյանքի պատկերացումներով: «Իմ իմաստուն, իմ բարի ուսուցիչները», «Գեղեցիկ է այն, ինչ բնական է», «Բնափիլիսոփայություն» ստեղծագործություններում զարգացնում է արձակի կապը փիլիսոփայության հետ: Սակայն Վ. Անանյանին գրավում է ոչ միայն «մտքերի պոեզիան», այլև մարդու հոգևոր աշխարհի ու բնության միասնականության միտքը: Միաժամանակ նշենք, որ գրողի «Արագիլը» (հ.3, էջ 116), «Յամր խանդ և համր սեր» (հ.3, էջ 238), «Ցուցամոլն ու համեստը» (հ.3, էջ 245), «Իմ անշունչ ու շնչավոր թռռնիկները» (հ.3, էջ 161) ստեղծագործությունները վերաբերում են բնության «զգացմունքներին» կամ բնության շնչավորմանը: Կրոնա-փիլիսոփայական ազնուստիցիզմը (փիլիսոփայական ուսմունք է Աստծո, օբյեկտիվ աշխարհի և ճշմարտության լիովին կամ մասնակի կերպով անճանաչելի լինելու մասին) և մարդու ձգտումը բարձրագույն գոյին առանձնանում են գրողի՝ բնության նկատմամբ ունեցած

<sup>1</sup> Անանյան Ն., «Վախթանգ Անանյան, Երկեր», Երևան, 2005, էջ466:

<sup>2</sup> Անանյան Վախթանգ, Երկեր», Երևան, 2005, էջ467:

<sup>3</sup> Անանյան Վախթանգ, Երկեր, Երևան, հ.3, էջ 188:



պատկերացումներում և որոշում արվեստագետի բնության զգացողությունը: Նմանատիպ դատողությունները վերաբերում են, որպես կանոն, Վ. Անանյանի ուշ շրջանի արձակին՝ «Մտորումներ», «Յուշեր», «Խոհեր» և այլն: «Հին վրանի փոքրիկ բնակիչը» ինքնակենսագրական գրքում Վ. Անանյանը գրում է. «Իմ հայրը, որ կրթություն չուներ, բայց լիքն էր ժողովրդական իմաստությամբ...գնահատական էր տալիս եկեղեցու և հավատքի դերին. «...Շինել են, որ մարդիկ մեջը հավաքվեն, աղոթեն ու հոգով մաքրվեն: Իրենց հաշիվ տան, թե էս աշխարհում ո՞նց են պահում իրենց...Հավաքվում են նաև, որ բարի խրատներ լսեն՝ Աստվածաշնչից, Շնորհալու պես մարդկանց գրածներից, մարգարեների խելոք խոսքերից...Ու կատարեն էդ խրատները: Եթե չլինեն խրատները, եթե հավատը չլինի՝ չարն աշխարհը կուտի»»: <sup>1</sup>

Վ. Անանյանի վրա ներագդել է այն միտքը, որ հասնել հոգու և բնության նյութական ներդաշնակության հնարավոր է միայն կեցության իրական պատկերացումներում: «Որսկան Ավագը», «Վաթան», «Իմ խենթ սիրուհին» ստեղծագործություններում գտնում ենք այն արտացոլումը, թե կեցությունը անհաղթահարելի ներհակություն է հավերժական բնության և մահկանացու մարդու միջև, ինչպես նաև բնության օրենքների դեմ անհատի անզորության գաղափարն է: Հրապուրիչ պատմողն իր գրքերում տալիս է լիարժեք ազատություն բնապաշտին, և բնապաշտը պատկառանքով, փութեռանդությամբ է վերաբերվում կյանքի ճշմարտացիության ամեն մի փաստին: Վ. Անանյանի մտորումների հաջողության գաղտնիքը մեկ դեմքում ստեղծագործողին ու որսորդին համախմբելու հմտությունն է: Ն. Անանյանը պարզաբանում է. «Այն հետագայում իր ծավալումները պիտի ստանար Վ. Անանյանի պատմվածքներում ու վեպերում և դառնար նրա գեղագիտական հայեցողության հիմնաքարը»: <sup>2</sup>

Բնության պատկերների «կենդանի» լինելը պաշտպանում են ոչ միայն հայ գրողներ Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ակ. Բակունցը, Ստ. Չորյանը և այլք, այլև ռուս առաջավոր արվեստագետներ Վ. Բելինսկին, Ն. Չերնիշևսկին և այլք: Զաղե՛լ է արդյոք երիտասարդ Անանյանը նրանց ստեղծագործությունների բնափիլիսոփայական մտքերը: Վ. Անանյանին կարելի՞ է համարել այդ գրողների ավանդույթների շարունակողը: Հովհ. Թումանյանի, Ստ. Չորյանի, Ակ. Բակունցի բնապատկերները գեղագիտական կանոններ են, որոնք կան Վ. Անանյանի ստեղծագործական մտքում: Գրականագետ Ս. Աղաբաբյանը գրում է. «Ճանապարհի առաջին գրքերը եղան Հովհ. Թումանյանը՝ հայ գրականությունից, Ի. Ս. Տուրգենևը՝ ռուսականից: Մեկի բնաշխարհիկ շնչով ներթափանցված, ազգային գույներով և ժողովրդական շեշտերով հարուստ պատմությունները՝«Անուշից» մինչև «Արջաորս», մյուսի «Որսորդի հիշատակարանը»՝ ռուսական բնության և ռուս մուժիկի հզոր պատկերագրումներով»: <sup>3</sup>

<sup>1</sup> Անանյան Վախթանգ, Հին վրանի փոքրիկ բնակիչը, Երևան, 1978, էջ 277:

<sup>2</sup> Համակուսեցի բանասերներ, Երևան, 2010, էջ 55:

<sup>3</sup> Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, ԳԱԱ հրատ, Երևան, 1993, էջ

Վ. Անանյանի մտորումներում ոչ մեկ անգամ է խոսվում Հովի. Թումանյանի մասին, որի ստեղծագործությունները գրողը համարում է գյուղացու, շինականի դեպի բնությունն ուղղված հայացքներ: Պատահական չէ, որ 1934թ.-ին լույս տեսած «Որս» ժողովածուի բնաբանը Հովի. Թումանյանի խոսքերն էին՝ «Ե՛յ հին ծանոթներ, Ե՛յ կանաչ սարեր», քանի որ թումանյանական բնագագողությունը, արմատավորվելով գրողի հոգում դեռևս մանկուց, իր ուրույն դրսևորումն է գտնում նրա «Որս» ժողովածուում: Վ. Անանյանը հիմնականում հետևում է նախորդների բնապաշտական օրինակին. մեծագույն իմաստուն գրողներից նա սովորում է հասկանալ ազգային փիլիսոփայությունը, ուշադրություն դարձնել սովորական գյուղացու գեղագիտական հոտառությանը: Նրա ստեղծագործություններում ապշեցնում է հասարակ գյուղացուն շրջապատող հսկայական նյութական շրջապատի ճշտությունը, նրա պատմվածքների գլխավոր հատկանիշը անկեղծ ու բնական լինելն է, որը և գնահատում են Ե. Չարենցը, Ավ. Իսահակյանը, վերջինս ասում է. «Ես կարդում եմ Անանյանի բոլոր գրվածքները՝ սկսած թերթերում տպված օչերկներից մինչև գեղարվեստական լուրջ գործերը: Որպես տաղանդ՝ նա ինքնատիպ է, չի կրում ոչ մեկի ազդեցությունը: Նա ստեղծագործում է այնպես, ինչպես անտառների եղևիկն է ստեղծում իր կոտոշները՝ բնական»:<sup>1</sup>

Վ. Անանյանը տեսնում է բնության մեջ հրաշալին, երկնայինի սկիզբը երկրի վրա: Գրողի աշխարհընկալումը ձևավորվում է 20-րդ դարի բնագիտական հայտնագործությունների պայմաններում. որքան պահանջկոտ է մարդն իր նկատմամբ բարոյագիտական պլանում, այնքան մոտ է նա բնությանը: Անկարկներում՝ «Մեր բույնը», «Մտքեր բնության մասին», «Պատասխան հարցերին» և այլն, Վ. Անանյանը շարունակում է իր հանճարեղ նախորդների ավանդույթները՝ հետագոտելով ժողովրդի կերպարային մտածելակերպը: Անհանգիստ ստեղծագործողը աշխատում է չանտեսել գյուղացու տեսողական ու զգացողական կարողությունները: Բնության մարդուն Վ. Անանյանն առաջնորդում է դեպի հասարակություն, և դա ռուսոսոյական հեռացումի տարբերակը չէ, այլ մարդկային մտքի ու բնության ներդաշնակությունն է: Վ. Անանյանը չունի սրտամաշ, տխուր բնապատկերներ. «Նա ուրախ բնության երգիչ է: «Կանաչ աշխարհի» ամեն մի երևույթից, ամեն մի բեկորից՝ թփի վրա նստած ցողի կաթիլից, դաշտահավերի ձայներից, ծառի առաջին բողբոջից սկսած նրա բնության նկարագրությունները ողողված են անզուսպ հրճվանքով, բնության հետ մշտական բարեկամության գնալու ապրումներով»:<sup>2</sup>

Գյուղական կյանքը՝ հետաքրքիր մանրամասնություններով, հյուսեղ գույներով է ներկայացրել Վ. Անանյանը: Իր անձնվիրական ներդրումը գիտության մեջ գրողը մեծացնում է նրանով, որ ռեալիստորեն է պատկերում հայ գյուղացու կյանքը, բնությունն ու բնաշխարհի մարդկանց, տալիս է ակնառատեսի մեկնաբանություններ: Վ. Անանյանի արձակում գերիշխում է սերը բնության և մարդու նկատմամբ, այն մերձեցնում է մարդկանց, նրանց

<sup>1</sup> «Ազգ», 20 դեկտեմբեր, 2008թ:

<sup>2</sup> Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, ԳԱԱ հրատ, Երևան, 1993, էջ

մեջ ներշնչում է հավատ և փոխվստահություն, սովորեցնում է հանրորեն մտածել. «Վերականգնելով ու պահպանելով հայրենի բնության անաղարտ վիճակը՝ մենք կյուրական և, մանավանդ, բարոյական մեծ հարստություն ենք թողնում մեր հետնորդներին»:<sup>1</sup>

Չարմանալիորեն ժամանակակից ձևով է նա հասկանում բնության փիլիսոփայությունը: Բնության մեջ է գտնում մարդու հանգստությունը, մարդն այնտեղ է շունչ քաշում, որպեսզի ուժ հավաքելով՝ Նորից սկսի պայքարել ու ապրել ապագայի երազանքներով: «Ձոն իմ մայր բնությանը» պատմվածքում գրում է. «Մեր լեռներից ու անտառներից հեռու այս քաղաքում, երբ այքս խփում եմ, իմ առաջ մեր սարերն ու անտառներն են երևում իրենց փարթամ գեղեցկությամբ և հոգումս հնչում է մեր ջրվեժների շառաչունը մթին կիրճերում: Աշնան տերևաթափի մեղմ սվսվոցն եմ լսում, որ ինձ համար քաղցր ու դյուրօր է ավելի, քան օպերայում լսածս ամենադյուրօր էրաժշտությունը»:<sup>2</sup>

Այսպիսով՝ բնագիտության նկատմամբ հետաքրքրությունը, գրողի կարծիքով, դաստիարակում է ոչ միայն բնության զգացողություն, այլև առաջավոր մտածողություն, կյանքում պայքարելու ձգտում, վեհ գաղափարներ: Կարելի է ենթադրել, որ հենց բնագիտական գիտություններն օգնեցին Վ. Անանյանին ճիշտ ըմբռնելու այն կարծիքները, որոնք ընթանում էին բնագիտական տեսության, փիլիսոփայության և գեղագիտության խաչաձևմամբ: Բնությունը նրա համար եղել է գեղեցիկի անհատնելի աղբյուր՝ իր անվերջանալի առարկայական բազմազանությամբ, գնահատված նույնիսկ իր «անթափանցելիությամբ». «Բայց, հավատացնում եմ ձեզ...ես կխամրեմ, եթե պարբերաբար այցի չգնամ իմ մանկության օրերի հին ծանոթներին՝ մեր լեռների գետակին, որի ջրվեժների տակ կարմրախայտ էի որսում, մեր փարթամ անտառներին, որոնց թավուտում քնում էի, մեր գողտրիկ եղևիկներին, որոնց հեզանազ վազքին նայում էի հմայված ու տարված...»:<sup>3</sup>

## ФИЛОСОФИЯ МАЛОЙ ПРОЗЫ ПИСАТЕЛЯ-НАТУРАЛИСТА

### НУНЕ МКРТЧЯН

*заведующая кафедрой языков, литературы и журналистики Северного университета, кандидат филологических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

Целью исследования является интерпретация страниц прозы Вахтанга Ананяна, посвященных описанию животных. Проза писателя имеет познавательное значение, богата чудесными художественными

<sup>1</sup> Անանյան Ն., «Վախթանգ Անանյան, Երկեր», Երևան, 2005, էջ506:

<sup>2</sup> Անանյան Վախթանգ, Երկեր, Երևան, հ.3, էջ 55:

<sup>3</sup> Անանյան Վախթանգ, Երկեր, Երևան, հ.3, էջ 56:

описаниями, насыщена многообразием красок. Исследование также дает определенное представление об общественной деятельности В.Ананяна.

Для достижения поставленной цели были выдвинуты следующие задачи: проанализировать взгляды В.Ананяна на национальную психологию, менталитет, философию природы, взаимоотношения человека и природы, раскрыть особенности его мышления и мировосприятия, его позицию в отношении социально-культурной и общественно-политической жизни, выявить тенденции, касающиеся отношения Ананяна к проблемам, затронутым в его малой прозе, и анализ злободневных проблем, находящихся в поле зрения писателя-натуралиста.

В работе использовались аналитический метод и метод литературоведческой интерпретации.

Исследование является актуальным и важным для нашего времени не только по причине своеобразия прозы и позиции Ананяна, утраты гуманистических ценностей, уничтожения природы, но и с точки зрения важности рассмотрения поднятых им вопросов.

**Ключевые слова:** *писатель-патриот, публицист, преданный союзник родной природы, уникальные страницы прозы, посвященные описанию животных, натуралистические интересы, натурфилософия, охотничьи рассказы.*

## THE PHILOSOPHY OF SMALL FICTION ENVIRONMENTALIST WRITER

**NUNE MKRTCHYAN**

*The Chair of Foreign Languages, Literature, Journalism Department  
of Yerevan Northern University,*

*Candidate of Philological Sciences, Associate Professor,  
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the study is the interpretation of the biography pages rich in Vakhtang Ananyan rich in colors, cognitive significance, as well as wonderful artistic descriptions. It also gives a certain idea about the activities of Ananyan as a public figure.

In order to achieve the stated goal, the following tasks were set: to analyze Ananyan's views on national psychology and psyche, philosophy of nature, and human-nature relationship, to identify his thoughts on the world perception, social-cultural, social-political life, to analyze the urgent problems which were in the scope of the naturalist writer in his small prose.

We used analytical and literary interpretation methods in the work.

The study is relevant and important for our time not only because of the uniqueness of Ananyan's style and point of view, the loss of humanitarian values, and the destruction of nature but also from the point of view of examining the issues raised by himself in his works.

**Keywords:** *patriotic writer, public speaker, a devoted ally of native nature, unique biography pages, naturalist interests, biophilosophy, hunting stories.*

**ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԵԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ  
ՀԱՐԱՓՈՓՈՒՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

**ՍԻԼՎԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Երևանի Հյուսիսային համալսարանի դասախոս,  
փիլիսոփայական գիտությունների, թեկնածու, դոցենտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[silva\\_hovhannisyan\\_2017@mail.ru](mailto:silva_hovhannisyan_2017@mail.ru)

«Աչքը տեսնում է հեռուն, բայց միտքը ավելի հեռուն»

**Հողվածի նպատակն է փիլիսոփայական մի շարք մեկնությունների վերլուծության շրջանակում ցույց տալ ստեղծագործական և քննադատական մտածողության որոշիչ դերը հարափոփոխ ժամանակներում:**

**Այդ խնդրի իրականացման համար՝**

**1. Փորձ է արվում կառուցել մարդկային մտածողությանը բնորոշող նոր ձևակերպում՝ այն սահմանելով որպես գիտելիքի, կենսափորձի և ապրումների ամբողջություն:**

**2. Հիմնավորվում է այն գաղափարը, որ ստեղծագործական մտածողության վկայությունը մարդու ամբողջ մշակութային գործունեությունն է, քանի որ հենց ստեղծագործականի շնորհիվ է բացահայտվում մարդու ճշմարիտ բնույթը, իրականը և հնարավորը համադրելու կարողությունը՝ «ինչ կլինի, եթե» պայմանով:**

**3. Նկատվում է, որ «տեղեկատվական գրոհի» մեր ժամանակաշրջանում առավել քան կարևորվում է քննադատական մտածողությանը հատուկ չափավոր հոռետեսությունը, կարծիքների համադրումը և ինքնաքննադատական հայացքը:**

**4. Տարբերակվում են այն մեթոդներն ու եղանակները, որոնց շնորհիվ յուրաքանչյուրի մոտ կարելի է արթնացնել «ոչ ստանդարտ» մտածողության հմտություններ:**

**Հիմնաբառեր՝** մտածողություն, ստեղծագործական և քննադատական մտածողություն, համոզմունք, հոռետեսություն, աշխարհի պատկեր, տեսակետների համադրում, ինտելեկտուալ ազատություն:

Սկսենք ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա Ռ. Դեկարտի հայտնի խոսքերով՝ «Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ» (Cogito ergo sum), որում մտածողությունը դիտվում է մարդու էական, տարբերիչ հատկանիշ, այլ խոսքով, հենց մտածելու ընդունակությունն է հավաստում «ես»-ի լինելիության մասին: Իհարկե, այստեղ մեր խնդրից դուրս համարելով պատասխանել այն խնդրահարույց հարցին, թե ի՞նչ ենք հասկանում «գոյություն» ասելով, միաժամանակ նկատենք, որ մտածողության մասին հարցադրումը ևս և չի կարող ստանալ վերջնական և միանշանակ պատասխան: Մտածողությունը առեղծվածային մտային գործընթաց է:

Մտածողությունը բացատրում է ամեն ինչ՝ ինքը մնալով անբացատրելի, քանի որ այն ոչ կարող ենք տեսնել, ոչ էլ զգալ:

Իսկ, թե ինչպե՞ս է ծնվում մտածողությունը հարցին, թերևս, կարելի է գտնել, քիչ թե շատ, հուսալի պատասխան՝ համաձայնելով այն տեսակետին, որ մտածողությունը ծնվում, միտքը առավել ակտիվանում է, երբ իրականությունն առաջադրում է այնպիսի խնդիրներ, որոնք մեզ համար անհրաժեշտ, երբեմն նաև, կենսական նշանակություն ունեն, բայց ենթադրում են անսովոր լուծումներ: Այնուամենայնիվ, չնայած դժարություններին, մտածողության սահմանման փորձերն այսօր էլ շարունակվում են՝ թե՛ հոգեբանական, թե՛ իմացաբանական առումով:

Այդ շրջանակում, կարծում ենք, առավել նախընտրելի է մարդկային մտածողությունը բնորոշել որպես **գիտելիքի, կենսափորձի և ապրումների ամբողջություն**: Միաժամանակ նշենք, որ մտածողության սահմանման ցանկացած փորձ դառնում է ուղղակի նկարագրություն և պահանջում է լրացուցիչ լուսաբանում: «Այս հարցում գերմանական դասական փիլիսոփայության և, մասնավորապես, Յեզեի ուսմունքի կարևոր արժեքներից մեկն այն է, որ վերջինս, թեև միակողմանի՝ իդեալիստական հիմքի վրա, այնուամենայնիվ, բացահայտել է աշխարհի ճանաչման գործընթացում մարդկային մտածողության ներքին ազդակներն ու կարողությունը»,- գրում է Սուրեն Ավետիսյանը:<sup>1</sup> Ստեղծագործականը բնության մեջ տրված զարգացման շարունակությունն է հոգևորի շրջանակում նկատում է նաև փիլիսոփա Յր. Շաքարյանը: Մտածողության շնորհիվ մարդը փորձում է բացահայտել այն օրենքներն ու օրինաչափությունները, կապերն ու հարաբերությունները, որոնք իրերի, երևույթների հիմքում են: Նա կարողանում է ոչ միայն վերլուծել զգացածը, ապրածը, եզրահանգումներ անել, մտքից միտք բխեցնել, այլև որոշակի գաղափարներ, խնդիրներ առաջադրել և որոնել դրանց լուծման ուղիները: Սա նշանակում է, որ մարդկային մտածողությունն իր բնույթով արդեն ստեղծագործական է: Ստեղծագործական մտածողության վկայությունը մարդու ամբողջ մշակութային գործունեությունն է, աշխարհում իր աշխարհի կերտումը: Սակայն ակնհայտ է, որ ստեղծագործական և քննադատական (քննական) մտածողության դերը «ստեղծկատվական աննախադեպ գրոհի» մեր ժամանակաշրջանում ստացել է նորովի նշանակություն և իմաստ: Այդ են վկայում նաև ստեղծագործական և քննադատական մտածողության շուրջ մի շարք հեղինակային մեկնություններ (Ջոն Յիլֆորդ, Էդուարդե դե Բոնո, Կահնեման և ուրիշներ):

Ռուս նշանավոր փիլիսոփա Ն. Բերոյանի համոզմամբ «Ստեղծագործականում թաքնված է կեցության մեծ գաղտնիքը, նախասկզբնական արարչագործության, ազատության գաղտնիքը...»<sup>2</sup>: Իհարկե, ստեղծագործական գործունեությունը մեր առօրյա կյանքը դարձնում է առավել հետաքրքիր, առավել իմաստավորված: Սակայն ինչպես ասում են՝ **ինչից տուժում ենք, այն էլ բուժում է**: Մարդու հակասական էության՝ ավերիչ և արարիչ դրսևորումները սուբստանցիոնալ նույն հիմքն ունեն, այն է՝

<sup>1</sup> Ս.Ավետիսյան,Աշխարհի գիտական պատկերը և փիլիսոփայությունը «Հայաստան» հրատ, Երևան-1984, էջ 9

<sup>2</sup> Бердяев, творчество и объективация, Минск, «Экономпресс», 2000, ст.155

**ստեղծագործ միտք.** մի դեպքում հրաշալի կոթողներ, արվեստի, գիտության աննախընթաց նվաճումներ, մյուս դեպքում՝ մահաբեր զենքի՝ անընդհատ կատարելագործվող նորանոր տեսակներ: Սակայն բոլոր դեպքերում ստեղծագործականի խնդրում առաջ է քաշվում այն հարցը, թե **հնարավոր է արդյոք «նորը»:** Բայց և այնպես, կարելի համաձայնել այն կարծիքին, որ ամեն «նոր» դեռ ստեղծագործությունն է: Ստեղծագործությունն է այն նորը, որը նպաստում է հասարակական առաջընթացին: Այս առումով, կարծում ենք, տեղին է մարդու բարոյական վարքագծին ներկայացվող կանտյան պահանջը վերագրել նաև ստեղծագործականին՝ այն դիտելով ոչ միայն մարդու իրավունք, այլ պարտք և պարտականություն, բարոյական հրամայական (անպայման պայման) կյանքի բոլոր ոլորտներում: «Սովորաբար ստեղծագործական ասելով ընկալվում է այն, ինչը կարելի է անվանել ոչ սովորական՝ միաժամանակ նշանակալի և օգտակար: Բայց այս դեպքում ստեղծագործականը ներկայացվում է ոչ թե ինքնին գործունեության ընթացք, այլ արդյունք, և այս առումով մարդու ցանկացած գործունեություն կարելի է համարել ստեղծագործական», - գրում է Դայանա Հալպերն<sup>1</sup>: «Մարդը մշտապես դատապարտված է ինքնարտահայտման առավել բազմակերպար իրողությանը»-նկատում է նաև Պ.Ս. Գուրևիչը<sup>2</sup>: Իմացաբանական առումով ստեղծագործականում ճանաչողության պաթոսը կոչված է ընդլայնելու մարդու կապերն աշխարհի հետ, ընդլայնելու մարդկային տիեզերական մասշտաբները: Ավելին, Բերոյանի բնորոշմամբ՝ ստեղծագործականն ուղղակի մարդու գոյության արդարացումն է, «ոչինչի հաղթահարումը...»: Ստեղծագործելու ընթացքում մարդը երկխոսության մեջ է մտնում աշխարհի հետ՝ գրում է Էրիկ Ֆրոմը: Աշխարհը չի բավարարում մարդուն, և նա փորձում է վերափոխել այն, իսկ արդյունքում՝ վերափոխել նաև իրեն: Ասենք, որ Վերածննդի դարաշրջանի ամենամեծ հայտնությունը հենց այն գաղափարի հիմնավորումն է, որ **մարդը ոչ միայն ստեղծված, այլև ինքնաստեղծ էակ է:** Այս առումով դեկարտյան վերոհիշյալ դրույթին՝ «Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ», կարելի է հավելել նույնքան հանրահայտ այլ դիտողություն՝ **«Արարում եմ հետևաբար կամ»:** Ստեղծագործական մտածողության հասկացությանը զուգահեռ ամերիկացի հոգեբան Ջոյ Յիլֆորդն առաջինն օգտագործեց «կրեատիվ» անվանումը՝ փորձելով կառուցել մարդկային ինտելեկտի բազմաչափ մոդել<sup>3</sup>: Բրիտանացի գիտնական Էդվարդ դե Բոնոն ևս տարբերակում է այն պայմաններն ու մեթոդները, որոնց շնորհիվ յուրաքանչյուրի մոտ կարելի է զարգացնել ստեղծագործական, կամ ուղղակի, ինչպես ինքն է նշում՝ «ոչ ստանդարտ» մտածողության հմտություններ<sup>4</sup>: Ստեղծագործական ընդունակությունների

<sup>1</sup> Дайана Халперн, Психология критического мышления, 4-е международные издание, ПИТЕР ; 2000, стр.122

<sup>2</sup> Гуревич П.С.,Культурология/учебное пособие/, Москва, изд.,Знание.,1996,ст.172

<sup>3</sup> См. Джой Гилфорд работы о креативности. Биография - Дом ...<https://cafe-ayo.ru> > Дизайн

<sup>4</sup> См. Метод "6 шляп мышления" Эдварда де Боно - Академия ...<https://www.akademiki.biz> > stati > 1226-metod-mozgo...

բացահայտման և զարգացման համար մի շարք գործոնների շարքում 20-րդ դարի ամերիկացի սոցիոլոգ-փիլիսոփա Ջոն Դյուին կարևորում է առանձնապես արվեստի, փորձարարական դերը: Այս մոտեցումը, անշուշտ, ունի իր հիմնավորումը, քանի որ արվեստը ստեղծում է մարդկային ճանաչելի և դեռևս անճանաչելի կարողությունների փորձարկման լայն դաշտ **«Ի՞նչ կլինի, եթե»** պայմանով: Ինչպես ասում են՝ «եթե-ի մեջ կա ահավոր մեծ ուժ»: «Եթե» -ն այլընտրանքների հնարավորությունն է: Հենց վերջինիս շնորհիվ էլ արվեստը թույլ է տալիս իրականի, «անհրաժեշտի թագավորությունից» տեղափոխվել ազատության՝ «հնարավորի թագավորություն»: Թույլ է տալիս համադրել համատեղելին և անհամատեղելին, հնարավորն ու անհնարինը, իդեալականը և իրականը, բացահայտել այնպիսի երևույթներ, որոնք ոչ մի գիտության հասու չեն: Գուցե հենց նշված իրողությունը նկատի ունենալով, երբ գրում էր՝ հանճարը միայն արվեստում է: Ինչ խոսք, գիտությունը ճանաչում է բնության մեջ արդեն գործող օրենքներն ու օրինաչափությունները, գիտությունը չի ստեղծում ուղղակի ճանաչում է: Մինչդեռ արվեստը ստեղծում է բոլորովին նոր իրականություն: Որոշ տեսաբաններ ճշմարիտ արվեստը դիտում են նաև երկնային շնորհ, երկնային արարում: Սակայն ժամանակակից հայտնի փիլիսոփա Անդրեյ Բաումեյստերի համոզմամբ նոր աշխարհընկալմամբ հերքվում է այն մոտեցումը, որ ստեղծագործականը արվեստում մարդուն շնորհված զուտ աստվածային պարգև է, քանի որ վերջինս պահանջում է նաև անմասցորդ համառություն: Հայտնի է, որ Տոլստոյը կարում էր կոշիկներ, որպեսզի իր մեջ աշխատասիրություն վարժեցնի: Իհարկե, շատերն են գրում, նկարում, հորինում, նկատում է նա, բայց ստեղծագործում են քչերը: Չհերքելով նշված տեսակետը՝ միաաժամանակ նկատենք, որ ստեղծագործական ներընթացում կարող է ծնել անսպասելի, չպլանավորված բացահայտումներ: Այդպես են ստեղծվում գեղարվեստում նոր ուղղություններ, գիտական աշխարհում նոր հայտնագործություններ: Պատահական չէ, որ, այսպես ասած, «մշակութային պատերազմում» ստեղծագործական միտքը կարևորվում է որպես անփոխարինելի կապիտալ: Քանի որ մրցակցության մեջ որոշիչը հենց նոր նախագծեր, նոր ծրագրեր կազմելու, արվեստում, գիտության, թե ուղղակի մասնագիտական աշխատանքում անհատի՝ նոր խնդիրներ, նոր գաղափարներ առաջադրելու ընդունակությունն է: Ուրեմն, կանտյան հայտնի երեք հարցադրումներին՝ ի՞նչ կարող եմ իմանալ, ի՞նչ կարող եմ անել, ի՞նչ հույսեր կունենամ, կարող եմք հավելել չորրորդը՝ այն է. **«որքանով եմ մրցունակ»**: Ստեղծագործականը արժեքավոր է ամենից առաջ նրանով, որ ցույց է տալիս, թե ինչի է ընդունակ և ո՞վ է իրականում մարդը: Այն մարդկային ամեն մի գործունեության ամենաեական, առանցքային կողմն է:<sup>1</sup> Ստեղծագործությունը նաև մարդկային ինքնագարգացման հիմնական ձևն է, սակայն թե՛ արվեստում, թե՛ գիտության և թե՛ առօրյա կյանքում այն ստանում է ինքնատիպ, յուրօրինակ, անհատական դրսևորում:

Իսկ ինչ դեր ունի ստեղծագործական մտածողությունը ժամանակակից հասարակության կյանքում, և ունի արդյո՞ք որևէ դեր, չէ որ տեխնիկական ընդունակ է ամենուր փոխարինել մարդուն, ընդունակ է կատարել ցանկացած

<sup>1</sup> Փիլիսոփայություն, ուս., ձեռնարկ, Ս.Մ. Հակոբյան, 2000, Եր. Համալ. Հրատ., էջ 172:



բարդ գործողություն՝ այդ թվում նաև մտավոր, և պատահական չէ, որ «նոոսֆերա», «բիոսֆերա» հասկացություններին զուգահեռ այսօր հաճախ հնչում է նաև «տեխնոսֆերա» հասկացությունը: Մեր հասարակությունը հենց «ինֆորմացիոն», «տեխնոգեն» հասարակություն է: Սակայն, անդրադառնալով տեխնիկայի սահմանափակ և միաժամանակ անսահմանափակ հնարավորություններին, չմոռանանք, որ այն նույնպես արարել է մարդու ստեղծագործ միտքը, և տեխնիկան միայն միջոց է՝ ոչ նպատակ: Նպատակը նրա ստեղծողի՝ մարդու մեջ է: Մինչդեռ մարդու գերագույն նպատակն է ճանաչել աշխարհը և վերափոխել այն իր պահանջներին համապատասխան<sup>1</sup>:

Իսկ ինչո՞վ է առանձնանում **քննադատական մտածողությունը**, և ինչպե՞ս է այն հարաբերվում ստեղծագործականին: Ամերիկացի հանրաճանաչ մանկավարժ-հոգեբան Դեվիդ Կլուստերը մտածողության շարժիչ ուժը համարում է ընդհանրապես մարդուն հատուկ հետաքրքրասիրությունը, անհայտը բացահայտելու մղումը:<sup>2</sup> Այնուհանդերձ նա գտնում է, որ ստեղծագործական մտածողությունը չի կարող դիտվել քննադական՝ չնայած նրանցում առկա են փոխապայանավորվածություն և փոխազդեցություն: Նկատենք, որ նեոտեխնոլոգիաների, բազմաթիվ ալգորիթմների և այլևայլ միջոցներով առավել ոյուրին է դարձել շեղել, կառավարել մարդկային մտածողությունը, ազդել մեր որոշումների վրա: Տեղեկատվությունը խնդիրը այսօր, թերևս, ոչ այնքան աշխարհի պատկերի օբյեկտիվ յուրացումն ապահովելն է, որքան հետաքրքրելը, գայթակղելը, մտածողության աներևույթ միջավայր ձևավորելը: Եվ, այս առումով, քննադատական, կամ ավելի ճիշտ կլինի ասել, քննական մտածողությունը, օգնում է հասկանալ, թե ինչպե՞ս են ձևավորվում մեր համոզմունքները, ինչպե՞ս ենք մենք որոշումներ կայացնում, արդյոք ռացիոնալ մտածողության ձևավորման գործընթացին չեն խոչընդոտում:

1. **Կարծրատիպերը**՝ արդեն ընդունված տեսկետները, երբեմն նաև միստիկ մտավախությունները, որոնք հաճախ ստիպում է պատճառահետևանքային կապեր տեսնել այնտեղ, որտեղ դրանք բացակայում են: Նոր ժամանակների ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա Ռենե Դեկարտը ևս առաջարկում էր ազատվել մոլորեցնող «կուռքերից», այլ խոսքով՝ կարծրատիպերից: Իհարկե, կարծրատիպերի շնորհիվ կարող են խնայվել մեր մտային պաշարները, սակայն դրանց մշտական առկայությունը պարզունակ է դարձնում մտածողությունը: Դեռևս Սոկրատեսը զգուշացնում էր, որ ճշմարտությունը կարող է ծնվել միայն կենդանի զրույցի, երկխոսության, մտաբախումների արդյունքում, ուստի չպետք է կուրորեն հետևել ավանդույթներին, կամ ընդունված տեսկետներին, այլ հետամուտ լինել ներքին ես,-ի ձայնին՝ «դեմոնին»: Այս առումով քննադատական մտածողությունը պահանջում է խախտել ուսումնասիրվող երևույթի շուրջ հայտնի սխեմաները, «շաբլոնները»: Սակայն միաժամանակ, և ամենից առաջ, անհրաժեշտ է ուսումնասիրել, հասկանալ դրանցում առկա գաղափարները և

<sup>1</sup> Культурология, теория культуры, Мариеева Е.В, Моск. Акад. Эканомика и права, 2002, ст.91

<sup>2</sup> Stu՝ Клустер Дэвид | Что такое критическое мышление? Клустер Дэвид | Чтотакое критическое мышление? <https://rus.1sept.ru> > arti

առաջադրել կանխավարկածներ: «Կանխավարկածները հնարավորություն են տալիս երևույթը տեսնել մինչ այդ ուշադրությունց դուրս մնացած մի շարք կողմերով»:

**2. Մեծամասնության կարծիքը:** Իսկ ինչու՞ է մեզ համար մեծամասնության կարծիքը հաճախ դառնում ավելի նախընտրելի: Մասնագետների տեսակետով, վերջինս նախընտրել է, քանի որ հոգեբանական առումով մտում ենք բարենպաստ /կոնֆորտի/ դաշտում, ուզում ենք լինել այնպիսին, ինչպիսին մյուսներն են, երբեմն տալիս ենք պատասխաններ, որը մեր տեսակետը չէ, ուղղակի այդպես են մտածում բոլորը, ուղղակի այդպես անվտանգ է մտածել: Սակայն դեռևս «Դոն Կիխոտ Լամանչեցի» հանրահայտ ստեղծագործությամբ իսպանացի Միգել դե Սերվանտեսը ևս զգուշացնում էր, որ մեծամասնությունը միշտ չէ, որ արդար է, միշտ չէ, որ ճշմարիտ է: Պատկերելով իր դարաշջանի հասարակության գրեթե բոլոր շերտերը՝ անառակ կանացից մինչև դուքս ու դքսուհիներ, Սերվանտեսը իր հերոսին որքան էլ խենթ, որքան էլ ասպետական մոլորություններով տարված, այնուհանդերձ, դարձնում է ընթերցողի համար սիրելի կերպար, քանի որ ամենատարբեր փորձություններում անգամ վերջինս հավատարիմ է մնում իր իդեալին, իր սկզբունքներին:

«Քննադատական մտածողությունը միայն տրամաբանական մտահանգումներ կառուցելու ընդունակությունը չէ, - նկատում է Դանայա Հապլերը,- քննադատական բառը ունի նաև գնահատողական վերաբերմունք, թե բացասական և թե դրական իմաստով...»<sup>1</sup>:

**3. Հեղինակությունները:** Քանի որ ինքնուրույն ընտրությունը ռիսկ է և պատասխանատվություն, ուրեմն ավելի լավ է հետևել արդեն հեղինակավոր մեկի տեսակետին՝ թե գիտական, թե քաղաքական կյանքում անտեսելով անգամ սեփական կենսափորձը: Բայց չէ որ, յուրաանյուր տեքստի յուրացման մեջ մենք կանք, այն ընկալում ենք մեր արժեքային համակարգի չափորոշիչներով, ուրեմն, բոլոր դեպքերում դրանք կարող են լինել նաև սուբյեկտիվ:

**4. Որոշումներ ընդունելու շտապողականությունը:** Քննադատական մտածողություն դեռ չի նշանակում շատ կամ արագ մտածել՝ գրում է Նոբելյան մրցանակակիր Դանիել Կանեհմանը: Նրա հեղինակած գրքի վերնագիրն անգամ «Մտածիր դանդաղ, որոշիր արագ» հուշում է, որ քննարկվող երևույթի շուրջ որոշումներ անհրաժեշտ է կայացնել հետևողական, տրամաբանական վերլուծության արդյունքում: Կանեհմանը տարբերակում է մտածողության երկու համակարգ՝ արագ և դանդաղ, կամ այլ կերպ՝ Էմոցիոնալ և ռացիոնալ: Հաճախ արագ, հուզական, անմիջական, իռացիոնալ որոշումների արդյունքում մտածողությունը կարող է հայտվել «մոլորությունների թակարդում», քանի որ, ինչպես ասում են՝ «երբ գործում է Էմոցիոնալը, ռացիոնալը լռում է»: Զարոգարշավներ կազմակերպելիս, բիզնեսում, ռեկլամային հոլովակներ ձևավորելիս հաճախ առաջնորդվում են հենց այս սկզբունքով: Եվ այստեղ խնդիրն այն է միայն, թե ինչպե՞ս, և ո՞ր դեպքում է անհրաժեշտ, արագ մտածողությունից անցնել դանդաղ

---

<sup>1</sup> Дайана Халперн, Психология критического мышления, 4-е международные издание, ПИТЕР ; 2000, стр.122

մտածողության: «Սովորաբար մեզ թվում է, որ մենք վստահորեն վերահսկում ենք մեր գործողությունները, բայց եկեք չմոռանանք, որ մեր գիտակցության հետևում անընդհատ աշխատում է «արագ» մտածողությունը, ավտոմատ, ակնթարթային և անգիտակցական...», - նկատում է Կանեհմանը<sup>1</sup>: «Բանակա-նությունը կրքերի ստրուկն է և այդպես էլ պետք է լինի» -գրում է նաև Դեյվիդ Յյունը<sup>2</sup> : Իհարկե Յյունը սենսուլիստ էր և այդպես էլ պետք է մտածեր, բայց չենք կարող չընդունել, որ մարդուն հաճախ գործողությունների են մղում հույզերը: Որքան մեծ է քննադատական մոտեցումը, այնքան բարձր է ռացիոնալ և այնքան ցածր էմոցիոնալ մտածողությունը: Ստերիոտիպերը միշտ զգայական են:

**6. Սոցիալական, քաղաքական ճնշումները:** Զանի որ միջավայից օտարումը, միջավայրում չընդունված լինելու վախը, դեռևս հնագույն ժամանակներից, մարդու համար ամենամեծ պատիժն է: Մկատել է նաև, որ ոցիալական, քաղաքական ճնշումները հնարավոր են դառնում առանձնապես, այսպես ասած, «մասսայական քաղաքականության» պայմաններում:

**7. Բառիմաստի թյուրըմբռնումը:** Զննադական մտածողությունը պահանջն է համոզմունքը արտահայտել փաստարկման, ապացուցման և հերքման օրենքերի շրջանակում, միտքը կառուցել հստակ, պարզ, ոչ երկիմաստ, ոչ բազմիմաստ, որպեսզի տարաբնույթ մեկնությունների չենթարկվի: Լեզվական սխալները նույնպես կարող են սուփեստությունների տեղիք տալ՝ խախտելով տրամաբանության նույնության օրենքը: «Մտքերի ընթացքը կարող է ունենալ սխալ ուղղվածություն այն դեպքում, երբ բառերի իմաստը պարզ և ընկալելի չէ,- գում է նաև Դայանա Յալպերնը»<sup>3</sup>: Այսպիսով, մտածել քննադատաբար, նշանակում է ազատվել կեղծ գաղափարներից, նշանակում է հետևել մտքերի հաջորդականությանը, նշանակում է հիմնավորել ապացույցների օբյեկտիվությունը, եթե անզամ դրանք հակադրվում են մեր համոզմունքներին: Չէ որ համոզմունքը ճշմարտության նկատմամբ մեր դիրքորոշումներն են և կարող է փոխվել նոր ապացույցների, նոր փաստերի առկայության և վերլուծության արդյունքում: Ինքնաքննադատական հայացքը, պահանջկոտությունը սեփական ես-ի նկատմամբ օգնում է նաև ինքնաճանաչում ապրել, խթանում է մտային զարգացմանը: Ինչպես գրում էր Կյուլգերը՝ ավելի լավ է խոստովանել չիմացությունը, քան համոզված հիմարություններ դուրս տալ: Իսկ ահա ռուս գրող, հասարակական գործիչ Բելինսկին ինքնաքննադատության հատկությունը համարում էր «ճշմարիտ մտավորական» կոչվելու անհրաժեշտ պայման: Փիլիսոփայությունը սովորեցնում է, որ իմացության գործընթացում հնարավոր են նաև մոլորություններ: «Մոլորությունը, որպես ռացիոնալ երևույթ, ոչ միայն ճշմարտության հակոտնյան է, այլև նրա մշտական ուղեկիցը» -գրում է մեր ժամակների նշանավոր փիլիսոփա Յր. Շաքարյանը<sup>4</sup>:

<sup>1</sup> См.<<Думай медленно решай быстро/ Даниэль Канеман>>: АСТ; ISBN Москва: 2014г, стр. 78

<sup>2</sup> Stu.Hume D., A Treatise of Human Nature. Clarandon Press, Oxsford, 1965, p.45

<sup>3</sup> Дайана Халперн, Психология критического мышления, 4-е международные издание, ПИТЕР ; 2000, стр.127

<sup>4</sup> Յր, Շաքարյան.,Փիլիսոփայություն,ուս. Չեռնարկ.,Եր. համալսարանի հրատ. 2005. Էջ 174

Մոլորության հնարավորությունը դրված է իրական աշխարհի բազմակերպության և բազմաբովանդակության մեջ՝ հավելում է նա: Այս դեպքում, Սուկրատեսը կասեր՝ «Ես գիտեմ, որ ոչիչ չգիտեմ մինչդեռ մյուսները այդ էլ չգիտեն»: Իսկ գուցե, երեքհազարամյա հեռավորությամբ, կարելի կարելի է ընդունել նոր ձևակերպում՝ «Ես գիտեմ, որ այնքան էլ լավ չգիտեմ և ուզում եմ ավելին իմանալ»: Ի վերջո, իմացությամբ մենք անընդհատ բացահայտում ենք մեր չիմացության սահմանը, ինչպես նշվում է հայտնի ասույթում՝ «Որքան պայծառ է լույսը այնքան շատ են ստվերները»: Ասվածից ենթադրվում է նաև, որ քննադատական մտածողությանը հատուկ է չափավոր սկեպտիցիզմը, ուստի քննադատաբար մտածող անձին, թերևս, ավելի լավ կարող է բնորոշել դեկարտյան մեկ այլ բանաձև՝ **«կասկածում եմ, քանի որ մտածում եմ»**: Կասկածել նշանակում է մտածել: Այսպես. եթե հավաստի է «Ես կասկածում եմ» դրույթը, նշանակում է հավաստի է նաև «Ես մտածում եմ» դրույթը<sup>1</sup>: Սուկրատեսյան դիտումով ևս, «կենդանի մտածողության» հիմքում կասկածն է, որը սկսվում հարցադրումով: Կասկածել նշանակում է փաստերը ստուգել: Իհարկե խոսքը, անորոշ, հեղիեղուկ տեսակետների մասին չէ, այլ ինտելեկտուալ կասկածի:

Դ.Յալպերնը զգուշացնում է նաև խուսափել ընտրովի դատողություններից: Ոչ թե որոնել ենթադրություններին համապատասխան փաստեր, այլ հակառակը՝ ենթադրությունները կառուցել փաստերին համապատասխան: Ամեն ինչ կասկածի ենթարկել ճշմարտությունը գտնելու համար՝ նկատում է նաև Չ. Պիրսը և միաժամանակ զգուշացնում որ այն չի կարող լինել վերջնական, քանի որ մտածողությունը անվերջանալի գործընթաց է, իսկ քննադատական մտածողությունը ներքին ազատություն վկայություն: Ջոն Դյուին առաջարկում է խուսափել նաև ծայրահեղություններից: «Այո»-ի և «ոչ»-ի միջև կա հրաշլի բառ՝ «հնարավոր է», - նկատում է նա: Ի վերջո, կարող ենք ասել՝ ես այսպես եմ մտածում, իսկ դու ապացուցիր հակառակը:

Իսկ ինչու՞ է մեզ համար ավելի նախընտրելի երևույթները գնահատել կամ-կամի, ծայրահեղ հակադիր որակումների շրջանակում: Սա, իհարկե լավ հարց է, և ունի լավ պատասխան՝ սև ու սպիտակ մտածելակեպը հաճախ արտահայտվում է նրանով, որ չենք ուզում գործ ունենալ անորոշության հետ կամ խուսափում ենք պատասխանատվությունից, քանի որ պատասխանատվությունը ռիսկ է, պատասխանատվությունը բեռ է: Բայց պատասխանատվությունը նաև անհատականության ձգտող «ես» ինքնության վկայությունն է: Փիլիսոփան թերևս կասեր՝ մի մտածեք, որ ուրիշը ավելի խելոք է, հավատացեք այն գաղափարներին, որոնք գալիս են ձեր մտքում, գրառեք, փորձեք իրականացրել, դրանք թափառում են տիեզերքում և Աստված ուզում է, որ ինչ որ մեկը որսա, իսկ երբ կորցնես պահը՝ քո փոխարեն այդ կանի մեկ ուրիշը: «Մտածենք մտածելու մասին» :

---

<sup>1</sup> Փիլիսոփայության պատմություն, Սեյրան Չաքարյան, Երևան, Նաիրի, 2000, էջ 193:

## **РОЛЬ ТВОРЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ В ПЕРЕМЕНЧИВОМ МИРЕ**

**СИЛЬВА ОГАНЕСЯН**

*преподаватель Северного университета,  
кандидат философских наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – в рамках анализа ряда философских интерпретаций показать решающую роль творческого и критического мышления в нашем переменчивом мире.

Для реализации этой задачи:

1) предпринята попытка построить новую формулировку характеристики мышления человека, определяя его как совокупность знаний, чувств и жизненного опыта;

2) обосновывается мнение о том, что свидетельством творческого мышления является вся культурная деятельность человека, поскольку именно через творчество раскрывается его истинная природа, способность человека сочетать реальное и возможное при наличии условия «что будет, если?»;

3) отмечается, что в нашу эпоху «информационной атаки» более важным является свойственный критическому мышлению умеренный скептицизм, сопоставление мнений и самокритичный взгляд.;

4) различаются те методы и способы, благодаря которым у каждого человека можно пробудить «нестандартные» навыки мышления.

**Ключевые слова:** *мышление, творческое и критическое мышление, убеждение, скептицизм, картина мира, сопоставление взглядов, интеллектуальная свобода.*

## **THE ROLE OF CREATIVE AND CRITICAL THINKING IN A CHANGING WORLD**

**SILVA HOHANNISYAN**

*Yerevan Northern University, Lecturer,  
PhD of Philosophy, Docent,  
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to demonstrate the decisive role of creative and critical thinking in the changing times within the framework of the analysis of a number of philosophical interpretations.

To implement that problem,

1. We made an attempt is made to build a new formulation characterizing human thinking, defining it as a set of knowledge, life experience, and feelings.

2. We justify that the evidence of creative thinking is the entire cultural activity of an individual, as due to his true nature we can reveal his creativity as well as the ability to combine the real and the possible under the "what if" condition.

3. We observe that in our era of "information attack" the moderate pessimism, combination of opinions, and self-critical view specific to critical thinking are becoming more than important.

**Key words:** *thinking, creative and critical thinking, persuasion, skepticism, picture of the world, comparison of views, intellectual freedom.*

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,  
ЭКОНОМИКА И УПРАВЛЕНИЕ,  
ECONOMICS AND MANAGEMENT**



**CAPACITY BUILDING AND QUALITY ASSURANCE:  
WHY IS IT SO IMPORTANT TO HAVE EUROPEAN-LEVEL  
HIGHER EDUCATION IN ARMENIA?**

**LUSINE FLJYAN**

*Vice-Rector for Education, Research and Internationalization, Northern University, Doctor of Philological Sciences, Professor  
Yerevan, the Republic of Armenia  
[fljyan@mail.ru](mailto:fljyan@mail.ru)*

**SYUZANNA SARGSYAN**

*Head of Department for Human Resource Management, Northern University,  
Yerevan, the Republic of Armenia  
[s.syuzanna76@mail.ru](mailto:s.syuzanna76@mail.ru)*

***Guided by the achievements obtained through the institutional accreditation, the objective of the article is to discuss the quality assurance objectives that are possible to achieve within the context of higher education in Armenia viewed from the perspective of Northern University.***

***The main task is to map and analyze the key features of the quality assurance which are needed for developing the capacities of the Armenian universities in line with the Bologna requirements. The article discusses the barriers the universities should eliminate by boosting their quality to gain not only the right to exist within the system of higher education but also to be recognized on the European level.***

***The method used in our research is the narrative discussion with the elements of analysis and synthesis, quantitative and qualitative research to prove our arguments to reach accurate results throughout the whole discussion maintained within the frame of the article.***

***The authors conclude that the continuous improvement of all the key quality assurance criteria leads their staff to gain more relevant competencies which will help them to make a substantial positive change as well as prepare the universities for bigger challenges.***

***Key words:*** *quality assurance, accreditation, capacity building, university, higher education*

## Introduction

According to the UNESCO IESALC study “Towards universal access to higher education: international trends” which was launched in November 2020, the higher education (HE) gross enrollment rate worldwide almost doubled, going from 19% to 38% between 2000 and 2018. There are countries that recorded the fastest increases in graduation rates compared to those under study: Iran tripled its graduation rate of the students, Mongolia went from 18 % to 51%, Columbia - from less than 2% to 25%. Armenia’s gross enrolment ratio is higher than average, however, it decreased from 54.6% to 51.5% in 2019<sup>1</sup>.

Since 1991, private higher education institutions have been established in Armenia. The enrolment of the students in them from 2013 to 2019 decreased by 10% in Armenia<sup>2</sup>. Georgia’s enrolment in private higher education was at the level of 34.8% and it went up from 34.5 which was the result of the previous year. The gross enrolment rate in Azerbaijan is 31.5%, and the private enrolment rate is lower than in Armenia and Georgia.

In Georgia, the gross enrolment rate is 63.9%, and it also decreased in the country from 1997 to 2019 period ending at 63.9% in 2019. The gross enrolment rate in higher education in Iran is 62.8%, which is one of the highest in the region, increasing from 16.4% in 1995 to 62.8% in 2018 with an average annual rate of 7.63%. The total private education enrolment went down substantially from 2007 to 2018, however, it is the highest among the neighboring countries of Armenia. The gross enrolment rate in Turkey is 113.2%, and it increased from 20.1% in 1995 to 113.2% in 2018. Correspondingly, the private enrolment in tertiary education is 7.9%. Thus, the total picture of the human capital development through tertiary education is not pessimistic in the country at all compared to other states, however, it needs to take measures to be improved as it significantly contributes to the country's development. The enrolment should be analyzed in a wider context. In order to support the rapid economic development, it is important that the graduates are ready to ensure development through the improvement of technologies, the introduction of innovation, etc.

It should be noted that although the number of university students in the world is growing, their number in the Republic of Armenia has significantly decreased during the last 5 years.

	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020	2020-2021
Number of students in higher education institutions	81.7	78.7	69.6	64.5	69.0
Number of enrolled in	273.4	264.9	234.5	217.9	232.9

<sup>1</sup> “Towards universal access to higher education: international trends, UNESCO IESALC, November 16, 2020. <https://www.iesalc.unesco.org/eng/wp-content/uploads/2020/11/Towards-Universal-Access-to-HE-Report.pdf>. – P. 28.

<sup>2</sup> World Atlas



higher education per 10000 population					
---------------------------------------	--	--	--	--	--

Table 1. Number of students and number of student per 10000 population in higher education in Armenia<sup>1</sup>

As it is clear from the figures, the higher education in Armenia is not on an increasing trend (with a slight increase between the academic year of 2019-2020 and that of 2020-21; however, the rates of the economic growth in the country are not optimistic. The unemployment rate, which is 5-6 % of the global average, reached 18.30 % in 2019 in Armenia, which has had an adverse impact on economic productivity and consumption, increased crime rates, and the erosion of skills. Moreover, the decrease in the growth meant less expenditure on higher education as a public good.

Thus, we can state that the increase in the higher education rates is fundamentally relevant in the development context of the country. Unfortunately, for many traditionalists, private higher education is regarded as a “business”, and ‘funky job”, however, for any country, especially the one in transition, to make an ideological change in the society and contribute to the rethinking and expansion of the plurality of higher education opportunities. The sky is not the limit for “higher education passengers who can stay qualitatively aloft”.

The rise of the enrolment rate of the institutions is a challenge; however, the increase of the employed graduates is even a bigger challenge for us, as it is one of the immediate indicators of the quality assurance when the degree programs are aligned with the labor market demands. However, the employment opportunities are not only connected with the labor market demands but also with starting salaries the graduates are offered which are much lower than the average monthly salary of certain jobs that do not require even vocational qualifications, e.g., hairdressers, barbers, drivers, etc. Thus, starting salary is a bigger influencing factor in employment opportunities for the university graduates:

<b>Jobs that require higher education qualification</b>	<b>Jobs that do not require higher education qualification</b>
Organization of logistical functions and control – 40000 AMD <sup>2</sup>	Driver at Yandex.tazi – 150000 – 250000 AMD
Mechanical engineer – 150000 AMD <sup>3</sup>	plumber and electrician – 350000 AMD <sup>4</sup>

<sup>1</sup> Կրթություն և մշակույթ. Education and Culture. Образование и культура / Հայաստանի վիճակագրական տարեգիրք- Statistical Yearbook of Armenia-Статистический ежегодник Армении-2021. <https://www.armstat.am/file/doc/99526838.pdf>

<sup>2</sup> Jobs/ Full.Am. <https://full.am/am/job/public/view/19735>

<sup>3</sup> The list of vacancies in Yerevan. The amount of salaries is also indicated <https://168.am/2018/10/18/1027323.html>

<sup>4</sup> The list of vacancies in Yerevan.: <https://full.am/am/job/public/view/433>

Incoming tourism specialist – 100000 AMD <sup>1</sup>	Worker – 200000 AMD <sup>2</sup>
English language teacher – 80000 AMD	Cleaning service worker – 80000 AMD
Technologies teacher – 80000 AMD	Assistant to cook – 80000 AMD

**Table 1. Salaries in job announcement**

When we look at the figures we can understand that the higher education expansion is under threat as the expectations people usually have before entering a university are very high, but when they see that the reality is different, they understand that it is better to benefit from jobs with higher salaries but with a lower qualification which results in the erosion of the knowledge, skills, and competences acquired at a higher education institution.

However, even with a basketful of diverse problems, higher education has remained a value in the Armenian society based on the national strategies, policies, and practices in higher education. The people and the intellectual capital are the value that requires investment in spite of the challenges the country has been facing in recent years. It is regarded as a foot in the door of many respectable jobs as well as in the prestigious upper circle. In Armenia, it doesn't matter who you are, but in case you have higher education you are more recognized in the community, more respected, and dropping out from the university is a serious reason for the personal and family disappointment.

On the other hand, “by 2025, the projected global demand for higher education could reach 263 million”<sup>3</sup>, and knowing that the higher education institutions across the world make every effort to benefit from this unprecedented growth of students, we must continuously improve the quality of all services of the university, making them attractive not only for local but also for foreign students.

Thus, the universities have two major challenges, first to attract the students from abroad and benefit from the large pool of international opportunities, and second, to make the study program cohesive in line with the expectations of the domestic population.

Within the context of the global changes and challenges, it is also very important to realize that the higher education is not a mere service that is provided by higher education institutions to people that wish to upgrade their professional skills and competencies, but also a tool to help the country to resolve many of its political, social and economic problems as well as to ensure European cooperation and integration which is, in my opinion, one of the most efficient ways of the development of the country after the COVID-19 pandemic

---

<sup>1</sup> The list of vacancies in Yerevan. The amount of salaries is also indicated <https://168.am/2018/10/18/1027323.html>

<sup>2</sup> The list of vacancies in Yerevan. The amount of salaries is also indicated <https://168.am/2018/10/18/1027323.html>

<sup>3</sup> Hell M., Knezevic A. , Babic Z., Multicriteria analysis of the quality of teaching process in higher education: how to evaluate implementation of critical thinking // Croatian Operational Research Review / CRORR 12(2021). – P. 16.

and a 44-day war challenges which totally devastated the financial and intellectual resources of the country. Enhancing the European dimension in higher education in Armenia will enable us to strengthen the backbone of the country universities and the state to pace up with the world.

Today the situation is not so simple – the best graduates seek to enter the best universities outside Armenia. We needed the talents to stay aboard and for it, we should double, or even triple our efforts to increase the attractiveness of the domestic universities.

For resolving the problem we need to boost the quality assurance at the universities which may be regarded as one of the efficient tools for increasing the university capacities. Capacity building is a process but it is also an ultimate goal of the universities as it ensures stability and sustainability of their operations across a large period of time.

### ***Methodology***

The method used in our research is the narrative discussion with the elements of analysis and synthesis which helps us to identify what is already gained in the framework of all the changes in higher education and also to reveal the problems that still exist and hinder the development of higher education reforms in line with the Bologna principles. We also use the elements of quantitative and qualitative research to prove our arguments and detail our judgment, as well as reach accurate results throughout the whole discussion maintained within the frame of the article.

### ***Literature review and main findings***

The quality assurance approach was first developed for the industrial sector and was applied in the world of production of goods and services, thus, in the business world.

However, the concept has gone through a substantial evolution in the last two centuries, and yet, there is no universally accepted attitude to the quality and it has acquired new shades of the meaning in the recent years. Crosby (1979) defines quality as the “conformance to requirements”. As to Deming (1986), quality is a process of continuous quality development. The transcendent approach to quality is excellence (Tuchman, 1980, 380) which is derived from Plato’s interpretation of beauty. However, in our perception, the notion of excellence is vague either, as it is not clear who is determining the standards of excellence or beauty, and thus, it is difficult to measure excellence and beauty, which undermines the reliability of this notion altogether. In our opinion, the best definition, which is relevant to the context of higher education is the one which was provided by Juran and Godfrey (1951) where quality is defined as ‘fitness for use’<sup>1</sup>. This is something that is connected with the customers’ satisfaction which may be different depending on the values, traditions which are acceptable in the particular context, and as Routhio rightly remarks, customer requirements are

---

<sup>1</sup> Ibrahim E. What is the Meaning of the Quality? – P. 4. - [https://mpr.aub.uni-muenchen.de/57345/1/MPRA\\_paper\\_57345.pdf](https://mpr.aub.uni-muenchen.de/57345/1/MPRA_paper_57345.pdf)

continuously changing, and what they require today is not what they required yesterday or what they will require tomorrow (Kamo et al., 1984, Hoyle, 2007)<sup>1</sup>. We fully agree with the last statement as quality is connected with the subjective perception of the situation, tangible and intangible objects, and different criteria may affect the overall assessment and undermine, or elevate the significance of this or that quality aspect of a product, service or an abstract phenomenon. The key idea in this definition is connected with the change which is first, associated with the ability to move on and second, with the capability to improve something as a result of a change. When it comes to higher education, this change refers to diverse aspects of the higher education, and the tertiary education institutions should develop various collective and individual skills and competencies to ensure this change, that is, to be able to achieve some higher level of the functioning in their area of professional activities.

In order to understand the reason why we need to regard the quality assurance as a tool and as a process at the same, first, we need to define the meanings of two basic terms – the “process” and the tool”, which are important to effectively build the concept of the institutional quality assurance system based on the national and international standards. The word “process” is defined as a series of actions or steps taken in order to achieve a particular end, or “...in order to achieve or preserve it”<sup>2</sup> The word “tool”, is used so as to define as a device used for a particular job and often suggest that special skills needed to use it<sup>3</sup>. Thus, in order to achieve the strategic goals, we should understand that the skill is developed through the practice, and the process and the skills are two interconnected elements within the quality assurance which leads to the capacity development at the universities.

Capacity building is one of the five main functions of UNESCO, and the countries and institutions should build specific strategies at various levels for implementing effective policies and practices to reach some internationally recognized standards. Compared to developed countries, the emergent countries, and Armenia, in particular, face a much more complex set of challenges to improve its indicators and ensure the national progress in higher education. However, it has become obvious, that the increase of the skills and the competencies of the workforce is not the internal problem of a specific country, and improvement of the quality of the competencies in one region leads to the enhancement of the situation at the global level.

We should be clear: we have a commitment to improving the situation, we have a will to do it, and now we should go hundreds and thousands of miles to reach the destination: through the substantial capacity building, policy reforms we will be able to boost the quality assurance in line with the EHEA standards. The universities should lead or co-lead societal, economic, or political transformations, and they should be accountable to the societies. The challenges are no more local, they are more and more global, and it is extremely important to

---

<sup>1</sup> Ibrahim E. What is the Meaning of the Quality? – P. 3. - [https://mpr.ub.uni-muenchen.de/57345/1/MPra\\_paper\\_57345.pdf](https://mpr.ub.uni-muenchen.de/57345/1/MPra_paper_57345.pdf)

<sup>2</sup> Process. –<https://www.merriam-webster.com/dictionary/process>

<sup>3</sup> Tool. - <https://www.merriam-webster.com/dictionary/tool>

increase the European dimension in higher education and enroll it in the vision of further changes in the universities in Armenia. Academic freedom and university autonomy, life-long learning, recognition of prior knowledge, quality teaching, and research are possible to increase through the extensive dialogue with the European universities and research institutions. Given the situation, it is necessary to be more proactive to accelerate this process and achieve our goals in the shortest possible time. A well-educated workforce will prevent the further decline of the country's economy by driving innovation, increasing employability, upskilling the existing workforce, boosting the graduates' earning power in the post-COVID-19 and postwar age, and ensuring prosperity of the country.

The quality assurance systems which are implemented at higher education institutions are reflected in program and thematic evaluations, institutional reviews of quality assurance processes as well as accreditation reports.

Since 2008 Armenian universities have been continuously involved in the accreditation processes, and currently 34 tertiary level institutions are accredited or are in the status of re-accreditation<sup>1</sup> which is carried out by the National Centre for Professional Education Quality Assurance Foundation, which is authorized by the state. Accreditation leads to trust among different stakeholders and makes the reputation of higher education institutions less vulnerable. The accreditation is a mandatory process both for public and private higher education institutions, and it is a regular process once per 4 years when the effectiveness of the tertiary level institution is assessed against 10 different broad criteria. In Armenia, the institutional accreditation process consists of three different stages from developing self-evaluation reports to preparing the external review process and decision-making process as well as the indication of the areas which require an urgent improvement.

The next stage is the program accreditation which is the recognition of academic programs and their correspondence of quality with state accreditation standards and program accreditation criteria. However, the Armenian universities are in their initial stage of going through the accreditation of the academic programs as the program standards according to the Armenian National Qualifications framework haven't been established yet, and the program accreditation is fulfilled on the basis of the program accreditation criteria.

Northern University has undergone the process of accreditation three times – starting in 2014, then in 2018 when the university was issued the state accreditation for the period of four years and it is on its way to going through the accreditation for the third time.

There are several parameters that are gradually being boosted at the university, and the most central of all is the quality control, which has changed from the one-time attempts to improve a specific process to a set of coherent changes that ensure the overall development of the university. However, we must state, that the transition to high-level quality control hasn't been established yet,

---

<sup>1</sup> Accreditation Information on the Armenian tertiary and vocational institutions. <http://www.anqa.am/en/institutional-accreditation-state-register/?fbclid=IwAR1uVmeyFj-RindcpQeuEIoJPCAcQVgfCk39qJmkgwNra-7ea3CpfY2cHnl>

and the university needs to regular up-to-dates to elevate the level of all the processes and activities so as to ensure a substantial positive change.

Throughout the period of time of 8 years, the university has overcome the disruption of different quality-related processes which were, undoubtedly connected with the lack of the capacity to be able to sort out a wide range of complex problems.

One of the key dimensions which have gone up is connected with the planning of different processes including the strategic planning of the university, and here it has gone through the establishment of different internal and external quality mechanisms. And planning is based on the PDCA (plan – do – check - act cycle) which helps the university to focus on the real change.

There are 10 criteria against which the accreditation takes place: mission and goals, governance and administration, academic programs, students, teaching and support staff, research and development, infrastructure and resources, social responsibility, external relations, and internationalization as well as internal quality assurance system. And the criteria are the same both for the state and private higher education institutions. It is noteworthy to mention that private universities comply with the same licensing conditions, in case they want to grant their graduates degrees with legal validity. There are conditions for compositions of the faculty, a minimum number of tenured teachers, and student/teacher/space ratio. Thus, the content of the instruction is the same, the same is with the quality of the faculty. However, the admission requirements are not the same for all the private institutions, and some have a unique right to recruit students via their institutional admission exams. Such is the case with the American University of Armenia, French University of Armenia, and Russian-Armenian (Slavonic) University which managed to establish their own internal admission exams which significantly contribute to the rise of the number of the students.

In spite of the positive changes which are the result of the capacity building in management, internationalization, renovation of study programs, there are still a lot of things that are needed to be done in the future to focus on the student-centered approaches in teaching and learning, employability of the graduates, distribution of the credits across the courses and assessment strategies and tools within the study programs based on the teaching goals and learning outcomes, creation of more learning resources for the domestic students in the mother tongue, the introduction of more opportunities for mobility and internationalization.

### ***Conclusion***

The goal of the paper was to map and analyze the main elements characterizing the quality assurance of higher education institutions which are targeted at building capacities of the universities. The key aspect that is highlighted by the authors is the evolution of the concept of quality assurance which leads to the capacity building for ensuring the sustainability of all the processes. The international trends in higher education require regular revision of the strategies and the goals of the university higher education. Private higher education institutions and Northern University, in particular, require the

establishment of supportive policies which will enable them to switch to program accreditation in the nearest future to prove the quality of their academic programs.

**ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՈՒՄ.  
ԻՆՉՈՒՒ Է ԱՅՐՔԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼԸ**

**ԼՈՒՍԻՆԵ ՖԼՁՅԱՆ**

*Հյուսիսային համալսարանի ուսումնասիտագոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր,  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

**ՍՅՈՒՉԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Հյուսիսային համալսարանի  
մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Առաջնորդվելով ինստիտուցիոնալ հավատարմագրման միջոցով ձեռք բերված ձեռքբերումներով՝ հողվածի նպատակն է քննարկել որակի ապահովման նպատակները, որոնց հնարավոր է հասնել Հայաստանի բարձրագույն կրթության համատեքստում՝ խնդիրները դիտարելով Հյուսիսային համալսարանի տեսանկյունից: Հողվածի մեջ քարտեզագրվում և վերլուծվում են որակի ապահովման հիմնական հատկանիշները, որոնք անհրաժեշտ է զարգացնել Հայաստանի բուհերում Բոլոնիայի պահանջների լույսի ներքո: Հողվածում քննարկվում են այն խոչընդոտները, որոնք բուհերը պետք է հաղթահարեն՝ բարձրացնելով իրենց ծառայությունների և գործընթացների որակը՝ ձեռք բերելու ոչ միայն բարձրագույն կրթության համակարգում «գոյության», այլև եվրոպական մակարդակում ճանաչվելու իրավունք:

Հետազոտությունն իրականացնելու համար օգտագործվում է վերլուծության և սինթեզի տարրերով պատմողական քննարկման մեթոդը, ինչպես նաև քանակական և որակական վերլուծությունը, որն օգտագործվում է հողվածում ճշգրիտ արդյունքների հասնելու համար:

Հեղինակները եզրակացնում են, որ որակի ապահովման բոլոր հիմնական չափանիշների շարունակական կատարելագործումն անհրաժեշտություն է առաջացնում, որպեսզի անձնակազմը ձեռք բերի այն հմտությունները, որոնք կօգնեն ինչպես կատարել Եական դրական փոփոխություն, այնպես էլ պատրաստել համալսարաններին ավելի մեծ մարտահրավերներին դիմակայելու համար:

**Հիմնաբառեր՝** որակի ապահովում, հավատարմագրում, կարողությունների ձևավորում, համալսարան, բարձրագույն կրթություն:

## **НАРАЩИВАНИЕ ПОТЕНЦИАЛА И ОБЕСПЕЧЕНИЕ КАЧЕСТВА: ПОЧЕМУ ТАК ВАЖНО ИМЕТЬ В АРМЕНИИ ВЫСШЕЕ ОБРАЗОВАНИЕ ЕВРОПЕЙСКОГО УРОВНЯ?**

**ЛУСИНЕ ФЛДЖЯН**

*проректор по учебно-исследовательской деятельности и  
международным отношениям, Северный университет,  
доктор филологических наук, профессор  
г.Ереван, Республика Армения*

**СЮЗАННА САРГСЯН**

*начальник отдела по управлению персоналом,  
Северный университет,  
г.Ереван, Республика Армения*

Исходя из данных, полученных в результате институциональной аккредитации, целью статьи является, на основе преобразований Северного университета, обсуждение вопросов обеспечения качества, решение которых может способствовать улучшению качества высшего образования в Армении. В статье отображаются и анализируются ключевые особенности обеспечения качества, необходимые для развития потенциала армянских университетов в соответствии с Болонскими требованиями. В статье рассматриваются барьеры, которые должны устранить университеты через улучшение качества, чтобы получить не только право на существование в системе высшего образования, но и быть признанными на европейском уровне.

Для осуществления исследования применяется метод повествовательной дискуссии с элементами анализа и синтеза, а также количественный и качественный анализ, который используется для достижения точных результатов в рамках статьи.

Авторы приходят к выводу, что постоянное совершенствование всех ключевых критериев обеспечения качества приводит к тому, что их сотрудники приобретают более актуальные компетенции, которые помогают внести существенные позитивные изменения, а также подготовить университеты к более серьезным вызовам.

**Ключевые слова:** *обеспечение качества, аккредитация, формирование потенциала, университет, высшее образование.*



# ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎԿԵՐՂՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Հյուսիսային համալսարան,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[Jarmen1@yandex.ru](mailto:Jarmen1@yandex.ru)

**Հողվածի նպատակն է քննարկել մրցունակ մասնագիտական կրթության կազմակերպման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում:**

Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, հետազոտական քննության առարկա է հանդիսացել «մրցունակ մասնագիտական կրթություն» եզրույթը, որի էության բնութագրման հիման վրա առանձնացվել և վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում մրցունակ կրթության կազմակերպման հիմնական խոչընդոտները,

Հիմնական եզրահանգումն այն է, որ դեռևս առկա են Հայաստանի Հանրապետությունում մրցունակ կրթության կազմակերպման խոչընդոտներ, որոնք հանդիսանում են մրցունակ կրթական ծառայությունների մատուցման ռիսկերի գոյացման պատճառները: Ճարտդրված են նաև հեղինակի մոտեցումները՝ մրցունակ մասնագիտական կրթության սահմանման և չափորոշիչների փաստացի կիրառման ուղղություններով:

**Հիմնաբառեր՝** մրցունակ կրթություն, մասնագիտական կրթության շուկա, ունակությունների հենքով կրթության կազմակերպում, ստեղծարար կարողություններ:

«Մրցակցությունը» հանրային կամ մասնավոր գործունեության որոշակի տիրույթում առաջատար դիրքեր ապահովելու համար բարեխիճ պայքարի գործընթաց է: Հիրավի, բոլոր ժամանակներում մրցակցությունը համարվում է ցանկացած ոլորտի զարգացման գլխավոր շարժիչը: Իսկ «մրցունակությունը» գործունեության սուբյեկտի կարողության աստիճանն է՝ դիմակայելու իր մրցակիցների ճնշումներին, պահպանելու սեփական մրցակցային դիրքերը և առաջ շարժվելու՝ հաղթահարելով առաջատար նոր նշաձողեր:<sup>1</sup>

Այլ կերպ ասած՝ «մրցունակությունը» տվյալ սուբյեկտի բնութագիրն է, մինչդեռ «մրցակցությունը» բնութագրում է տվյալ միջավայրը, այլ սուբյեկտների հետ փոխհարաբերությունների բնույթը: Ուստի միայնակ գործառույթ սուբյեկտի համար մենք չենք կարող a priori դատողություններ անել, առավել ևս գնահատել նրա «մրցունակության» աստիճանը, քանի որ չունենք ամբողջ հանրույթի, այսինքն՝ մրցակցային դաշտի մասին համարժեք պատկերացում:

<sup>1</sup> Տե՛ս **В.И. Андреев**, Конкурентология: учебный курс для творческого развития конкурентоспособности // Казань: Центр инновационных технологий, 2004, стр. 8.

Միայն վերջինիս առկայությամբ, ուստի և հնարավորություն ստանալով լիարժեքորեն ճանաչելու մեր սուբյեկտի մրցակիցների իրական ներուժը, կարող ենք վերհանել և հավաստի գնահատել տվյալ սուբյեկտի «մրցակցային առավելությունները»:

Հետևաբար, եթե մրցակցային պայքարի մեջ մտնող որևէ կազմակերպություն կարողանում է ապահովել անհրաժեշտ մրցունակություն, ապա դա երաշխավորում է կազմակերպության կայուն զարգացման շարժիչ ուժերի կենսագործունեությունը: Ահա թե ինչու առողջ և բարեխիճ մրցակցությունը, ընդհանուր առմամբ, ամեն մի հասարակության բարգավաճման կարևորագույն նախապայմանն է՝ մշտապես ապահովելով լճացման ու հետընթացի երևույթների կանխարգելիչ միջավայր:

Արդ, հարց է առաջանում, թե ինչպես է պետք է գնահատել մրցունակ մասնագիտական կրթությունը. արդյոք թանկարժեք կրթավճարներով կազմակերպվող գործընթացն է, թե՞ ինքնին աշխարհահռչակ համալսարաններում սովորելը: Միզուցե մրցունակ կրթությունն ստանալը աշխատաշուկայում աշխատանք ոյուրին գտնելու հնարավորությունն է, կամ գործատուի շրջանավարտի մասնագիտական ունակությունների բարձր գնահատանքը:<sup>1</sup>


Կարծում ենք, որ նման հարցադրումների պատասխանը կարելի է մեկնաբանել մի քանի դիտանկյունից (տե՛ս գծապատկեր 1): Համալսարանի շրջանավարտը կարող է իր ստացած կրթությունը համարել «մրցունակ», եթե պահանջված լինի աշխատաշուկայում և արագորեն աշխատանքի անցնի գործատուի մոտ:<sup>2</sup> Իր հերթին, գործատուն «մրցունակ» կարող է համարել մասնագիտական այն կրթությունը, որի շնորհիվ համալսարանի շրջանավարտը տիրապետում է անհրաժեշտ մասնագիտական հմտությունների և կարողությունների, որոնք կիրառելի են աշխատանքային պայմաններում:

Իհարկե, համալսարանները կարող են իրենց մատուցած կրթական ծառայությունները համարել մրցունակ, եթե հավաքագրում են բարձր կրթավճարներ, ընդլայնում դիմորդների ներգրավման շրջանակն ու աշխարհագրությունը, հայտնվում են բուհերի գնահատման վարկանիշավորման միջազգային սանդղակների առաջատար դիրքերում: Պետությունը նույնպես կարող է տալ մրցունակ մասնագիտական կրթության գնահատական՝ ըստ մեկ շնչին ընկնող ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի քանակի, երկրում գործող բուհերի շրջանակի, արտասահմանցի ուսանողների ընդգրկվածության աստիճանի, որակի ապահովման գործակալության կողմից բուհերին տրվող գնահատականների և այլն:

---

<sup>1</sup> **Տե՛ս Ткаченко Е.В., Штейнберг В.Э.** Развитие профессионального образования и дифференциация компетенций как его важная тенденция //Актуальные проблемы профессионального и высшего образования. М.: Изд-во «Экон-Информ», 2016, стр. 24-25.

<sup>2</sup> **Տե՛ս Шафранов-Куцев, Г.Ф., Ефимова, Г.З.,** Профессиональное образование и формирование конкурентоспособности личности, социальной общности, 2014, № 8. стр. 28-39.



**Գծապատկեր 1.** Մրցունակ կրթության դիտարկումը տարբեր տեսանկյուններից<sup>1</sup>

Մրցունակ կրթության գնահատումն ավելի է բարդանում, երբ մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումն իրականացվում է տարբեր մոդելներով: Համալսարանների մի մասն առավելապես շեշտադրում է գիտատեխնիկական նորույթների մշակումը և համարվում հետազոտական, մյուս մասը՝ գիտակրթական գործունեության ծանրության կենտրոնը տեղափոխում է շրջանավարտների մասնագիտական պահանջված հմտությունների և կարողությունների վրա: Բացի դրանից, միջազգային պրակտիկայում լայն տարածում են ստանում համալսարանական քոլեջները, որտեղից շրջանավարտները սահուն անցում են կատարում բուհեր: Ներկայումս մրցակցային է համարվում նաև ոչ ֆորմալ կրթությունը, օն-լայն ուսումնառությունը, «հարատև կրթություն ողջ կյանքի ընթացքում» ձևաչափով մասնագիտական վերանայված ու բարեփոխված կարողությունների ձեռքբերումը, որով ավելի է բարդանում մրցունակ կրթության բնորոշումը:<sup>2</sup>

Ուրեմն, ինչպե՞ս կողմնորոշվել կրթական ծառայությունների մատուցման այս բազմազանության մեջ, և ե՞րբ համարել մասնագիտական կրթությունը մրցունակ:

Հայաստանի Հանրապետությունն ավանդաբար համարվել է մասնագիտական կրթական ծառայություններ մատուցող ակտիվ երկիր: Ընդ որում, Հայաստանը 10 000 բնակչի հաշվով սովորող բուհական ուսանողների ցուցանիշով (տե՛ս աղյուսակ 1) միշտ էլ գտնվել է երկրների առաջին հինգ տասնյակում: Սակայն, մյուս կողմից, ՀՀ-ում կրթությունը միջազգային ասպարեզում մինչ այժմ մրցակցային նշանակալից դիրքեր չի զբաղեցրել:

<sup>1</sup> Կազմել է հեղինակը:

<sup>2</sup> **Տե՛ս Մ.Յ. Богуславский**, Историко-педагогическая экспертиза инноваций в образовании: научные основы. М.: ИСПО РАО, 2015, стр. 104.

Դեռևս ցածր է երկրում արտասահմանցի ուսանողների ներգրավվածության աստիճանը (միջինը 3%), ուսանողների միջազգային շարժունությունը, բուհերում կատարվող հետազոտական աշխատանքի առևտրայնացումը: Չարմանալի չէ, որ հայաստանյան բուհերը գրեթե չեն հիշատակվում միջազգային վարկանիշավորման սանդղակներում:

Աղյուսակ 1

Բարձրագույն ուսումնական հաստատություններն ըստ ուսուցման ձևերի (առաջին աստիճանի)<sup>1</sup>

Ցուցանիշներ	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	63	60	61	56	56
դրանցում սովորողների քանակը, 1 000 մարդ	84.6	81.7	78.7	69.6	64.5
այդ թվում 10 000 բնակչի հաշվով	282.1	273.4	264.9	234.5	217.9

Չետևաբար, մրցունակ կրթության գնահատման մոտեցումները պետք է որոնել այլ հարթություններում, որոնցում հայտնվում են միջազգային առաջատար բուհերը: Ներկայումս առավելապես մրցունակ է համարվում այն կրթությունը, որն առավելապես միտված է գիտելիքների արագացված վերածմանը մասնագիտական պահանջված կարողություններին՝ առանձնացնելով հատկապես ստեղծարար հմտությունների ձևավորումը: Այսօր արդեն գիտելիքի կուտակմանը զուգահեռ, անչափ կարևորվում է ստեղծարար հենքով դրանց արդիական մասնագիտական կարողությունների փոխակերպումը:<sup>2</sup> Անգամ գիտելիքի պաշարումը, առանց սերտ փոխկապակցման մասնագիտական ունակությունների հետ, համալսարանական շրջանավարտի համար երբեմն դառնում է «ավելորդ բեռ», քանի որ չի կարողանում ճկուն դրսևորվել աշխատաշուկայում: Չետևաբար, արդիական պետք է համարել ունակությունների հենքով մասնագիտական կրթության կազմակերպումը, ինչը, ըստ մեր հայեցակարգի, կարող է իրականացվել հետևյալ քայլաշարով:<sup>3</sup>

**Առաջին քայլով** որոշվում է, թե ուսանողն ինչ ունակություններ է ձեռք բերելու կրթության ավարտին և ըստ այդմ կազմվում է ուսումնառության պլան: Այս նպատակով համախմբվում են կրթության բոլոր շահառուների ջանքերը՝ նպատակ ունենալով թիրախավորելու «գիտելիք + հմտություն + կարո-

<sup>1</sup> ՏԵՍ ԶԳ ԱՎԾ տեղեկագիր, 2021 թ., էջ 161:

<sup>2</sup> ՏԵՍ «Высшее образование в немецкой и русской традициях» / М. В. Богуславский, Е. В. Неборский, В. В. Неборская и др. – Ижевск: Ин-т компьютерных исследований, 2016, стр. 214-215.

<sup>3</sup> ՏԵՍ Ա. Ծոզողրյան, Ն. Խաչատրյան, Ունակությունների հենքով համալսարանական կրթության ապագան // «Այլընտրանք» (գիտական հանդես), 2020 ապրիլ-հունիս, էջ 144-146:

ղություն» բաղադրիչները որոշակի մասնագիտական ունակությունների ձեռքբերմանը: Եվ ստացվում է, որ ակադեմիական ծրագիրը կառուցվում է՝ միտված ոչ թե սովորողի մասնագիտական իմացությանը, այլ վերջինիս ունակությունների ձեռքբերմանը: Այստեղ չափազանց կարևորվում է գործատուների գործուկյա մասնակցությունն ուսումնական պլանների ձևավորմանը, ինչը, որպես կանոն, չի արվում իրականացվում ավանդական կրթության ժամանակ: Ասվածի շնորհիվ կրթության արդյունքների չափայնության հիմքում դրվում են ոչ թե ակադեմիական կրեդիտները, այլ մասնագիտական որոշակի ունակությունների հաղթահարման նշանողերը:

**Երկրորդ քայլով**, երբ արդեն կանխորոշված է լինում ունակությունների ձեռքբերման ուսումնառության պլանը, կազմակերպվում է ուսումնական գործընթացը, որն ավանդական կրթությունից տարբերվում է նրանով, որ չափազանց ակտիվանում են գործնական աշխատանքները, վարժանքները, առաջացած խնդիրների կիրառական լուծումները: Այսինքն՝ կիրառվում է «շրջված լսարան» դասավանդման մոտեցումը, որտեղ տեսական դասերից զատ, առավել կարևորվում է ուսանողի ստեղծարար մտքի զարգացումը, իրավիճակային դեպքերից բխող խնդիրների գործնական լուծումների ջանքերի գործադրումը, որոնց կարող են մասնակցել սովորողների խմբերը, անգամ գործատուները: Հետևաբար, ուսումնառության ընթացքում ապագա մասնագետն արդեն իսկ բախվում է գործնական բնույթի խնդիրների և փորձում է լուծել դրանք: Ի դեպ, ուսանողի գործողությունները, որպես կանոն, չեն նորմավորվում ամրագրված ժամանակահատվածով, ինչն այժմ արվում է ավանդական կրթության կազմակերպման ժամանակ: Եթե սովորողին հաջողվում է արագ հաղթահարել իր առջև դրված ունակությունների ձեռքբերման պահանջի նշանողը, ապա նա կարող է անցնել ուսումնառության հաջորդ փուլերին և կրթությունն ավարտել ավելի կարճ ժամկետում:

Interesting results were obtained on the recognition of Chajaj and its recognition as a monument of cultural heritage. 75% of both foreign and Georgian residents knew that Upper Svaneti, in particular the village of Chazhaji in Ushguli, is a World Heritage Site.





**Figure 4. Distribution of foreign visitors according to expenses incurred**  
**Source: The diagram is constructed according to the results of our research**

Interesting results were obtained on the recognition of Chajaj and its recognition as a monument of cultural heritage. 75% of both foreign and Georgian residents knew that Upper Svaneti, in particular the village of Chazhaji in Ushguli, is a World Heritage Site.

However, 25% of respondents did not have information about it. It is therefore important to increase the quality of posting and dissemination of Chajaje, this unique monument informative rings and information booklets on the Internet. Foreign and Georgian residents also consider it as one of the means of popularizing Chajazhi and Ushguli in general.

Both visitors and 100% of the local population believe that in order to restore, protect and then popularize this World Heritage Site, it is necessary to restore the damaged towers and halls, restore the exhibits of the Ethnographic Museum, improve the access roads to the heart, establish a government commission, etc. .

The pandemic is known to have had a devastating effect on tourism. Obviously, the World Heritage Sites could not miss this either. In the first year of the pandemic, catastrophic visitor flows in the direction of Ushguli were catastrophically reduced. In fact, only domestic tourism was breathing down, and this summer, although the rates of international tourism have increased, it has clearly not reached the level of 2020. In the last year, almost 39% of the respondents, 75% of whom were self-employed, hosted up to 151-200 people through accommodation this year, and 38% hosted more than 200 tourists.

As the locals said. The guests were mainly citizens of Israel (21%) and residents of EU member states (35% of all tourists) and residents of Georgia (22%).

33% of the locals believe that Queen Tamar's tomb is located in one of her residences located in Chajaj. They believe that this legend increases the list of secrets of Chajaj and is always an interesting and discussed topic when talking to visitors.

Pridon Nizharadze's creation is a source of pride and pleasant conversation for the residents of Chazhaji. 43% of them think that Nizharadze's paintings, which are called Georgian Salvador Dali, should be added to the world cultural heritage monuments of Chajaj.

### **Rezume:**

Georgian historical sites of world importance are often inefficiently presented by tourism providers, one of the reasons being the lack of proper education and awareness. Urgent measures should be taken to improve the infrastructure of Ushguli, in order to upgrade the old architectural features of the towers and mansions in accordance with the developed plan and deadlines. Otherwise, instead of these unique views, we will get modern, renovated towers, which will break the framework of the natural beauty of mountainous Ushguli, which is the main criterion of charm for foreign and Georgian respondents.

All this is necessary for this unique village of Ushguli to become a real leader in the desired locations of visitors to Sori. There are preconditions for this: the beautiful nature of Aru, the hospitable people, the unique mountains, the exhibits of the unique museum, the monuments of cultural heritage, etc. That's what really fascinates tourists.

The effectiveness of tourism services is closely linked to educational reforms in the sector. In particular, the awareness of Ushguli village is not sufficiently presented in the educational programs of guides. Therefore, the inclusion of the study of Georgian heritage sites in educational programs can play a stimulating role in the development of tourism.

### **Literature**

1. Abesadze, N., Abesadze O. Kinkladze, R., st. Chitaladze-Tourism Statistics: Methodology and Practice. Tb., 2021
2. Gelashvili S. Abesadze N. Methods of statistical analysis. Tbilisi 2021
3. Bernard M. Fielden, Yuka Jociletto. Management Guidelines For World Cultural Heritage Sites. Tbilisi 2007
4. Kvaratskhelia, N., Cultural tourism. 2020
5. Kvaratskhelia N., Cultural Heritage And Tourism.. 2021
6. The Cultural Heritage Of Georgia 2016-2017. Tbilisi 2017
7. Law of Georgia on Cultural Heritage
8. Restoration of architecture in Georgia. 2012
9. [www.unesco.ge](http://www.unesco.ge)

# ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԶԲՈՍԱՎԱՐՆԵՐԻ ԿՐԹԱՎԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## ՆԻՆՈ ԱԲԵՍԱՁԵ

*Իվ. Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարան,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ք.Թբիլիսի, Վրաստան*

## ՕԹԱՐ ԱԲԵՍԱՁԵ

*Վրաստանի ազգային համալսարան, դոցենտ,  
ք.Թբիլիսի, Վրաստան*

Համաշխարհային նշանակություն ունեցող վրացական պատմական տեսարժան վայրերը հաճախ ոչ արդյունավետ են ներկայացվում զբոսաշրջային ծառայությունների մատուցողների կողմից, որի պատճառներից են ոչ պատշաճ կրթության կազմակերպումը և տեղեկացվածության պակասը: Անհրաժեշտ է հրատապ միջոցներ ձեռնարկել Ուշգուլիի ենթակառուցվածքի բարելավման ուղղությամբ՝ մշակված հատակագծին և ժամկետներին համապատասխան աշտարակների և առանձնատների հին ճարտարապետական դիմագիծը թարմացնելու նպատակով: Հակառակ դեպքում, այս յուրահատուկ տեսարանների փոխարեն մենք կստանանք ժամանակակից, վերանորոգված աշտարակներ, որոնք բացասական կանոնադաշտնան լեռնային Ուշգուլիի բնական գեղեցկության շրջանակի վրա: Այս ամենն անհրաժեշտ է, որպեսզի Ուշգուլի յուրահատուկ գյուղը դառնա այցեքարտ Սորի այցելուների համար: Դրա համար կան նախադրյալներ՝ Արուի գեղատեսիլ բնությունը, հյուրընկալ մարդիկ, եզակի լեռները, թանգարանի ցուցանմուշները, մշակութային ժառանգության հուշարձանները և այլն:

Զբոսաշրջային ծառայությունների մատուցման արդյունավետությունը սերտ փոխկապվածություն ունի ոլորտի կրթական բարեփոխումների հետ: Մասնավորապես, Ուշգուլի գյուղի մասին տեղեկատվությունը բավարար չի ներկայացվում զբոսավարների կրթական ծրագրերում: Հետևաբար, վրացական տեսարժան վայրերի ժառանգության ուսումնասիրության ընդգրկումը զբոսավարների կրթական ծրագրերում կարող է խթանիչ դերակատարում ունենալ զբոսաշրջության զարգացման բնագավառում:

**Բանալի բառեր՝ զբոսաշրջություն, մշակութային ժառանգություն, հետազոտություն, մեթոդ, վերլուծություն, կրթությունը ծառայությունների մատուցման գործընթացում:**

## **ДОСТОПРИМЕЧАТЕЛЬНОСТИ ВСЕМИРНОГО НАСЛЕДИЯ ГРУЗИИ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ ТУРИСТИЧЕСКИХ ГИДОВ**

**НИНО АБЕСАДЗЕ**

*Тбилисский государственный университет им. Ив. Джавахишвили,  
доктор экономических наук, профессор,  
г. Тбилиси, Грузия*

**ОТАР АБЕСАДЗЕ**

*Грузинский национальный университет, доцент,  
г. Тбилиси, Грузия*

Грузинские исторические достопримечательности мирового значения часто неэффективно представлены туристическими компаниями из-за ненадлежащего образования и недостаточной осведомленности. Необходимо принять срочные меры по улучшению инфраструктуры Ушгули, чтобы обновить старый архитектурный облик башен и частных домов в соответствии с разработанным планом. В противном случае вместо этих уникальных видов мы получим отреставрированные башни, что негативно скажется на природной красоте горного Ушгули. Все это необходимо для того, чтобы уникальное село Ушгуль стало визитной карточкой посетителей Сори. Для этого есть предпосылки: красивая природа Ару, гостеприимные люди, уникальные горы, музейные экспонаты, памятники культурного наследия и т. д.

Эффективность туристических услуг тесно связана с образовательными реформами в этом секторе. В частности, в образовательных программах экскурсоводов недостаточно представлена осведомленность о селе Ушгули. Следовательно, включение изучения объектов грузинского наследия в образовательные программы гидов может сыграть стимулирующую роль в развитии туризма.

**Ключевые слова:** *туризм, культурное наследие, исследования, метод, анализ, образование в процессе оказания услуг.*

**ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

**ԱՇՈՏ ԶԱԼԻՆՅԱՆ**

ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի պատվավոր պրոֆեսոր,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[ashotzalinian@yandex.ru](mailto:ashotzalinian@yandex.ru)

Հոդվածը վերաբերում է նոր մտածողությամբ հանրային ծառայողների (կառավարողների) ձևավորման և պետական կառավարման համակարգն ինտելեկտուալ կադրերով համալրման անհրաժեշտությանը: Անդրադարձ է արվել պետական (քաղծառայության) ծառայողների պատրաստման ու վերապատրաստման երեք՝ անգլոսաքսոնական, ֆրանսիական և գերմանական փորձի առանձնահատկություններին, ինչը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության համակարգի զարգացման և նոր՝ հայկական կառավարման մշակույթի մոտեցումներ մշակելու համար: Պետական ծառայողների պատրաստման և վերապատրաստման գործընթացներն ուսումնասիրվել են միջազգային փորձում հիմնավորված կենտրոնացված և ապակենտրոնացված իրականացման տարանջատման պայմաններում:

Պետական ծառայողների (կառավարողների) պատրաստման ու վերապատրաստման միջոցով «ՆՈՐ ոճի հայ ինտելեկտուալ կառավարող-կազմակերպիչ դաստիարակելու» համար անհրաժեշտ է՝

1. Պատրաստել աշխարհընկալման ինտելեկտուալ ճանաչողությամբ՝ սեփական մտավոր, ազգային հոգևոր և սոցիալական որակներով, միջավայրի իրական կարիքներն արտացոլելու ունակությամբ և զարգացած հմտություններով հանրային ծառայողներ:

2. Ձևավորել վարքի և վարվելակերպի բարձր մշակույթով, կառավարման համամարդկային արժեհամակարգը հասկանալու անհատական գծով, անընդհատ ինքնակատարելագործվելու ձգտմամբ, սեփական հայացքների և գործողությունների գնահատման ու վերազնահատման կարողությամբ, առկա մարտահրավերներին արժանի պատասխաններ գտնելու հմտություններով հագեցված՝ ազգային ինքնությունը պահպանող սոցիալական հանրույթ:

3. Մշակել ազգային ինքնությունն ապահովող «պետական կառավարման հայկական մշակույթի» պոստուլատներ:

4. Հրատապ իրականացնել հանրային ծառայողների պատրաստման և վերապատրաստման առարկայական ծրագրերի ամբողջ փաթեթի բովանդակության և կառուցվածքի՝ ժամանակի պահանջներին համահունչ փոփոխություններ:

Հիմնաբառեր՝ պետական կառավարման մշակույթ, պետական կառավարման համակարգ, հանրային և պետական ծառայող, միջազգային

*փորձ, ազգային ինքնություն, վերապատրաստում, հանրային ծառայություն, կադրային քաղաքականություն:*

Պետական ծառայողների **պատրաստման (ուսուցման և վարքաբանական դաստիարակման<sup>1</sup>) և շարունակական վերապատրաստման** գործընթացը պետական կառավարման արդյունավետ իրականացման կարևորագույն բաղկացուցիչն է:

Բազմաթիվ երկրներում բացակայում է «պետական ծառայողի» միասնականացված բնորոշումը: Եվրոպական երկրների պետական(առանձին դեպքերում՝ հանրային, քաղաքացիական) ծառայության սահմանումը պարունակում է տարաբնույթ տարրեր<sup>2</sup>, ինչն էլ որոշակիորեն բարդացնում է պետական(հանրային) ծառայության եվրոպական մոդելի վերլուծությունը:

Ներկայիս գլոբալացման «համաշխարհային մշակույթը» բախվում է ազգային արժեքներին և մշակույթներին, ինքնությունը կասկածի տակ դնող սոցիոմշակութային ներկայիս իրականությունը: Մշակութային կեցության՝ համակեցության շրջանակներում էլ հենց ձևավորվում են ինքնության հիմունքները: Մշակութային համատեքստն ունի «մերձեցման ու նույնականացման, ուրիշներից տարբեր լինելու և ինքն իրեն նույնական մնալու անկրկնելիության գործառույթ»<sup>3</sup>: Մշակույթը փոխելով մարդկանց գիտակցությունն ու ինքնությունը, համահարթեցնում է նրանց անհատականությունները և ստիպում նույնականանալ իրենց մշակութային համատեքստին, դառնալ հանրային ընդհանրական ինքնության կրող: Միաժամանակ փոխվում է նաև կառավարման մեջ գիտակցության մշակույթը:

Ազգի բնական և մշակութային ընդհանրության խառնվածքը որոշվում է նրա ծագումնաբանական որակներով, աշխարհագրական միջավայրով, մշակույթով, բարոյա-իրավական համակարգերով, համակեցության ավանդույթներով և այլն: «Լինել մշակութային ազգ, ունենալ հանրային կյանքի կազմակերպման ազգային մշակույթ, նշանակում է ունենալ ազգային հոգեկերտվածք ու ինքնությունը բնորոշող պատմամշակութային ժառանգություն»<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Նշենք, որ անրմատյան և արևելյան եվրոպայի երկրների իրավագիտակցության մեջ պատրաստման գործընթացի բովանդակությունում բացակայում է մեր կողմից կիրառվող վարքաբանական դաստիարակման հասկացությունը: Ինչ վերաբերվում է դաստիարակություն եզրույթին, ապա այն արտասահմանյան բազմաթիվ երկրներում առանձին չի ենթադրվում և անմիջականորեն ներառված է կրթություն եզրույթի մեջ:

<sup>2</sup> Փ. Կարդոն. Сфера гражданской службы в Европейских странах, тенденции и процессы. Семинар в Европейском институте государственного управления Маастрихт, 13–14 ноября 2000г.; Տես նաև՝ Заир-Бек Е.С. Принципы отчетности в политике управления образованием//Высшее образование сегодня. 2009. № 9.; Н. С. Матвеева Профессиональное развитие государственных служащих: опыт европейских стран и США. // Финансовый журнал / Financial journal №4, 2014; Заир-Бек Е. С., Ксенофонтова А. Н. Институциональный подход в исследованиях образования // Интеллект. Инновации. Инвестиции. – 2012. – № 4

<sup>3</sup> Տե՛ս Хантингтон С. Кто мы? Вызовы американской национальной идентичности. М.: АСТ, 2004,

<sup>4</sup> Էդ. Աթայան. Հոգի և ազատություն, Եր., 2005,

Նախքան պետական ծառայության կադրային ապահովման գործընթացի միջազգային փորձին անդրադառնալը, համառոտ պարզաբանենք մեր և արևմտյան իրողությունների միջև առկա որոշ տարբերություններից մի քանիսը.

1. Պետական ծառայության կառավարման հաստատված ավանդույթներ ունեցող երկրներում քաղաքական էլիտան (կառավարող ընտրանին) վաղուց է գիտակցել «տաղանդավոր անձանց»<sup>1</sup> փնտրելու և նրանց պահպանելու անհրաժեշտությունը: Այսօր կադրային ռեզերվի (բազայի, բանկի) ձևավորման գործընթացում բավարար չէ ընդունակ կառավարիչ (պետական ծառայող) գտնելը. անհրաժեշտ է նրանց նախապատրաստել պաշտոնի անցնելուն:

2. Ի տարբերություն արևմուտքի պետական ծառայողների, որոնց պատրաստման բազային նվազագույն անհրաժեշտ գիտելիքների մակարդակը «միատեսակ» է, մեզ մոտ պետական ծառայողներն ունեն բազային գիտելիքների տարբեր որակական մակարդակ և անհրաժեշտ հիմնական հմտություններ:

3. Արևմուտքում՝ պետական կառավարման համակարգի **կայուն զարգացման պայմաններում**, հաջողությամբ գործում է կադրային քաղաքականության երկարաժամկետ (մինչև 10 տարի) պլանավորումը: Մեր երկրում՝ հասարակական-քաղաքական համակարգի զարգացման անկանխատեսելիության և բազում անորոշությունների պատճառով, երկարաժամկետ պլանավորում իրականացնելը խիստ դժվար է:

Մեր համոզմամբ, պետական ծառայողների և ընդհանրապես՝ հանրային ծառայության համակարգի բոլոր բաղկացուցիչների պատրաստման գործընթացի բարեփոխման ուղղություններից մեկը պետք է լինի պետական՝ առնվազն եռամյա զարգացման ծրագրի մշակումը: Միջազգային դասակարգման մեջ «պետական կառավարումը» դիտարկվում է որպես հանրային կառավարման գործընթացների ու պետական քաղաքականության համադրություն: Ըստ էության, ասվածը ենթադրում է «հանրային ծառայության համակարգում ընդգրկված բոլոր ծառայողների իրավասությունների **հայկական** սեփական մոդելի»՝ միասնական համապարտադիր «առաջնորդման որակների» մշակում<sup>2</sup>:

Պետական ծառայողների աշխատանքի գիտականորեն կազմակերպման գործընթացն առաջինը սկսեցին Արևմտյան տերությունները<sup>3</sup>: Պետծառայողների պատրաստման կազմակերպման միջազգային փորձն ունի կազմակերպման տարբերակված՝ **կենտրոնացված և ապակենտրոնացված** մոտեցումներ:

---

<sup>1</sup> Новые технологии государственного управления в зеркале канадского и российского опыта : монография / под ред. А. М. Марголина и П. Дуткевича. – М. : 2013.

<sup>2</sup> Նման մոդելների մասին տես՝ Степанова Т. Европейский опыт подготовки специалистов по государственному управлению // Государственная служба. 2013., № 2 (82).; <http://leadership.opm.gov/>.; Matthew Stafford. The United States Executive Civil Service Training System.// <http://2013.astanforum.org/wp-content/uploads/2013/01/Stafford-The-United-States-ExecutiveCivil-Service-Training-System.ppt>

<sup>3</sup> Այս մասին տես՝ “Young Scientist” #52 (238). 2018. State and Law 2018. // աղբյուրը՝ Кудяев П.П. Управленческие технологии профессионального развития государственных гражданских служащих // Молодой ученый. 2013. № 12.

Պետական (քաղաքացիական, հանրային) ծառայության կադրերի **պատրաստման** ծրագրերը համակարգային են, իհարկե՝ իրենց առանձնահատկություններով: Հիմնական կրթական ծրագրերի նմանությանը զուգահեռ, դրանցում առկա են տարբերություններ, ինչը որոշվում է տվյալ երկրում պետական ծառայության իրավագիտակցական ընկալմամբ<sup>1</sup>: Պետական ծառայողի պատրաստման և վերապատրաստման միջազգային փորձը փաստում է, որ արդեն հաճախ, ուսման ժամանակահատվածը համարվում է պետական ծառայության ստաժ: Կրթօջախների առաջնահերթություններից են դարձել՝ **վերապատրաստման դասընթացների մեթոդաբանության միասնականությունը** (միջդիսցիպլինար և անհատական բնույթի ուսումնական ծրագրերի ապահովումը), **կրթության անհատականացումը** (ունկնդիրներին՝ իրենց ընտրությամբ կրթական անհատական ծրագրերի ձևավորման հնարավորության ընձեռնումը) և այլն:<sup>2</sup> Ընդ որում, իրականացվող հիմնական պարտադիր ծրագրերից սկսում են գերակշռել օրինակ, «Տնտեսագիտական կիրառական գիտելիքների հիմունքներ», «Պետական կառավարման հիմունքներ», «Պետական վերահսկողության հիմունքներ», «Պետական կառավարման բարեփոխումների հիմունքներ», «Պետական մենեջմենթի հիմունքներ», «Պետական քաղաքականության հիմունքներ», «Թվային պետական կառավարման հիմունքներ», «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ», «Հանրային քաղաքականության հիմունքներ», «Միջազգային հարաբերությունների հիմունքներ», «Տարածաշրջանային զարգացման հիմունքներ» և այլն:

➤ **Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության պետական ծառայողների պատրաստման փորձի 2 ուղջ.**

Պետական ծառայության անգլո-սաքսոնական մոդելը բնորոշ է «վեստմինստերյան» քաղաքական և իրավական համակարգին:<sup>3</sup>

1850-1870 թվականներին Մեծ Բրիտանիայում ձևավորվեց կայուն մասնագիտական ծառայության անգլո-սաքսոնական համակարգ-մոդել<sup>4</sup>, որն այսօր կիրառում են նաև բազմաթիվ երկրներ:

<sup>1</sup> Махов Е.Н. Инновационная культура в кадровой сфере. М.: Евразия, 2015.; <http://my.civilservice.gov.uk/reform/the-reform-plan/>

<sup>2</sup> Public Service Training in OECD Countries, Sigma Papers. – No. 16, OECD Publishing. <http://dx.doi.org/10.1787/5kml619ljzcn-en> 22; Пути модернизации: траектории, развилки и тупики: Сборник статей. Открытый научный семинар / Под ред. В. Гельмана и О. Маргания. СПб.: Издательство Европейского университета в Санкт-Петербурге, 2010. // աղբյուրը՝ Государственное управление. Электронный вестник, Выпуск № 58. 2016 г

<sup>3</sup> Վեստմինստերյան համակարգն իրենից ներկայացնում է Մեծ Բրիտանիայի պետական մոդելով կառուցված պետության կառավարման պառլամենտական համակարգ, որի օրենսդրությունը մշակվել է Անգլիայի թագավորական դատական ատյանների կողմից դեռևս 1066 թվականին: Համակարգը ներառում է անգլալեզու երկրները և անուղղակի՝ Բրիտանական Համագործակցության բոլոր պետությունները // Государственная служба. Учебник / Под ред. проф. В.Г.Игнатова. – М, 2004.

<sup>4</sup> Հետագայում իրենց մեծագույն ներդրում են ունեցող Չեքոսլովակիայի գիտնականներ Լորենց ֆոն Շտեյնը, Ռոբերտ ֆոն Մոլը, Մաքս Վեբերը:// Мэннинг Н., Парисон Н. Реформа государственного управления: международный опыт. М.: Весь Мир, 2003



Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը՝ չտալով «պետական ծառայող» հասկացության հստակ ձևակերպումը, այն՝ նեղ իմաստով դիտարկում է պետական կառավարման մարմնում աշխատող անձին, իսկ լայն իմաստով՝ հանրային հատվածում աշխատող բոլոր ծառայողներին: Մեծ Բրիտանիայում (ինչպես նաև Կանադայում, Նոր Չեյանդիայում, Ավստրալիայում, Հնդկաստանում) պետական ծառայությունը կոչվում է «քաղաքացիական ծառայություն»: Դրան զուգահեռ, գոյություն ունի նաև «հանրային ծառայություն», որի ծառայողներին, որպես կանոն, անվանում են «պաշտոնյաներ» կամ «պաշտոնատար անձիք»(այն դեպքում, երբ նախարարության աշխատակիցներին անվանում են «քաղաքացիական ծառայողներ»): Ներկայում Մեծ Բրիտանիայում քաղաքացիական ծառայողները դիտարկվում են որպես «Թագի ծառաներ» (բացառությամբ՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանցիք և դատավորները, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաները, ազգային առողջապահության ոլորտի աշխատակիցներն ու ուսուցիչները):<sup>1</sup> Քաղաքացիական ծառայող չեն հանդիսանում «Թագի քաղաքական ծառայողները»՝ նախարարները, ինչպես նաև՝ «Թագի գինվորական ծառայողները»՝ գինված ուժերի և ոստիկանության աշխատակիցները: Վերը նշված խմբի ներկայացուցիչները՝ քաղաքացիական ծառայողների հետ միասին միավորվում են առավել լայն՝ «*հանրային ոլորտի աշխատակիցներ*» հասկացության մեջ: Մեծ Բրիտանիայում գործող «տեղական ինքնակառավարման ծառայությունը» (մեզ մոտ՝ «համայնքային ծառայողներ») օրենսդրորեն առանձնացված է քաղաքացիական ծառայությունից, իսկ նրանց վարչա-կառավարչական աշխատակիցները պաշտոնապես համարվում են «*Թագի սպասավորներ*»:

**Այազա պետական ծառայողների** պատրաստումն իրականացվում է հաղորդակցման հմտությունների, թիմային աշխատանքի, համակարգային մտածողության զարգացմամբ պատրաստման գործընթացում միջառարկայական գիտելիքների արմատավորմամբ: Մեծ Բրիտանիայում մշակվել է պետական ծառայողների կոմպետենտության(իրազեկության) գնահատման չափանիշներ, որում խիստ կարևորվում են փոփոխությունները կառավարելու, առաջնորդման հմտություններն ու ունակությունները<sup>2</sup>:

Անզու-սաքսոնական մոդելը ծառայողական առաջխաղացման համար կարևորագույն խթան է դիտարկում կրթական կիրառական մակարդակի անընդհատ բարձրացումը: Այդ նապատակով գործում է պետական կառավարման տարբեր մարմինների կողմից կազմակերպված գործնական(կիրառական) մակարդակով վերապատրաստման լայն

---

<sup>1</sup> Е. С. Заир-Бек, С. И. Заир-Бек. Модели повышения квалификации государственных служащих в странах Европы. // Экономика, управление, инновации, инвестиции. Москва, 2013.

<sup>2</sup> Пенькович Ю. С., Шевалдина Е.И. Кадровая политика организации. В сборнике: Наука в современном обществе: Закономерности и тенденции развития. // Сборник статей Международной научно—практической конференции. М., 2017. ; Andrews R., Downe J., Guarneros-Meza V. Public Sector Reform in the UK: Views and Experiences from Senior Executives / COCOPS Work Package 3. Country Report UK. May 2013.: [http://www.cocops.eu/wp-content/uploads/2013/06/UK\\_WP3-Country-Report.pdf](http://www.cocops.eu/wp-content/uploads/2013/06/UK_WP3-Country-Report.pdf).

համակարգ, որտեղ **պետական իշխանության կառույցները պատասխանատվություն են կրում կադրերի պատրաստման գործընթացում:**

Իրենց անհրաժեշտ կադրերի պահանջարկի գնահատումից հետո պետական կառավարման մարմինները մշակում են **կադրերի ռեզերվի պատրաստման(ձևավորման)** սեփական ծրագրերը<sup>1</sup>, նախապես ձևավորում են նաև կադրային ռեզերվի հետագա տեղաբաշխման մոտեցումները<sup>2</sup>:

**Ապագա պետծառայողների** կողմից կրթական ծրագրի անհատական ընտրությունն ապահովելու նպատակով Մեծ Բրիտանիայում իրականացվում են նաև անմիջապես պետական իշխանության մարմինների կողմից կազմակերպվող բազմաթիվ սեմինարներ-դասընթացներ, ծրագրեր:

Մեծ Բրիտանիայի պետական ծառայողների **վերապատրաստման** համակարգն ունի ուսումնական պլանների բովանդակային ձևավորման առանձնահատկություններ: Օրինակ, հաշվի առնելով ղեկավար պետծառայողների զբաղեցրած դիրքն ու գործառույթների առանձնահատկությունները, փոխվում են նրանց համար նախատեսված դասընթացների կառուցվածքը, ծրագրերը, բովանդակությունը:<sup>3</sup>

Մեծ Բրիտանիայում Զաղաքացիական ծառայության Զոլեջում (**Civil Services College**) դասընթացներն անցկացվում են զուգահեռ թե՛ **աշխատող** միջին մակարդակի պետծառայողների, թե՛ աշխատող վեկավարների և թե՛ **ապագա ղեկավարների համար** նախատեսված պատրաստման և վերապատրաստման ծրագրերով<sup>4</sup>: Ընդ որում, ղեկավարները հաճախում են նախատեսված այն ծրագրերին՝ «վարպետաց դասերին», որոնք առնչվում են տվյալ պահին իրենց աշխատանքային կոնկրետ հարցերին և խնդիրներին<sup>5</sup>: Միաժամանակ **«Փայլուն պետական ծառայության ապահովում»** հայեցակարգը նպատակաուղղված է փորձառու և բազմամյա աշխատանքային փորձով պետական ծառայողների «պահպանմանը», շարունակական աշխատանքի ապահովմանը:<sup>6</sup>

Ուշադրության արժանի է նաև պետական ծառայողների համար **կիրառական պրակտիկայի**<sup>7</sup> կազմակերպման միջազգային փորձը: Մեծ

<sup>1</sup> Աղբյուրը՝ «Молодой учёный» . № 52 (238) 202 Государство и право . Декабрь 2018 г.

<sup>2</sup> Աղբյուրը՝ Василенко И.А. Административные реформы в Великобритании // Государственная служба. 2011. № 2.

<sup>3</sup> Այդ մասին տես՝ Тараканов А. Гарантии для государственных служащих: понятие и соотношение с другими категориями // Государственная служба. – 2009. – №1.

<sup>4</sup> Աղբյուրը՝ В.А. Гвоздев. Зарубежный опыт подготовки кадров для государственной гражданской службы. // Исторические науки . Вестник Чувашского университета. 2019. № 2; Понкин И.В. Теория публичного управления: Учебник для магистратуры и программ Master of Public Administration. 2017.

<sup>5</sup> UK Government. Civil Service Training: A training programme to embed design thinking within the work of UK public servants Available. <http://designforeurope.eu/case-study/uk-government-civilservice-training> (Accessed 5 February 2019).// աղբյուրը՝ Исторические науки . Вестник Чувашского университета. 2019. № 2

<sup>6</sup> A Brilliant Civil Service. Available at: <https://civilservice.blog.gov.uk/category/a-brilliant-civilservice> (Accessed 6 February 2019).

<sup>7</sup> Այս մեթոդի մասին առավել մանրամասն տես՝ Бакушев В.В., Демидов Ф.Д. Профессиональное образование в начале Нового века и подготовка государственных служащих. М.: Изд-во РАГС, 2013.

Բրիտանիայի «Պետծառայողների դասավանդման Ռազմավարություն»-ը հստակեցնում է պետական ծառայողների պրակտիկայի ծրագրերի նպատակները, նաև՝ **ապագա հավանական պետծառայողների** հմտությունների ուժեղացումը:

Ինչպես արդեն նշել ենք, արտասահմանյան փորձը **պետական ծառայության կադրերի պատրաստման գործընթացում կարևորում է իշխանության մարմինների մասնակցությունը**, պետական ծառայողների պատրաստամբ և վերապատրաստմամբ զբաղվող կրթօջախների հետ **համատեղ** ուսումնական առարկաների բովանդակության, դրանց իրականացման ձևերի ու մեթոդների մշակումը: Միջազգային փորձը փաստում է, որ պրոֆեսիոնալ կառավարիչ-մասնագետների պատրաստման ողջ գործընթացը նպատակաուղղված է իրենց **վաղվա կադրարյին ռեզերվի** ձևավորմանը<sup>1</sup>:

➤ **Ֆրանսիայի պետական ծառայության կադրերի պատրաստման փորձի շուրջ.**

Ֆրանսիայում, ինչպես և Մեծ Բրիտանիայում, բացակայում է «պետական ծառայողի» հասկացության խիստ սահմանումը: Երկրի պետական ծառայության «Ընդհանուր կանոնադրությամբ» այն բնութագրվում է որպես «պետական բյուջեից վարձատրվող մշտական պաշտոն»<sup>2</sup>:

Ֆրանսիայում **Կառավարման Ազգային Դպրոցը (ENA- *Olecole nazione d'Administration*)** և երկրում գործող շուրջ 70 մասնագիտացված դպրոցները (ներառյալ ուսուցիչների վերապատրաստման և ռազմական դպրոցները) հանրային ծառայության աշխատակիցների համար ապահովում են նեղ մասնագիտացված տարբեր դասընթացներ:<sup>3</sup> Ֆրանսիայի պետական ծառայության համար կադրերի պատրաստման կարևոր գույն նպատակը՝ ապագա գործունեության համար **ունկնդիրների** «հմտություններով հագեցումն» է, նրանց մոտ՝ «*ժողովրդի ծառայի*» մտածելակերպի ձևավորումը:

Պետական ծառայողների վերապատրաստման բազմազան թեմաների շարքում առկա են նաև **պարտադիր ընդհանուր ծրագրեր** (միանձնյա կառավարում, քաղաքականություն և առաջնորդում, զարգացման համաշխարհային հեռանկարներ), պետական կառավարման կոնկրետ կառույցների համար նախատեսված **մասնագիտացված**, ինչպես նաև

---

<sup>1</sup> Ընդ որում կարևոր է նշել, որ առաջատար և գլխավոր պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողների մեծ մասը նախապես են մասնակցում ապագա ղեկավարների պատրաստման(վերապատրաստման) ծրագրերին: // О.Оболонский А. В. Великобритания: на пути к новой модели госслужбы // *Общественные науки и современность* . – 2007. – № 6.

<sup>2</sup> Марголин А. М. Мировой опыт государственного управления // *Государственная служба*. – 2000. – № 1.

<sup>3</sup> աղբյուրը՝ <https://www.vparis.net/>; <https://www.conseil-etat.fr.>; Այդ մասին տես նաև՝ Sauvé J. – M. La justice administrative à l'aube de la décennie 2010. Intervention sur la conférence nationale des présidents des juridictions administratives. // <http://www.conseil-constitutionnel.fr> // Documentation // Contributions et discours>; Sauvé J. – M. L'examen de la constitutionnalité de la loi par le Conseil d'État Journée d'étude organisée au Conseil d'État par le Centre de recherche en droit constitutionnel de l'Université de Paris I Panthéon-Sorbonne Vendredi 1er avril 2011.; Конов А.В. Государственная служба Франции: комплексный подход. М.: Дело, 2014.

**միջգերատեսչական նշանակության ծրագրեր** (դասընթացներ): Ընդ որում, վերապատրաստման ընթացքում պետական ծառայողները կարող են **ընտրել ցանկացած կրթական ծրագիր:**

➤ **Գերմանիայի Դաշնության պետական ծառայության կադրերի պատրաստման փորձի շուրջ.**

Գերմանիայի «պետական ծառայությունը» ներառում է պետական կառավարման կառույցների և կազմակերպությունների բոլոր աշխատակիցներին, ինչպես նաև ուսուցիչներին, նախադպրոցական հաստատությունների աշխատակիցներին, համալսարանների դասախոսներին և մանկավարժներին, դատավորներին, ոստիկանության աշխատակիցներին, զինվորականներին)<sup>1</sup>:

Գերմանիայում պետական ծառայողների պատրաստման ծրագրերում շեշտը դրվում է ոչ միայն անհրաժեշտ պրոֆեսիոնալ գիտելիքների փոխանցման, այլ նաև՝ համապատասխան աստիճանի պաշտոնատար անձանց խնդիրների լուծման **հավաքական հմտությունների, կիրառական պրակտիկայի** ձեռքբերման, **շփումների** և **թիմային աշխատանքի հմտությունների** զարգացման, պետության շահերից բխող **մտածողության (մտածելակերպի)** և **վարքի կոնկրետ ձևերի** տիրապետման, աշխարհաքաղաքականության և սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության տիրապետման վրա:<sup>2</sup>

Հատկանշական է, որ Դաշնության Կառավարման Բարձրագույն Դպրոց կարող են ընդունվել միայն այն դեպքում, եթե պարտավորվում են ավարտելուց հետո անցնել պետական ծառայության (ըստ Էության, Դպրոցում սովորողներն արդեն իսկ ձեռք են բերում պետական ծառայության համակարգում երաշխավորված աշխատատեղ):<sup>3</sup> Գերմանիայում պետական կառավարման մարմինները պարտադիր ներգրավված են պետական ծառայության համար անձնակազմի պատրաստման ուսումնական ծրագրի մշակմանը:<sup>4</sup>

➤ **ԱՄՆ-ի պետական ծառայության համար կադրերի պատրաստման փորձի շուրջ.**

Միացյալ Նահանգներում պետծառայողների խմբում ընդգրկվում են ինչպես պետական ծառայողներն ու այլ պաշտոնյաները, այնպես էլ օժանդակ և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմը, այլ

<sup>1</sup> Գերմանացի պրոֆեսորն ունի պետական ծառայողի կարգավիճակ և աշխատանքի է հրավիրվում ոչ թե կրթական հաստատության կողմից, այլ հողերի կառավարությունների կողմից՝ իր ԲՈՒՅ-ի ներկայացմամբ: // О.Оболонский А. В. Великобритания: на пути к новой модели госслужбы // Общественные науки и современность . – 2007. – № 6.; Government at a Glance 2011 (Summary in Russian). OECD Publishing, Publication date: 24 Jun 2011.

<sup>2</sup> Василенко И.А. Административно-государственное управление в странах Запада: США, Великобритания, Франция, Германия. М.: Проспект, 2013.

<sup>3</sup> Н.Н. Мусинова, О.Н. Любина Формирование кадрового состава на государственной гражданской службе: современные подходы, зарубежный и отечественный опыт. Семинар «Управление персоналом государственных служащих и кадровая политика Правительства Берлина», март 2007 г. Вестник Университета № 7, 2014.

<sup>4</sup> Contribution of collective bargaining to continuing vocational training. 2009. (www.eurofound.europa.eu)

աշխատողներ<sup>1</sup>: Միացյալ Նահանգներում «պետական ծառայող» կամ լայն առումով՝ «հանրային հատվածի աշխատող» համարվում են անձիք, որոնք աշխատանքը վճարվում է դաշնային, նահանգային կամ տեղական մարմինների բյուջեներից: Ըստ այդմ, լայնորեն կիրառվում են «քաղաքացիական ծառայություն», «հանրային ծառայություն» և «պետական ծառայություն» տերմինները, որոնք բնույթով հոմանիշներ են:

Միացյալ Նահանգներում բարձրագույն դասի պետական ծառայողների կիրառական պրակտիկայի բովանդակությունը կախված է կոնկրետ պաշտոնատար անձի աշխատանքային պարտականությունների շրջանակներից: Ընդ որում, պետական ծառայողներն իրավունք ունեն ընտրել այն ծրագիրը, որն առավել հարմար է իրենց: Կարևոր է նշել պետծառայողների և առևտրային ընկերությունների կառավարիչների **համատեղ վերապատրաստման** (ինչպես՝ Ֆրանսիայում) փորձի ակտիվ կիրառումը:

ԱՄՆ-ում մեծ կարևորություն է տրվում Բարձրագույն ղեկավարների Ծառայության (ԲՂԾ) (**Senior Executive Service(SES)**) համակարգին<sup>2</sup>. բոլոր նախարարություններն ու պետական կառավարման կառույցներն ունեն ԲՂԾ անդամների աշխատանքի գնահատման մեխանիզմ<sup>3</sup>:

Միացյալ Նահանգներում կառավարչական պարտադիր հմտությունների տիրապետման մոդելը կոչված է բոլորի համարապահովել համընդհանուր մակարդակ և ներառում է.<sup>4</sup>

1. Հմտությունների հիևգ ընդհանուր ոլորտներ(փոփոխությունների կառավարում, անձնակազմի կառավարում, ռեսուրսների կառավարում, աշխատանքի արդյունքների ձեռքբերում, կապերի և կոալիցիայի ձևավորում:

2. Ղեկավարի որակական հմտություններ:

3. Որակավորման պահանջներին համապատասխան կառավարողների գործունեության և վարքի հիմնական բնութագրերի նկարագրություն:

Մոդելի հիմքը ղեկավարի մասնագիտական ու անձնական որակներն են և կախված պետական մարմնի բնույթից և գործունեության ուղղություններից՝ տարբերակվում են մասնագիտական իրավասությունների երեք մակարդակ. **հիմնական** (հիմնված են պետական մարմինների բոլոր ղեկավարների

---

<sup>1</sup> Ներառյալ՝ պետական ուսումնական հաստատությունների ուսուցիչները, պետական ձեռնարկությունների և կոմունալ տնտեսությունների ծառայողները:

<sup>2</sup> Առավել մարման տես՝ Г.А.Борщевский. Государственное управление за рубежом. Трансформация госслужбы в условиях политических изменений современности: опыт США. // Вест-к Московского ун-та. Уптвавление(государство и общество). 2017, №2.

<sup>3</sup> Բարձրագույն ղեկավարները չեն գնահատվում նոր պաշտոնի նշանակվելուց 90-120 օրվա ընթացքում, իսկ Պետդեպարտամենտի աշխատակազմում՝ երկրի նորընտիր Նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո՝ 120 օրվա ընթացքում: // Правдин А.А. Зарубежный опыт профессиональной подготовки государственных служащих. // Вестник эксперт. совета, №2 (5), 2016

<sup>4</sup> Турняк К.В., Шакина М.А. Модели профессиональных компетенций работников государственного и муниципального управления в условиях нового государственного менеджмента: отечественный и зарубежный опыт // ARS ADMINISTRANDI. 2012. №4. - <http://cyberleninka.ru/article/n/modeli-professionalnyh-kompetentsiy-rabotnikov-gosudarstvennogo-i-munitsipalnogo-upravleniya-v-usloviyah-novogo-gosudarstvennogo>.// Թեմայի վերաբերյալ տես նաև՝ Пестерева Н.М., Цветлюк Л.С., Надеина О.С. Формирование профессиональных компетенций государственных служащих: монография / Н.М. Пестерева, Л.С. Цветлюк, О.С. Надеина - М.: Изд-во Московского гуманитарного университета, 2014.

համար ընդհանուր գործառույթների վրա), **հատուկ** (արտացոլում են պետական որոշակի բնույթի մարմինների գործունեության առանձնահատկությունները) և **գործառույթային** (հիմնվում են պետական մարմնի կողմից իրականացվող գործունեության ոլորտների խնդիրների տարանջատման վրա):

➤ **Պետական ծառայության համար կադրերի պատրաստման Կանադական փորձի շուրջ.**

**Կանադայի** պետական ծառայության (մինչև 1967 թվականը՝ *քաղաքացիական ծառայություն*) համակարգի փորձն ունի իր առանձնահատկությունները. պետական ծառայությունը հաշվետու է «Թագին» այլ ոչ թե՛ կառավարությունը կամ՝ իշխող քաղաքական կուսակցությունը:<sup>1</sup>

Կանադայի Պետական ծառայողների պատրաստման և վերապատրաստման գործընթացի հիմնական նպատակը՝ **պոստենցիալ առաջնորդներին (ղեկավարներին)** գտնելն է և պետական մարմիններում իրենց ծառայության ամբողջ ընթացքում դրանց ներուժի զարգացումը:

➤ **Պետական ծառայության համար կադրերի պատրաստման Սինգապուրի փորձի շուրջ.**

Պետական ծառայության անցնելու յուրահատուկ համակարգ է գործում **Սինգապուրում**: Պատրաստման համակարգը հիմնված է արժանիքների՝ անձի ունակությունների և հմտությունները գնահատման սկզբունքի վրա: Պետությունն արդեն իսկ վաղ տարիքից՝ հանրակրթական դպրոցների ավարտական դասարաններում և ապա նաև՝ ԲՈՒՅ-երում բացահայտում է խոստումնալից երիտասարդներին, հետևում և խրախուսում է նրանց ուսման ընթացքում: Նրանցից լավագույնները ստանում են դրամաշնորհներ՝ արտասահմանյան համալսարաններում ուսուցանվելու համար<sup>2</sup>: Իրենց հերթին, խոստումնալից երիտասարդները պարտավորվում են ապագայում աշխատել պետական կառավարման մարմիններում:

---

<sup>1</sup> Գաղտնի խորհրդի՝ բրիտանական Թագուհու խորհրդականների Մարմնի քարտուղարը հանդիսանում է Կանադայի պետական ծառայության ղեկավար: Դպրոցը Կանադայի դաշնային կառավարության կառուցվածքային ստորաբաժանում է: Դպրոցի աշխատանքի համակարգման պատասխանատվությունը կրում է Կանադայի գանձապետական խորհրդի նախագահը (ով նաև Նախարարների կաբինետի անդամ է), իսկ խորհրդում ներառված են ֆինանսների նախարարը և կառավարության ևս հինգ անդամ:// Comparisons between UK and Canadian Government: The Role of the Clerk to the Privy Council, 2010.; Прокофьев С.Е. Организация кассового обслуживания исполнения Федерального бюджета Канады//Финансы, 2007, № 6

<sup>2</sup> Н.Н. Мусинова, О.Н. Любина Формирование кадрового состава на государственной гражданской службе: современные подходы, зарубежный и отечественных опыт. //Вестник Университета № 7, 2014 ; Государственная служба в разных странах мира - <http://www.countryreport.org>

# МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ОРГАНИЗАЦИИ ПОДГОТОВКИ И ПЕРЕПОДГОТОВКИ ГОСУДАРСТВЕННЫХ СЛУЖАЩИХ

**АШОТ ЗАЛИНЯН**

*почетный профессор Академии государственного управления РА,  
кандидат экономических наук, доцент,  
г.Ереван, Республика Армения*

В статье рассматриваются вопросы подготовки и переподготовки государственных служащих, необходимость оснащения системы государственного управления новыми интеллектуальными кадрами. Проанализированы особенности англосаксонского, французского и немецкого опыта в данной области, с учетом централизованной и децентрализованной их реализации.

Для воспитания «нового типа армянского интеллектуального управляющего-организатора» посредством обучения и переподготовки государственных служащих (управляющих) необходимо:

1. Подготовить государственных служащих с высоким интеллектуальным познанием мировосприятия со своими национальными, духовными и социальными качествами.
2. Сформировать **сохраняющее национальную идентичность социальное сообщество** управляющих с высокой культурой поведения, пониманием универсальной системы ценностей управления, стремлением к постоянному самосовершенствованию.
3. Разработать постулаты «армянской культуры государственного управления» на основе традиций и обеспечения национальной идентичности.
4. В соответствии с требованиями времени срочно внести изменения в содержание и структуру всего пакета программ подготовки и переподготовки государственных служащих.

**Ключевые слова:** *культура государственного управления, система государственного управления, государственный служащий, международный опыт, национальная идентичность, обучение, подготовка и переподготовка, государственная служба, кадровая политика.*

## INTERNATIONAL EXPERIENCE IN ORGANIZATION OF TRAINING AND RETRAINING OF CIVIL SERVANTS

**ASHOT ZALINYAN**

*Honorary Professor of the Public Administration Academy of the Republic of Armenia, Candidate of Economic Sciences, Associate Professor,  
Yerevan, the Republic of Armenia*

The article discusses the issues of training and retraining civil servants, and the need to equip the public administration system with new intellectual

managers. The features of the Anglo-Saxon, French and German experiences in this area are analyzed, taking into account their centralized and decentralized implementation.

To educate a "new type of Armenian intellectual manager-organizer" through training and retraining of civil servants, it is necessary:

1. To train civil servants with high intellectual knowledge in the worldview, with their national, spiritual, and social qualities, with developed skills and abilities to reflect the real needs of the environment.
2. To form a social community of managers that preserves national identity with a high culture of behavior, understanding of the universal system of management values, and striving for constant self-improvement.
3. Develop the tenets of the "Armenian culture of public administration" based on traditions and ensuring national identity.
4. In accordance with the requirements of the time, urgently make changes to the content and structure of the entire package of training and retraining programs for civil servants.

**Keywords:** *culture of public administration, professional development, continuing training and retraining, public administration system, personnel reserve, international experience, public service, personnel policy, state policy, national identity, civil servant.*



# ԹՎԱՅԻՆ ԷԿՈՐԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## ԵՎԳԵՆՅԱ ՀԱՅՐԻՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորման անդամ,  
ԱրԴՀ ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,  
ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն  
[evgenyahayriyan@mail.ru](mailto:evgenyahayriyan@mail.ru)

## ԱՍՊՐԱՄ ՄԱՅԻԼՅԱՆ

ՌԴ ՄՍՀՊԻ (МГИМО) Միջազգային տնտեսական հարաբերությունների  
ֆակուլտետի մագիստրանտ,  
ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն  
[aspram2000@gmail.com](mailto:aspram2000@gmail.com)

**Հոդվածի նպատակն է բացահայտել թվային Էկոհամակարգի կարևորությունը, ներուժը տնտեսական աճի խթանման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:**

Նշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ներկայիս դրությունը համաշխարհային թվային շուկայում, բացահայտել ՀՀ տնտեսության ներուժը թվայնացման ոլորտում, ուսումնասիրել և քննարկել ՀՀ թվայնացման 2021-2025թթ. ռազմավարության կետերը, բացահայտել հիմնական խոչընդոտներն ու ներկայացնել դրանց հաղթահարման համար առաջարկություններ:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, համեմատական վերլուծություններ և այլ մեթոդներ:

Հետազոտությունից կարելի է եզրահանգել, որ Հայաստանը զգալի ներուժ ունի թվայնացման գործընթացներին լրիվությամբ ինտեգրվելու և առաջադիմություն ցուցաբերելու համար:

**Հիմնաբառեր՝** Հայաստանի Հանրապետություն, թվային Էկոհամակարգ, Նորարարություն, տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաներ, Համաշխարհային տնտեսական ֆորում, թվային կրթություն, Էլեկտրոնային առևտուր:

## Ներածություն

Ժամանակակից տնտեսությունում արդիական են դառնում տնտեսական աճի նոր գործոնների բացահայտման, ինչպես նաև սոցիալական խնդիրների լուծման մեխանիզմի որոնման հարցերը: Այս առումով առաջին պլան է մղվում թվայնացման գործընթացի ուսումնասիրությունը, որն ազդում է տնտեսական աճի խթանման և

սոցիալական տարբեր նպատակների իրագործման հնարավորությունների վրա, այդ թվում՝ աշխատաշուկայում:

«Թվային տնտեսություն» եզրը թողարկվել է 1995 թվականին Մասսաչուսեթյան համալսարանի պրոֆեսոր Նիկոլասո Նիգրոպոստեի կողմից և կապված է հիմնականում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ինտենսիվ զարգացման հետ: Տեխնոլոգիական ենթակառուցվածքների զարգացումը և տվյալների մեծ բազաների օգտագործումն առաջացրել են մեր հասարակության լայնածավալ թվային վերափոխում: Եվ, եթե թվայնացման նախորդ փուլը բնութագրվում էր միլիոնավոր սպառողների համար ինտերնետ հասանելիության ընդլայնմամբ, ապա նոր փուլն առանձնանում է կիբերֆիզիկական համակարգում թվային ծառայությունների, ապրանքների և համակարգերի լայն շրջանակի ինտեգրմամբ:

Թվային տնտեսության զարգացումն արտադրության բոլոր ոլորտներում և մակարդակներում թույլ է տալիս զգալի տնտեսական օգուտներ ստանալ, ներառյալ աշխատանքի արտադրողականության, սոցիալական արտադրության բարձրացումն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում: Տնտեսության թվային վերափոխումը, որը հիմնված է նորագույն տեխնոլոգիաների կիրառման վրա, ապահովում է ոչ միայն նոր աշխատատեղերի ստեղծում, այլև տնտեսվարող սուբյեկտների միջև հարաբերությունների ավելի բարձր մակարդակի ձեռքբերում՝ դրանց սոցիալական վարքագծի նոր նորմերի ձևավորման միջոցով:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ բարձր արտադրողականությամբ ընկերությունները 90%-ը ներդրումներ են կատարում գործող և նոր աշխատողների թվային հմտությունները բարելավելու համար:

### **ՉՅ տնտեսության ներուժը թվայնացման ոլորտում**

Տնտեսության թվայնացման գործընթացը տարբեր հասարակություններում տեղի է ունենում անհավասարաչափ:

Համաաշխարհային տնտեսական ֆորումի Ցանցային պատրաստվածության ինդեքսը (NRI), որը նաև կոչվում է «տեխնոլոգիաների պատրաստակամություն», չափում է հակվածությունը երկրներին օգտագործելու տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ընձեռած հնարավորությունները: <sup>1</sup>Ըստ 2020թ. տվյալների, առաջատար տասնյակի մեջ մտնում են Շվեդիան, Դանիան, Սինգապուրը, Նեդեռլանդները, Շվեյցարիան, Ֆինլանդիան, Նորվեգիան, ԱՄՆ, Գերմանիան և Մեծ Բրիտանիան: Նշված երկրները վերջին տարիների ընթացքում գրեթե մնացել են իրենց տեղում: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն 55-րդ տեղում է, և եթե բաժանենք ըստ խմբերի, ապա Հայաստանը ԱՊՀ-ի շրջանակներում զբաղեցնում է 2-րդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանի Դաշնությանը, որն իր հերթին 48- տեղում է:

<sup>1</sup> <https://networkreadinessindex.org/2020/>

Ըստ World Economic Forum-ի 2020թ. Global Information Technology Report-ի՝ Հայաստանի ամենաուժեղ ցուցանիշները Տեխնոլոգիաների և Մարդկանց հետ կապված հենասյուններն են (երկուսն էլ 42-րդ):<sup>1</sup>

Հարկ է նշել, որ Հայաստանը չափահասների գրագիտության մակարդակով աշխարհում հայտնվել է լավագույն տասնյակում: Իսկ դպրոցներում համացանցի առկայության մակարդակով աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում: Կարևոր է Վիքիփեդիայի խմբագրությունների, նոր հոդվածների գրման մակարդակը՝ Հայաստանը 7-րդ հենասյունում է, ինչը մեծամասամբ խմբավորվում է հենց պատանիների կողմից:

Խոսելով գրագիտությունից և կրթության առաջ կանգնած մարտահրավերներից՝ կարող ենք հանգել, որ Հայաստանն այս պահին ունի ճկուն կրթություն, և այն գրեթե պատրաստ է փոփոխության ենթարկվելուն, ինչին ապացույց է համավարակի հետ կապված հեռավար դասընթացների կազմակերպման փորձը, որը ժամանակի ընթացքում ավելի է զարգանում: Այսօր բազմաթիվ հնարավորություններ են ստեղծվում երիտասարդության շրջանակում թվայնացման մտածելակերպը զարգացնելու և այդ ուղղությամբ երիտասարդների մասնագիտացումն ընդլայնելու համար: Եվ իսկապես, Հայաստանի թվային Էկոհամակարգի զարգացման հիմքը երիտասարդությունն է, որը, զարգացնելով իր գաղափարները հենց այդ ոլորտում, կարող է մեր երկիրը համաշխարհային մակարդակով առաջ մղել: Ուղղություններից կարող են առանձնացնել արտադպրոցական TUMO ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, COAF-ը:

Թվային փոխակերպումը Հայաստանի քաղաքական առաջնահերթություններից է. Համաշխարհային մրցունակ թվային տնտեսության զարգացումը խթանելու նպատակով կառավարությունը միջազգային դոնորների և Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի հետ համագործակցությամբ մշակել է Հայաստանի թվային փոխակերպման մինչև 2030 թվականը օրակարգը: Այն կենտրոնացած է թվայնացման վրա հինգ հիմնական ոլորտներում.

- ՏՀՏ ենթակառուցվածք; կառավարման նոր մոտեցումներ;
- թվային տեխնոլոգիաների հետ աշխատելու ոլորտում հմտությունների և կարողությունների զարգացում.
- աջակցող ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծում;
- և ներդրումներ կիբերանվտանգության մեջ:

Ինչպես նշվում է 2020 թ. Համաշխարհային զարգացման զեկույցում, գլոբալ զարգացումները միտված են նման գործառույթներում օգտագործվող մարդկային ռեսուրսների կրճատումը, նույնիսկ Հայաստանում որոշ ընկերություններ սկսել են մշակել ծրագրեր, որոնք ավտոմատացնում են ծրագրային ապահովումների նախագծման ծառայությունները: Օրինակ՝ «10Web» հայկական ընկերությունը մշակել է ծրագիր, որը հնարավորություն է տալիս օգտատերերին ինքնուրույն, առանց արտապատվիրման, ստեղծելու

<sup>1</sup> <https://networkreadinessindex.org/>

«WordPress» կայքեր: Կամ մեկ այլ հայկական ընկերություն («Renderforest») վիդեո անիմացիաների ստեղծման համար կիրառում է ԱԲ ալգորիթմներ:<sup>1</sup>

Նորարարությունների ու ձեռնարկատիրական գործունեության վրա զսպող ազդեցություն ունի սահմանափակ ներդրումային կապիտալը, ընդ որում, բաժնետիրական ընկերությունների մասին օրենսդրությունը թույլ է ընկերությունների գործունեության սկզբնական փուլում ֆինանսավորման և ներդրումների կարգավորման առումով: Հայաստանում վենչուրային կապիտալը սահմանափակ է նորարարական և ձեռնարկատիրական գործունեությանն աջակցելու համար: Միաժամանակ, ՕՈՒՆ-ների կատարման հնարավորությունների վրա զսպող ազդեցություն ունի 1994 թ. ընդունված օրենքը, որը համարժեք չի բավարարում ներկա ներդրումային իրողության պահանջները: Օրինակ՝ օրենքը թույլ չի տալիս ներդրողներին արբիտրաժային լուծում պահանջող վեճերի դեպքում տեղական դատարանի փոխարեն դիմել միջազգային դատարաններ: Ավելին, բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի որոշ դրույթներ հստակ չեն կարգավորում գործունեության վաղ փուլում ընկերության ֆինանսավորման և ներդրումների հարցերը: Այս խոչընդոտների հետևանքով Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի ստարտափները ներդրումներ ներգրավելու նպատակով սովորաբար գրանցվում են արտերկրում՝ դրանով իսկ սահմանափակելով տեղական հարկային եկամուտները և տարածման էֆեկտը: Աճի ֆինանսավորման մեջ առկա բացերը կարելի է լրացնել՝ ներդրելով ֆինաթեքի նորարարական պրոդուկտներ և ՄՓՄՁ-ներին տրամադրելով ֆինանսական կարողությունների զարգացմանն ուղղված հասցեական խորհրդատվական ծառայություններ: Հայաստանում փոքր ընկերություններն աճի ֆինանսավորման խնդրում մեծապես հիմնվում են ներքին ռեսուրսների և չբաշխված շահույթի վրա: Բանկային ֆինանսավորման սահմանափակ օգտագործումը կապված է Հայաստանում փոխառությունների բարձր տոկոսադրույքների հետ: Ֆինաթեքի նորարարությունների (օր.՝ մոբայլ բենքինգի) խթանումը և միջնորդների կիրառումը կարող է ընդլայնել ծածկույթը՝ դրանում ներառելով թերսպասարկվող սեզմենտներն ու տարածքները: Ֆինանսական պրոդուկտների, ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական կառավարման, բիզնես պլանավորման և մարքեթինգի վերաբերյալ ՄՓՄՁ-ների ֆինանսական կարողությունների զարգացմանն ուղղված հասցեական խորհրդատվական ծառայությունների ծածկույթի ընդլայնումը կբարելավի նշված ձեռնարկությունների բանկունակությունը և կապախրախուսի ստվերը, որն արդեն իսկ շատ բարձր մակարդակի է հասել ձեռնարկությունների շրջանում:

Ըստ Հայաստանի թվայնացման 2021-2025թթ. Ռազմավարության սովյալների՝

- Թվային տնտեսությունը սպասարկող ճյուղերը, ինչպիսիք են էլեկտրոնային վճարումների համակարգերը, փոստային ենթակառուցվածքները, թվային բանկային ծառայությունները և էլեկտրոնային առևտրին առնչվող ծառայությունները զարգանում են,

<sup>1</sup> <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/33027/AUS0001094ARM.pdf?sequence=4&isAllowed=y>

սակայն մրցունակության մակարդակով դեռևս զիջում են համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում:

- Թվային տեխնոլոգիաների օգտագործումը բիզնես գործընթացների բարելավման նպատակով լայնորեն տարածվում է Հայաստանում: Մինևույն ժամանակ ՓՄՁ-ների շրջանում հարցումները ցույց են տալիս, որ այս ոլորտը դեռևս զարգացման մեծ տեղ ունի Հայաստանում: Ըստ հետազոտության արդյունքների հայաստանյան ՓՄՁ-ների 34%-ն է գործարկում սեփական կայք, 58%-ն օգտագործում էլեկտրոնային փոստ հաղորդակցության համար, 59%-ը ներկայացված է սոցիալական մեդիայում, ընդամենը 12%-ն է օգտագործում ամպային տեխնոլոգիաներ, ղեկավարչական համակարգերի օգտագործումն էլ ավելի սակավ է. ERP` 1% և CRM` 3%:
- Բիզնես-կառավարություն գործարքներում ՓՄՁ-ներն ամենից հաճախ թվային հարթակներից են օգտվում հարկային հաշվետվությունների ներկայացման համար (ՓՄՁ-ների 36%): Բիզնես-բիզնես հարաբերություններում ՓՄՁ-ների միայն 20%-ն է էլեկտրոնային պայմանագրեր կնքում կամ էլեկտրոնային վճարումներ կատարում իրենց գործընկեր ընկերությունների հետ գործարքներում: Ավելին, ՓՄՁ-ների մեծամասնությունը երբեք չի առնչվել բիզնես գործընկերների (63%) կամ պետական մարմինների (55%) հետ առցանց եղանակով:
- Էլեկտրոնային առևտուրը զարգանում է, սակայն տարածվածությունը թե բիզնեսի, թե հասարակության շրջանում դեռևս շատ ցածր է: Մինևույն ժամանակ հայաստանյան ՓՄՁ-ների միայն 17%-ն է նշել, որ նախորդ տարվա ընթացքում իրականացրել է օնլայն վաճառքներ: Ընդ որում վերջիններից մեծամասնությունը` 58% նշել են, որ օնլայն վաճառքները իրենց ծավալով կազմել են ընկերության վաճառքների մինչև 10%-ը:
- Ֆինանսական տեխնոլոգիաների շուկան նկատելի զարգացում է ապրում Հայաստանում, որն ուղեկցվում է շուկայի մասնավոր մասնակիցների կողմից զգալի ներդրումներով և սեփական ԲՏ արտադրանքների մշակմամբ: Շուկայի ամենաարագ զարգացող հատվածներն են թվային բանկային ծառայությունները, թվային դրամապանակները, վարկավորման թվային հարթակները և այլն:
- Չնայած զարգացման տեմպերին` 2019թ. տվյալներով Հայաստանի բնակչության ընդամենը 5.7%-ն է օգտվում ինտերնետային բանկային ծառայություններից:<sup>1</sup>

### **Առաջարկություններ և ռիսկեր**

Հաշվի առնելով վերը նշված կետերը ՀՀ թվային Էկոհամակարգի զարգացման և ներկայիս մարտահրավերներին դիմակայելու համար առաջարկում ենք.

---

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>

- առաջին հերթին, պետք է արմատական փոփոխություններ կատարել օրենսդրական դաշտում, առաջ քաշելով պետական և մասնավոր հատվածի տարբեր ոլորտների կայքէջերի, էլեկտրոնային փոստերի բացումն ու օպերատիվ վարումը,
- բարձրացնել պետական բյուջեում թվայնացման գծով ծախսերը,
- ստեղծել օտարերկյա, ինչպես նաև նաև ներքին ներդրումների համար առողջ և գրավիչ էկոհամակարգ, որտեղ կարող են օրինակ քառուղֆանդինգ իրականացնել հայրենական տարբեր սթարտափներում: Ներդրում կատարելու օրինակ կարող է ծառայել Bana «Հայաստանի Բիզնես Հրեշտակների Ցանցը» կազմակերպությունը, որը բազմաթիվ հայրենական ստարթափների համար հանդես է գալիս որպես բիզնես հրեշտակ: 2021թ. տվյալներով, կազմակերպությունը կատարել է արդեն իսկ 20 մլն դոլարի ներդրում, իսկ այդ միատեղյուր ստարթափներն արդեն իսկ տվել են 2,5 մլրդ դոլարի շահույթ: Այդպիսի կազմակերպություններից է PicsArt Armenia ծրագիրը,
  - չեղյալ համարել 1994 թ. «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը և ընդունել ներդրումների վերաբերյալ նոր համընդգրկուն օրենսդրություն, որը կհամապատասխանի միջազգային լավագույն փորձին, այդ թվում.
  - ✓ կաահմանի «արդար ու հավասար վերաբերմունք» սկզբունքի կիրառման շրջանակը,
  - ✓ կաահմանի փոխհատուցման վճարման առանձնահատկությունները,
  - ✓ կաահմանի ուղղակի և անուղղակի հարկադիր օտարման արգելանքի սահմանափակումները,
  - ✓ կնախատեսի ներդրողի՝ իր շահույթը տնօրինելու և իր դրամական միջոցներն արտահանելու իրավունքը,
- ներդնել ղեկավար կադրերի ուսուցման ծրագրեր միջին օղակի ղեկավարների կարողությունները զարգացնելու նպատակով,
- ստեղծել այնպիսի մի առցանց հարթակ, որտեղ հայկական արտադրողները կարող են ներկայացնել իրենց ապրանքներն ու ծառայությունները, ինչը հասանելի կլինի ամբողջ աշխարհում և իհարկե հնարավոր կլինի դրանք արտահանել: Հետևյալ հարթակը կարող է առաջին հերթին խթանել հայկական ապրանքների արտադրությանը, բարձրացնել արտաքին առևտրի մակարդակը, հեշտացնել սպառողների կարիքների բավարարումը, ստեղծել նոր աշխատատեղեր: Նշված թվային էկոհամակարգը ստեղծելու և հզորացնելու համար անհրաժեշտ են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներ, ինչպես նաև պետք է SS մասնագետներին հնարավորություն տալ վերապատրաստվելու և բարձրացնելու Հայաստանում հենց այդ ոլորտի գերակայությունը և երկրի մրցակցային առավելությունները,

- նորացնել ինֆորմատիկայի և ինժեներիայի բնագավառների բակալավրական, մագիստրոսական և հետբուհական (PhD) ուսումնական ծրագրերը՝ ոլորտային չափորոշիչներին դրանք համապատասխանեցնելու նպատակով,
- մշակել արհեստական բանականության բնագավառում ասպիրանտական ծրագիր և նախանշել այս բնագավառում առաջատար միջազգային գիտահետազոտական հաստատությունների (պետական և մասնավոր) համագործակցությամբ համատեղ հետազոտական լաբորատորիաների ստեղծման հնարավորությունները,
- նախատեսվող «Բարձր տեխնոլոգիական ոլորտների ռազմավարություն» փաստաթուղթը միավորել նախատեսվող «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ռազմավարություն» փաստաթղթի հետ,
- ստեղծել առցանց-դասընթացների հարթակ, որտեղ սփյուռքում ապրող մեր հայրենակիցները կարող են կիսվել տեղեկատվական տեխնոլոգիաների իրենց ունեցած փորձով, գիտելիքներով, ինչից հետո անցնելով գործնական աշխատանքի և ստանալով համապատասխան գնահատականը, կստանան ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հավաստագրեր հետևյալ կուրսն անցնելու մասին,
- Տեղեկատվություն տրամադրել մեծահասակներին թվայնացման մասին և լուրջ աշխատանքներ կատարել նրանց հետ, ինչպես նաև ապագայում նրանց աշխատաշուկա մուտք գործելու մտադրությամբ, քանզի մեր բնակչությունն ըստ վերջին տվյալների ծեր է,
- առաջ քաշել թվային առողջապահության գաղափարը, ըստ որի կստեղծվի մի հարթակ, և ամեն մի քաղաքացի կունենա իր անձնական էջը, որտեղ ծնված օրից սկսած կլրացնի նրանց բոլոր հիվանդությունները, հետազոտությունների պատասխանները, պատվաստումների մասին տվյալները և այլն: Հետագայում նրանք մշտական կապի մեջ կլինեն իրենց բժշկի հետ, կայքի անձնական էջում կտեղադրվեն բժշկական հետազոտության արդյունքները և ըստ անհրաժեշտության հետագա անելիքները, հարթակում կլինի նաև բժշկական ֆորում, որտեղ կարող են պատասխանել միայն որակաորում ստացած բուժաշխատողները և ամեն մի պատասխանի համար նրանք կստանան միավոր, ինչը կարող է փոխակերպվել դրամի,
- ստեղծել պետական կայքէջեր, որոնց մեջ ամփոփված կլինեն քաղաքացիական կացության ամեն տեսակի գրանցումներ, փաստաթղթերի էլեկտրոնային ստացման հնարավորություն,

Սակայն, ինչպես ամեն մի գործընթաց, նշված առաջարկությունները ևս ունենց իրենց ռիսկերը՝

Ռիսկի տեսակը	Բացատրություն
Կիրառանվտանգություն	Հետևյալ ռիսկը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում զարգացող թվային Էկոհամակարգի հետ զուգահեռ զարգացող գործընթաց է: Այն այսօր շատ կարևոր է, քանի որ գրեթե յուրաքանչյուրս ականատես ենք եղել 44-օրյա պատերազմի շրջանում, և ոչ միայն, թշնամու կողմից կատարվող տարբեր թե՛ անձնական, թե՛ պետական մակարդակով տարբեր կայքէջերի կոտորման փորձերը. որոշ փորձեր նրանց կողմից հաջողվել էր: Ինչպես նաև տարածված է ֆիշինգի միջոցով տարբեր քաղաքացիների բանկային քարտերի տվյալների ստացումը: Կամ, օրինակ, տարբեր սոցիալական կայքէջերի միջոցով այլ տվյալների ստացում, որը կարող է լուծվել միայն հայկական Zangi հավելվածի կամ նման հավելվածների ստեղծման և օգտագործման դեպքում: Այսինքն, պետք է ուժեղացնենք կիրառանվտանգությունը, որպեսզի թե՛ ներքին, թե՛ արտաքին տարբեր խարդախության փորձեր ձախողեն: Նույնը վերաբերում է թվային առողջապահության վերաբերյալ կետին, որոնք խիստ անձնական են,
Ֆինանսական միջոցների պակաս	Ինչպես նշվեց, պատճառ է հանդիսանում ոչ զարգացած թվային Էկոհամակարգը, ինչի պատճառով ներդրումները սպասվածից քիչ են կատարվում,
Բնակչության ոչ ակտիվ մասնակցությունը պետության թվայնացման առաջ քաշելու փորձերին	Ինչպես նշեցինք, պատճառը կարող է հանդիսանալ ազգային աշխարհայացքը, թերի գիտելիքները նշված ոլորտում, ինչպես նաև աշխատանքային վարձատրության ցածր լինելը, ինչն ամենևին չի խթանում քաղաքացուն,
Մասնագիտական ռեսուրսի պակաս.	Պետք է խրախուսել այն մասնագետներին, որոնք վերապատրաստվում են և աշխատում են ՀՀ տնտեսության զարգացման ուղղությամբ:



## **РОЛЬ ЦИФРОВОЙ ЭКОСИСТЕМЫ В РАЗВИТИИ ЭКОНОМИКИ РА**

**ЕВГЕНИЯ АЙРИЯН**

*член Объединения Молодых ученых и специалистов Арцаха, доцент  
кафедры финансов и бухгалтерского учета АрГУ, кандидат  
экономических наук,  
г. Степанакерт, Республика Арцах*

**АСПРАМ МАИЛЯН**

*магистрант МГИМО,  
факультет Международных экономических отношений,  
г. Степанакерт, Республика Арцах*

Цель статьи – раскрыть потенциал цифровой экосистемы, потенциал экономического роста в Республике Армения.

Для достижения указанной цели поставлены следующие задачи: изучить текущее положение Республики Армения на ировом цифровом рынке, выявить потенциал экономики РА в сфере цифровизации, извучить и обсудить стратегию цифровизации РА на 2021-2025 годы, выявить основные препятствия и представить предложения по их преодолению.

В ходе исследования использовались экономические, математические, статистические, сравнительные анализы и другие методы.

В исследовании делается вывод, что Армения обладает значительным потенциалом для полной интеграции в процессы цифровизации и достижения прогресса.

**Ключевые слова:** *Республика Армения, цифровая экосистема, инновации, информационно-телекоммуникационные технологии, Всемирный экономический форум, цифровое образование, электронная торговля.*

## **THE ROLE OF DIGITAL ECOSYSTEM IN THE DEVELOPMENT OF THE RA ECONOMY**

**YEVGENYA HAYRIYAN**

*Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh», Associate Professor of the Department of Finance and Accounting of the ArSU, Ph.D in Economic Sciences,  
Stepanakert, the Republic of Artsakh*

## **ASPRAM MAYILIAN**

*MGIMO master student, Faculty of International Economic Relations  
Stepanakert, the Republic of Artsakh*

The purpose of the article is to reveal the potential of the digital ecosystem, the potential for economic growth in the Republic of Armenia.

To achieve this goal, the following tasks have been set: to study the current position of the Republic of Armenia in the global digital market, to identify the potential of the RA economy in the field of digitalization, to study and discuss the RA digitalization strategy for 2021-2025, to identify the main obstacles and submit proposals for overcoming them.

In the course of the study, economic, mathematical, statistical, comparative analyzes and other methods were used.

The study concludes that Armenia has significant potential to fully integrate into digitalization processes and achieve progress.

**Key words:** *Republic of Armenia, digital ecosystem, innovations, information and telecommunication technologies, World Economic Forum, digital education, e-commerce.*

**ՄՐՅՈՒՆԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ**

**ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Հյուսիսային համալսարանի հայցորդ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[hro@rambler.ru](mailto:hro@rambler.ru)

**Հոդվածի նպատակն է ներկայիս Էլեկտրոնային վճարումների աննախադեպ ակտիվացման պայմաններում, բացահայտել մրցունակ ֆինանսական գրագիտության ձևավորման հիմնահարցերը, զուգահեռներ անցկացնելով Էլեկտրոնային վճարային համակարգերի զարգացումների հետ:**

**Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են Էլեկտրոնային գործարքների զարգացման միտումների ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում, միջազգային փորձի վերլուծությունը, կրիպտոարժույթներով գործարքների ռիսկերի գնահատումները:**

**Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտական աբստրակցիայի մեթոդները, համեմատական վերլուծության եղանակները, ինչպես նաև վիճակագրական ուսումնասիրությունների գործիքները:**

**Հիմնական եզրահանգումն այն է, որ ներկայիս Էլեկտրոնային վճարումների աննախադեպ ակտիվացումը, ազգաբնակչության վճարումների տեղափոխումը Էլեկտրոնային տիրույթ, ավանդական փողին զուգահեռ կրիպտոարժույթների գործածումը ֆինանսական գրագիտության նոր խնդիրներ են առաջացնում: Ընդ որում, ֆինանսական գրագիտությունը պետք է լինի մրցունակ այն առումով, որ կարողանա Էլեկտրոնային վճարային գործարքներն ապահովել կիբեռանվտանգության խաթարման ռիսկերից և կրիպտոարժույթների շուկայական կտրուկ տատանումներից:**

**Հիմնաբառեր`** մրցունակ ֆինանսական գրագիտություն, կրիպտոարժույթներով գործարքներ, Էլեկտրոնային վճարային ռիսկեր, ֆինանսական կրթության զարգացումներ:

Վճարահաշվարկային համակարգերը մակրոտնտեսության արյունատար անոթներն են հանդիսանում, քանի որ դրանց միջոցով իրականացվում են դրամային փոխանցումներ, ֆինանսական պարտավորությունների մարումներ, քլիրինգային գործարքներ, միջազգային փոխանցումներ: Տնտեսավարման արդի փուլում, երբ թվայնացված տնտեսությունն առավել արագ տեմպերով է իրեն դրսևորում, ինչպես տեսության մեջ, այնպես էլ գործնականում, հատկապես արդիական են դառնում Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական գրագիտության բարելավմանն ուղղված հիմնախնդիրների լուծումները:

Թվային միջավայրում էլեկտրոնային գործարքների ֆինանսական գրագիտությունն առնչվում է ինչպես Կենտրոնական բանկի կողմից մշակված կանոնակարգերի բավարարման, այնպես էլ ֆինանսական կազմակերպությունների գործարար շահերի սպասարկման գործընթացներին: Մի կողմից, պետությունը ձգտում է հնարավորինս կառավարելի դարձնել էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության համակարգային ռիսկերը, մյուս կողմից, առևտրային բանկերն ու մասնագիտացված ֆինանսական կազմակերպությունները փորձում են մրցակցային դարձնել իրենց կողմից իրականացվող վճարահաշվարկային գործարքները, և դիմում են ինովացիոն վճարային գործիքների, որոնք ֆինանսական գրագիտության առանձնահատուկ մոտեցումներ են պահանջում:

Մասնավորապես, էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի զարգացման պարագայում Եականորեն վերանայվում են փողի գործառույթները՝ առավելապես կարևորելով վճարային գործիքների իրականացման ինչպես տեխնիկական, այնպես էլ տնտեսական արդյունավետությունը: Էլեկտրոնային փողերի շուկան ներկայումս դառնում է չափազանց մրցակցային և այդ իսկ պատճառով վճարահաշվարկային համակարգի սուբյեկտները փորձում են կիրառել ֆինանսական կառավարման այնպիսի գործիքներ, որոնք կապահովեն ինչպես կայուն իրացվելիության, այնպես էլ գործունեության արդյունավետության բարձր մակարդակ:

Ներկայումս կարևորվում է էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների արդյունավետության գնահատումը՝ հիմնված ոլորտի շահառուների պահանջումների բավարարման աստիճանի վրա: Առավել ևս արդիական է համարվում այդ ուղղությամբ հաշվետվողականության ապահովումը: Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության հաշվետվողականությունը գործնականում նպատակաուղղվում է առավելապես ֆինանսական կառավարման վերահսկողական գործառույթներին, և բնավ չի ներկայացնում ոլորտի մրցակցային միջավայրը:

Վիրտուալ միջավայրում վճարահաշվարկային գործարքների իրականացումը ձևավորում է առանձնահատուկ ռիսկեր, կապված ոչ միայն կիբեռանվտանգության ապահովման, այլև գործարքների ֆինանսական կառավարման հետ: Հատկապես, ներկայումս կարևորվում են քարտային ծառայությունների ծածկույթի, վճարային գործարքների ֆինանսական պաշարների ապահովվածության, ֆինանսական կազմակերպությունների կապիտալի համարժեքության ռիսկերը, որոնք կառավարման առանձնահատուկ մոտեցումներ են պահանջում և դրանց գծով իրականացվում են օպերատիվ կառավարչական որոշումներ:

Վերջին տասնամյակում, կենտրոնացված կարգով էլեկտրոնային վճարային համակարգերի գործունեությանը զուգահեռ, ֆինանսական շուկայում ակտիվ գործունեություն են ծավալում կրիպտոարժույթները, որոնք կառավարվում են բլոքչեյն համակարգում ապակենտրոնացված սկզբունքով: Աստիճանաբար ձևավորվում է մի իրավիճակ, երբ կրիպտոարժույթների Էմիսիան և շրջանառության ծավալումն իրենց ազդեցությունն են թողնում կենտրոնական բանկի կողմից իրականացվող էլեկտրոնային փողի զանգվածի փոփոխությունների վրա: Այս առումով, արդիական է համարվում նաև

կրիպտոարժույթների օգտագործման ֆինանսական գրագիտության բարելավման ուղիների ներկայացումը:

Էլեկտրոնային վճարային հաշվարկներում ներկայումս էական ակտիվություն են ցուցաբերում կրիպտոարժույթները: Ֆինանսական շուկաները դեռևս լիարժեք վստահություն չեն ցուցաբերում կրիպտոարժույթների նկատմամբ, սակայն այդ չի խոչընդոտում, որ Էլեկտրոնային փողերի այս սերունդն աստիճանաբար իր ճանապարհը հարթի վճարային հաշվարկներում, քանի որ այս դեպքում արձանագրվում են մի շարք առավելություններ, որոնք նկատելի չեն ավանդական Էլեկտրոնային վճարային հաշվարկների ժամանակ: Դրանցից առավել առանցքային են համարվում կրիպտոարժույթներով գործարքների արագությունը, համեմատաբար էժանությունը, ապակենտրոնացված կառավարումը և գաղտնիությունը՝ գործարքների Էլեկտրոնային գաղտնագրման ճանապարհով:

Գաղտնագրումը (կրիպտոգրաֆիան) մարդկության կողմից կիրառելի է դարձել դեռևս անհիշելի ժամանակներից, երբ տեղեկատվության մատչելիության սահմանափակումներ են դրվել, և միայն օգտագործողների որոշակի խմբերի է տրամադրվել գաղտնագրման վերձանումը: Այս դեպքում, գաղտնագրողները սահմանել են տեղեկատվության վերձանման որոշակի կանոններ և մոտեցումներ, որոնք տրամադրվել են գաղտագիրն օգտագործողներին: Գաղտնագրումը հնագույն գիտություն է: Այն ունի մոտավորապես 4000 տարվա պատմություն: Գաղտնագրային խորհրդանիշների ու նշումների միջոցով տեղեկատվություն էր ձևավորվում թաքստոցների, թանկարժեք զարդերի պահուստավորումների տեղանքների մասին: Տարբեր ժամանակներում սուրհանդակները տեղեկատվություն էին փոխանցում երկար տարածությունների վրա և ճանապարհներին տեղեկատվական արտահոսքերի ռիսկերը կանխարգելվում էին գաղտնագրումներով: Գաղտնագրումը հատկապես նոր թափ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ այն օգտագործում էին տվյալների փոխանցման անվտանգության և ռազմական գաղտնիքների ատահոսքերի կանխարգելման նպատակով: Իսկ մեր օրերում, վիրտուալ միջավայրում գաղտնագրումը զանգվածային բնույթ կրեց, որի դեպքում նախ իրականացվում է սկզբնական Էլեկտրոնային տեքստի կոդավորում, նախապես ընտրված բանալու միջոցով և փոխանցվում է հասցեատիրոջը: Այնուհետև, Էլեկտրոնային տեղեկատվությունը հասնելով հասցեատիրոջը, ապակոդավորվում է, ապահովելով տեղեկատվության գաղտնիությունը:<sup>1</sup>

Տեղեկատվական մեր դարաշրջանում, երբ արագընթաց զարգացումներ են ապրում համացանցը սպասարկող տեխնոլոգիաները, ակտիվություն է նկատվում հատկապես վիրտուալ տիրույթում գտնվող օգտատատերերի շրջանում գաղտնագրումներ ներկայացնելու հարցում՝ որոշակիորեն ձևավորելով կրիպտոանձերի (cypherpunk) բանակ:<sup>2</sup> Դեռևս մինչև

<sup>1</sup> Տե՛ս, Դանիելյան Յ., Համբարձումյան Ա., Ստեփանյան Է., Խորհրդավոր կրիպտոաշխարհ, հեղ. հրատ., Եր. 2019, էջ 46-47.

<sup>2</sup> Տե՛ս, Шнайер Б., Шифропанки // Прикладная криптография. Протоколы, алгоритмы, исходные тексты на языке Си = Applied Cryptography. Protocols, Algorithms and Source Code in C. — М.: Триумф, 2002., стр. 674.

համացանցի հայտնվելը, հասարակության մեջ մտահոգությունն առաջացավ, որ մարկանց անձնական կյանքի որոշ մանրամասներ կարող են դառնալ հանրության սեփականությունը, երբ անհատի կողմից բանկային փոխանցումներով կատարվեն գնումներ, ստացված ծառայությունների վճարումներ: Եվ այս առումով, այդ համայնքը այնքան ընդլայնվեց, որ 1992 թվականին հրատարակեց կրիպտոանձերի մանիֆեստ, արձանագրելով որ “Էլեկտրոնային դարաշրջանում բաց հասարակության տիրույթում մասնավորի պաշտպանվածությունը համարվում է խիստ անհրաժեշտություն: Մասնավոր՝ գաղտնիությունն չէ, այլ ընդամենն իրավունքի իրացում, որպեսզի ամբողջ աշխարհը չտեսնի, թե անհատն ինչ է անում, ի տարբերություն գաղտնիության, երբ ընդհանրապես չի հանրայնացվում անհատի գործունեությունը: Մասնավոր տեղեկատվության իրավունքի իրացումը ենթադրում է անձի ցանկությամբ իր վարքագծային ընտրանքային տեղեկատվության տրամադրումը հանրությանը”:<sup>1</sup>

Այս առումով, արդեն իսկ 1980-ականներին սկսվեց կրիպտոանձերի շարժումը, երբ սպառողների որոշակի խմբեր սկսեցին կիրառել գաղտնագրման մոտեցումներ վճարահաշվարկային հարաբերություններում, իրացնելով գաղտնագրման եղանակներ:<sup>2</sup> Իսկ համացանցի կիրառումն էլ ավելի մեծացրեց անձնային կյանքի և անհատի վարքագծի տեղեկատվական արտահոսքի ռիսկը, որի արդյունքում ձևավորվեցին նաև կիբեռանվտանգության սպառնալիքներ:

Վիրտուալ տիրույթում ձևավորվեց կրիպտոանձերի բանակ, որը սկսեց օգտագործել գաղտնագրում համակարգչային ցանց մուտք գործելիս տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու համար, հատկապես պետական կառավարման մարմիններից: Պետական պատկամ և վերահսկիչ մարմինները, որոնք անհատի վարքագծի վրա մինչ այդ կարող էին վերահսկողություն սահմանել գաղտնալսումների, հեռախոսային խոսակցությունների, ձայնագրումների, կամ նամակագրական հաղորդակցման վերձանումների ճանապարհով, վիրտուալ տիրույթում արդեն իսկ կարողանում էին ընդլայնել այդ վերահսկողական գործառույթների շրջանակը, անգամ որոշ դեպքերում անցնելով անհատի անձնական գործունեության գաղտնիության շրջանակի թույլատրելի շեմը: Բնականաբար, նման պարագայում պետք է ավելանար կրիպտոանձերի բանակը, որոնք պահանջում էին վիրտուալ տիրույթում գործունեության գաղտնագրային մոտեցում:

Թերևս առաջինը ֆիզիկոս Թիմեթի Մեյն իր աշխատություններում առաջարկում էր հրաժարվել ավանդական փողերից և անցում կատարել անանուն և անկախ արժույթի օգտագործմանը:<sup>3</sup> Արդեն իսկ 1985 թվականին, Բերքլիի համալսարանի շրջանավարտ Դեվիթ Չոունը, ով հանդիսացավ

1 **ՏԷՍ**, Биткойн и расцвет шифропанков, <https://bitnovosti.com/2016/04/19/the-rise-of-the-cypherpunks/>

2 **ՏԷՍ**, Меркулова, Ю. К. Возникновение и история развития криптовалют, // Молодой ученый. 2018. № 43 (229), стр. 247-251.

3 **ՏԷՍ**, **Greenberg, Andy**, This Machine Kills Secrets: How WikiLeaks, Cypherpunks, and Hacktivists Aim to Free the World's Information, Dutton Adult, 2012, p. 384

կրիպտոանձերի գործունեության նախահայրը, նշում էր, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն այնպիսի հնարավորություններ է ստեղծում անձնական այնպիսի տեղեկատվություն, որ անհատը անգամ չի էլ պատկերացնում, թե որքան թափանցիկ է դառնում իր անձնային կյանքը, հատկապես վճարահաշվարկային համակարգում:<sup>1</sup> Այս նպատակով առաջարկվեց կույր ստորագրության գաղափարը, երբ անհատի էլեկտրոնային ստորագրությունը հասանելի էր դառնում ստացողին, սակայն չէզոքանում էր ուղարկողի մոտ՝ գործարքի ավարտից հետո: Պատկերավոր նկարագրմամբ, այդ մոտեցումը նման էր այն իրավիճակին, երբ պատճենահանող թղթի կիրառմամբ ստորագրություն էր դրվում սպիտակ թղթի վրա: Այսինքն, ստորագրվում էր պատճենահանող թուղթը, որի վրա արդյունքը չէր երևում, փոխարենը այն արտատպվում էր սպիտակ թղթում: Հատկապես այդ մոտեցումը կիրառելի էր քաղաքական ընտրությունների ժամանակ: Արդյունքում, վեց տարի անց, կույր ստորագրության սկզբունքը կիրառվեց գնումների ժամանակ, երբ Դեվիթ Չոունը 1983 թվականին հիմնադրեց Digi Cash կազմակերպությունը, որն աշխարհում առաջին էլեկտրոնային վճարման կազմակերպությունն էր:

Այնուհետև, Վաշինգտոնի համալսարանի շրջանավարտ Վեյ Դայը 1998 թվականին մշակեց էլեկտրոնային փողերի կոնցեպտ (B-money), որը պետք է հանրությանը դարձներ անկախ պետական ֆինանսական վերահսկողությունից և անգամ ազատեր ֆինանսական գործարքներից բխող հարկային պարտավորություններից, որը, ըստ հեղինակի, արդյունավետ չէր, և ըստ իր համոզման, նաև չէր ապահովում սոցիալական արդարություն: Այդ գործի շարունակողը եղավ ծրագրավորող Նիք Սաբոն, ով ներկայացրեց Bit Gold գաղափարը, ներկայացնելով վիրտուալ արժեքը որպես էլեկտրոնային ծրագրային հաշվարկների արդյունք, որը լիարժեքորեն ապահովվում էր ֆինանսական փոխանցումների գաղտնիություն հանրության և պետական իրավասու մարմինների հանդեպ:<sup>2</sup> Հենց այս մշակումների զարգացումները հանգեցրին նրան, որ Սաթոշի Նկամտոն 2008 հիփոթեքային համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մեկնարկին թողարկեց White paper ամսագիրը, որտեղ մանրամասն նկարագրվեց բիթքոյն կրիպտոարժույթի ելությունը, որը մեծ հեղափոխություն էր միջազգային ֆինանսական համակարգում և ապահովվում էր փողի ապակենտրոնացված վերահսկողության, տիրապետման գաղտնիության, գործարքների անանունության մոտեցումներ:

Ըստ կողավորման և ապակողավորման բանալիների, գաղտնագրումը բաժանվում է երկու տեսակի՝ սիմետրիկ և ոչ սիմետրիկ: Սիմետրիկ կողավորման և ապակողավորման ժամանակ օգտագործվում է միևնույն բանալին, այն գիտի և ուղարկողը և ստացողը: Մինչև 1970 թվականը օգտագործվում էր միայն այս մեթոդը, երբ Չեյմս Հենրի Էլիսը ներկայացրեց ոչ սիմետրիկ գաղտնագրումը, որի դեպքում օգտագործվում էին տարբեր

---

1 **Տե՛ս**, “Blind Signatures for Untraceable Payments,” D. Chaum, *Advances in Cryptology Proceedings of Crypto 82*, D. Chaum, R. L. Rivest, & A. T. Sherman (Eds.), Plenum, pp. 199–203

2 **Տե՛ս**, Биткойн и расцвет шифропанков, <https://bitnovosti.com/2016/04/19/the-rise-of-the-cypherpunks/>

բանալիներ՝ հանրայինը կողավորելու և մասնավորը ապակողավորելու համար:<sup>1</sup> Կողավորման այդպիսի համակարգերից ձևավորվեց հեշավորումը, որը կիրառվեց բլոքչեյն համակարգում:

Բլոքչեյնը թույլ է տալիս գործարքների արդյունքները և փոխանցումները գրանցել ոչ միայն անմիջական գևորդի և վաճառողի մոտ, այլև այդ շղթայի բոլոր մասնակիցների շրջանում: Դրանով, գործարքների արդյունքները հավաքվում են բլոկի մեջ, բլոկները ստուգվում և միանում են իրար, կազմելով շխթա, որտեղից էլ առաջացել է այս տեխնոլոգիայի անվանումը՝ “Blockchain”: Յուրաքանչյուրն իր մեջ պարունակում է գործարքների և նախորդ բլոկների մասին տեղեկություններ: Առաջին բլոկը, որ ստեղծեց Սատոշի Նակամոտոն, կոչվում է Genesis Block: Գաղտնագրման hash գործառույթը փոխկապակցում է բլոկները և նրանցում եղած տեղեկատվությունը: Դրանով իսկ, բլոքչեյն տեխնոլոգիան համարվում է ապակենտրոնացված, քանի որ չկան հատուկ պետական ինստիտուտներ, որոնք վերահսկում են էլեկտրոնային արժույթի ձևավորումն ու շրջանառությունը: Այդ ամենն արվում է բլոքչեյնում ընդգրկված համայնքի հավաքական ուժերով, որոնք էլեկտրոնային արժույթով գործառույթները կառավարում են միաժամանակ: Այս տեխնոլոգիայի առավելությունը միայն անձնական տվյալների պահպանությունը չէր, այլև էլեկտրոնային վճարումների տևտեսական կողմն էր, քանի որ արդեն իսկ չէին գործում միջնորդավճարներ և գործարքների արագությունն ակնհայտ էր՝ կապված դրանց ձևակերպումների բյուրոկրատական արգելքների բացակայության հետ:

Այս հանգամանքերով պայմանավորված, էլեկտրոնային արժույթ ստեղծելու շատ փորձեր արվեցին, խուսափելու համար ավելորդ թղթաբանությունից և աջակցելու գործարքների արագագործությանը: Անգամ, 1998 թվականին Բերնարդ Ֆոն Նոթխաուսը թողարեց Liberty դոլարը, որն ապահովված էր ոսկով և այլընտրանք էր հանդիսանում ԱՄՆ դոլարին: Այդ արժույթի վաճառված ամբողջ գումարը կազմեց 7 մլն ԱՄՆ դոլար: Սակայն, այլընտրանքային նշված արժույթի գործունեությունը կարճ տևեց, քանի որ 2007 թվականին Բերնարդը դատապարտվեց կառավարության դեմ դավադրություն կազմակերպելու մեղանդանքով:<sup>2</sup>

Մարդկության պատմության մեջ կրիպտոարժույթը փողի ամենաարտասովոր ձևն է: Եթե թղթե փողը կամ արժեթուղթը հնարավոր է ներկայացնել կենտրոնական բանկ կամ մասնագիտացված ֆինանսական ընկերություն և ենթարկել իրացման, ապա կրիպտոարժույթի դեպքում այն հնարավոր չէ: Թվային արժույթը ոչ նյութական է, շոշափելի չէ և պարզապես համակարգչային կողի մի մաս է, գոյություն ունի միայն համացանցում և թվայնացված պահեստում: Այն նոր սերնդի ապակենտրոնացված թվային արժույթ է, որի ստեղծումը և վերահսկումը հիմնված է գաղտնագրային մեթոդների հիման վրա: Եվ այդ առումով օգտագործվում է “crypto” եզրույթը, որը նշանակում է գաղտնի, ծածուկ: Կրիպտոարժույթ եզրույթը հաստատվել է 2011 թվականին “Forbes” ամսագրում “Crypto currency” հոդվածի

<sup>1</sup> Invention of non-secret encryption, [https://en.wikipedia.org/wiki/James\\_H.\\_Ellis](https://en.wikipedia.org/wiki/James_H._Ellis)

<sup>2</sup> В США осудили создателя “свободных долларов”, <https://lenta.ru/news/2011/03/21/coins/>



հրապարակումից հետո: Եթե ավանդական դրամական միջոցների շրջանառությունը կատարվում է կենտրոնական բանկերի կողմից, ապա կրիպտոարժույթի պարագայում համակարգն ապակենտրոնացված է և կառավարումն ու վերահսկողությունն իրականացվում են բլոքչեյն համայնքի կողմից:<sup>1</sup>

Գործում են գաղտնագրման մի քանի տեխնոլոգիաներ, որոնք կազմում են բիթքոինի եռթյունը: Առաջինը հանրային բանալիների կրիպտոգրաֆիան է, երբ յուրաքանչյուր քոինին կցվում է սեփականատիրոջ հանրային բանալին, որին հաջորդում է նաև գաղտնի (անձնային) բանալու կցագրումը: Այս դեպքում, արդեն բիթքոինի հաշվի կառավարումն իրականացվում է միայն իրավասու սեփականատիրոջ կողմից: Երբ վիրտուալ համակարգում որևէ մեկին ուղարկվում է բիթքոին, ստեղծվում է հաղորդակցություն, կցելով նոր սեփականատիրոջ հանրային բանալին և անհրաժեշտ կրիպտոարժույթի քանակը, այնուհետև հաստատվում է փոխանցումն ուղարկողի գաղտնի բանալիով: Զանի որ գործարքը իրականացվում է բիթքոինի ցանցում, ապա հանրային գաղտնագրում ունեցողներն իրազերկվում են այդ մասին, և այն թույլ է տալիս բոլորին տեսնելու նոր սեփականատիրոջ հանրային հասցեն: Փոխանցումների այս ամբողջական գրանցումը պահվում է բլոքչեյնում: Ցանցին միացված բոլոր համակարգիչներն ունեն բլոքչեյնի պատճեն, որին թարմացվում են նոր բլոքներ: Յուրաքանչյուր բլոք պարունակում է նախորդ բլոքից ստացված նոր փոխանցումներ և բլոքչեյնի ամբողջականությունը պահելու համար յուրաքանչյուր բլոք հաստատում է նախորդի ամբողջականությունը հետընթաց ուղով՝ մինչև սկզբնական (ժառանգության) բլոքը: Դրանով իսկ ոչ ոք չի կարող վերագրանցել նախորդ փոխանցումները՝ պարզապես բլոքների շղթան պատճենելով:<sup>2</sup>

Սատոշի Նակամոտոյի հրատարակումից հետո, գաղտնագրողները սկսեցին մշակել այնպիսի համակարգչային ծրագրեր, որոնք թույլ կտային օգտատերերին ձեռք բերելու կրիպտոարժույթներ և դրանք գործածելու էլեկտրոնային վճարային համակարգերում: Սատոշին իր համակարգիչը միացնելով բլոքչեյնին, դարձավ առաջնեկ նոդը (nodus – լատիներենից թարգմանաբար՝ շղթա): Արդեն իսկ, 2009 թվականի սեպտեմբերին իրականացվեց բիթքոյնով առաջին գործարքը, երբ ավանդական դրամով գնվեց կրիպտոարժույթ և PayPal համակարգով փոխանցվեց 5,02 ԱՄՆ դոլար՝ 5050 բիթքոյնի դիմաց: Դրան անմիջապես հաջորդեց bitcoin.org ինտերնետային կայքի ստեղծումը, որտեղ էնտուզիաստների բանակը մասնակցելով քննարկումների, որոշեց բիթքոյնի փոխարժեքը՝ (\$1= 1309 բիթքոյն): Կրիպտոարժույթի պահանջարկը այնքան մեծացավ, որ ձևավորվեցին մայինիզ կազմակերպություններ, որոնք զբաղվում են լրացուցիչ բիթոյնի թողարկմամբ: Արդեն իսկ 2011 թվականի ապրիլին միավոր բիթքոյնի արժեքը հավասարվեց մեկ ԱՄՆ դոլարին, իսկ նոյեմբերին՝ մեկ ֆունտ ստեռլինգին, իսկ 2013 թվականի մայիսին Սան Դիեգո քաղաքում բացվեց առաջին բիթքոյն բանկումատը:

<sup>1</sup> Տե՛ս, Դանիելյան Յ., Համբարձումյան Ա., Ստեփանյան Է., Խորհրդավոր կրիպտոաշխարհ, հեղ. հրատ., Եր. 2019, էջ 24

<sup>2</sup> Տե՛ս, Դանիելյան Յ., Համբարձումյան Ա., Ստեփանյան Է., Խորհրդավոր կրիպտոաշխարհ, հեղ. հրատ., Եր. 2019, էջ 47

Կրիպտոարժեքի կիրառման զարգացումներն առավել ակտիվացան, երբ դրանք սկսեցին կիրառվել բորսայական համակարգում: Այսպես, 2017 թվականին, Չիկագոյի օպցիոնների առևտրի բորսան կրիպտոարժեքով վաճառեց 257 մլն դոլարի արժեթղթեր, որից հետո մի քանի շաբաթ բիթհիջի արժեքը գտնվում էր 20 հազ. դոլարի սահմաններում: Սակայն, ֆինանսական հանրությունը դեռևս զգուշավորություն է ցուցաբերում կրիպտոարժեքների կիրառման հանդեպ, քանի որ սկատելի են նաև մի շարք թերություններ, ինչպիսիք են.

- կրիպտոարժեքների գները կտրուկ տատանվում են (ընդամենը երեք տարվա ընթացքում Bitcoin-ի արժեքը \$7 000-ից հասավ \$20 000 և նվազեց մինչև \$2 000) և դրանց ձեռքբերումները չափազանց ռիսկային են համարվում ներդրողների կողմից:

- կրիպտոարժեքները տեսանելի չեն և սեփականատիրոջ մոտ հոգեբանական բարդություններ են առաջացնում, երբ պարզ է դառնում, որ դրանք շրջանառվում են միայն վիրտուալ միջավայրում,

- դրամապանակի կորստի դեպքում կրիպտոարժեքներով վճարումներ կատարելիս տեխնիկական սխալի պատճառով ոչ ճիշտ հասցեատիրոջը կատարած փոխանցումները ենթակա չեն ճշգրտման և վերականգման,

- կրիպտոարժեքների շրջանառության իրավական կարգավորումները շատ երկրներում դեռևս իրենց ավարտին չեն հասել, ավելին, անգամ արգելված են, որը օգտատերերի մոտ թերհավատություն է առաջացնում:

## **КОНКУРЕНТНАЯ ФИНАНСОВАЯ ГРАМОТНОСТЬ В ЭЛЕКТРОННЫХ СДЕЛКАХ**

**ГРАЧЬЯ ДАНИЕЛЯН**

*соискатель Северного университета,  
г.Ереван, Республика Армения*

Цель статьи - выявить проблемы формирования конкурентоспособной финансовой грамотности в условиях беспрецедентной активизации электронных платежей, провести параллели с развитием электронных платежных систем.

Для достижения цели были поставлены следующие задачи: изучение тенденций развития электронных транзакций в Республике Армения, анализ международного опыта, оценка рисков транзакций с криптовалютами.

В ходе исследования были использованы методы научной абстракции, сравнительного анализа, а также инструменты статистических исследований.

Основной вывод заключается в том, что беспрецедентная активизация текущих электронных платежей, перевод платежей населения в электронный домен, использование криптовалют параллельно с традиционными деньгами создают новые проблемы финансовой грамотности. При этом финансовая грамотность должна быть конкурентоспособной с точки зрения способности защищать транзакции электронных платежей от

рисков нарушения кибербезопасности и резких колебаний на рынках криптовалют.

**Ключевые слова:** конкурентная финансовая грамотность, транзакции с криптовалютой, риски электронных платежей, развитие финансового образования.

## COMPETITIVE FINANCIAL LITERACY IN ELECTRONIC TRANSACTIONS

**HRACHYA DANIELYAN**

*Northern University, PhD student,  
Yerevan, Republic of Armenia*

The article discusses the development of competitive financial literacy, draws a parallel with the development of electronic payment systems. The exceptional activation of current electronic payments, the transfer of payments from the population to an electronic domain, the use of cryptocurrencies in parallel with traditional money creates new problems of financial literacy. At the same time, financial literacy must be competitive in terms of the ability to protect electronic payment transactions from cybersecurity risks and volatility in cryptocurrency markets, elektronik payment systems risks.

**Keywords:** *competitive financial literacy, cryptocurrency transactions, risks of electronic payments, development of financial education.*

**ՄՐՅՈՒՆԱԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԱՍՏՂԻԿ ԴՈՂՈՍՅԱՆ**

Հյուսիսային համալսարանի հայցորդ,  
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան  
[ast.poghosyan@gmail.com](mailto:ast.poghosyan@gmail.com)

**Հողվածի նպատակն է բացահայտել մրցունակ բարձրագույն մասնագիտական կրթության զարգացման խոչընդոտները Հայաստանի Հանրապետությունում և ներկայացնել առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ:**

**Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են բարձրագույն մասնագիտական կրթության զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում, միջազգային փորձի ուսումնասիրությունը, բոլանյան համաձայնագրի երկրների առաջավոր փորձի ներդրման հնարավորությունները:**

**Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտական աբստրակցիայի մեթոդները, համեմատական վերլուծության եղանակները, ինչպես նաև վիճակագրական ուսումնասիրությունների գործիքները:**

**Հիմնական եզրահանգումն այն է, որ համալսարանական կրթության արդյունքում որակապես փոխվում է երկրում կուտակվող մարդկային կապիտալի կազմը, որը հնարավորություն է ընձեռում որակավորված աշխատուժն ի նպաստ դնել տնտեսության զարգացմանը: Մյուս կողմից, բարձրագույն կրթությամբ ազգաբնակչությունը հանդես է գալիս ոչ միայն որպես որակավորված աշխատուժ, այլև մտավորականություն ձևավորող հիմնասյուն, որը չափազանց կարևոր դերակատարում է ստանձնում երկրի և ազգի արժեհամակարգը ձևավորելիս:**

**Հիմնաբառեր`** Բոլոնիայի գործընթաց, բարձրագույն մասնագիտական կրթություն, ակադեմիական շարժունություն, կրթավճարներ, մրցունակություն, կրթական ծառայությունների արտահանում, մրցակցային կրթություն, կրթական շուկա:

Մատուցվող կրթական ծառայությունների կարևորությունը արդեն իսկ ընդհանուր գծերով օրենսդրորեն ամրագրված է Հայաստանի Հանրապետությունում կրթության բնագավառում պետական քաղաքականության կարևորագույն նպատակներից համարելով մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը, ինչպես նաև հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդումը, ազգային և համամարդկային արժեքների պահպանման ու զարգացման աջակցումը: Ելնելով վերոնշյալ նպատակից՝ պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով

ապահովում է կրթության բնագավառի պահպանումն և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:<sup>1</sup>

Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում առանձնանում է գործող բուհերի և բարձրագույն մասնագիտություն ստացող սովորողների թվաքանակային առավելությամբ: Այսպես, վերջին տարիներին մեր երկրում միայն բարձրագույն մասնագիտական առաջին աստիճանի ծառայություններ մատուցող գործող բուհերի քանակը՝ կազմում է շուրջ վաթսու, իսկ 10 000 բնակչի հաշվով բուհերում սովորող ուսանողների տարեկան քանակը՝ շուրջ 265: Այս ցուցանիշը բավականին բարձր է և անգամ գերազանում է զարգացած տնտեսությունն ունեցող այնպիսի երկրների համանուն ցուցանիշին, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունը, Կանադան:<sup>2</sup>

Սակայն, մյուս կողմից, վերջին տարիներին ՀՀ-ում միտում է նկատվում ինչպես բարձրագույն մասնագիտական հաստատությունների դիմորդների զգալի կրճատման, այնպես էլ բուհերի շրջանավարտների նվազման, որը պայմանավորված է ոչ միայն տեղի ունեցող դեմոգրաֆիական գործոնների ազդեցություններով, այլև աշխատաշուկայում մասնագետների պահանջարկի նվազմամբ: Այսպես, ըստ կրթական ցենզի, ՀՀ-ում պաշտոնապես գրանցված գործազուրկների շրջանում բարձր տեսակարար կշիռ են զբաղեցնում մասնագիտական կրթություն ունեցող մարդիկ, որոնց մեջ գերակշռում են կանայք: Եվ ստացվում է այնպես, որ որոշ դեպքերում մասնագիտական կրթությունը չի հանդիսանում աշխատաշուկայում ինքնահաստատման նպատակ, այլ պարզապես շրջանավարտի՝ վկայական ստանալու միջոց: Իսկ ձևավորվող նման մթնոլորտը չի կարող իր բացասական արդյունքը չթողնել բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման վրա:

Այսպես, պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ՀՀ-ի բուհերում աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակի գծով նվազման միտում է նկատվում, որի պատճառներից է նաև պրոֆեսորների և դոցենտների համեմատաբար ցածր վարձատրությունը: Ներկայումս ձևավորվել է մի իրավիճակ, որ ֆինանսական հաստատություններում, մասնավոր ձեռնարկատիրական ոլորտում աշխատող միջին կարգի մասնագետների աշխատավարձը կրկնակի և ավելի գերազանցում է բուհում դասավանդող անձնակազմի աշխատավարձը, որն էլ պրոֆեսորների և դոցենտների աշխատանքը դարձնում է ոչ գրավիչ:

Նման իրավիճակ է արձանագրվում նաև ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանի համակարգում, երբ, չնայած վերջին տարիներին մագիստրոսական կրթությունն մատուցող կազմակերպությունների թվաքանակի գրեթե չանփոփոխ մնալուն, էականորեն նվազել է դրանցում սովորող և պատրաստվող մագիստրոսների համակազմը: Թերևս միայն օտարերկրյա ուսանողների գծով է կազմակերպվող մագիստրոսական ծրագրերում փոքր-ինչ աճ նկատվել:

<sup>1</sup> *ՏԵՄ*, «Կրթության մասին» ՀՀ օրենքը, Երևան, 1999, հոդ. 4

<sup>2</sup> *ՏԵՄ*, Higher education in numbers, <https://data.oecd.org/pop/population.htm>


Հատկանշական է, որ բուհերի շրջանակի և ՀՀ դիմորդների թվաքանակի կրճատման ընդհանուր ֆոնին՝ հանրապետությունում դիտվում է օտարերկրյա ուսանողների թվաքանակի կայունություն և անգամ փոքր-ինչ աճ: Այս հանգամանքը ունի իր բացատրությունը: Նախ, օտարերկրացիների համար ՀՀ բուհերի կողմից սահմանվող կրթավճարները համեմատաբար ցածր են: Եվ երկրորդ, կեցության պայմանները, երկրի կլիման, մատուցվող կրթական ծառայությունների որակը գրավիչ են դարձնում ՀՀ բուհական համակարգը օտարերկրյա ուսանողների համար: Այստեղ իր դրական դերակատարումն ունի նաև ՀՀ-ի մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին, որը ենթադրում է բուհերում՝ միջազգային չափանիշներին համահունչ մասնագիտական ծրագրերի ներդրում:

Դեռևս 2004 թվականին ՀՀ-ն դարձավ Բոլոնիայի համաձայնագրի երկիր և, գործելով բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքում, մասնագիտական կրթությունը ակադեմիական կրեդիտային հենքով իրականացնելու, բուհերում մասնագիտական կրթության եռաստիճան համակարգ (բակալավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա) կիրառելու պարտավորություններ ստանձնեց: Այս դեպքում, հնարավորություն ստեղծվեց տարբեր երկրների միջև դիպլոմների փոխճանաչման հարթակներ ստեղծել, կազմակերպել դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրեր ակտիվացնել ակադեմիական շարժունությունը, որով ՀՀ բուհական համակարգը եվրոպական բարձրագույն կրթական միասնական տարածքի մասը դարձավ:<sup>1</sup>Սակայն, մյուս կողմից, բարձրագույն մասնագիտական կրթության միջազգային ինտեգրացումը դեռևս արդյունավետ չի իրագործվում: Դա պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջնայինը ֆինանսատնտեսականն է: Հայաստանյան բուհերը ներկայումս չունեն բավարար ռեսուրսներ, որ կարողանան ուսանողների առնվազն 20%-ին ապահովելու շարժունության ֆինանսավորում, որը Բոլոնիայի համաձայնագրի ելակետային պահանջներից է:<sup>2</sup> Բացի այդ, դեռևս պասիվ է բուհերի հետ գիտահետազոտական ծրագրերի իրագործումը, որի համար պահանջվում են էական ֆինանսական ներդրումներ: Եվ արդյունքում, ակադեմիական շարժունությունը Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում ձևավորում է բացասական հաշվեկշիռ. առավելապես միջազգային բուհերից են այցելում ՀՀ համալսարաններ, քան հակառակը (տես զծապատկեր 1.):

---

<sup>1</sup> *ՏԵՄ* Կարաբեկյան Ս., **Բարձրագույն կրթության բարեփոխումները Հայաստանում. առաջին ճամփաբաժանը**, // Երևանի պետական լեզվաբանական համալսարան, «Եվրասիա համագործակցություն հիմնադրամ», Երևան, 2009, էջ 12

<sup>2</sup> *ՏԵՄ*, Conclusions and Recommendations, Report by the EHEA Pathfinder Group on Automatic Recognition, //Bologna Ministerial Conference, 14-15 May 2015, Yerevan Armenia



**Գծապատկեր 1. Ակադեմիական շարժունությունը ՀՀ բուհական համակարգում<sup>1</sup>**

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ եթե մեր երկրում ինչ-որ չափով արձանագրվում է ակադեմիական միջազգային շարժունություն, ապա ներհանրապետական շրջանակում այդ գործընթացը չափազանց պասիվ վիճակում է գտնվում՝ չնայած այն փաստին, որ գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության հատուկ որոշմամբ:<sup>2</sup> Հետևաբար, ֆինանսատնտեսական խոչընդոտներից բացի, ՀՀ բուհական համակարգի ինտեգրացիոն գործոնների պասիվ իրավիճակը պայմանավորված է նաև կազմակերպչական գործոններով, երբ բուհերը Բոլոնիայի գործընթացի պահանջների տրամաբանությամբ չեն կարողանում անգամ հանրապետության ներսում միմյանց հետ համագործակցել:<sup>3</sup>

ՀՀ բուհական համակարգի ակտիվացման առանցքային գործոն կարող է հանդիսանալ բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների արտահանումը: Ներկայումս, անգամ տնտեսապես զարգացած երկրները

<sup>1</sup> **ՏԵՍ**, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազային տեղեկատվական կենտրոն, <http://armenic.am/>

<sup>2</sup> **ՏԵՍ**, Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25 թիվ 1240-Ն որոշում

<sup>3</sup> **ՏԵՍ**, **Կարաբեկյան Ս.**, Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում, «Թասկ» իրատ., Երևան 2010

ձգտում են հնարավորինս շատ համալսարանական կրթական ծառայություններ մատուցել արտասահմանցի ուսանողներին, քանի որ վերջիններիս կրթավճարները համեմատաբար բարձր են սահմանվում տեղացի ուսանողների համեմատ: Այսպես, ներկայումս համալսարաններում սովորող արտասահմանացի ուսանողների տեսակարար կշիռը կազմում է ԱՄՆ-ում շուրջ 24%, Ավստրալիայում 29%, Միացյալ Թագավորությունում 31%: Վերոհիշյալ երկրները միջազգային ուսանողներից գանձող առավել թանկ կրթավճարների վարկանիշային աղյուսակի առաջատարներն են: ԱՄՆ-ում արտասահմանցի ուսանողից գանձվող տարեկան միջին կրթավճարը կազմում է \$25 000, Ավստրալիայում՝ \$24 000, Միացյալ Թագավորությունում՝ \$21 000, Սինգապուրում՝ \$18 000:<sup>1</sup> Համեմատության համար նշենք, որ ՀՀ բուհերում սովորող արտասահմանցի ուսանողների տարեկան կրթավճարները տատանվում են 2 000 - 3 500 ԱՄՆ դոլարի սահմաններում, որը հնարավորություն է ընձեռնում գրավիչ դարձնելու ՀՀ մասնագիտական կրթության շուկան միջազգային ուսանողության համար, եթե հայրենական բուհերը կարողանան կազմակերպել արդյունավետ մարքեթինգ այս ոլորտում: Սակայն ներկայումս նման միտում չի նկատվում, և ՀՀ բուհերի միջազգային ուսանողների զգալի մասը հայազգի ներկայացուցիչներ են, որոնք բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու նպատակով գալիս են հայրենիք՝ Ռուսաստանի Դաշնությունից և Վրաստանից (տես աղյուսակ 1.1.5):

Այսպիսով, ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի զարգացման միտումների վերլուծությունը ցույց է տալիս.

Առաջին, հանրապետությունում համալսարանական ակտիվ գործունեության առկայությունը և բարձրագույն կրթություն ստացողների բարձր տեսակարար կշիռը հանգեցրել են բուհերում պատրաստվող մասնագետների առաջարկի և աշխատաշուկայում դրա պահանջարկի անհապատասխանության, դրանով իսկ նպաստելով բարձրագույն կրթությամբ ազգաբնակչության գործազրկության աճին,

Երկրորդ, ՀՀ-ն, անդամակցելով Բոլոնիայի համաձայնագրին, իր բուհական համակարգով դեռևս ակտիվ մասնակցություն չի ցուցաբերում եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքի կառուցման գործընթացին՝ ավելի շատ դրան վերաբերվելով ֆորմալ և ոչ թե գործնական առումով, արդյունքում լրացուցիչ խոչընդոտներ ձևավորելով կրթության միջազգայնացման ակտիվացման գործընթացում,

Երրորդ, ՀՀ բուհական համակարգը մասնագիտական կրթական շուկայում կարող է ներկայանալ նաև իր գրավչությամբ, ելնելով երկրի ներսում գործող համեմատաբար ոչ թանկ կրթավճարներից, միջազգային ստանդարտներով կրթական գործընթացի կազմակերպման հնարավորություններից: Սակայն, անարդյունավետ մարքեթինգային գործունեությունը ՀՀ բուհերին դեռևս հնարավորություն չի տալիս ակտիվացնելու կրթական ծառայությունների արտահանման և միջազգային ուսանողների ներգրավման շրջանակի ընդլայնումը, որով հայրենական կրթական համակարգին չի

<sup>1</sup> Higher education fees world statistics, <http://www.oecd.org/education/skills-beyond-school/48631028.pdf>



հաշտողվում լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ կուտակել հետագա զարգացումների համար:

## **ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОЙ СИСТЕМЫ ВЫСШЕГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В РА**

**АСТХИК ПОГОСЯН**

*соискатель Северного университета,  
г. Ереван, Республика Армения*

Цель статьи - выявить поведение по изменению человеческого капитала в контексте развития конкурентоспособного высшего профессионального образования.

Для достижений указанной цели были поставлены такие задачи, как тенденции развития высшего профессионального образования в Республике Армения, изучение международного опыта, возможности внедрения передового опыта стран Болонского соглашения.

В ходе исследования были использованы методы научной абстракции, сравнительного анализа, а также инструменты статистических исследований.

Основной вывод заключается в том, что в результате университетского образования состав человеческого капитала, накопленного в стране, качественно меняется, что дает возможность квалифицированной рабочей силе вносить свой вклад в развитие экономики. С другой стороны, население с высшим образованием - это не только квалифицированная рабочая сила, но и краеугольный камень интеллектуального развития, который играет очень важную роль в формировании системы ценностей страны и нации.

**Ключевые слова:** *Болонский процесс, высшее профессиональное образование, академическая мобильность, плата за обучение, конкурентоспособность, конкурентоспособное образование, экспорт образовательных услуг, образовательный рынок.*

## **TRENDS OF DEVELOPMENT OF A COMPETITIVE SYSTEM OF HIGHER PROFESSIONAL EDUCATION IN RA**

**ASTGHİK POGHOSYAN**

*Northern University, PhD student,  
Yerevan, Republic of Armenia*

The effective organization of higher professional education is one of the key conditions for the socio-economic development of the country. As a result of university education, the composition of the human capital accumulated in the country is changing qualitatively, which makes it possible for a qualified workforce to contribute to the development of the economy. On the other hand, a population

with a higher education is not only a skilled labor force, but also a cornerstone of intellectual development, which plays a very important role in shaping the value system of a country and a nation. The article presents an analysis of the possibilities for the development of a competitive system of higher professional education in Armenia.

The purpose of the article is to identify obstacles to the development of competitive higher professional education in the Republic of Armenia and provide recommendations for their elimination.

To achieve the stated goal, a number of tasks were set, such as the analysis of the directions for the development of higher professional education in the Republic of Armenia, the study of international experience, and the possibility of introducing the best practices of the countries of the Bologna Agreement.

In the course of the study, the methods of scientific abstraction, comparative analysis, as well as statistical research tools were used.

The main conclusion is that as a result of university education, the composition of the human capital accumulated in the country is qualitatively changing, which is the possibility of using skilled labor to promote the development of the economy. On the other hand, the national population with higher education acts not only as a skilled labor force but also as a pillar for shaping intelligent people, which play an extremely important role in coining the country's and nation's value system.

**Keywords:** *Bologna process, higher professional education, academic mobility, tuition fees, competitiveness, competitive education, education market.*

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՍՏՈՒՄ

## ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[hrachyasargsyan9@gmail.com](mailto:hrachyasargsyan9@gmail.com)

**Հոդվածի նպատակն է բացահայտել մարդկային կապիտալի փոփոխման վարքագիծը մրցունակ բարձրագույն մասնագիտական կրթության զարգացման համատեքստում:**

**Առաջ քաշված նպատակին հասնելու համար դրվել են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են որակյալ կրթության, մարդկային կապիտալի, տնտեսական մրցունակություն, կրթություն և անվտանգություն փոխկապվածության գնահատումները:**

**Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտական աբստրակցիայի մեթոդները, համեմատական վերլուծության եղանակները, ինչպես գրաֆիկական վերլուծության գործիքները:**


**Հիմնական եզրահանգումն այն է, որ ի տարբերություն նյութական ակտիվներում կատարվող ներդրումների, մարդկային կապիտալին ուղղված ներդրումային ռեսուրսների արդյունավետության գնահատումն ավելի է բարդանում, կապված այստեղ ձևավորվող հատույցի առանձնահատկությունների հետ, ինչպիսիք են անհատի աշխատանքային ունակությունները, ստեղծարար կարողությունների բարելավումները, զարգացման հնարավորությունների որակական աճը, կարերիայի բարելավման ընթացքը, ստեղծարար կարողությունների դրսևորումները: Հոդվածում ներկայացվում է կրթության ազդեցությունը մարդկային կապիտալի վարքագծային փոփոխությունների վրա:**

**Հիմնաբառեր`** որակյալ կրթություն, մարդկային կապիտալ, տնտեսական մրցունակություն, կրթություն և անվտանգություն, ներդրումներ մարդկային կապիտալում:

Ծախսելով անհրաժեշտ միջոցներ և կուտակելով մարդկային կապիտալ, խնդիր է ծագում գնահատելու ու վերլուծելու կապիտալահատույցը և բացահայտելու աշխատանքային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման ռիսկերը: Իսկ այդ ռիսկերը բազմազան են, կապված մարդկային կապիտալի փոշիացման, որակյալ աշխատուժի անարդյունավետ օգտագործման, աշխատանքային ռեսուրսների ոչ ճիշտ տեղաբաշխման, երկարաժամկետ պարապուրդի, որակյալ մասնագետների միգրացիոն շարժերի հետ, որոնք իրենց հերթին ձևավորում են անվտանգային և մրցակցային խնդիրներ:<sup>1</sup> Այս առումով, մասնագիտական գրականությունում

1 Տե՛ս **Романтев П.В.**, Аналитический обзор методик оценки человеческого капитала, // Экономика, предпринимательство и права, 2011, #2 (Т.1), стр. 25-37


կարևորվում է մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետության վերլուծությունը՝ տնտեսական անվտանգության և մրցունակության համատեքստում<sup>1</sup>, որը նախ և առաջ մեր կողմից առաջարկվում է իրականացնել գրաֆիկական եղանակով (տես գծապատկերներ 1 - 5):



**Գծապատկեր 1. Մարդկային կապիտալի կուտակման, կապիտալահատույցի, տնտեսական անվտանգության ու մրցունակության աճի ֆունկցիոնալ փոխկապվածությունը<sup>2</sup>**

Ակնհայտ է, որ տնտեսական անվտանգության և մրցունակության մեջ դիտարկվում է սերտ փոխկապվածություն, և դրանցից որևէ մեկի բարելավումն իր հերթին ազդում է մյուսի դրական աճի վրա, և հակառակը: Ուստի այդ երկու ոլորտները գրաֆիկական վերլուծության ժամանակ մեր կողմից ներկայացված են խմբավորված ձևաչափով (ֆունկցիայի **S** առանցք): Իսկ այս փոխկապվածության շրջանակում, երբ դիտարկվում է մարդկային կապիտալն իր օգտագործման հատույցով (ֆունկցիայի **I** առանցք) և կուտակման ցուցանիշով (**I** կոր), ապա այն իր հերթին երկկողմանի ազդեցություն է ունենում տնտեսական անվտանգության և մրցունակության փոփոխությունների վրա: Բնականաբար, ճշգրիտ հաշվարկներով հնարավոր չէ ներկայացնել այդ փոխկապվածությունների աստիճանը, սակայն մեր կարծիքով, վերլուծության գրաֆիկական եղանակով կարելի ընդհանրական բնութագրել մարդկային կապիտալի, տնտեսության անվտանգության և մրցունակության փոխազդեցությունները:

1 Տե՛ս **Тугускина Г.Н.**, Человеческий капитал нации как основа конкурентоспособного государства, // Экономика образования, 2015, #2, (87), стр. 4-11  
 2 Կազմել է հեղինակը:



**Գծապատկեր 2 Մարդկային կապիտալի սկզբնական կուտակման և հետագա աճի հավասարակշռման ընթացքը:<sup>1</sup>**

